

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ  
9 (2)**

Երևան 2021

## Ցեղասպանագիտական հանդես

*Գլխավոր խմբագիր*

**Հարություն Մարության**, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

*Գլխավոր խմբագրի տեղակալ*

**Էդիտա Գոյան**, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

*Խմբագրական խորհուրդ*

**Աննա Ալեքսանյան**, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

**Մելինե Անույան**, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,  
Հայաստան

**Արսեն Ավագյան**, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

**Ռայմոնդ Գևորգյան**, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ  
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

**Անդրանիկ Դաքեայան**, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,  
Լիբանան

**Ռոբերտ Թաթոյան**, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»  
հիմնադրամ, Հայաստան

**Վահե Թաշճյան**, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Գերմանիա

**Վալերի Թունյան**, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական  
համալսարանի երևանյան մասնաճյուղ, Հայաստան

**Անահիտ Խոսրոնա**, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

**Աշոտ Հայրունի**, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

**Էլկե Հարթման**, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Բեռլինի ազատ համալսարան,  
Գերմանիա

**Սևանե Ղարիբյան**, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,  
Շվեյցարիա

**Նարինե Մարգարյան**, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»  
հիմնադրամ, Հայաստան

**Հայկ Մարտիրոսյան**, պ.գ.թ., Լեփսիոսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

**Վահրամ Շեմասյան**, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական  
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

**Պետրոս Տեր-Մաթոսյան**, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի  
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

**Ռուբինա Փիրումյան**, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի  
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

## ***Ts'eghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

*Editor in Chief:*

**Dr. Harutyun Marutyan**, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

*Associate Editor:*

**Dr. Edita Gzoyan**, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

### ***Editorial Board***

**Anna Aleksanyan**, Clark University, USA

**Dr. Meline Anumyan**, Research Center on Western Armenian Studies, Armenia

**Dr., Prof. Arsen Avagyan**, Yerevan State University, Armenia

**Dr. Antranik Dakessian**, Haigazian University, Lebanon

**Dr., Prof. Bedross Der Matossian**, University of Nebraska-Lincoln, USA

**Dr., Prof. Elke Hartmann**, Free University Berlin, Germany

**Dr., Prof. Ashot Hayruni**, Yerevan State University, Armenia

**Dr., Prof. Sévane Garibian**, University of Geneva, Switzerland

**Dr., Prof. Raymond Kevorkian**, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

**Dr. Anahit Khosroeva**, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

**Dr. Narine Margaryan**, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

**Dr. Hayk Martirosyan**, Lepsiushaus, Potsdam, Germany

**Dr., Prof. Rubina Perroomian**, University of California, Los Angeles (UCLA), USA

**Dr., Prof. Vahram Shemmassian**, California State University, Northridge, USA

**Dr. Vahé Tachjian**, Houshamadyan Project, Germany

**Dr. Robert Tatoyan**, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

**Dr. Valery Tunyan**, Russian State University of Tourism and Services, Yerevan Branch, Armenia

## ***Тсехаспанагитакан андес (“Журнал исследований геноцида”)***

*Главный редактор*

**Арутюн Марутян**, доктор ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”  
Армения

*Заместитель главного редактора*

**Эдита Гзоян**, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

*Редакционная коллегия*

**Арсен Авагян**, доктор ист. наук, профессор, Ереванский государственный  
университет, Армения

**Ашот Айруни**, доктор ист. наук, профессор, Ереванский государственный  
университет, Армения

**Анна Алексанян**, Кларкский университет, Соединённые Штаты Америки

**Мелине Анумян**, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов,  
Армения

**Элке Артманн**, доктор истории, профессор, Свободный университет Берлина,  
Германия

**Севанэ Гарибян**, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

**Раймонд Геворгян**, доктор истории, профессор, иностранный член НАН РА,  
Франция

**Андраник Дакесян**, доктор политологии, Айказян университет, Ливан

**Айк Мартиросян**, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусаус), Потсдам,  
Германия

**Нарине Маргарян**, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”  
Армения

**Рубина Пирумян**, доктор филологии, профессор, Калифорнийский университет в  
Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

**Роберт Татоян**, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”  
Армения

**Ваге Ташчян**, доктор истории, проект “Ушамадян,” Германия

**Петрос Тер-Матосян**, доктор истории, профессор, Университет Небраски-  
Линкольна, Соединённые Штаты Америки

**Валерий Тунян**, доктор ист. наук, профессор, ереванский филиал Российского  
государственного университета туризма и сервиса, Армения

**Анаит Хосроева**, канд. ист. наук, Институт истории НАН РА, Армения

**Ваграм Шеммассян**, доктор филологии, профессор, Калифорнийский  
государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

*Ցեղասպանագիտական հանդեսը* (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, [www.genocide-museum.am](http://www.genocide-museum.am)): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Ցեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Ցեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցչի (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ [handes@genocide-museum.am](mailto:handes@genocide-museum.am):

*Ts'eghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tsitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia, (+374 10) 39 09 81, [www.genocide-museum.am](http://www.genocide-museum.am)). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide. Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors. *Journal of Genocide Studies* is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI). Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: [handes@genocide-museum.am](mailto:handes@genocide-museum.am).

*Тсехаспанагитакан андес* (“Журнал исследований геноцида”) (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом “Музей-институт Геноцида армян” (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8, (+374 10) 39 09 81, [www.genocide-museum.am](http://www.genocide-museum.am)). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян. Статьи, обзоры и другие материалы, опубликованные в “Журнале исследований геноцида,” отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда “Музей-институт Геноцида армян.” Фонд “Музей-институт Геноцида армян” не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами. “Журнал исследований геноцида” индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: [handes@genocide-museum.am](mailto:handes@genocide-museum.am).

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

### Հարություն Տ. Մարության

«Հիշում եմ և պահանջում» կարգախոսը և Հայոց ցեղասպանության հիշողության փոխանցման մարտահրավերները 21-րդ դարում.....9

### Սուրեն Ա. Մանուկյան

Ցեղասպանությունների գիտական դասակարգումների հարցի շուրջ.....55

### Աննա Մ. Օհանջանյան

Գևորգ Հալաջյանի «Դեպի կախաղան» օրագրությունը՝ Հայոց ցեղասպանության ժամանակ և հետո թրքացած հայերի վերաբերյալ սկզբնաղբյուր.....76

### Միհրան Ա. Մինասեան

Հալէպի մէջ պատրաստուած Հայոց ցեղասպանութեան տեղեկագիր-ամբաստանագրերը և Սասունի տեղեկագիրը (1919 թ.).....93

### Արմեն Ծ. Սարգսյան

Հայոց ցեղասպանության արձագանքները ժողովրդական տոմարում.....127

### Հայաստան Ա. Մարտիրոսյան

Գրախոսություն  
*Israel's Failed Response to the Armenian Genocide: Denial, State Deception, Truth versus Politicization of History, by Israel Charny, Boston: Academic Studies Press, 267 pp. ....138*

Էթիկայի կանոններ.....143

Ցուցումներ հեղինակներին.....144

# CONTENT

## ARTICLES

### **Harutyun T. Marutyan**

*The Motto “I Remember and Demand” and the Challenges of Transmitting the Memory of the Armenian Genocide in the 21st Century.....*9

### **Suren A. Manukyan**

*On the Academic Classifications of Genocides.....*55

### **Anna M. Ohanjanyan**

*Gevorg Halajyan’s Diary “To the Gallows” as a Primary Source on Turkified Armenians during and after the Armenian Genocide.....*76

### **Mihran A. Minassian**

*The Indictment Documents on the Armenian Genocide Written in Aleppo and the Sassoun Document (1919).....*93

### **Armen Sh. Sargsyan**

*Echoes of the Armenian Genocide in Folk Calendar.....*127

### **Hayastan A. Martirosyan**

*Book Review*

*Israel’s Failed Response to the Armenian Genocide: Denial, State Deception, Truth versus Politicization of History, by Israel Charny, Boston: Academic Studies Press, 267 pp. ....*138

*Ethical Guidelines.....*143

*Instruction for Authors.....*144

# СОДЕРЖАНИЕ

## СТАТЬИ

**Арутюн Т. Марутян**

*Девиз “Помню и требую” и вызовы 21-го века, связанные с передачей памяти о Геноциде армян.....*9

**Сурен А. Манукян**

*К вопросу об академических классификациях геноцидов.....*55

**Анна М. Оганджян**

*Дневник Геворга Аладжяна “На виселицу” как первоисточник о тюркизированных армянах во время и после Геноцида армян.....*76

**Мигран А. Минасян**

*Созданные в Алеппо обвинительные справочники Геноцида армян и справочник Сасуна (1919 г.).....*93

**Армен Ш. Саргсян**

*Отголоски Геноцида армян в народном календаре.....*127

**Айастан А. Мартиросян**

*Рецензия*

*Israel’s Failed Response to the Armenian Genocide: Denial, State Deception, Truth versus Politicization of History, by Israel Charny, Boston: Academic Studies Press, 267 pp. ....*138

*Правила этики.....*143

*Руководство для авторов.....*144



**«ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ» ԿԱՐԳԱՆՈՍԸ ԵՎ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ  
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ**

*Հարություն Տ. Մարության*

*«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան*

2015 թ. հունվարի 29-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստում ընդունված հռչակագրում նշվում է, որ այն պատմական արդարության համար մղվող պայքարը դիտարկում է «Հիշում եմ և պահանջում» կարգախոսով շարունակելու գործը: Այսկերպ մեջտեղ եկած կարգախոսն առաջարկվում էր դիտել որպես հայոց հիշողության քաղաքականության ուղենիշային համառոտ ձևակերպում: Այս պարագայում առաջ են գալիս հարցեր, որոնք վերաբերում են տվյալ կարգախոսի բաղադրիչներին և կարիք են զգում հստակեցման 21-րդ դարում Հայոց ցեղասպանության հիշողության փոխանցման համատեքստում: Մասնավորապես. ո՞ւմ եմ հիշում, ի՞նչ եմ հիշում, ինչպե՞ս եմ հիշում, ի՞նչ եմ պահանջում, ումի՞ց եմ պահանջում, ինչպե՞ս եմ պահանջում:

Հոդվածում<sup>1</sup> առաջարկվում և հիմնավորվում են նշված հարցերի պատասխանները: Ի մասնավորի, առաջին հարցի պարագայում առաջ է քաշվում Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրածների, նրանց հուշագրությունների մասին տվյալների և վերապրածների ձայնա- և տեսա- ձայնագրությունների էլեկտրոնային շտեմարանների կազմումը: Հիմնավորվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա անվանման վերաձևակերպման անհրաժեշտությունը: «Ինչ եմ հիշում» հարցի պատասխանում առաջարկվում է հիշել նաև Հայոց ցեղասպանության տարիների ինքնապաշտպանական մարտերը, հայ և օտար բարերարների հումանիստական օժանդակությունը, հումանիտար դիմադրությունը ցեղասպաններին, ընտանիքի անդամների, հարազատների ու բարեկամների փոխադարձ օգնությունը, բարոյական հաղթանակները, կենդանի մնալու համար մղվող պայքարը: «Ինչպե՞ս եմ հիշում» հարցի պատասխանում խոսվում է սգալու և արժանապատիվ հիշողության, հիշողության երթերի, հուշարձանների (խաչքարերի) կառուցման, «Հիշողության զբոսայգու» մշակույթի ներդրման, ցեղասպանության հիշողությունը որպես սփյուռքահայ համայնքների ամրապնդման միջոց կիրառելու ձևերի և թանգարանային ցուցադրությունների կազմակերպման անհրաժեշտության, զոհերի հավաքականությունից անհատ զոհերի առանձնացման ու նրանց նկարներով անցկացվելիք երթերի կազմակերպման, ցեղասպանության դասավանդման մեթոդաբանության ստեղծման անհրաժեշտության և նման այլ խնդիրների մասին:

«Ինչ եմ պահանջում» հարցին անդրադառնալիս խոսվում է առկա Հայոց պահանջատիրության մի շարք դրսևորումների մասին (հողային, իրավական, ֆինանսական, բարոյական), առաջ է քաշվում խնդրի նկատմամբ պետական մոտեցման ձևավորման անհրաժեշտության հարցը: «Ումի՞ց եմ պահանջում» հարցի դիտարկման ժամանակ ներկայացվում են հանրության մեջ առկա պահանջի հասցեատերերի մասին պատկերացումները (աշխարհից, Թուրքիայից, հայությունից և այլն): «Ինչպե՞ս եմ պահանջում» հարցը դիտարկելիս խոսք է գնում այնպիսի կառույցների ստեղծման մասին, որոնց նմանակները (օրինակ՝ յոթ տասնամյակ գործող

1 Հոդվածը պանելային գեկույցի տեսքով ամփոփ ներկայացվել է «Հայոց ցեղասպանության, հայկական պահանջատիրության և արցախյան հիմնահարցի խաչմերուկներում. հետահայաց գնահատումներ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովի ժամանակ (2021 թ. սեպտեմբերի 16-18, Երևան, ՀՅԹԻ հիմնադրամ, ՀՀ ԳԱԱ):

«Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների կոնֆերանս»-ը) ժամանակին ձևավորվել են համանման խնդիրներ լուծելու համար ու տասնամյակների ընթացքում հաջող քննություն են բռնել, ունեն մեծ փորձառություն, որի իմացությունն օգտակար կլինի նաև հայոց համար:

**Բանալի բառեր՝** կարգախոս, Հայոց ցեղասպանության հիշողություն, հիշողության փոխանցում, զոհեր, վերապրածներ, դիմադրողներ, ինքնապաշտպանություն, Հոլոքոստ, շտեմարան, փրկություն:

Հոդվածը ներկայացվել է 22.09.2021: Ընդունվել է տպագրության 16.11.2021:

The article was submitted on 22.09.2021 and accepted for publication on 16.11.2021.

Статья поступила 22.09.2021 и была принята к публикации 16.11.2021.

**Ինչպես հղել՝** Հարություն Տ. Մարության, ««Հիշում եմ և պահանջում» կարգախոսը և Հայոց ցեղասպանության հիշողության փոխանցման մարտահրավերները 21-րդ դարում», *Ցեղասպանագիտական հանդես* 9, no. 2 (2021), 9-54:

**How to cite:** Harutyun T. Marutyan, “The Motto ‘I Remember and Demand’ and the Challenges of Transmission of the Armenian Genocide Memory in the 21<sup>st</sup> Century,”

*Ts’eghaspanagitakan handes* 9, no. 2 (2021): 9-54.

**Как сослаться:** Арутюн Т. Марутян, “Девиз “Помню и требую” и вызовы 21-го века, связанные с передачей памяти о Геноциде армян,” *Тсехаспанагитакан андес* 9, no. 2 (2021): 9-54.

2015 թ. հունվարի 29-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստում միաձայն ընդունվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը, որն այնուհետև հանդիսավոր կերպով հրապարակվեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում: Հռչակագրի նախավերջին՝ 11-րդ կետում նշվում է, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը համախորհուրդ սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերի հետ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը դիտարկում է որպես կարևոր հանգրվան պատմական արդարության համար մղվող պայքարը «Հիշում եմ և պահանջում» կարգախոսով շարունակելու գործընթացում»<sup>2</sup>: Այսկերպ շրջանառության մեջ մտավ նշված կարգախոսը<sup>3</sup>, որը, փաստորեն, առաջարկվում է դիտել որպես հայոց հիշողության և պահանջատիրության քաղաքականության ուղենիշային համառոտ ձևակերպում: Այս պարագայում առաջ են գալիս հարցեր, որոնք վերաբերում են տվյալ կարգախոսի բաղադրիչներին և, իմ կարծիքով,

2 Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հրապարակվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր, <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>, դիտվել է 20.09.2021:

3 Կարգախոսը որևէ բանի ղեկավար, ուղենիշային սկզբունքը, գաղափարը, գլխավոր խնդիրը կամ քաղաքական պահանջները հակիրճ ձևով արտահայտող կոչն է, որը միևնույն ժամանակ համառոտ, հեշտ մտապահվող արտահայտություն է և ամփոփում է որևէ գաղափարի էությունը:

կարիք են զգում հստակեցման 21-րդ դարում Հայոց ցեղասպանության հիշողության փոխանցման համատեքստում: Ի մասնավորի<sup>4</sup>.

- ռոմ են հիշում,
- ինչ են հիշում,
- ինչպես են հիշում,
- ինչ են պահանջում,
- ումից են պահանջում,
- ինչպես են պահանջում:

Կարծում են, որ հենց վերը նշված հարցերի պատասխանների որոնումներն ու դրանց շուրջ ծավալվող քննարկումներն են դառնալու հայաստանյան հասարակության մեջ ցեղասպանության հիշողության նոր որակի ձևավորման հիմքը:

### Ո՞ՒՄ ԵՄ ՀԻՇՈՒՄ

Հարցի պատասխանի պետական-պաշտոնական մոտեցումն անփոփոխ ձևով առկա է արդեն երեսուն տարի, ոչ-պաշտոնական ձևով՝ ավելի քան մեկ դար: Հիշենք, որ 1919 թ. ապրիլի 11-ի (նոր տոմարով՝ 24-ի) ոգեկոչումը Կ.Պոլսում իրականացվեց սգահանդեսի/հոգեհանգստի ձևով և նվիրված էր նահատակված մտավորականների (և հոգևորականների) հիշատակին: Սգահանդեսային մոտեցումը պահպանվեց սփյուռքի գաղթօջախներում երկար տասնամյակներ և այդ հանդեսներում շարունակաբար հիշվում էին նահատակ մտավորականները, աստիճանաբար և Մեծ եղեռնի հավաքական 1.5 միլիոն զոհերը<sup>5</sup>: Խորհրդային Հայաստանի գոյության վերջին ժամանակաշրջանում՝ 1988 թ. նոյեմբերի 22-ին, հանրապետության խորհրդարանն ընդունում է օրենք<sup>6</sup>, ըստ որի՝ ապրիլի 24-ը հայտարարվում է «հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»: Այսինքն՝ «ռոմ ենք հիշում» հարցի պաշտոնական պատասխանն է՝ հիշում ենք Հայոց ցեղասպանության զոհերին: Իսկ ովքեր էին «զոհերը» հարցն ունի, թվում է թե մեկ պատասխան՝ 1.5 միլիոն սպանվածները, ցեղասպանության տարիների անմարդկային պայմանների հետևանքով սովից ու հիվանդություններից մահացածները: Լայն առումով՝ հայ մարդիկ, ում կյանքը ոչ բնական ճանապարհով ընդհատվել էր ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրության տարածքում:

Հարց է առաջանում. իսկ միթե զոհեր չեն հարյուր հազարներով այն հայ մարդիկ,

4 Հարցադրման մասին տե՛ս նաև՝ Harutyun Marutyan, “The Armenian Genocide and the Jewish Holocaust: Trauma and Its Influence on Identity Changes of Survivors and Their Descendants,” in *Armenian and Jewish Experience between Expulsion and Destruction*, eds. Sarah M. Ross and Regina Randhofer (Berlin: De Gruyter Oldenbourg, 2021), 187, doi: 10.1515/9783110695403-010

5 Մանրամասն տես Հարություն Մարության, «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը, զարգացումները, մերօրյա վիճակը (մաս 1)», *Ցեղասպանագիտական հանդես* 6, no. 1 (2018), 105-129: Նույնի, «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը, զարգացումները, մերօրյա վիճակը (մաս 2)», *Ցեղասպանագիտական հանդես* 6, no. 2 (2018), 103-142:

6 Հայկական ՍՍՀ օրենքը «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին», <http://www.irtek.am/views/act.aspx?aid=8170>, դիտվել է 20.09.2021:

որոնք տարբեր ճանապարհներով փրկվել և վերապրել են ցեղասպանությունը<sup>7</sup>: Նրանց մի մասը կորցրել է ծնողներին ու հարազատներին, մի մասը մի կերպ ճողոպրել է ու կիսասոված գոյություն է քարշ տվել, մի մասը չի ստացել համապատասխան կրթություն և ողջ կյանքում զբաղվել է իր ունակություններին ոչ համարժեք աշխատանքով, ի վիճակի չի եղել կարիերա անել, մի մասը զրկված է եղել ընտանիք կազմելու հնարավորությունից և այլն, և այլն: Վերապրածների մեծագույն մասը կորցրել է Հայրենիքը, այնտեղ վերադառնալու և հայրենի բնակավայրում ապրելու հնարավորությունը, կորուսյալ Հայրենիքի կարոտը հետագա ողջ կյանքի ընթացքում տանջել է նրանց, այն փոխանցվել է վերապրածների սերունդներին որպես տրավմատիկ հիշողություն: Այսինքն՝ վերապրածներն էլ են զոհեր, սակայն նրանք չեն մտնում 1.5 մլն զոհերի թվի մեջ, քանի որ ողջ են մնացել, *վերապրել են* ցեղասպանությունը:

Վերապրածների մի զգալի մասն իրենց կյանքով ու գործունեությամբ սկիզբ են դրել մերօրյա բազմամիլիոն հայկական սփյուռքին, որտեղ նրանցից շատ շատերը՝ նոր ընտանիքներ կազմելով, փորձեցին յուրովի «վերակենդանացնել» օսմանյան յաթաղանին զոհ գնացած իրենց ծնողներին, քույրերին ու եղբայրներին՝ զավակներին տալով զոհված հարազատների անունները: Վերապրածների ստեղծած բազմաաղանջ ընտանիքներն ինչ-որ չափով մոռացության կորստից փրկեցին հազարավոր տոհմանուններ: Վերապրածներն իրենց նորաստեղծ ընտանիքներով, փաստորեն, իրականացրին յուրատեսակ ազգածնություն, հաղթահարելով քաոսը՝ վերստեղծեցին արևմտահայոց նոր տիեզերքը: Այդկերպ նրանք կարծես թե իրենց վրա վերցրին արարիչի, դեմիուրգի գործառույթներ<sup>8</sup>: Նմանատիպ գործընթացներ տեղ գտան նաև Արևելյան Հայաստանում:

Հրեից պարագայում Հոլոքոստի (1933-1945) զոհերին տրամադրվող բազմամիլիարդ հատուցումների հասցեատերերի մի զգալի մասը հենց վերապրածներն են, ինչպես նաև զոհերի ժառանգները: Հրեից մեջ Հոլոքոստի զոհեր, կամ, ավելի ճիշտ, վերապրած-տուժածներ են համարվում նրանք, ովքեր իրենց բնակության վայրերից ենթարկվել են բռնի տեղահանման, տարհանվել են համակենտրոնացման ճամբարներ, բռնի աշխատել են հանքերում, աշխատանքային գումարտակներում և այլուր, ենթարկվել են որոշակի բարոյական կամ այլ բնույթի զրկանքների, հալածանքների, հնարավորություն չեն ունեցել ստանալ համապատասխան կրթություն, զուրկ են եղել մասնագիտական աճի հնարավորություններից և այլն<sup>9</sup>:

7 Հարցի շուրջ տե՛ս, օրինակ, Ադետն վերապրողներ [Լեոն Մեսրոպ], 1915. *Աղէտ եւ վերածնունդ* (Փարիզ, Արաքս, 1952); Donald E. Miller and Lorna Touryan Miller, *Survivors: An Oral History of the Armenian Genocide* (Berkeley, Los Angeles, London: University of California Press, 1993); Վերժինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ (երկրորդ, համալրված հրատարակություն)* (Երևան, Գիտություն, 2011); Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու (կազմողներ՝ Գոհար Ավագյան, Ամատունի Վիրաբյան, գլխ. խմբ. Ամատունի Վիրաբյան) (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, հ. 1-3, 2012):

8 Հմմտ. Արմեն Պետրոսյան, «Հայոց ցեղասպանությունը որպես ազգածնություն», *Հայացք Երևանից. հայագիտական* 4 (1997), 50-51:

9 Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, «Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները

\*\*\*

Հայոց ցեղասպանության վերապրածների թեման շատ ծավալուն խնդիր է: Ստորև ես կփորձեմ մեկ-երկու շեշտադրում միայն առաջարկել:

Մարդու կյանքում տեղ գտած կարևոր իրադարձություններին, որպես կանոն, հաջորդում են դրանց մասին խոսելը, պատմելը, գրելը, ուրիշների հետ կիսվելը կամ այդ ամենի ցանկությունը: Սակայն իրավիճակը նույնը չի լինում, երբ այդ իրադարձություններն ունենում են *տրավմատիկ* բնույթ: Ընդ որում, տրավման հաճախ պատասխան է ոչ այնքան իրադարձությանը, որքան իրադարձությանը տրվող իմաստին<sup>10</sup>: Տրավմատիկ հիշողությունները մեծ ցավ են պատճառում վերապրածներին, և դրանց մասին տեղեկատվությամբ հարազատների կամ երիտասարդ սերնդի հետ կիսվելու ցանկություն նրանք, որպես կանոն, չեն ունենում: Ինչու՞: Այդ կերպ, ինչպես վերապրածներին է թվում, նրանք կարող են ոչ միայն իրենք հերթական անգամ վերապրել իրենց աչքով տեսած դաժանությունները, այլև «վարակել» երիտասարդներին իրենց ցավով, նրանց նույնպես տրավմա պատճառել: Այդ իսկ պատճառով շատ վերապրածներ լուրջ են, կամ էլ կիսվում են հիշողություններով միայն համանման ճակատագիր ունեցող մարդկանց միջավայրում: Համենայն դեպս, որպես կանոն, ոչ իրենց երեխաների հետ: Լուծումներից մեկն էլ այն է լինում, որ վերապրածներն սկսում են հուշեր գրել՝ երբևիցե դրանք իրենց մեթափոխներին կամ լայն հանրությանը փոխանցելու նպատակով (լուս. 1): Այսպես թե այնպես՝ ցեղասպանությունը վերապրածների ինքնությունը ձևափոխվում է. նրանք այլևս այն մարդիկ չեն, ինչպիսին էին մինչ իրենց ու իրենց հարազատների հետ պատահած ողբերգական իրադարձությունները<sup>11</sup>:

Ընդհանրապես տրավմայի տեսության մեջ հարաբերությունը լռելու և խոսելու միջև ներկայացվում է որպես ազատագրման՝ ինչպես քաղաքական, նույնպես և անհատական ձև, միջոց, մի կողմից կոչված վեր հանելու ճշմարտությունները, որոնք մերժվել էին և աշխարհին հիշեցնելու իր պատասխանատու լինելու մասին՝ հանդեպ նրանց, ովքեր տառապել էին ու, մյուս կողմից, անձին բուժելու հենց միայն խոսելու

---

հրեությանը. ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը», *Արևմտահայության պահանջատիրության հիմնահիմունքները. գիտական զեկուցումների ժողովածու*, գիտ. խմբ. Արտաշես Շահնազարյան, Հարություն Մարության, կազմողներ՝ Անդրանիկ Արշակյան, Վլադիմիր Վարդանյան (Երևան, Տիգրան Մեծ տպ., 2009), 91-106: Նույնի, «Փոխհատուցման ստացման հրեական փորձից. «Պահանջների կոնֆերանս» կազմակերպության ձևավորումը և գործունեությունը», *Հայոց ցեղասպանությունը և հատուցման հիմնահիմունքները: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու*, խմբ. Արմեն Մարության (Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2017), 156-173:

10 Katharine Hodgkin and Susannah Radstone, "Remembering Suffering: Trauma and History: Introduction," in *Contested Pasts: The Politics of Memory*, ed. Katharine Hodgkin and Susannah Radstone (London and New York: Routledge, 2003), 97.

11 Harutyun Marutyan, "The Armenian Genocide and the Jewish Holocaust: Trauma and Its Influence on Identity Changes of Survivors and Their Descendants," 181. Հարցի շուրջ տես նաև. Հարություն Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Տեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* (Երևան, Գիտություն, 2009), 57-61 («Բանավոր պատմություններ և տրավմատիկ հիշողություն. փոխհարաբերության հարցեր»): Նույնի, «Տրավմատիկ հիշողությունն իբրև հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոն Թուրքիայում», *Թուրքիայի հայության խնդիրների շուրջ: Տեղեկագիր «Տորավանք» հիմնադրամի* 22 (2008), 110-121:

և լսելի լինելու գործողության միջոցով<sup>12</sup>: Վերապրածների պայքարը մահվան հետ և կյանքի իմաստի ընկալումները մահվան դեմհանդիման կանգնելու պարագայում իր հերթին կյանքի վերաիմաստավորման յուրօրինակ մոդելներ է առաջարկում վերապրածների պատմությունները գրանցողների և ուսումնասիրողների համար:


Պատմական ցանկացած իրողության մասին հիշողության փոխանցման լավագույն գործիքը/միջոցը մարդիկ են՝ ականատեսները (լուս. 2): Սակայն Հայոց ցեղասպանությունից անցել է հարյուր տարի: Այսօր ցեղասպանության ականատեսներից-վերապրածներից ողջ են մնացել մի քանի հոգի միայն: Ականատեսների տարիքն ու առողջական վիճակը թույլ չի տալիս նրանց դառնալ խորհրդանիշներ, և կամ ակտիվ գործունեություն ծավալել հանրային դաշտում: Զանգվածային լրատվամիջոցներն էլ, որոնց գործունեության արդյունքում են ի վերջո ստեղծվում «կենդանի սիմվոլները», ականատեսներին հիշում են, որպես կանոն, ցեղասպանության հերթական տարեկիցին ընդառաջ: Ոչ միայն մեր օրերում, այլև տասնամյակներ առաջ նույնպես Խորհրդային Հայաստանում և Հայաստանի Հանրապետությունում մեջտեղ չեկան ցեղասպանության թեման հանրային դաշտում քննարկող ականատես-վերապրածներ, որոնք կդառնային հայտնի հասարակական, կուսակցական կամ քաղաքական գործիչներ, հանրության շրջանում «եղանակ ստեղծող» դեմքեր: Երևի թե, ինչպես ասում են, «Ժամանակներն էին մեղավոր»: Նման որակման մեջ հեզանք չկա. չմոռանանք, որ Խորհրդային Հայաստանի ղեկավարները Մեծ եղեռնից միայն 60 տարի հետո են իրավունք ձեռք բերել պաշտոնապես՝ Ցեղասպանության զոհերի հուշահամալիր այցելելու միջոցով, հարգանքի տուրք մատուցելու անմեղ զոհերի հիշատակին<sup>13</sup>, ցեղասպանությունից միայն 80 տարի անց է բացվել առաջին ու միակ Հայոց ցեղասպանության թանգարանը: Եվ այս վերջին իրողության հիմնական պատճառը Հայաստանի անկախ պետականության վերականգնումն էր:

Հրեից պարագայում իրավիճակն այլ էր: Անկախ պետականության վերականգնումը Հոլոքոստից անմիջապես հետո (1948), ողբերգության հիշողության պահպանության անհրաժեշտության գիտակցումը բերեցին թանգարանների և ցուցադրությունների, ֆիլմերի ստեղծման, արժեքավոր ուսումնասիրությունների մեջտեղ գալուն և գրքերի հրատարակությունների արդեն 1950-60-ական թվականներից սկսած: Տասնյակ տարիներ շարունակ Հոլոքոստը վերապրածները ակտիվորեն ներգրավված են կրթական և քարոզչական ոլորտում, մասնավորապես դպրոցներում ու թանգարաններում մասնակցելով պարբերաբար կազմակերպվող հանդիպումների ու քննարկումների, նրանց մասին, ու նրանց մասնակցությամբ ստեղծվում են վավերագրական ֆիլմեր: «Շինդլերի ցուցակը» ֆիլմի ռեժիսոր Սթիվեն Սփիլբերգի նախաձեռնությամբ և նրա իսկ կողմից ավելի քան 50 մլն դոլարի ներդրմամբ 1994 թ. ստեղծվեց մի նախագիծ, որը հնարավորություն է ընձեռում բոլոր վերապրածներին կիսվելու իրենց պատմություններով: Արդյունքում աշխարհի 65 երկրներում 43 լեզվով հարցազրույցներ վերցվեցին

12 Hodgkin and Radstone, "Remembering Suffering," 97-103.

13 Արմենայրես, «Եղեռնի զոհերի հուշարձանի մոտ», *Պատմա-քաղաքական հանդես* 2 (1975), 79-80:





Լուս. 1. ՀՅԹ-ի ֆոնդերում պահվող հուշագրություններից:  
Լուս-ը՝ Հ. Մարությանի:



Լուս. 2. Պիակատ Հայոց ցեղասպանությունը վերապրածների լուսանկարներով: Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրի մուտքի մերձակայք, 25 ապրիլի 2005 թ.:  
Լուս-ը՝ Հ. Մարությանի:

Հոլոքոստի 55000 վերապրածներից ու վկաներից՝ ստեղծելով մեծաքանակ տեսա-ձայնային արխիվ: Այստեղ առաջին հերթին վավերագրված են վերապրածների անձնական կյանքի պատմությունները՝ շաղկապված իրենց ընտանիքների, հարազատների, համայնքների պատմությունների հետ Հոլոքոստից առաջ, ընթացքում և հետո: Կարելի է ասել, որ Հոլոքոստի մասին բանավոր հիշողությունը վավերագրված ու պահպանված է<sup>14</sup>: Մյուս կարևորագույն նպատակն այդ պատմությունները, դրանցում ամբարված հիշողությունն ու կենսափորձը փոխանցելն է հաջորդ սերունդներին, ինչն էլ զգալի չափով իրագործվում է կրթության համակարգի միջոցով: Ընդ որում, ստեղծված է մի այնպիսի համակարգ<sup>15</sup>, որը հնարավորություն է տալիս Հոլոքոստի թվայնացված, ցուցակագրված, ինդեքսավորված հիշողությունը փոխանցելու ոչ միայն հրեա մարդկանց, այլ տարբեր երկրների ու ժողովուրդների բազմամիլիոն քաղաքացիներին:

Ինչ էլ այս ուղղությամբ արված հայոց պարագայում ժամանակին համաքայլ գնալու նպատակով: Վերապրածների գրանցված տեսա-ձայնային պատմությունների թիվը չի անցնում, մոտավոր հաշվարկներով, 3000-ից<sup>16</sup>: Միքայել Հակոբյանի 400 տեսաձայնագրություններով արխիվը հանձնված է վերոնշյալ Շոա հիմնադրամին<sup>17</sup>, նույն տեղում են գտնվում պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանի շուրջ 1000-ի հասնող աուդիո ձայնագրությունները<sup>18</sup>: Այդտեղ նյութերը մշակվում են, որպեսզի մատչելի դառնան ինչպես հետազոտողների, այնպես էլ լայն հանրության համար Շոայի կայքէջի միջոցով<sup>19</sup>: Զորյան ինստիտուտի արխիվում գտնվող շուրջ 800 տեսաձայնագրությունները<sup>20</sup>

14 Մանրամասն տե՛ս <https://sfi.usc.edu/what-we-do/collections>, դիտվել է 20.09.2021:

15 Մանրամասն տե՛ս <https://iewitness.usc.edu/home>, դիտվել է 20.09.2021:

16 Մանրամասն տե՛ս Gerard J. Libaridian, “Summary of a Survey on Collections of Video and Audio Recorded Testimonies of Survivors of the Armenian Genocide,” <http://entriessas.com/research-guides/testimonies/>, դիտվել է 20.09.2021:

17 Armenian Film Foundation Delivers 400 Digitized Testimonies to USC Shoah Foundation, <http://asbarez.com/122212/armenian-film-foundation-delivers-400-digitized-testimonies-to-usc-shoah-foundation/>, 23 April 2014. USC Armenian Studies to Salute Shoah Foundation for Genocide Digitization Project, <http://asbarez.com/100703/usc-armenian-studies-to-salute-shoah-foundation-for-genocide-digitization-project/>: Խոսելով երևույթի նշանակության մասին՝ Շոա հիմնադրամի գործադիր տնօրեն դր. Սթեֆըն Սմիթը նշում է, որ «Կարևորն այստեղ այն է, որ այս համագործակցության արդյունքում վկայությունները կշարունակեն մնալ որպես հայկական համայնքի ժառանգության մաս և կմնան հայկական համայնքի ներսում, սակայն այդ վկայությունների գործընթացը կհասնի աշխարհին»: Shoah Foundation Director Discusses Digitization of Armenian Survivor Testimonies, <http://asbarez.com/102344/shoah-foundation-director-discusses-digitization-of-armenian-survivor-testimonies/>, 13 April 2012, դիտվել է 20.09.2021:

18 <https://sfi.usc.edu/content/hovannisian-collection-body-text>; The Richard Hovannisian Oral History Collection at the Shoah Foundation, <https://massispost.com/2019/03/the-richard-hovannisian-oral-history-collection-at-the-shoah-foundation/>, դիտվել է 20.09.2021: 2021 թ. հոկտեմբերին Շոա հիմնադրամի և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի միջև կնքված համաձայնագրի դրույթներով ՀՅԹԻ-ին է հանձնվում պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանի բանավոր պատմությունների հավաքածուի կրկնօրինակը՝ դրա վերականգնումից և թվանշանայնացումից հետո:

19 Տե՛ս օրինակ <http://iewitness1915.org/survivors-2/>, դիտվել է 20.09.2021:

20 K.M. Greg Sarkissian and George Shirinian, Description of the Oral History Collection at the Zoryan Institute, an expanded version of a presentation made at the “International Conference on Armenian



դրված են Հայաստանի ամերիկյան համալսարանի տրամադրության տակ, մշակվում են տեղի ուսանողության ուժերով<sup>21</sup>: Այսքանը՝ «Ժամանակին համաքայլ գնալու» մասով: Շուալի կայքէջին համարժեք հայկական/հայաստանյան համապատասխան կայք ստեղծելու խնդիր դնում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, սակայն հովանավորներ դեռևս չկան: Միննույն ժամանակ պետք է նշել, որ հայ իրականության մեջ առկա են մեծ քանակությամբ հուշագրություններ՝ տպագրված ինչպես ժողովածուների և առանձին գրքերի տեսքով, այնպես էլ ցրված մամուլում և այլուր: Դրանց մեծագույն մասը թվայնացված չէ: Տպագրված հուշագրությունների մեկ ընդհանրական մատենագիտական ցանկ գոյություն չունի<sup>22</sup>: ՀՅԹԻ ֆոնդերում առկա են տարբեր ծավալներ ունեցող մինչև 480 հուշագրություններ (մեծամասամբ անտիպ) և թանգարան-ինստիտուտը 2019 թ. ձեռնամուխ է եղել դրանց հակիրճ, բայց մասնագիտական նկարագրությունների կազմմանն ու կայքէջում տեղավորելու գործին: 2020 թ.-ից ՀՅԹԻ-ն ձեռնարկել է հուշագրությունների շարունակական հրատարակությունը՝ հիմնելով «Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններ» մատենաշարը: Հայաստանյան դպրոցական և բուհական կրթական ծրագրերում հուշագրությունների միջոցով անհատական պատմությունների մատուցմամբ ցեղասպանության իրական պատկերը վեր հանելու մեթոդաբանություն դեռևս գոյություն չունի:

Ընդհանրացնեմ. ականատես-վերապրածների և նրանց կենսագրական պատմությունների միջոցով ցեղասպանության հիշողության փոխանցման գործը հայոց մեջ ձեռք չի բերել այն դերը, ինչպիսին է, օրինակ, հրեից պարագայում: Մահացած մարդկանց «կենդանի հիշողությունները» կրթական մակարդակում օգտագործելու հարցը նույնպես լուրջ անելիքներ ունի:

Խնդիրը լուծելու գործում նշանակալի դեր կարող է խաղալ մեկ այլ մոտեցում, պայմանական ձևակերպմամբ՝ «հիշել բոլորին՝ անուն առ անուն»: Այսինքն՝ մի գործընթաց, երբ ֆիքսվում/հաշվվում են ցեղասպանության զոհերն ու վերապրածները: Ես շեշտում եմ հենց «գործընթացը», քանի որ վերջնադրությունքը կարող է երևան գալ մեկ-երկու տասնամյակ անց միայն: Չոհերի ու վերապրածների մասին տվյալներ հավաքելու *գործընթացում* մեջտեղ է գալու հսկայական նյութ ցեղասպանության ու հաջորդող տարիների շարքային անհատների ու ընտանիքների ճակատագրերի, նրանց ինքնությունների մասին, բացահայտվելու են նոր ու կարևոր իրողություններ ցեղասպանության ընթացքի, իրականացման ձևերի և բազմաթիվ այլ երևույթների

Genocide Oral History Collections in North America: Development, Utilization, Potential,” held at the University of California-Los Angeles, 2 April 2011, <https://zoryaninstitute.org/wp-content/uploads/2017/04/oral-history-overview.pdf>, դիտվել է 20.09.2021:

21 The Zoryan Institute, American University of Armenia Launch New Center for Oral History, <https://armenianweekly.com/2019/05/21/the-zoryan-institute-american-university-of-armenia-launch-new-center-for-oral-history/>, դիտվել է 20.09.2021:

22 Մեծ քանակությամբ ի մի բերված հուշագրությունների վերնագրեր և դրանց բովանդակային վերլուծություն առկա է Յարութին Իսկահատեանի «Վկայարան Հայկական ցեղասպանության» բազմահատորյակում (Պէյրոս, 2010 – ցայսօր):

մասին, «միկրոպատմությունների» հսկայական քանակությունը, ի վերջո, բերելու է նաև ցեղասպանագիտական հետազոտությունների մեջ որակական փոփոխությունների, նոր ու հետաքրքիր ոլորտների առաջին պլան գալուն:

Զոհերի և վերապրածների տվյալների շտեմարանը նախ և առաջ հարգանքի տուրք է 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակին, որոնք չունեցան անգամ գերեզման. առաջարկվող ծրագրի խնդիրներից մեկն է փորձել անմեղ զոհերի համար ստեղծել թեկուզ *վիրտուալ, թվանշային գերեզման*: Սա մի ճանապարհ է, որն առնվազն երեք տասնամյակ է, ինչ ընտրել են Հոլոքոստի հետազոտողները<sup>23</sup>: Այդ տասնամյակների ընթացքում շուրջ 6 մլն զոհերից հայտնի է դարձել 4.8 մլն-ի անունները, սակայն գործը դեռ շարունակվում է: Հայոց պարագայում ձեռնարկվել են որոշ փորձեր<sup>24</sup>, սակայն դրանց պակասել է, ինչպես ինձ է թվում, մասշտաբայնությունը և հետևողականությունը: Ցեղասպանությունից անցել է մեկ դար, մենք մտել ենք ցեղասպանագիտական հետազոտությունների երկրորդ հարյուրամյակը, ու եթե հիմա այս խնդիրը առաջ չքաշվի ու լուծման ուղղությամբ քայլեր չձեռնարկվեն, «ո՞ւմ եմ հիշում» հարցին, կարծում եմ, այլևս անդրադարձ չի լինի, ինչը, իմ համոզմամբ, հարված կլինի ցեղասպանության հիշողության փոխանցման մեխանիզմին, այն առավելապես կտանի սիմվոլիկ գիտելիքի հարթություն:

2021 թ. հուլիսի 15-ի Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հրամանագիր է ստորագրել, որի համաձայն՝ Ստամբուլի համալսարանի ռեկտորատի հովանու ներքո կստեղծվի «Ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների ուսումնասիրման միջազգային ինստիտուտ»<sup>25</sup>: Ավելի վաղ՝ 2020 թ., Թուրքիայում արդեն ստեղծվել էր Օսմանյան կայսրության օրոք Թուրքիայի իշխանությունների կողմից հայերի, ասորիների ու հույների դեմ իրականացված ցեղասպանության ժխտման քաղաքականության հարցով պետական կառույց: Հայտնի իրողություն է, որ Հայոց ցեղասպանությունը գիտական տեսանկյունից ապացուցված փաստ է, և Էրդողանի նոր որոշումը գնահատվում է որպես Թուրքիայի ժխտողական քաղաքականության ամրապնդման համար հերթական քարոզչական մեխանիզմի ստեղծում: Ենթադրում եմ, որ այդ «ինստիտուտը» քայլեր կձեռնարկի «ապացուցելու» համար, օրինակ, թուրքական ժխտողականության կարևորագույն թեզերից մեկը, այն է՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ եղել են «բախումներ» Օսմանյան կայսրության քաղաքացիական բնակչության շրջանում, որի արդյունքում եղել են զոհեր

23 Մանրամասն տե՛ս Database of Holocaust Survivor and Victim Names, <https://www.ushmm.org/remember/resources-holocaust-survivors-victims/database-of-holocaust-survivor-and-victim-names>, դիտվել է 20.09.2021:

24 *Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923) I Սեբաստիայի նահանգ*, կազմ. Լուսինե Խաչատրյան և Արփինե Բաբումյան (Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, 2004), 67 էջ: *Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923) II Խարբերդի նահանգ*, կազմ. Լուսինե Խաչատրյան և Արփինե Բաբումյան (Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, 2004), 70 էջ: *Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923) III Անգորայի նահանգ*, կազմ. Հասմիկ Շահբազյան և Ասահիտ Միրզոյան (Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, 2006), 52 էջ:

25 Էրդողանի հրամանով կստեղծվի ցեղասպանության ինստիտուտ, <https://www.iammedia.am/en/post/recognize-armenian-genocide-15-7>, դիտվել է 20.09.2021:

թե հայերի, և թե թուրքերի մեջ: Ու արդեն իրենք անուն առ անուն կհաշվեն, ասենք, երեք հարյուր հազար հայ գոհերին և կրկնակի անգամ ավելի թուրք գոհերին: Երևի թե այդ ժամանակ միայն Հայաստանի գիտության պատասխանատուները «խելքի կգան» ու կսկսեն քայլեր ձեռնարկել հարցի լուծման ուղղությամբ, ինչը կպահանջի առնվազն 10-15 տարվա լարված աշխատանք:

Այսպիսով, «ո՞ւմ եմ հիշում» հարցը ներկա պահին չունի լիարժեք պատասխան, առկա է այն մշակելու մարտահրավերը, որը կարող է իրականացվել 21-րդ դարի առաջին կեսին Հայոց ցեղասպանության գոհերի ու վերապրածների տվյալների էլեկտրոնային շտեմարանի ստեղծման միջոցով: Հարցի լիարժեք պատասխանի ձևավորմանը կարող է նպաստել նշված գործընթացին զուգահեռ ընթացող Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրությունների մասին տվյալների և Հայոց ցեղասպանությունը վերապրածների ձայնա- և տեսա- ձայնագրությունների էլեկտրոնային շտեմարանների կազմումը, ինչը հնարավորություն կտա ցեղասպանության գոհերի ու վերապրածների սերունդներին որոշակի տեղեկություններ ստանալ եթե ոչ իրենց անմիջական հարազատների ճակատագրի, անցած ուղու, ապա գոնե տվյալ բնակավայրում կամ տարածաշրջանում տեղ գտած ողբերգական պատմական անցքերի մասին:

Ցեղասպանության հիշողության անհատականացման գործընթացում շատ կարևոր է արժեքային վերակողմնորոշումների իրականացումը: Մանրամասնեմ: Հայոց ցեղասպանության ժամանակ և դրան հաջորդող տարիներին մեծ քանակությամբ օտարերկրացիներ օժանդակության ձեռք մեկնեցին հայ ժողովրդին՝ ամեն կերպ փորձելով մեղմացնել հայությանը բաժին հասած զրկանքները. դրանք և՛ հասարակական-քաղաքական ու մշակութային գործիչներ էին, և՛ բարերարներ, և՛ դիվանագետներ, և՛ միսիոներներ, և՛ որբախնամ գործունեության մեջ ներգրավված դաստիարակներ ու բժիշկներ, պարզապես սրտացավ մարդիկ (լուս. 3): Նրանց ջանքերի շնորհիվ անվերապահ մահվանից փրկվեցին տասնյակ հազարավոր հայ մարդիկ, նրանց ձեռք բերած միջոցներով բացվեցին և գործում էին տասնյակ որբանոցներ, որտեղ իր փրկությունն էր գտնում հայ ժողովրդի ապագան՝ մատաղ սերունդը, ապաստարաններում՝ թուրքական/քրդական գերությունից փրկված հայ կանայք ու երեխաները: Հայ ժողովուրդը մեծ երախտագիտությամբ է հիշում ու պատվում նրանց. անվանակոչվում են դպրոցներ ու փողոցներ, հրատարակվում են գրքեր, նշվում են հոբելյաններ և այլն<sup>26</sup>:

Օտարների նկատմամբ երախտագիտության բազմապիսի դրսևորումները հաճախ ստվերում են այն իրողությունը, որ Հայոց ցեղասպանության տարիներին հայերի փրկության գործում մեծ ու կարևոր ավանդ են ունեցել հենց հայկական կազմակերպությունները, հայագգի բարերարները, հայկական մամուլը, շարքային

26 Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի չորրորդ կետում գրված է. «Երախտագիտություն է հայտնում այն ազգերին, կառույցներին և անհատներին, որոնք հաճախ իրենց վտանգելով՝ մարդասիրական տարաբնույթ օգնություն ցուցաբերեցին, փրկեցին լիակատար ոչնչացման վտանգի առջև կանգնած բազմաթիվ հայերի, ապահով և խաղաղ պայմաններ ստեղծեցին ցեղասպանությունից վերապրած հայության համար՝ մեծ թափ հաղորդելով որբախնամ գործունեությանը և միջազգային հայասիրական շարժմանը»:

հայ մարդիկ: Պետականության բացակայությունը ստիպում էր հայ մարդկանց ինքնակազմակերպվել, ձեռնարկել քարոզարշավներ, դրամահավաքներ, հանգանակություններ, ստեղծել ազգախնամ ու որբահավաք հաստատություններ, որբանոցներ ու ապաստարաններ, բացել դպրոցներ ու վարժարաններ: Կամավորական շարժումը ոչ միայն ի զեն էր կոչում հայ երիտասարդներին, այլ նաև նրանց դարձնում էր որբախույզներ, ուժացման եզրին կանգնած հայության բեկորների հայտնաբերողներ ու իր ժողովրդի գիրկը վերադարձնողներ: Հայոց փրկության օտարազգի սատարողների ֆինանսավորմամբ գործող բարեսիրական հաստատությունների աշխատակիցների ճնշող մեծամասնությունը՝ խնամողներ և քույրեր, խոհարարներ և մաքրության պատասխանատուներ, ուսուցիչներ և դաստիարակներ՝ հայ մարդիկ էին (լուս. 4): Հայերի կազմակերպված ինքնօգնությունը ցեղասպանությանը դիմադրելու արդյունավետ ձևերից մեկն էր դարձել<sup>27</sup>: Կարծում եմ, որ Հայոց ցեղասպանության հիշողության փոխանցման 21-րդ դարի մարտահրավերներից մեկն էլ հայոց դերը հայոց փրկության մեջ վեր հանելու անհրաժեշտությունն է:

\*\*\*

Ցեղասպանության մասին խոսելիս, լինեն դրանք տարվա ընթացքում, ապրիլ ամսին, թե հերթական տարեկիցներին, որպես կանոն, շեշտադրումներն արվում են հայոց կորուստների վրա: Թվում է, թե դա բնական է, քանի որ օսմանահպատակ հայությունը կորցրեց իր բնակչության շուրջ 2/3-ը, հայրենիքը, գլխատվեց մտավորականությունը, ոչնչացվեցին բազմահազար ազգային-մշակութային արժեքներ և այլն: Կորուստները՝ հատկապես մարդկային, շատ ծանր էին, անդառնալի:

Հիշողության մշակույթը, որ հետցեղասպանական տարիներին ձևավորվեց Հայաստանում և Սփյուռքում, նույնպես հենված էր կորուստները սգալուն, նահատակների հիշատակը խնկարկելուն: Ցեղասպանության զոհերի հիշելուն ուղղված թե՛ կրոնական, թե՛ աշխարհիկ միջոցառումները գերազանցապես նման բնույթի էին:

Վիճակը Հայաստանում աստիճանաբար սկսեց փոխվել 1980-ական թվականների վերջերից – 1990-ական թվականների ընթացքում: Փոփոխության հիմքում ընկած էր ազգային ոգու այն զարթոնքը, որ հայ ժողովուրդն ապրեց Ղարաբաղյան շարժման (1988-1990), ապա և Ղարաբաղյան/Արցախյան պատերազմի (1992-1994) տարիներին: Ղարաբաղյան շարժման տարիներին 20-րդ դարասկզբի կոտորածների և ցեղասպանության հենքով պայմանավորված հայերի պատմական հիշողությունը և 20-րդ դարավերջի իրադարձությունների ընթացքին անցյալի հենքով ձևավորված կոլեկտիվ հիշողությունը ձեռք բերեցին հեղափոխական զարգացումների շարժիչ ուժի կարգավիճակ: Բնութագրական է, որ ինչպես 20-րդ դարավերջին, նույնպես և 20-րդ դարասկզբին ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու փորձը սկզբնական փուլում զուգակցվում էր պայքարի ֆիդայական եղանակի գերապատվությամբ, ապա

27 Հարություն Մարության, «Ներածություն», *Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.*: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (խմբ. Հարություն Մարության, Նարինե Մարգարյան), Երևան («Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, 2020), 11-12:



Լուս. 3. Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրի հուշապատի հետնամասում հայերի ցեղասպանության դեմ բողոքի ձայնը բարձրացրած օտարազգի հասարակական-քաղաքական գործիչների գերեզմաններից վերցրած հողով լի սափորները պարունակող խորշերը: 18 հունվարի 2022 թ.: Լուս-ը՝ Հ. Մարությանի:



Լուս. 4. ՀԲԸՄ Արարատյան որբանոցի աղջիկների խումբը: Երուսաղեմ, 1922 թ.: Փարիզ, ՀԲԸՄ Նուբարյան գրադարան:



և կազմակերպված զինուժի գործողություններով: 20-րդ դարավերջի ճգնաժամից դուրս գալու փորձը զուգակցվում էր 20-րդ դարասկզբի ճգնաժամի հաղթահարման համար մղվող պայքարով, որի դրսևորումներից մեկն էլ այն է լինում, որ արդեն իսկ Ղարաբաղյան շարժման ընթացքում արդարություն և կարեկցանք հայցող զոհի խորհրդանիշն իր տեղը զիջում է մարտիկի կերպարին, որը գիտակցել է, որ ազգային նպատակների իրագործմանը կարելի է հասնել միայն պայքարի ճանապարհով (լուս. 5): Հայ ինքնության մեջ տեղ գտած թերևս հենց այս փոփոխությունն էր, որ բերեց Արցախի ազատագրման համար մղվող պայքարի հաջողությանը<sup>28</sup>:

1990-ականներից սկսած՝ Հայոց ցեղասպանության մասին խոսելիս թե՛ զանգվածային լրատվության միջոցներում, թե՛ դպրոցական դասագրքերում, թե՛ գիտական հետազոտություններում աստիճանաբար ավելի շատ սկսեցին անդրադառնալ 19-րդ դարավերջի – 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներին, ֆիդայիներին, Ցեղասպանության տարիներին մղված զինված ինքնապաշտպանությունների դրվագներին, 20-րդ դարասկզբի զինվորական գործիչներին: Սակայն այդ որակական փոփոխությունը չստացավ ինստիտուցիոնալ ձևակերպումներ. ցայսօր մենք ազգովի պաշտոնապես ոգեկոչում ենք «ցեղասպանության զոհերի հիշատակը», ինչն ինքնաբերաբար, ուզում ենք դա թե՛ չենք ուզում, իր հետևից բերում է զոհի կաղապարի, զոհի մշակույթի կայունացմանը:

Մինչդեռ Առաջին աշխարհամարտի տարիներին առկա էին նաև այլ իրողություններ: Հիշեցման կարգով նկատեմ, որ Ռուսական կայսրությունում պատերազմի սկզբից ի վեր զինվորակոչված հայերի թիվը կազմում էր մինչև 250 հազ. մարդ: Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի բանակներում զորակոչված հայ մարտիկների թիվը անցնում էր 50 հազարից<sup>29</sup>: Ձևավորվեցին յոթ հայկական կամավորական ջոկատներ՝ իրենց կազմում ունենալով 6 հազ. հոգի<sup>30</sup>: 1916 թ. նոյեմբերին ֆրանսիական զորքերի կազմում ստեղծվեց հայերից բաղկացած Արևելյան լեգեոնը (ավելի քան 5 հազ. զինվոր), որը 1918 թ. դեկտեմբերին վերանվանվեց Հայկական լեգեոն<sup>31</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պատերազմող երկրներից և ոչ մեկում (բացի Օսմանյան կայսրությունից) չեն եղել քաղաքացիական բնակչության զինված ինքնապաշտպանություններ (1916-18 թթ. Արաբական ապստամբությունը ինքնապաշտպանություն չէր): Ինչո՞ւ է նման երևույթը տեղ գտել հենց Օսմանյան

28 Հարություն Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը*, 309:

29 *Հայ ժողովրդի պատմություն*, հ. VI. *Հայաստանը 1870-1917 թվականներին* (Երևան, Հայկ. ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1981), 547: Ա. Ս. Նազարյան, «Կովկասյան բանակի սոցիալական և ազգային կազմը (1914-1917 թթ.)», *Բանբեր Երևանի համալսարանի* 3 (1989), 151: Մուրադ Կարապետյան, *Հայերի մասնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմին (1914-1918 թթ.)* (Երևան, Գիտություն, 2014), 48, 97-98, 122-123, 127:

30 Աղբյուրները վկայում են, որ կամավորական շարժմանը մասնակցել ցանկացողների թիվը շատ ավելի մեծ էր ոչ միայն Հայաստանից և Անդրկովկասից, այլ նաև Ռուսաստանի մյուս վայրերից, արտասահմանյան երկրներից, սակայն Կովկասյան բանակի հրամանատարությունը, ղեկավարվելով կառավարության ցուցումներով, գիտակցաբար չգնաց կամավորների թվի ավելացմանը: Ашот Арутюнян. *Кавказский фронт: 1914-1917 гг.* (Ереван: Айастан, 1971), 296-297, 317.

31 *Армянский вопрос. Энциклопедия*, ред. К. С. Худавердян (Ереван, 1991), 59.

կայսրությունում: Թ-երես այն պատճառով, որ միայն Օսմանյան կայսրությունն էր, որ օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորություններից՝ փորձում էր ֆիզիկապես ոչնչացնել իր քաղաքացիական բնակչության մի որոշակի հատվածը՝ հայերին: Այն է՝ իրագործել ցեղասպանություն: Այսինքն՝ Առաջին աշխարհամարտի տարիների առանձնահատկություններից մեկը՝ Օսմանյան կայսրության վարած ցեղասպանության քաղաքականությունը, հանգեցրեց Առաջին աշխարհամարտի մեկ այլ առանձնահատկության՝ հայոց ինքնապաշտպանական կոիվներին<sup>32</sup>:

Վերհիշենք, թե որտեղ և երբ տեղ գտան հայերի ինքնապաշտպանական կոիվները Օսմանյան կայսրությունում Առաջին համաշխարհային պատերազմի և Հայոց ցեղասպանության տարիներին<sup>33</sup>: Նախ նշեմ քաղաքներն ու խոշոր բնակավայրերը (նկատեմ, որ ստորև բերվող աղյուսակները չեն հավակնում *ամբողջական* պատկերը տալուն)։

|                 |                                     |                   |
|-----------------|-------------------------------------|-------------------|
| Շատախ/Թ-աղ      | 1915 թ. ապրիլի 1 – մայիսի 14        | 45 օր             |
| Վան             | 1915 թ. ապրիլի 7 – մայիսի 3         | 27 օր             |
| Շապին-Գարահիսար | 1915 թ. հունիսի 2 – 29              | 28 օր             |
| Մուշ            | 1915 թ. հունիսի 26-29               | 4 օր              |
| Ֆրնտընագ        | 1915 թ. հուլիսի 6-26/օգոստոսի 3     | 21-28 օր          |
| Ուրֆա           | 1915 թ. սեպտեմբերի 29 – հոկտեմ. 23  | 25 օր             |
| Մարաշ           | 1920 թ. հունվարի 21 – փետրվարի 10   | 21 օր             |
| Հաճըն           | 1920 թ. ապրիլի 1 – հոկտեմբերի 15    | 6.5 ամիս          |
| Այնթապ          | 1920 թ. ապրիլի 1 – 1921 թ. փետրվ. 8 | ավելի քան 10 ամիս |

Գավառներում, այսինքն՝ բազմաթիվ փոքր ու մեծ գյուղերում հայերը մի քանի ժամից մինչև մի քանի օր, շարաթ ու ամիս ինքնապաշտպանվել են թշնամու դեմ։

|                                       |                               |       |
|---------------------------------------|-------------------------------|-------|
| Գավաշ (Վասպուրական)                   | 1915 թ. ապրիլի 3 – մայիսի 11  | 38 օր |
| Փեսանդաշտ (Շատախի գավառ, Վասպուրական) | 1915 թ. ապրիլի 14 – մայիսի 10 | 27 օր |

32 Հարցին համառոտ անդրադարձը տե՛ս *Արտյոն Մարտյան*, «К вопросу об иконографическом восприятии памяти Первой мировой войны в армянской действительности», *Պատմաբանասիրական հանդես* 1 (2013), 3-5:

33 Խնդրի շուրջ քիչ չի գրվել, ընդհանրացնող բնույթի աշխատություններից նշեմ մի քանիսը. *Հերոսապատում Մեծ եղեռնի*, խմբ. Նազարեթ Պերպերեան, Սարգիս Մահսերեճեան, Շահանդուխտ, Նուպար Չարխոտեան (Պէյրոյթ, Համագգային, 1978): Ռուբեն Օ. Սահակյան, *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կոիվները 1915 թվականին* (Երևան, Գիտություն, 2005): Նույնի, *Ինքնապաշտպանական կոիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը* (Երևան, ա. հ., 2010): Էդիկ Միսայան, «Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թվականին», *Հայկական բանակ* 1-2 (2015), 88-134:



|                                                  |                               |          |
|--------------------------------------------------|-------------------------------|----------|
| Յոզղատ գավառի (Անկարայի նահանգ) հայկական գյուղեր | 1915-1917 թթ.                 |          |
| Սասուն                                           | 1915 թ. ապրիլ – օգոստոս       | 5 ամիս   |
| Մուսա-լեռան գյուղեր                              | 1915 թ. հուլիսի 21 – սեպտ. 12 | 53 օր    |
| Խնուս գավառի հայկական գյուղեր                    | 1915 թ. մայիս                 |          |
| Խոտորջուրի գավառ                                 | 1918 թ. հունվարի 20 – մայիս   | 3.5 ամիս |

Այսինքն՝ ցեղասպանության տարիներին շատ տեղերում հայերը զենքը (շատ հաճախ որսորդական և կայծքարե փականքով հրացաններով) ձեռքին պաշտպանել են իրենց և իրենց հարազատների ու ընտանիքների կյանքը, իրենց հայրենի բնակավայրերը։ Խոշոր քաղաքներից պալքարն ավարտվել է հաղթանակով միայն Վան քաղաքում (լուս. 6), ուր մտել են հայկական կամավորական ջոկատներ, ապա և ռուսական զորքեր<sup>34</sup>։ Այստեղ 72 օր շարունակ գոյատևել է հայկական իշխանություն, այսինքն՝ հաղթանակին ուղեկցել է քաղաքական հաջողությունը<sup>35</sup>։ Սակայն հետո ռուսական զորքերն անսպասելիորեն նահանջել են, հայկական ուժերին էլ ստիպել են նահանջել իրենց հետ միասին։ Եվ այսպես չորս անգամ<sup>36</sup>։ Վերջին անգամ հայկական իշխանությունը տեղի է տվել ու հեռացել քաղաքից 1918 թ. մարտին։ Վանի ինքնապաշտպանության կարևորագույն արդյունքներից մեկն էլ այն է եղել, որ Վասպուրականի շուրջ 150 հազ. բնակչությունը վերապրել է ու ներգաղթել է Արևելյան Հայաստան<sup>37</sup>, ևս մի քանի տասնյակ հազարը՝ Պարսկաստան ու այդտեղից էլ՝ Իրաք<sup>38</sup>։ Հաղթանակով են ավարտվել նաև մարտերը Շատախի կենտրոն Թաղում<sup>39</sup>։ Այնթապ քաղաքում մղված ինքնապաշտպանության հաղթական ավարտից ժամանակ

34 Հարցի շուրջ տե՛ս օրինակ՝ Արսէն Ա. Կէօրիկեան, *Վասպուրականի հերոսամարտը։ 1915 ապրիլի 7 – 1915 մայիսի 7։ Յոյս եւ լոյս* (Պէյրոս, Թեքէեան մշակութային միութեան հրատ., 1965)։ Վան-Վասպուրականի հերոսամարտը – 75, կազմ. Հ. Դ. Փափազյան (Երևան, Հայաստան, 1990)։

35 Հարցի շուրջ վերջին հրատարակություններից տե՛ս Ավետիս Հարությունյան, *Վան-Վասպուրականի կրոնամշակութային կյանքը և պետականության ստեղծման փորձը (1908-1918 թթ.)* (Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2018)։

36 Հարցի շուրջ տե՛ս օրինակ՝ Ավետիս Հարությունյան, «Վան-Վասպուրականի ազգաբնակչության մեծ գաղթը. Պատճառները, ընթացքը, հետևանքները և պատասխանատվությունը», *Հայաստանի մայրաքաղաքները։ Գիրք I. Վան։ Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբերի 2010 թ.) նյութերի ժողովածու*, կազմ., խմբ. Հարություն Մարության (Երևան, Գիտություն, 2013), 170-196։

37 Robert Tatoyan, “WWI Armenian Refugees Census Data as a Source for Ottoman Armenian Population Numbers on the Eve of the Armenian Genocide,” *International Journal of Armenian Genocide Studies* 5, no. 1 (2020): 58-59.

38 Seda Ohanian, “The Passage of Van-Vaspourakan Refugees’ Through Persia, March - August 1918 (Under the Leadership of Kosti Hambardzumian and Levon Shaghoyan),” *Review of Armenian Studies* 2 (2019): 30-45.

39 Ա.Դօ, *Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին* (Երեւան, Լոյս տպ., 1917), 365-403։

անց (20 հոկտեմբերի 1921 թ.) հաջորդել է ֆրանսիական հրամանատարության համաձայնությունը քեմալական ուժերի հետ և քաղաքը լքելու որոշումը, ինչի հետևանքով տեղի հայությունը նույնպես բռնել է գաղթի ճամփան, սակայն խուսափել է զանգվածային կոտորածներից:

Որոշ վայրերում հայերը դիմադրել են շատ կարճ, այլ տեղերում՝ շաբաթներ և ամիսներ շարունակ: Կազմակերպված ու չկազմակերպված, զինված ու շատ քիչ զենք-զինամթերքով: Երևույթը շատ բազմադեմ է, գնահատականները՝ տարբեր, սակայն իրողությունն այն է, որ Հայոց ցեղասպանության տարիներին հայերը, որտեղ եղել է հնարավորություն, զենքը ձեռքներին դիմագրավել են իրենց բնաջնջելու եկած թշնամուն, պաշտպանել են իրենց ընտանիքներին ու հայրենիքը<sup>40</sup>:

Մինչդեռ, ինչպես վերև արդեն նկատվեց, Հայոց ցեղասպանությանն առնչվող ամենամյա հիշատակումների ժամանակ, որպես կանոն, շեշտադրումներն արվում են «ցեղասպանության զոհերին», երբեմն էլ, որպես լրացում, հիշվում են հայ ֆիդայիները, ինքնապաշտպանական մարտերը: Սակայն այս «լրացումն», այնուամենայնիվ, մաս չի կազմում պաշտոնական, ինստիտուցիոնալ ձևակերպման, ինչը, իմ համոզմամբ, բերում է զոհի կաղապարի, զոհի մշակույթի կայունացմանը: Արդյունքներից մեկն էլ այն է լինում, որ հայտնի ու դեռևս անհայտ ինքնապաշտպանության կռիվների մասնակիցները, այսկերպ, նույնպես ներառվում են «զոհերի» շարքում: Տասնամյակներ շարունակ հենց միայն նման շեշտադրումը հանգեցնում է նաև թերաբժեքության բարդությունների դրսևորումներին, ցեղասպանության հիշողությունը որպես բեռ ընկալելու երևույթներին, որոշ դեպքերում էլ՝ դրանից «ազատվելուն» ուղղված գործողությունների անհրաժեշտության գիտակցմանը:

Հրեից պարագայում Հոլոքոստի ավարտից ընդամենը ութ տարի անց որոշվեց հիշատակի օրն անվանել «Նահատակների և հերոսների հիշատակի օր», իսկ 1959 թ. այն ամրագրվեց օրենսդրորեն<sup>41</sup>: 1953 թ. Յադ Վաշեմի մասին ընդունված օրենքի ինը հոդվածը պարզաբանում են, թե ո՞վ պետք է հիշվի. զոհերը, ընտանիքները, համայնքները, հերոսները, հրեա զինվորները, պարտիզանները, վերջիններիս օժանդակողները և նրանք, ովքեր փորձում էին բարձր պահել իրենց արժանապատվությունը: Այսպիսով՝ ինը հոդվածից վեցը հասցեագրված են պայքարին, դիմադրությանը<sup>42</sup>:

Հայոց պարագայում նման քայլեր չեն ձեռնարկվել<sup>43</sup>: Անցել է հարյուր տարի:

40 Անդրադարձ հարցին տե՛ս Մարության, *Հայ ինքության պատկերագրությունը*, 61-67: Նույնի, «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները», *Պատմաքննադատական հանդես* 2 (2011), 31-32:

41 Holocaust Martyrs' and Heroes' Remembrance Day, [https://knesset.gov.il/shoah/eng/shoah\\_memorialday\\_eng.pdf](https://knesset.gov.il/shoah/eng/shoah_memorialday_eng.pdf), դիտվել է 20.09.2021:

42 Martyrs' and Heroes Remembrance (Yad Vashem) Law 5713-1953, <https://www.yadvashem.org/about/yad-vashem-law.html>, դիտվել է 20.09.2021:

43 Պետք է նկատել, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի առաջին կետում խոսք է գնում նաև հերոսների մասին. «Ոգեկոչում է Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը և երախտագիտությամբ խոնարհվում *կյանքի ու մարդկային արժանապատվության համար պայքար մղած նահատակ և վերապրած հերոսների*

Ունենք Ցեղասպանության տարիների ինքնապաշտպանական կոիվների դեռևս լիարժեք գնահատականի սպասող իրողությունը, ունենք երեսնամյա ազգային պետականություն, արցախյան հաղթանակների և պայքարի գործոնը: Կարծում եմ վաղուց ժամանակն է վերաիմաստավորել հիշողության օրվա խորհուրդը, դրա անվանման մեջ իրականացնել առնվազն շեշտադրումների փոփոխություն և համապատասխան մասնագիտական ու հանրային քննարկումներից հետո շրջանառության մեջ դնել այլ բանաձևում. «Հայոց ցեղասպանության զոհերի և ինքնապաշտպանական կոիվների հերոսների հիշատակի օր» կամ «Հայոց ցեղասպանության հիշատակի օր. զոհեր, դիմադրողներ, վերապրածներ»<sup>44</sup>, նաև այս կերպ հնարավորինս հստակեցնելով «ո՞ւմ եմ հիշում» հարցի պատասխանը:

Հարցի բանավոր քննարկումների ժամանակ մասնագիտական և ոչ-մասնագիտական շրջանակներից երբեմն հնչում են մտահոգություններ, թե այս կերպ մենք կարող ենք ջուր լցնել թուրքական ժխտողականությանը, որի հիմնական կռվաններից է հայերին դավաճանության, զենքը ձեռքին Օսմանյան հայրենիքի դեմ ապստամբելու մեջ մեղադրելը: Ընդամենը երկու հակափաստարկ բերեմ: Առաջին. Հայոց ցեղասպանության ընթացքում տեղ գտած զինված ինքնապաշտպանությունների մասին հայ պատմաբանները գրում են արդեն հարյուր տարի: Անընդհատ նորանոր փաստեր են մեջտեղ բերվում, բացահայտվում են անօրինական սխրանքների նախկինում անհայտ էջեր: Ինքնապաշտպանությունների տարաբնույթ դրսևորումների նկարագրություններ են առկա նաև ականատես-վերապրածների հուշագրություններում: Այսինքն՝ եթե թուրք ժխտողական պատմաբանները ցանկանան հատուկ շեշտադրում անել ինքնապաշտպանությունների գործոնի վրա, ապա դրան նվիրված հայ պատմաբանների ուսումնասիրությունները, զանազան աղբյուրները շարադրված են, տպագրված են ու դրված են սեղանին արդեն մեկ դար շարունակ: Երկրորդ. ապստամբությունն ու ինքնապաշտպանությունն որակապես տարբեր երևույթներ են: Հայ մարդիկ ինքնապաշտպանության դիմել են ճարահատյալ, իրենց ու իրենց ընտանիքների, հարազատների, բարեկամների կյանքը փրկելու համար: Ինքնապաշտպանությունները եղել են տարերային, դրանց նախորդող իրադարձություններին ի պատասխան, մահաբեր վտանգն աչքի առջև ունենալու գիտակցությամբ: Այնպես որ, եթե մեղադրանքներ կարելի է հնչեցնել, ապա միայն հայոց կողմից, որոնք արդեն ունեին թե 1894-96 թթ. համիդյան ջարդերի հիշողությունը, թե Ադանայի կոտորածների մասին գիտելիքը և այլն:

---

անջև» [ընդգծումն իմն է-Հ.Մ.]:

44 Հարություն Մարության, «Ինքնապաշտպանության ֆենոմենը Հայոց ցեղասպանության տարիներին և հիշատակի օրվա վերաբանաձևման խնդիրը», *Ցեղասպանագիտական հանդես* 3, no. 1-2 (2015), 80: Նույնի, «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը», 134:

## ԻՆՉ ԵՄ ՀԻՇՈՒՄ

Նախ և առաջ թերևս պետք է փաստել մեկ իրողություն. երբ ցեղասպանությունը վերապրածներն արդեն վախճանվել են, նրանց երրորդ-չորրորդ սերնդի մեջ ցեղասպանության կոլեկտիվ հիշողությունը փոխարինվում է ցեղասպանության պատմական հիշողությամբ<sup>45</sup>: Այսինքն՝ ցեղասպանության հիշողության մեջ տեղեկատվության առաջնային աղբյուր են դառնում ոչ թե ականատեսները, վերապրածները, այլ պատմության դասագրքերը, պատմաբանների հետազոտությունները, գեղարվեստական գրականությունը, հուշագրությունները, ֆիլմերը, զանգվածային լրատվության միջոցները: Այս պարագայում պետք է ամրագրել, որ աստիճանաբար տեղ է գտնում «ցեղասպանության հիշողության» նոր մշակույթի ձևավորման գործընթաց, որի բնութագրական գծերի թվում են.

- Միջազգային հարթակներում Հայոց ցեղասպանության ճանաչման-չճանաչման հարցի էապես քաղաքականացված լինելու գիտակցումը,
- ցեղասպանության հիշողության մեջ առկա տրավմատիկ երանգների հաղթահարման գործնական փորձերը,
- ցեղասպանության հիշողության մեջ իրավական բաղադրիչի դերի բարձրացման անհրաժեշտության գիտակցումը:

«Ինչ եմ հիշում» հարցի պատասխանի մի մասը հնչեց «Ո՛ւմ եմ հիշում» հարցի պարզաբանումներում: Եթե փորձեմ համառոտ ընդհանրացնել, ապա պետք է հիշել այն սարսափելի արհավիրքները, որին ենթարկվեց հայ ժողովուրդը ցեղասպանության տարիներին, հսկայական ու անդառնալի մարդկային կորուստները, հայրենագրկումը, հազարամյա մշակութային արժեքների ոչնչացումը: Ցեղասպանության հիշողության նշաձու շերտերը «տրավմատիկ հիշողություն» հասկացության մասերն են:

Մարտահրավերն այս հարցում այն է, որ պետք է հիշել ոչ միայն տրավման, այլև շեշտադրումներ անել ցեղասպանության տարիների ձեռքբերումներին, ի մասնավորի՝ պայքարին ու հաղթանակին, այդ թվում՝ զինված ինքնապաշտպանություններին, հերոսական պայքարի առանձին դրվագներին, կենդանի մնալու, վերապրելու և նոր կյանք վերակերտելու ունակություններին: Այս կերպ է, որ ցեղասպանության հիշողությունը դառնում է հարստություն, այլ ոչ թե բեռ, որ կարելի է հարկ եղած դեպքում թողափել:

45 Ըստ հիշողության հարցերի խոշորագույն տեսաբան Մորից Հալբվախսի՝ հիշողության բնագավառում գատորոշվում են ինքնակենսագրական հիշողությունը, պատմական հիշողությունը, պատմությունը և կոլեկտիվ հիշողությունը: *Ինքնակենսագրական հիշողությունը* հիշողություն է այն իրադարձությունների մասին, որոնք արդյունք են մեր կենսափորձի: Մինչդեռ *պատմական հիշողությունն* այն հիշողությունն է, որ մեզ է հասնում միայն պատմական գրառումների միջոցով: *Պատմությունն* այն հիշվող անցյալն է, որի նկատմամբ մենք չունենք «օրգանական» հարաբերություն, այն անցյալը, որն այլևս մեր կյանքի կարևոր մասը չէ, մինչդեռ *կոլեկտիվ հիշողությունն* ակտիվ անցյալն է, որը ձևավորում է մեր ինքնությունները: Հիշողությունն անխուսափելիորեն ճանապարհ է տալիս պատմությանը, երբ մենք կորցնում ենք կապը մեր անցյալների հետ: Jeffrey K. Olick and Joyce Robbins, "Social memory Studies: From "Collective Memory" to the Historical Sociology of Mnemonic Practices," *Annual Review of Sociology* 24 (1998): 111; Jeffrey K. Olick, "Collective Memory: The Two Cultures," *Sociological Theory* 17, no. 3 (1999): 335.

Երախտագիտությամբ հիշելու արժանի են նաև, ինչպես արդեն նշվեց, հայ և օտար բարերարների ու մարդասերների հումանիտար օժանդակությունը: Կարծում եմ, որ այս հարցում նույնպես պետք է արվեն հատուկ շեշտադրումներ: Օրինակ, վերջերս մեջտեղ են գալիս աշխատանքներ, որտեղ վերոնշյալ հարցերը դիտարկվում են «հումանիտար դիմադրության» տեսության լույսի ներքո, երբ հայոց փրկության գործը դառնում է աքսորավայրերում կամ դրանց մերձակայքում ապաստանած հայության, նաև արդեն առկա հայկական գաղութների կազմակերպչական գործունեության ակտիվացման խթան: Ես սրան կավելացնեի *բարոյական դիմադրություն* ձևակերպումը, որի արդյունքը կարելի է որակել *բարոյական հաղթանակ* եզրույթով: Ի վերջո, չէ՞ որ ամենատարբեր գոհողությունների (պաշտոնյաների կաշառք, փախուստ, կեղծ կրոնափոխություն, եկեղեցու և այլ կառույցների միջոցով կազմակերպված դիմադրության իրականացում աքսորվելու դեմ, գոյատևում ամեն գնով և այլն) դիմող, անպատմելի տառապանքների միջով անցնող հայ մարդիկ *ողջ* էին մնում: Այսինքն՝ հայերի իսպառ բնաջնջումը տեղի չէր ունենում *նաև* հայոց ոչ բռնի դիմադրության շնորհիվ<sup>46</sup>:

Ողջ մնալու համար մղվող պայքարն ունեցել է բազմաթիվ դրսևորումներ, որոնց հավուր պատշաճի վերհանումը և մատուցումը բազմապիսի դրական բնույթի ազդակներ ու լիցքեր կարող է մեջտեղ բերել և փոխանցել ներկա սերունդներին: Ցեղասպանության տարիներին շատ հաճախ հայերը պասիվ գոհեր չէին, որոնք դատապարտվածի անտարբերությամբ սպասում էին իրենց վախճանին: Բազմաթիվ են արխիվային նյութերում գրանցված ու բանավոր պատմությունների միջոցով փոխանցված փոխօգնության իրողությունները՝ անձնագոհության հասնող ներընտանեկան ամուր կապերի, հարազատների ու բարեկամների, ընկերների, ծանոթ ու անծանոթ մարդկանց միջև անշահախնդիր օգնության, մեկը մյուսին հասնելու, վերջին կտոր հացով կիսվելու, բարոյական բարձր արժանիքների մասին վկայող քայլերի դրսևորումների մասին: Այս ոչ բռնի դիմադրությունը տեղ էր գտնում թե՛ աքսորի ճանապարհին, թե՛ աքսորավայրերում ու մահվան ճամբարներում, գաղթականներով լեցուն քաղաքներում ու գյուղերում: Կյանքը յուրովի շարունակվում էր նաև նման դժնդակ պայմաններում. մարդիկ սիրահարվում էին, ընտանիքներ էին կազմում, նոր կյանքի հիմքերը դնում: Ոչ թե լեգենդներ, այլ իրողություններ են այն պատմությունները, երբ մեծերը փոքրերին անապատի ավազների վրա հայկական այբուբենի տառերն էին սովորեցնում, փոխանցում կյանքի ու մասնագիտական հմտությունների գիտելիքները: Ցեղասպանության տարիների նման իրողությունները, անգամ առանձին դրվագները, ողջ մնալու և նոր կյանք ստեղծելու արվեստը պետք է անընդհատ վեր հանել, գրանցել, հիշել ու հպարտանալ: Մի բան, որ մեծ վարպետությամբ գեղարվեստական երկերի, փաստավավերագրական ու գեղարվեստական ֆիլմերի միջոցով տասնյակ տարիներ արվում է, օրինակ, Հոլոքոստն ուսումնասիրողների և համաշխարհային հանրությանը հավուր պատշաճի մատուցողների կողմից:

46 Մանթամասն տե՛ս Khachig Mouradian, *The Resistance Network: The Armenian Genocide and Humanitarianism in Ottoman Syria, 1915–1918* (East Lansing: Michigan State University press, 2021).

## ԻՆՉՊԵՍ ԵՄ ՀԻՇՈՒՄ

Այս հարցը կարելի է բաժանել առնվազն երեք մասի՝ ա) թե ինչպես է հիշվում Ցեղասպանությունը տարվա ընթացքում, բ) ապրիլի 24-ին, գ) անհրաժեշտության դեպքում մեջտեղ բերվում որպես հայոց ինքնության կարևորագույն դրսևորումներից մեկը:

Թեման շատ ընդարձակ է, ուստի ես կփորձեմ շեշտադրումներ անել միայն երեք մարտահրավերի շուրջ՝ ապրիլքսանչորայան երթեր, Հայոց ցեղասպանության հուշարձաններ-թանգարաններ, Հայոց ցեղասպանության դասավանդման հարցեր:

Շուրջ հինգուկես տասնամյակ ապրիլի 24-ին հայ ժողովուրդը, Հայաստանի քաղաքացիները, բազմաթիվ օտարազգիներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ ինքնակազմակերպված ձևով, առանց պետության միջամտության, բարձրանում են Ծիծեռնակաբերդի բարձունք՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Մարդիկ գալիս են մենակ, ընկերներով, ընտանիքներով, աշխատանքային կոլեկտիվներով, կուսակցական գաղափարակից ընկերներով: Ապրիլքսանչորայան երթերի ժամանակ, թերևս, տեղ է գտնում սգալու և արժանապատիվ հիշողության մի յուրահատուկ համակցություն՝ բազմապիսի դրսևորումներով<sup>47</sup>: Այդ օրն է առավել ակնառու ձևով դրսևորվում այն իրողությունը, որ Հայոց ցեղասպանության հիշողությունը եղել և շարունակում է մնալ հայոց ինքնության կարևորագույն դրսևորումներից մեկը, այն եզակի տարրերից, որ անտեսանելի թվերով միավորում է հայ ժողովրդի տարբեր հատվածներին, որի շուրջ համախմբվում են տարբեր տարիքի, սոցիալական դիրքի, խավի, տարբեր լեզուներով խոսող հայ մարդիկ (լուս. 7): Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ոգեկոչումը մեկօրյա իրադարձության մեջ ցեղասպանության հիշողության՝ հասարակության մեջ տվյալ պահին գոյություն ունեցող վիճակի մարմնավորումն է, այսինքն՝ այդ օրվա վիճակով առկա իրողությունների ու պատկերացումների, տարվող քաղաքականության ու քարոզչության հանրագումարը<sup>48</sup>:

Եվ, այնուամենայնիվ, այս հարցում ևս առկա են մարտահրավերներ: Ապրիլքսանչորայան երթերի մասնակիցների մի մասը 1.5 միլիոն նահատակների հիշատակին հարգանքի տուրք մատուցելիս հիշում են իրենց տատիկ-պապիկներին, հեռու-մոտիկ հարազատներին կամ դասագրքերից ու գեղարվեստական գրականությունից, ֆիլմերից հայտնի գրողներին ու գործիչներին, պարզապես շարքային մարդկանց, ծանոթ և անծանոթ զոհերի հավաքականությանը: Ինչպես ցույց են տալիս դիտարկումները,

47 Հարցի հանգամանալի քննարկումը տե՛ս Арутюн Марутян, “Памятник жертвам геноцида в контексте ритуалов памяти армянского народа,” *Этнографическое обозрение* 3 (2008): 119-128; Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը*, 72-78: Հմմտ. Յարութին Մարութեան, «Գերեզմանոցային մշակույթի դրսևորումները հայոց յուշարձանային համալիրներում», *Հանդես Անսորեայ* 1-12 (2020), 445-468:

48 Ապրիլքսանչորայան ժողովրդական ինքնաբերական երթերը, որոնք հայոց նորագույն մշակութային ժառանգության մեջ ավելի քան հինգ տասնամյակ է, ինչ կայուն տեղ ունեն, կարելի է ասել, որ հայ ժողովրդական նորագույն մշակույթի հարստություններից են, և արժանի են գրանցվելու ՅՈՒՆԵՍԿՈ-ի ոչ կուլթական մշակութային ժառանգության գանձարանում:

հատկապես վերապրածների երրորդ-չորրորդ սերնդի ներկայացուցիչների մեջ այդ հիշողությունն աստիճանաբար ավելի ու ավելի սիմվոլիկ գիտելիքի ոլորտ է տեղափոխվում, երբ մոռացվում են նախնիների անուն-ազգանունները, ծննդավայրը, զոհվելու կամ փրկվելու պատմությունների հանգամանքները: Այս մարտահրավերին դիմագրավելու ձև կարող էր լինել ապրիլքսանչորսյան երթերին նոր տարրեր ավելացնելը, որոնք որակապես նոր իմաստ ու բովանդակություն կհաղորդեին դրանց. նկատի ունեմ երթի մասնակիցների կողմից Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրածների դիմապատկերներով ցուցանակ/վահանակներ տանելը<sup>49</sup>: Եթե նկար չի պահպանվել, ապա վահանակների վրա կարելի էր գրել միայն երթի մասնակիցների նախնիների անուն-ազգանունները, հետևաբար՝ կարճ տեղեկատվական տեքստերով: Երանք, ում նախնիները չեն ենթարկվել ցեղասպանության, կարող էին բռնել արևմտահայ մտավորականների, ազգային-ազատագրական պայքարի հերոսների, Արևմտյան Հայաստանի վանքերի ու եկեղեցիների և այլ մշակութային ու բնության տեսարանների պատկերներով ցուցանակ/վահանակներ՝ այսկերպ պատասխանելով «ո՞ւմ եմ հիշում» և «ի՞նչ եմ հիշում» հարցերին: Նման «զենքով» զինված բազմա-հազարանոց երթերը Հայոց ցեղասպանության հիշողության պահպանման և այն աշխարհին ներկայացնելու հզոր ցուցիչներ կարող էին լինել:

Իմ համոզմամբ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հավաքականության մեջ անհատականացման/նույնականացման սկզբունքի<sup>50</sup> ներառումը՝ դրա պատկերագրությունը կերտելու ճանապարհով, այն հնարավոր ձևերից մեկն է, որը թույլ է տալիս ավելի ամրացնել Հայոց ցեղասպանության հիշողությունը: Մի առիթով այս հարցի քննարկման ժամանակ պաշտոնյաներից մեկի խորհրդականի կողմից հնչեց առարկություն, որ այն Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի առթիվ վերջին տարիներին մայիսի 9-ին տեղ գտնող «Անմահ գունդ» երթի նմանակումը կարող է ընկալվել և որակվել որպես հայերի ռուսասիրության հերթական դրսևորումներից, երբ հայերը փորձում են կապկել ռուսական անգամ հիշողության մշակույթի մեջ: Ձևի և բովանդակության առումով գուցե նմանություն կարելի է տեսնել՝ երկու դեպքում էլ, լայն առումով, գործ ունենք նախնիների պաշտամունքի յուրօրինակ դրսևորման, նաև անձնական/ընտանեկան հիշողությունը հանրային դարձնելու երևույթի հետ. մի դեպքում դա հաղթանակի հպարտությունն է ու դրա համար վճարած ծանր գինը, մյուս դեպքում՝ կորուստի ահռելիությունը և վերապրելու, նոր կյանք վերակերտելու եզակի ունակությունը: Այս երևույթներն ի ցույց դնելու հարցում, կարծում եմ, որևէ վատ բան չկա: Երկու պարագայում էլ գործ ունենք որոշակի պետական գաղափարախոսության,

49 Առաջարկը նման ձևակերպմամբ առաջին անգամ հնչել է իմ կողմից Վարդան Օսանյանի վարած «Զափ ու սահման. Մայիս՝ հաղթանակների ամիս» հեռուստաքննարկման ժամանակ («Երկիր մեդիա», 14 մայիսի 2017 թ.): Տե՛ս նաև՝ Հարություն Մարության, «Ինչպես հաղթահարել «զոհի բարդույթը»», *Հայաստանի Հանրապետություն* օրաթերթ (Երևան), 12 մարտի 2019:

50 Նման մի փորձ կարելի է որակել «Հայոց ցեղասպանությունը վերապրած քնտանիքների ճակատագրերի հետքերով» խորագրով ժամանակավոր ցուցադրության բացումը Հայոց ցեղասպանության թանգարանում 2021 թ. ապրիլին: Մանրամասն տե՛ս <http://www.genocide-museum.am/arm/21.04.2021.php>: Տե՛ս նաև <http://www.genocide-museum.am/arm/12.10.21.php>, դիտվել է 20.09.2021:



նաև ինքնության դրսևորումների հետ՝ բյուրավոր կյանքեր արժեցած հաղթանակ համամարդկային չարիքի՝ նացիզմի դեմ և դրանից ընդամենը երեսուն տարի առաջ այդ մարդատյաց գաղափարախոսության հոգևոր ծնողներից մեկի՝ մեկ այլ չարիքի՝ թուրքիզմի/պանթուրքիզմի դրսևորման արդյունքները:

2020 թ. ապրիլի 24-ը, կորոնավիրուսի համավարակի պատճառով, 1968 թվականից ի վեր առաջին անգամ նշվեց առանց դեպի Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան երթի անցկացման: Ընտրվեց «վիրտուալ երթի» իրականացման եղանակը, երբ մարդիկ իրենց ներկայության մասին տեղյակ էին պահում իրենց անուն-ազգանունները sms հաղորդագրություններով բջջային հեռախոսային ծառայությանն ուղարկելու միջոցով, և այդ տվյալներն այնուհետև արտապատկերվում էին Ցեղասպանության զոհերի հուշարձանի արտաքին պատերին: Կարծում եմ, որ «ներկա լինելու»/«մասնակցության» այդ ձևը կարելի է կիրառել նաև հետագայում հատկապես հեռու շրջաններում բնակվողների և ինչ-ինչ պատճառներով երթին մասնակցելու հնարավորություն չունեցողների համար՝ լինեն նրանք Հայաստանից թե արտերկրից: Հայոց ցեղասպանության զոհերի հավաքականության մեջ անհատականացման գործընթացի մեկ այլ տարբերակ կարող էր լինել Հիշողության տաճարի/սրահի դեպի անմար կրակը խոնարհված սալերից մի քանիսի գագաթին պրոյեկտորներ դնելը և ցեղասպանության զոհերի ու վերապրածների, պարզապես ընտանեկան լուսանկարների, նաև ազգային-ազատագրական պայքարի հերոսների, շարքային դիմադրողների թվայնացված պատկերների ցուցադրումը հուշարձանի ներսի պատերի մակերեսին և կամ պրոյեկտորներով այդ նույն լուսանկարների, նաև Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայաշատ բնակավայրերի, պատմամշակութային հուշարձանների լուսանկարների արտապատկերումը հարյուր մետր երկարությամբ Հիշողության պատի ողջ մակերեսով: Ցեղասպանության զոհերի հավաքականության մեջ անհատականացման գործընթացի մեկ այլ դրսևորում կարող էր լինել հուշապատի երկայնքով կամ մի քանի հատվածներում ժամանակավոր, ճաշակով ձևավորված տախտակամածերի կամ այլ հարմարանքների տեղադրումը, որոնց վրա մարդիկ հնարավորություն կունենային ամրացնել իրենց գոհված կամ վերապրած հարազատների ու բարեկամների լուսանկարները՝ այդ կերպ յուրովի «կենդանացնելով», «մարդկային շունչ» հաղորդելով հուշապատի վրա փորագրված բնակավայրերի անվանումներին:

«Ոչ որ չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել», «Հիշել բոլորին անուն առ անուն» և «Հիշել, չի կարելի մոռանալ» կարգախոսները լոկ անցած-գնացած տարիներին բնորոշ տեքստեր չեն, դրանք եղել և շարունակում են մնալ այժմեական, հիշողության ամրապնդման գործուն միջոցներ նաև մեր օրերում:

«Ինչպե՞ս եմ հիշում» հարցադրման մեջ կան միմյանց փոխկապակցված մի շարք մարտահրավերներ, որոնք նույնպես որոշակի լուծումների կարիք ունեն: Դրանցից մի մասի հարցում անդառնալիորեն ուշացել ենք, որոշները դեռևս հնարավորություն ունենք հաղթահարելու: Մարտահրավերներից մեկն այն մոտեցումն է, որ Հայոց ցեղասպանությունը դեռևս շարունակվում է աշխարհին ներկայացվել գերազանցա-

պես որպես ազգային ողբերգություն, այն դեռևս չի մատուցվում որպես չարիք մարդկության դեմ, որպես համամարդկային մակարդակի ողբերգության մաս: Որպես այդպիսի խոսույթ եղել և շարունակում է մնալ Հոլոքոստը: Պատճառները բազմաթիվ են, այդ թվում և այն, որ աշխարհում գործում են շուրջ յոթ տասնյակ թանգարաններ ու ցուցադրություններ, նվիրված Հոլոքոստի լուսաբանմանը, մինչդեռ Հայոց ցեղասպանությանը նվիրված է հազիվ երեք-չորս թանգարան ու ցուցադրություն<sup>51</sup>: Հոլոքոստն իրավամբ ներկայացվում է աշխարհին որպես համամարդկային չարիք, որի չկրկնվելու համար անհրաժեշտ է իմանալ դրա հիմնական դասերը, ինչն էլ իրականացվում է աշխարհի բազմաթիվ պետությունների կրթական համակարգում Հոլոքոստի դասավանդման ներառման միջոցով: Նաև նման ներկայացման շնորհիվ է, որ Հոլոքոստի թանգարանների կառուցման ու գործունեության ապահովման, ցուցադրությունների իրականացման մեջ ներգրավված է ոչ միայն հրեական կապիտալը, այլ նաև տվյալ երկրի պետական բյուջեն:

Փոխարենը Հայաստանում և Սփյուռքում առկա են հարյուրավոր հուշարձաններ, նվիրված Ցեղասպանության զոհերի հիշատակին<sup>52</sup>: Դրանց մեծ մասը խաչքարեր են, որոնց մոտ սփյուռքահայերն ու օտարազգիները հավաքվում են, որպես կանոն, տարին մեկ-երկու անգամ միայն, մինչդեռ թանգարանը՝ թեկուզ և փոքր, գործում է տարեկան առնվազն 300 օր: Ընդ որում թանգարանները, հաճախ, նաև հետազոտական կենտրոններ են: Այսինքն, թանգարանի և հուշարձանի քարոզչական հնարավորությունները բազմապատիկ անգամ տարբեր են: Մինևույն ժամանակ թանգարանների/ցուցադրությունների կազմակերպման փոխարեն հուշարձաններին գերապատվություն տալը վկայում է սփյուռքահայ համայնքների՝ տվյալ երկրի հասարակական-քաղաքական կյանքում թույլ ներգրավվածության մասին, եթե խիստ ասեմ՝ գետտոյականության դրսևորում է:

«Ինչպե՞ս եմ հիշում»-ի կարևոր բաղադրիչներից է ցեղասպանության դասավանդման հարցը: Հայաստանյան դպրոցներում Հայոց ցեղասպանությանն անդրադարձ է արվում միայն Հայոց պատմության դասաժամերին, այսինքն՝ այն դիտվում է միայն հայերի/Հայաստանի պատմության մաս: Եթե Գերմանիայի խորհրդարանը կամ ԱՄՆ կոնգրեսն ու սենատն իրենց որոշումներում կարևորում են Հայոց ցեղասպանության դասավանդման անհրաժեշտությունն իրենց երկրներում<sup>53</sup>,

51 Հարցի մանրամասն քննարկումը տե՛ս Հարություն Մարության, «Թանգարան և հուշարձան (հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն)», *Պատմաբանասիրական հանդես* 3 (2014), 58-79; Harutyun Marutyan, "Museums and Monuments: Comparative Analysis of Armenian and Jewish Experiences in Memory Policies," *Études Arméniennes Contemporaines* 3: Juifs, Arméniens: un siècle d'État (2014): 57-79.

52 Մանրամասն տե՛ս *Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ* (Երևան, Տիգրան Մեծ, 2010) պատկերազիրքը, ինչպես նաև Վաշինգտոնի Հայկական ազգային ինստիտուտի (Armenian National Institute) կայքէջը՝ <http://www.armenian-genocide.org/memorials.html>, դիտվել է 20.09.2021:

53 Գերմանիայի Դաշնության բունդեսթագի 2016 թ. հունիսի 2-ին ընդունված բանաձևում նշվում է. «Այսօր Գերմանիայի դպրոցական, համալսարանական եւ քաղաքական կրթության առջև պարտականություն է ծառանում ուսումնական ծրագրերում և նյութերում ընդգրկել հայերի տեղահանման և

ապա Հայաստանում այդ թեմային դպրոցական դասագրքերում նվիրված է ընդամենը մի քանի դաս: Գումարած այն, որ ոչ քիչ դեպքերում թե՛ ծնողները, թե՛ քաղաքացիական հասարակությունն այն կարծիքին են, որ Ցեղասպանության դասավանդումը կհանգեցնի երեխաների մեջ զոհի կաղապարի և այլ բացասական բարդությունների ձևավորմանը: Ես բնավ այդ մտավախությունը չեմ կիսում, և դրա պատասխանի տարրերն առկա են «Ինչ եմ հիշում» ենթագլխում: Այսինքն՝ մենք կարիք ունենք մանկավարժության արդի համաշխարհային փորձին տիրապետող մասնագետների, որոնց մասնակցությամբ կարող էին մշակվել ցեղասպանությունների դասավանդման մեթոդաբանություններ հայաստանյան և օտարերկրյա դպրոցական կրթության համակարգի համար: Դրա լուծումներից մեկը կարող էր լինել Հայոց ցեղասպանությանն, այլ ցեղասպանություններին առնչվող թվանշանայնացված գրականության լայն բազայի ձևավորումը և համացանցում դրա տեղադրումը, ապա և աշակերտների՝ դրանց ծանոթանալու և վերլուծություններ կատարելու ճանապարհով ինքնուրույն հետազոտություններ կատարելը և դասերին աշխատանքի արդյունքները ներկայացնելը: Եվ կամ, ինչպես արդեն նշվել է «Ո՞ւմ եմ հիշում» մասում՝ ակնատես-վերապրածների թվանշանայնացված պատմությունների համացանցային շտեմարանի ստեղծումը և աշակերտների ուժերով անհատ մարդկանց կյանքի օրինակով Ցեղասպանության ընդհանուր պատկերի, ընդհանուր օրինաչափությունների վերհանման փորձերի իրականացումը: Ինչևէ, ՀՅԺԻ-ն փորձելու է հարցին նվիրված միջազգային գիտաժողով հրավիրել՝ «Հայոց ցեղասպանության դասավանդման մարտահրավերները 21-րդ դարում» վերտառությամբ 2022 թվականի ապրիլին:

Հիշողության մեկ այլ ձև կարող է պարկային դրսևորում ունենալ: Բանն այն է, որ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը շրջապատված է 100 հա կանաչապատ տարածքով, որի պահպանումն ու կառավարումը 2004 թ. պետությունը վստահել է ՀՅԺԻ-ին՝ անհատույց օգտագործման իրավունքով: Երևանի սրտում տեղակայված հանրային այս տարածքը միայն մասամբ է մշակված: Այդուհանդերձ, այն Երևանի կանաչապատ ամենակարևոր տարածքն է և կարող է վերածվել խորհրդանշական հանրային տարածքի: Մանրամասնեմ: Մարտահրավերն այն է, որ նշված 100 հա կանաչ տարածքը կարելի է վերածել «Հիշողության զբոսայգու»<sup>54</sup>: Դա ենթադրում է զբոսայգին 13 հատվածների բաժանել, որոնցից յուրաքանչյուրը կկրի

---

բնաջնջման պատմությունը որպես 20-րդ դարի էթնիկ բախումների պատմության մաս՝ ավանդելով այն գալիք սերունդներին», <http://www.genocide-museum.am/arm/Germany.php>: ԱՄՆ կոնգրեսի և սենատի Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերում (ընդունված համապատասխանաբար 2019 թ. հոկտեմբերի 29-ին և դեկտեմբերի 12-ին) կոչ է արվում «խրախուսել Հայոց ցեղասպանության փաստերի՝ ներառյալ մարդասիրական օգնության գործում Միացյալ Նահանգների դերի և մարդկության դեմ ներկայումս իրականացվող հանցագործությունների ու Հայոց ցեղասպանության միջև առնչությունների վերաբերյալ կրթությունը և հանրային իրազեկվածությունը» <http://www.genocide-museum.am/arm/30.10.2019-USACongress.php>; [http://www.genocide-museum.am/arm/news-H\\_RES150.php](http://www.genocide-museum.am/arm/news-H_RES150.php), դիտվել է 20.09.2021:

54 Առաջարկը բարձրաձայնվել է իմ հեղինակած տեսականում 2018 թ. սեպտեմբերի 14-ին, նաև՝ տարբեր հարցազրույցներում՝ հրապարակված «Ժամանակ»-ում (Ստամբուլ)՝ 3 հոկտ. 2018 թ., «Զարթոնք»-ում (Բեյրութ)՝ 20 նոյեմբերի 2018 թ., «Ազատ օր»-ում (Աթենք)՝ 13 հունվարի 2020 թ., տարբեր քննարկումներում և խորհրդակցություններում:

Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի որևէ շրջանի կամ քաղաքի/բնակավայրի, կամ Անատոլիայում և Թրակիայում հաստատված հայկական համայնքների անվանում: Գեղարվեստական և տեղեկատվական նպատակներով յուրաքանչյուր հատված կկազմակերպվի որևէ կենտրոնի շուրջ, որը կլինի տվյալ տարածաշրջանը կամ քաղաքը լավագույնս բնորոշող արվեստի խորհրդանշական կամ ճարտարապետական նմուշ: Կտեղադրվեն մուտիմենդիա սարքեր, որոնց միջոցով կկազմակերպվեն յուրօրինակ փոքր ցուցադրություններ, կմատուցվի համապատասխան գիտելիք և տեղեկատվություն այդ շրջանի պատմության և մշակույթի մասին: Յուրաքանչյուր հատված փաստորեն կարող է ներկայացնել հայոց հավաքական հիշողության մաս և այդ կերպ մաս կազմել թանգարանի հիմնական ցուցադրության: Բացի խորհրդանշական կենտրոնից, յուրաքանչյուր հատված, հնարավորության դեպքում, կարող է ունենալ ներկայացվող տարածաշրջանը բնութագրող բուսականություն: Հատվածները կմիանան կողային ուղիներով, որոնք կհատվեն իրար մինչ Ցեղասպանության հուշահամալիրը: Հարյուր հեկտարանոց «Հիշողության զբոսայգին» թույլ կտա տեղացի և օտարազգի այցելուներին պարբերաբար թարմացնել իրենց գիտելիքը հայոց ոչ հեռավոր անցյալի մասին, հայ այցելուների պարագայում՝ պահպանել կապը նախնիների բնակության վայրերի, այլ կերպ ասած՝ վառ պահել հիշողությունը պատմական հայրենիքի, նրա առանձին հատվածների պատմության ու մշակույթի հետ (լուս. 8):

«Ինչպե՞ս եմ հիշում» հարցի պատասխանը խիստ համառոտ բնութագրելու պարագայում ես կառաջարկեի առաջնորդվել ոչ թե սգի, ոչ թե այլատյացության, և ոչ էլ պասիվ հիշողության վրա հենված մոտեցումների կառուցումով, այլ *«արժանապատիվ հիշողություն»* եզրույթով բնորոշվող կոնցեպտուալ մոտեցմամբ, որը, թերևս, դեռ լրացուցիչ մշակումների անհրաժեշտություն է զգում:

## ԻՆՉ ԵՄ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Այս հարցի պատասխանն առաջին հայացքից թվում է, թե պարզ է, սակայն իրականում բավականին բարդ է<sup>55</sup>: Լայն առումով թերևս կարելի է առանձնացնել բարոյական կատեգորիաների մաս կազմող «արդարություն» ձևակերպումը՝ նկատի ունենալով «հայոց ոտնահարված իրավունքների վերականգնում» խոսույթը: Եվ շատ հաճախ «արդարություն» բառին կցվում է «պատմական» ածականի որակ ստացած հատկացուցիչը և այդպիսով խիստ համամարդկային «արդարություն» հասկացությունից առանձնացվում է, հայոց համոզմամբ, նույնպես կոնցեպտուալ մի հատված<sup>56</sup>, որը, սակայն, իմ կարծիքով, համապատասխան փիլիսոփայական մշակ-

55 Հարցի շուրջ տե՛ս նաև՝ դր. Երուանդ Հ. Քասունի, «Անտեր պահանջատիրություն» և «Ուղեկորոյս պահանջատիրություն» հոդվածները նույն հեղինակի *Լուսարձակի տակ անհաճոյ ըլլալու երանությունը* (Պէլյութ, հրատ. Ե.Հ.-Ք., 2017) հոդվածների ժողովածուի էջ 82-96-ում և 97-127-ում:

56 Իմ համոզմամբ՝ «ճշմարտության և արդարության համամարդկային գաղափարները՝ համեմված պատմության գործոնով, դառնալով *պատմական ճշմարտություն, պատմական արդարություն և պատմական հիշողություն*, չնայած բազմաթիվ փորձություններին, եղել են և շարունակում են մնալ հայկական ազգային ինքնության կարևորագույն բաղադրիչները»: Մարության, *Հայ ինքնության*




Լուս. 5. Դրվագ հիշատակի քայլերից: Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր, 24 ապրիլի 1990 թ.: Լուս.-ը՝ Հ. Մարությանի:



Լուս. 6. Դրվագ Վանի ինքնապաշտպանությունից. ապրիլ-մայիս 1915 թ.:



Լուս. 7. Մարդկանց երթը դեպի Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան: 24 ապրիլի 2018 թ.: Լուս.-ը՝ Հ. Մարությանի:



Լուս. 8. «Հիշողության գրոսագիծ: 2019-20 թթ.:

վածություն դեռևս չունի:

«Պատմական արդարության վերականգնում» ձևակերպումն հայոց մեջ ունի հոմանիշ՝ «հատուցում», որի մանրամասնման փորձերը հետազոտողին տանում է միջազգային իրավունքի դաշտ ու կրկին բազմաթիվ հարցեր է առաջացնում:

Մեր օրերում գոյություն չունի մեկ համահայկական, ընդհանրական դիրքորոշում հայկական պահանջատիրության հարցում: Առկա են տարբեր լուծումների առաջարկներ՝ մի մասը ընդհանուր բնույթի ձևակերպումներով, մի մասը՝ կոնկրետ ու հստակ առաջարկներով: Ստորև հնարավորինս համառոտ ներկայացվում են առավել հայտնի մի քանի մոտեցումներ<sup>57</sup>:

Որոշ վերապահումներով կարելի է ասել, որ *Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումն* արտացոլված է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրում»՝ ընդունված Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների համակարգման պետական հանձնաժողովի կողմից՝ խորհրդակցությամբ իր տարածաշրջանային հանձնախմբերի հետ Սփյուռքում:

Փաստաթղթում կարևորվում է 1915 թ. մայիսի 24-ին Դաշնակից պետությունների կողմից արված համատեղ հռչակագիրը, որը պատմության մեջ առաջին անգամ հայ ժողովրդի դեմ իրագործված ծանրագույն հանցագործությունը որակեց որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ իրականացված հանցագործություն»՝ օսմանյան իշխանություններին պատասխանատվության ենթարկելու շեշտադրումով: Ընդգծվում է նաև 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրի, ինչպես նաև ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի՝ 1920 թ. նոյեմբերի 22-ի Իրավարար վճռի դերն ու նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում:

Հռչակագրի 12 հոդվածից մի քանիսում ուղղակիորեն արտահայտված են հայոց պահանջատիրության հիմքերը: Այսպես՝ վեցերորդ հոդվածում նշվում է Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքի՝ Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը հասնելու և ցեղասպանության հետևանքները հաղթահարելու մասին, որի համար որպես անհատական, համայնքային և համահայկական իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ մշակվելու է իրավական պահանջների թղթածրար: Յոթերորդ հոդվածը դատապարտում է «Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության ապօրինի շրջափակումը, միջազգային հարթակներում ցուցաբերվող հակահայկական կեցվածքը և միջպետական հարաբերությունների կարգավորման համար նախապայմանների առաջադրումը՝ դրանք գնահատելով որպես Հայոց ցեղասպանության, Մեծ Եղեռնի մինչ օրս անպատիժ մնալու հետևանք»: Ութերորդ հոդվածը «կոչ է անում Թուրքիայի Հանրապետությանը ճանաչել և դատապարտել Օսմանյան կայսրության կողմից

---

*պատկերագրությունը*, էջ 176:

57 Մանրամասն տե՛ս Harutyun Marutyan, “Boundaries/Borders of the Armenian Claims and Possibilities of Inter National Dialogue,” in *141 Days in Action. January 19<sup>th</sup> Initiative* ([Yerevan], United in Rights, 2017), 048-058.



իրականացված Հայոց ցեղասպանությունը և մարդկության դեմ իրագործված այդ սոսկալի ոճրի զոհերի հիշատակը ոգեկոչելու միջոցով առերեսվել սեփական պատմությանը և հիշողությանը՝ հրաժարվելով կեղծարարության, անհերքելի իրողության ժխտման և հարաբերականացման քաղաքականությունից»։ Հռչակագիրը «գորակցում է Թուրքիայի քաղաքացիական հասարակության այն հատվածին, որի ներկայացուցիչներն այսօր արդեն համարձակություն են դրսևորում այդ հարցում՝ ի հակադրություն իշխանությունների պաշտոնական դիրքորոշման»։ Փաստաթուղթը «հույս է հայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը կարևոր մեկնակետ կդառնան հայ և թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացի համար»։

Հռչակագրի ձևակերպումներում «ցեղասպանության հետևանքների վերացում» արտահայտությունը լայն իմաստ ունի և մեկնաբանվում է որպես պահանջների դրսևորում, որոնք, այնուամենայնիվ, հստակեցված չեն։

«Մոդուս վիվենդի» վերլուծական կենտրոնի մոտեցումը. Ըստ կենտրոնի հիմնադիր և տնօրեն Արա Պապյանի<sup>58</sup>՝ այսօր Հայկական հարցը միջազգային իրավունքի միջոցով տարածքային, նյութական և բարոյական իրավունքների վերահաստատումն է, գործընթաց, որը կարելի է բաժանել հետևյալ երեք հաջորդական և միմյանցից կախված փուլերի.

ա. *Նախնական փուլ* – հավաքել, ուսումնասիրել և վերլուծել Հայկական հարցի և Հայկական պահանջատիրության հետ կապված փաստաթղթերը, բ. *Միջին փուլ* – ներգրավել փորձագետների և միջազգային իրավունքի մասնագետների՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանում Թուրքիայի դեմ դատական գործադատաստելու համար: գ. *Վերջնական փուլ* – հայց ներկայացնել Թուրքիայի դեմ՝ իր պարտավորությունները կատարելու համար, որոնք բխում են, մասնավորապես, Վուդրո Վիլսոնի իրավարար վճռից:

Ներկայումս Հայկական հարցը, ըստ Արա Պապյանի, բաղկացած է երեք հիմնական բաղադրիչներից՝ տարածքային, նյութական և բարոյական:

ա. *Տարածքային բաղադրիչ* – չնայած հայկական տարածքների մի զգալի մասը բռնազավթել են օտար ուժերը և ավելի ուշ բռնակցվել են այլ երկրների, Հայաստանի Հանրապետությունն այնուամենայնիվ շարունակում է պահպանել դրանց տիրույթը և օրինական իրավունքներն այս տարածքների նկատմամբ, բ. *Հայկական հարցի նյութական բաղադրիչը* – հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության անմիջական նյութական կորուստները կազմում են 40-100 միլիարդ դոլար: Մարդկային կորուստները փոխհատուցելու համար թուրքական իշխանությունները միջազգային հանրության և միջազգային կազմակերպությունների հսկողության ներքո պետք է ստեղծեն հատուկ հիմնադրամ, որը, անկախ քաղաքացիությունից, կխրախուսի հայերի բազմազավակությունը և նյութական զգալի աջակցություն կցուցաբերի Հայոց

58 Արա Պապյան, *Հայկական հարցի լուծման հայեցակարգ. Հայկական հարցի լուծումը որպես հայոց պետականության հզորացման եզակի հնարավորություն և հայ ժողովրդի հարատևման միակ ուղի*, <http://www.modusvivendicenter.org/hy/node/2574>, դիտվել է 20.09.2021:



ցեղասպանությունը վերապրածների ժառանգների բազմազավակ ընտանիքներին: Նյութական հատուցումը պետք է ընդգրկի Թուրքիայի Հանրապետության տարածքում առկա հայկական ժառանգության՝ թուրքական իշխանությունների կողմից միտումնավոր ոչնչացված կամ վնասված հայկական հուշարձանների և այլ ժառանգության վերականգնման ծախսերը, *զ. Բարոյական հատուցում* – պետք է ընդգրկի ոչ միայն Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ուղղակի ճանաչումն ու դատապարտումը, այլև պետք է խորանա հաշտեցման ծրագրի իրականացմամբ: Թուրքական իշխանությունները թուրք հասարակության համար պետք է իրականացնեն պատմական իրականությունը բացահայտող քարոզչական և ուսումնակրթական համապարփակ բազմափուլ ծրագրեր:

Քանի որ Հայկական հարցի լուծումը պետք է լինի երկուստեք ընդունելի կողմերի համար, ըստ այդմ, Հայկական հարցի հնարավոր լուծում է խնդրո առարկա տարածքին որոշակի նոր կարգավիճակ շնորհելը տարածքային վարձակալության ճանապարհով. այդ դեպքում Հայաստանի Հանրապետության *de jure* իրավաստիությունը կհամադրվի Թուրքիայի Հանրապետության *de facto* տնօրինման հետ: Այսինքն, I. Թուրքիայի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետությունից միջազգային երաշխիքներ պարունակող երկկողմ պայմանագրի հիման վրա և ողջամիտ վարձավճարով վարձակալում է «Վիլսոնյան Հայաստանը»: II. Թուրքիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, անկախ իրենց բնակության վայրից, պահպանում են իրենց քաղաքացիությունը: III. Երրորդ երկրների տարանցիկ փոխադրումներից (ներառյալ նավթամուղներից և գազամուղներից) ստացած եկամուտները ուղղվում են տեղական ենթակառուցների բարեկարգմանն ու զարգացմանը: IV. Քննարկվող տարածքները կապառագմականացվեն: Տարածքի վերահսկողությունը, անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանությունը, իրականացնում են համապատասխան լիազորություններով օժտված և ՄԱԿ-ի անվտանգության հովանու ներքո գործող միջազգային խաղաղապահ ուժերը: V. Նախկին Ռուսական կայսրության և Հայաստանի Հանրապետության (1978-1918/20 թթ.) Կարսի մարզի, Բաթումի մարզի հարավային հատվածի և Սուրմալուի գավառի տարածքների կարգավիճակի հարցը առանձին քննարկման առարկա պիտի դառնա: Քսանմեկերորդ դարի սկզբին այդ տարածքները կազմում են Թուրքիայի Հանրապետության Կարսի, Արդահանի, Արդվինի և Իգդիրի նահանգները: Ի տարբերություն Վիլսոնյան Հայաստանի, այս տարածքների վրա անմիջականորեն պիտի հաստատվի հայաստանյան ուղղակի ինքնիշխանություն:

*Հայ Ցեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) դիրքորոշումը.* 1998 թ. իր 27-րդ համագումարում ՀՅԴ-ն ընդունեց նոր ծրագիր<sup>59</sup> հայկական պահանջատիրության խնդրի վերաբերյալ՝ հետևյալ դրույթներով: Կուսակցության նպատակն է «Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի կերտում», որ «Հայ ժողովուրդին դէմ Թուրքիոյ գործադրած Ցեղասպանութիւնը դեռ չէ հատուցուած», որ «Կը քանդուին կամ կոպիտ աղաւաղման կ'ենթարկուին բոլոր այն պատմական յուշարձանները, որորնք վկաներն

59 Ծրագիր Հայ Ցեղափոխական Դաշնակցության, հաստատված Հ.Յ. Դ. ԻԷԸ նոյեմբեր (Արտակարգ)

են այդ շրջաններու հայկական պատկանելիութեան: Այս ձեռով կ'ոչնչացուի ինքնատիպ ամբողջ քաղաքակրթութիւն մը»: Ծրագիրը հայտարարում է, որ «Ներկայ Հայաստանի Հանրապետութիւնը Հայաստանի առաջին Հանրապետութեան իրաւաժառանգորդն է եւ, իբրեւ այդպիսին, օրինական իրաւատէրն է հայկական բռնագրաւեալ բոլոր հողատարածքներուն»: Ծրագիրը հատակեցնում է, որ «Միացեալ Հայաստանի սահմաններուն մէջ պիտի մտնեն Սեւրի դաշնագրով նախատեսուած հայկական հողերը. ինչպէս նաեւ՝ Արցախի, Զաւախքի եւ Նախիջեւանի երկրամասերը, բ. Թուրքիոյ կողմէ հայութեան դէմ գործադրուած եւ ցարդ անպատիժ մնացած Ցեղասպանութեան ոճիրի միջազգային դատապարտում, բռնագրաւեալ հողերու վերադարձ եւ վնասուց հատուցում հայ ազգին, գ. Տարագիր ու աշխարհասփիտ հայութեան համախմբում ամբողջական Հայաստանի հողին վրայ»:

2007 թ. ստեղծվեց Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խումբը (ՀՅՀՈՒԽ), որը դրամաշնորհի ստացավ ՀՅԴ-ից Հայոց ցեղասպանության հատուցման խնդրի անկախ ուսումնասիրման և հաշվետվության համար: ՀՅՀՈՒԽ-ը հրապարակեց իր «Վերջնական զեկույցը» (անգլերեն, մոտ 140 էջ) 2014 թվականի սեպտեմբերին՝ 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության հատուցման հարցի իրավական, պատմական, քաղաքական և բարոյական կողմերին առնչվող աննախադեպ, գիտական բարձր մակարդակով համապարփակ վերլուծությամբ՝ ներառյալ հատուկ առաջարկություններ հատուցումների ամբողջական փաթեթի բաղադրիչների համար<sup>60</sup>:

Զեկույցը բաղկացած է ութ մասից: Այն սկսվում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ նախնական տեղեկություններով: Այնուհետև տրվում է Ցեղասպանության միջոցով հայերին հասցված անվերականգնելի և նյութական վնասների նկարագրությունը, Ցեղասպանության հատուցումների համապարփակ փաթեթի համար անհրաժեշտ հինգ բաղադրիչների նկարագրությունը, Հայոց ցեղասպանության հատուցումների հարցի իրավական վերլուծությունը՝ միջազգային իրավական դրույթների, սկզբունքների և նախադեպերի հիման վրա, Ցեղասպանությունից հետո կնքված պայմանագրերի պատմության վերլուծությունը, որքանով որ դրանք առնչվում են նյութական հատուցումներին և, հատկապես, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը, հատուցումների հարցի բարոյական կողմերի փիլիսոփայական հետազոտությունը, ներառյալ այն բազմաթիվ խնդիրների վերլուծությունը, որոնք ծագում են մարդու իրավունքների զանգվածային խախտումների պարագայում հատուցումների հարցում ընդհանրապես և/կամ Հայոց ցեղասպանության պարագայում՝ մասնավորապես, անցումային արդարադատության հատուցումային գործընթացը, որով քաջալերվում է անհատ թուրքերի և ինստիտուտների մասնակցությունը, և

---

Շողոմի կողմից 1998 թ., <https://old.arfd.am/?p=6815>, դիտվել է 20.09.2021:

60 Հայերեն թարգմանությունը տե՛ս Հենրի Թերիո, Ալֆրեդ դե Զայաս, Զերմեն Օ. Մաքքալփին, Արա Պապյան, *Արդարացի լուծում: Հայոց ցեղասպանության հատուցումները: Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խմբի զեկույցը: Ապրիլ 2015*, թարգմ. և հայերեն տեքստի խմբ. Հրաչ Մկրտչյանի, [http://www.armeniangenocidereparations.info/wp-content/uploads/2017/10/brochure\\_arm.pdf](http://www.armeniangenocidereparations.info/wp-content/uploads/2017/10/brochure_arm.pdf), դիտվել է 20.09.2021:

նյութական հատուցումներից բացի այլ բարդությունների նկարագրությունը, հատուցումների փաթեթի տարածքային բաղադրիչի տարբերակները, հայերին՝ Ցեղասպանության ընթացքում մահվան և տառապանքների դիմաց տրվելիք դրամական փոխհատուցումների ընդհանուր գումարի հաշվարկը, վերականգնման կամ փոխհատուցման ենթակա՝ Ցեղասպանության ընթացքում բռնագրավված կոնկրետ շարժական նյութական ունեցվածքի և այլ տնտեսական հետևանքների հաշվարկը, հատուցումների ամբողջական փաթեթի այլ բաղադրիչների մանրամասն նկարագրությունը:

Զեկույցն առաջարկում է Հայաստանին վերադարձվելիք հողերը որոշելու երեք հնարավոր տարբերակներ՝ «1) հողը վերադարձնել դրանց նախկին տերերի անհատ ժառանգներին, 2) պարզել այն տարածքը, որտեղ Ցեղասպանությանը նախորդած ժամանակահատվածում կար հայերի հոծ բնակչություն, և վերադարձնել դա, 3) վերադարձնել Վիլսոնի իրավարար վճռով սահմանված տարածքը»<sup>61</sup>:

Վերադարձի համար անհասանելի գույքի ֆինանսական փոխհատուցման հետ կապված՝ Զեկույցն առաջարկել է օգտագործել (1) գրանցված գույքային կորուստները և (2) տարբեր վայրերում հայերի՝ նախքան Ցեղասպանությունը նյութական ունեցվածքի ընդհանուր մակարդակի պատմական գրառումները: Հաշվարկների տարբեր մոտեցումների հիման վրա գույքային կորուստների և մահերի ու տառապանքների փոխհատուցման գումարը առաջարկվում է 50-104 միլիարդ դոլարի սահմաններում:

Ինչ վերաբերում է ավանդական հայկական մյուս երկու կուսակցություններին, ապա նրանց ծրագրային փաստաթղթերում նույնպես անդրադարձներ կան հայկական պահանջատիրության խնդիրներին: Մասնավորապես, Ռամկավար ազատական կուսակցության 28-րդ ընդհանուր պատգամավորական ժողովին (23-25 մայիսի, 2019 թ.) հաջորդող պաշտոնական հաղորդագրության մեջ նշված է. «ՌԱԿը կը մնայ Հայ ժողովուրդը ընդհանրապես ու սփիռքահայությունը մասնատրաբար յուզող հիմնահարցի, իմա՝ Հայ Դատի եւ հայկական պահանջատիրութեան հետապնդման սուրբ առաքելութեան հաւատաւոր զինուորագրեալը»:<sup>62</sup> Նմանատիպ պահանջներ են առկա նաև Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության պարագայում:

*Արեւմտահայոց ազգային համագումարի (ԱԱՀ) մոտեցումը.* Այն արտացոլված է Զեկույցում, որը նախապես պատրաստվել էր մի խումբ փորձագետների կողմից, այնուհետև հաստատվել «Արեւմտահայոց Ազգային Զորքորդ Համագումար»-ում, 2015 թ. մարտի 28-29-ին: Համագումարը հայտարարում է, որ «նախաձեռնած է արեւմտահայութեան իրաւունքներու ճանաչման եւ արեւմտահայութեան հասցուած վնասներու վերականգնման հոլովոյթին»: «Արեւմտահայութեան, այսինքն՝ Օսմանեան Կայսրութեան հայ քաղաքացիներու ժառանգորդներու, հաւաքական դիր-

61 Նույն տեղում, 155-156:

62 Դիւան ՌԱԿ ԻԸ. ընդհանուր պատգամավորական ժողովի, «Հաղորդագրություն», <https://ramgavar.am/%D5%BC%D5%A1%D5%AF/%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%AB%D6%82%D5%B6>: Հմմտ. Վ[աչէ] Գ[ազարեան], «Ռամկավար ազատական կուսակցութեան դիրքորոշումները», *Պայքար ամսագիր* 12 (1994), 20-33:

քորոշումն է, որ հասցուած եւ շարունակուող վնասի վերականգնման պարագային անշրջանցելի եւ անժամանցելի է արեւմտահայութեան ժողովրդագրական եւ քաղաքակրթական գոյութեան վերականգնումը իր պատմական հայրենիքին մէջ: Այս գերագոյն նպատակին հասնելու համար Արեւմտահայութեան Ազգային Չորրորդ Համագումարը կը հաստատէ, որ կան առանցքային անբաժանելի եւ իրարու հաւասար երկու նպատակներ՝ Ա. Արեւմտահայութեան հասցուած վնասներու եւ ոտնահարուած իրաւունքներու վերականգնում: Բ. Արեւմտահայութեան վերադարձ պատմական հայրենիք եւ այդ վերադարձի համար Թուրքիոյ մէջ բարենպաստ պայմաններու ստեղծում՝ բարեփոխումներու եւ Թուրքիոյ մէջ մարդու իրաւունքներու հիմնական արժէքներու հաստատման ճամբով»<sup>63</sup>:

Երկրորդ փաստաթուղթը «Յուշագիր ուղղուած Թուրքիոյ Հանրապետութեան եւ ժողովուրդին» է՝ հետևյալ պահանջներով<sup>64</sup>.

«1. Ճանչնալ ներկայութիւնը Արեւմտահայոց Ազգային Համագումարին որպէս օրինական կողմ Թուրքիոյ մէջ և իր ներկայացուցիչներու հետ մտնել ուղղակի և կառուցողական երկխօսութեան մէջ, ինչպէս նաև առանց յապաղելու ստեղծել միացեալ մարմին մը, որպէսզի կառավարէ, համակարգէ և ի կատար ածէ մեր ձգտումներն ու մարտահրաւերները:

2. Որդեգրել Թուրքիոյ Հանրապետութեան մէջ շարք մը հետագայ բարեփոխումներ՝ ստեղծելու համար վստահելի ու կենսունակ միջավայր մը ամբողջ երկրին մէջ, որպէսզի ըլլայ ապահով, արդար և ներդաշնակ գոյակցութիւն մը Թուրքիոյ մէջ ապրող բոլոր ժողովուրդներու համար, ներառեալ նաև Թուրքիոյ մէջ թէ դուրսը ապրող հայերու համար այնպիսի պայմաններ, որոնց շնորհիւ կարենան օրէնքով ու բարոյականութեան ընդունուած սկզբունքներով ազատօրէն կրել հայ անունը, յայտարարել իրենց ազգային ծագումը և Օսմանեան կայսրութեան հայ հպատակներու կամ քաղաքացիներու ժառանգորդները ըլլալու փաստը:

3. Մեր յաիտենական և անվիճելի իրաւունքն է որպէս ազգային գոյացութիւն իրականացնելու հայրենիք վերադարձի մեր կամքը:

4. Թուրքիան պէտք է բանալ իր սահմանները Հայաստանի Հանրապետութեան հետ առանց որևէ նախապայմաններու և նախաձեռնէ՝ շարք մը քայլեր՝ հաստատելու համար միջպետական վստահութիւն և բարեկամական յարաբերութիւններ Հայաստանի պետութեան իշխանութիւններու և բնակչութեան հետ, որոնց մէջ կը գտնուին հազարաւոր հայեր, որոնք յետնորդներն են Արեւմտահայութեան:

5. Թուրքիան անսահմանափակ իրաւունք պէտք է տայ մատչելու պետական այն վաւերագրերուն, որոնք անհրաժեշտ են արեւմտահայութեան իրաւունքներու հաստատման համար՝ ներառեալ բոլոր կալուածային և քաղաքացիական վիճակի վերաբերեալ վաւերագրերուն՝ ի յաւելումն այն բոլոր տեղեկութիւններուն, որոնք

63 Մանրամասն տե՛ս «Չեկոյց արեւմտահայութեան իրաւունքներու վերաբերեալ», <https://www.cnarmeniens.org/congress-document1>, դիտվել է 20.09.2021:

64 “Memorandum Addressed to the Government and the People of the Republic of Turkey,” Paris, 29 March 2015, <http://cnarmeniens.org/4thCongress>, դիտվել է 20.09.2021:

կ'առնչուին մեր բարոյական և նիւթական (դրամական և ոչ-դրամական) վնասներուն, ինչպէս նաեւ համապատասխան կորուստներուն հետ:

6. Վերադարձնել և վերականգնել համայնքային բոլոր կալուածները, ներառեալ եկեղեցիները, դպրոցները, նիւթական և ոչ-նիւթական մշակութային ժառանգութիւնները:

7. Առանց պայմաններու չեղեալ համարել այն բոլոր օրէնքները և իրաւական վճիռները, որոնք կը վերաբերին հայերու տեղահանութեան, տարագրման, այսպէս կոչուած «լքեալ գոյքերու» լուծարման ու սեփականագրկման, և ատոնցմէ բխած բոլոր օրէնքներու և որոշումներու, որոնց թիրախը եղած են հայերը:

8. Որդեգրել իրաւական միջոցներ կատարելու համար հետագայ հատուցումներ ամէն տեսակի անհատական թէ հաւաքական վնասներու, որոնցմէ տառապած են Արևմտահայ մեր նախնիները»:

Այսպիսով՝ եթե փորձենք ընդհանրացնել, «Ինչ եմ պահանջում» հարցի պատասխանները բազմաբնոյթ են և վերաբերում են ինչպէս հողային խնդիրների լուծմանը, այնպէս էլ հատուցման այլ ձևերին՝ ֆինանսական, բարոյական, օրենսդրական, մշակութային ժառանգության վերականգնման, արխիվների բացման, և այլն և ընդգրկում են Թուրքիայի ներսում իրականացվելիք բարեփոխումների բավականին լայն շրջանակ, որոնց իրականացման պարագայում արմատապես փոխվելու է մեր հարևան պետության բնույթը:

## ՈՒՄԻՅ ԵՄ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Այս հարցը նույնպէս առաջին հայացքից թվում է, թե ունի պարզ ու միանշանակ պատասխան. իհարկե պահանջներն ուղղված են առաջին հերթին Հայոց ցեղասպանության կազմակերպիչ և իրականացնող պետության՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդին՝ Թուրքիայի Հանրապետությանը: Սակայն, իմ կարծիքով, «հիշում եմ ու պահանջում» կարգախոսի երկրորդ բաղադրիչն պետք է ուղղված լինի նաև ինքներս մեզ՝ *մեր* պետությանը, *մեր* իշխանություններին, *մեր* քաղաքացիական հասարակությանը, *մեր* մասնագիտական հանրությանը: Եվ եթե անկախության երեք տասնամյակների ընթացքում Հայաստան պետությունը և հայաստանյան իշխանությունները, արտաքին քաղաքական ինչ-ինչ գործոններից ու հաշվարկներից ելնելով չեն ցանկանում կամ չեն կարող հատուցման պահանջներ ներկայացնել ուղղակիորեն Թուրքիայի Հանրապետությանը, ապա դա, իմ կարծիքով, պետք է իրականացվի, կամ առնվազն նախապատրաստվի ու մատուցվի հայաստանյան և սփյուռքյան քաղաքացիական հասարակության ու կառույցների, մասնավորապես, մասնագիտական հանրության կողմից: Եթե բացակայում է սրա հստակ գիտակցումը, ապա մենք շարունակելու ենք մնալ զգացմունքային, սակայն անպտուղ դաշտի մեջ:

Արդյոք սա նշանակում է, որ այս պարագայում պետությունը/իշխանությունները «վախում են» ձեռքերը: Բնավ, ոչ: Մասնագիտական հանրության կողմից պահանջատիրության հարցերի քննարկումը, մոտեցումների ու քայլերի հաջորդականու-

թյան մշակումը ենթադրում է նախ և առաջ գիտական հետազոտությունների իրականացում: Գիտական հետազոտությունների անցկացմանն այն հարցերի շուրջ, որոնք հուզում են հասարակության լայն շերտերին, պետությունն ուղղակի պարտավոր է աջակցություն տրամադրել՝ ոչ մի պարագայում դա չպայմանավորելով իր արտաքին քաղաքական կողմնորոշումներով կամ հաշվարկներով: Նշված խնդիրները մեկը մյուսի հետ որևէ առնչություն չունեն: Քանի դեռ «գիտական» ներկայացվող հարթության մեջ շարունակվում է Հայոց ցեղասպանության ժխտումը, քանի դեռ այդ քաղաքականության պտուղներն ամենօրյա ռեժիմով մատուցվում են թուրքական հասարակությանը, հայաստանյան գիտության կազմակերպիչները պարզապես պարտավոր են ֆինանսավորել ու աջակցել պահանջատիրության տարաբնույթ խնդիրների ուսումնասիրությանը նվիրված մեծ ու փոքր ծրագրերին, անհրաժեշտության դեպքում ձևավորել նոր, ժամանակակից մեթոդաբանությամբ զինված ու գիտական լայն համագործակցության ձգտող, միջազգային իրավունքի մասնագետներով ապահովված հետազոտական, վերլուծական կենտրոններ: Սա եմ ես դիտում 21-րդ դարի համար «Ումից եմ պահանջում» հարցի լուծման ուղիների ձևավորումը մատնանշող մարտահրավերը:

«Ումից եմ պահանջում» հարցն ունի նաև երկրորդ բաղադրիչը, որն ավելի շատ վերաբերում է Հայոց ցեղասպանության ընթացքում տեղ գտած որոշ իրադարձությունների գնահատականին: Ավելի պարզ՝ հայոց նկատմամբ գերտերությունների պահվածքին, որոնք, ինչպես մեզ տասնամյակներ շարունակ մատուցվել է հայաստանյան պատմագրությամբ՝ հարյուր տարի առաջ հետևողական չեղան ու չաջակցեցին ցեղասպանված հայ ժողովրդին իր իրավունքների վերականգնման գործում: Հայերի մեջ ընդհանրապես այն մոտեցումը կա, թե Մեծ տերությունները մշտապես՝ հարմար առիթի պարագայում, զոհել են հայոց շահերն իրենց նպատակների ու խնդիրների լուծման համար, չեն օժանդակել անհրաժեշտ պահին, չեն սատարել իրենց տրամադրության ներքո եղած միջոցներով և այլն: Կարծում եմ՝ սա տիպական օրինակ է ոչ միայն հայերի, այլ նաև աշխարհի շատ այլ ժողովուրդների մեջ հանդիպող այն մոտեցման, երբ հանրությը, ինչ-ինչ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ, կամ ն՝ օբյեկտիվ, ն՝ սուբյեկտիվ պատճառներով ի վիճակի չլինելով իր ուժերով լուծել իր առջև ծառացած խնդիրները, իր անհաջողությունների պատճառները որոնում է դրսում, բարդում է օտարների վրա:

Այսպես՝ Առաջին համաշխարհային պատերազմը դեռ չավարտված, արևելահայերին հաջողվում է հռչակել Հայաստանի Հանրապետություն պետությունը: Ընդամենը մեկ շաբաթ անց կնքվում է Բաթումի պայմանագիրը Հայոց ցեղասպանությունն իրականացրած պետության հետ, որով նորաստեղծ հայոց պետության սահմանները՝ առանց այդ էլ հստակորեն չորվագծված, էապես փոքրանում են: Պատերազմի ավարտին՝ շնորհիվ Դաշնակից տերությունների հաղթանակի, նորաստեղծ հայկական պետության սահմաններն՝ առանց ռազմական գործողությունների, էապես ընդարձակվում են ի հաշիվ Կարսի մարզի և այլ տարածքների: 1920 թ. օգոստոսի 10-ին Անտանտի տերությունների և Թուրքիայի սուլթանական կառավարության միջև կնք-

վում է Սևրի պայմանագիրը, որով նախատեսվում էր հայկական պետության տարածքների ընդարձակում գրեթե երեք անգամ: Սակայն Հայաստանի Հանրապետությունը չի կարողանում դիմագրավել պայմանագրի կնքումից քիչ անց սկսված հերթական թուրքական արշավանքին, իրենց գործն են անում նաև ներքին խմորումները: Այսինքն՝ փաստը մնում է փաստ, որ Մեծ տերությունների օժանդակությամբ Հայաստանի Հանրապետությունը *դե յուրե* ձեռք է բերում հնարավորություն դառնալու միջինարևելյան հզոր պետություն, սակայն *դե ֆակտո* չի կարողանում օգտագործել այդ հնարավորությունը<sup>65</sup>: Իր դերն է խաղում նաև այն հանգամանքը, որ Առաջին աշխարհամարտից հետո Անտանտի պետությունների ներսում ուժեղ հակազդեցություն կար նոր, հնարավոր պատերազմներին մասնակցելուն, ինչն ԱՄՆ-ի պարագայում բերեց որոշակի ներքին քաղաքականության ձևավորմանը, խորհրդայնացված Ռուսաստանի դեպքում՝ զորքերի հետքաշմանը Արևմտյան Հայաստանի տարածքից, իսկ Անգլիայի ու Ֆրանսիայի դեպքում՝ հակաբոլշևիկյան ուղղվածություն ունեցող ռազմական գործողությունների վրա կենտրոնանալուն:

Հայ ինքնության, հայոց պատկերացումների համակարգի մի քանի տարրերի հետ սերտորեն կապված է հայոց և հրեաների ցեղասպանություններին աշխարհի արձագանքի ձևերի գնահատականը: Այսինքն՝ միշտ անց են կացվել համեմատություններ հրեից ճակատագրի նման դրվագների հետ: Պետք է նշել, որ իրադարձություններն այլ կերպ զարգացան հրեաների պարագայում: Սիոնիզմի գաղափարախոսության տարածմանը զուգընթաց սկսվեց ալիյան (հրեաների հայրենադարձությունը) Օսմանյան կայսրության, ապա և բրիտանական մանդատի ներքո գտնվող, սակայն արաբական գերակշիռ բնակչություն ունեցող Պաղեստինի տարածքներ: Այդ երկրամասի հրեական համայնքի բնակչությունը՝ պետության կազմավորմանը նախորդող ժամանակահատվածում, հասել էր 650 հազ. մարդու: Շեշտենք, որ այդ հայրենադարձությանն աշխարհն առանձնապես չէր օժանդակում՝ կային որոշակի քվոտաներ սահմանված բրիտանական մանդատի իշխանությունների կողմից, որոնք, սակայն, պարբերաբար խախտվում էին ոչ այնքան բրիտանական թողտվության, որքան որ անօրինական ներգաղթի զանգվածային բնույթով պայմանավորված: Ներգաղթն իրականացվում էր գերազանցապես հրեաների ուժերով<sup>66</sup>: Սրան հաջորդեց այն, որ աշխարհը, արձագանքելով հրեաների կորուստներին և հետևողականությանը, ՄԱԿ-ի որոշմամբ թույլատրեց հրեական պետություն ստեղծել: Իսրայել պետության հռչակումից անմիջապես հետո՝ 1948 թ. մայիսին, սկսվեցին պատերազմներ հարևան արաբական պետությունների հետ: Նորաստեղծ պետականությունը դիմացավ, ավելին՝ ընդարձակեց իր տարածքները: Այսինքն՝ այսպես թե այնպես, 20-րդ դարի ընթացքում հրեաներին հաջողվեց իրենց իսկ ուժերով

65 Մանրամասն տե՛ս Մարության, «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները», 35-36:

66 Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, «Հրեական հայրենադարձության փորձից. Ալիյա. 1», [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=787&sphrase\\_id=8529](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=787&sphrase_id=8529), դիտվել է 20.09.2021: Տե՛ս նաև Հարություն Մարության, «Հայրենադարձության և արսուրբցիայի իսրայելական փորձից», 21-րդ դար. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես 1 (2009), 88-102:



ստեղծել քիչ թե շատ *դե ֆակտո* (զանգվածային ներկայություն Պաղեստինում), ապա և Մեծ տերությունների օժանդակությամբ՝ *դե յուրե* կարգավիճակ և համեմատաբար ոչ մեծ տարածքով դառնալ միջինարևելյան հզոր պետություն, ինչը չհաջողվեց հայոց պարագայում:

Ինչպես տեսնում ենք, թե՛ հայերի, թե՛ հրեաների պարագաներում «աշխարհը» եղել է ն՝ «քար», և՛ «սրտացավ»: Սակայն արդյունքները եղել ու շարունակում են մնալ տարբեր:

## ԻՆՉՊԵՍ ԵՄ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Վերն արդեն նշվեց, որ «Հիշում եմ և պահանջում» կարգախոսի երկրորդ բաղադրիչը «պետք է իրականացվի, կամ առնվազն նախապատրաստվի ու մատուցվի հայաստանյան և սփյուռքյան քաղաքացիական հասարակության ու կառույցների, մասնավորապես, մասնագիտական հանրության կողմից»: Մարտահրավերն այս հարցում այն է, որ սրա կենսագործման ձևերից մեկը կարող է լինել այնպիսի կառույցների ստեղծումը, որոնց նմանակները ժամանակին ձևավորվել են համանման խնդիրներ լուծելու համար ու տասնամյակների ընթացքում հաջող քննություն են բռնել:

Մասնավորապես նկատի ունեմ «Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների կոնֆերանս» կամ կրճատ՝ «Պահանջների կոնֆերանս» (The Conference on Jewish Material Claims Against Germany – the Claims Conference) կազմակերպության փորձառությունը: Այն ձևավորվել է 1951 թ. հոկտեմբերին Նյու-Յորքում Արևմտքի երկրներում գործող 23 հրեական ազգային և միջազգային կազմակերպությունների հավաքի արդյունքում: Այս «կոնֆերանսի» Տնօրենների խորհուրդը բաղկացած էր հիմնադիր կազմակերպություններից յուրաքանչյուրի կողմից գործողված երկուական անդամներից: Ինչպես նշված է նրանց հայտարարության մեջ, ««Պահանջների կոնֆերանսը» խնդիր ունի բանակցել գերմանական կառավարության հետ ու ստեղծել Գերմանիայի կողմից Հոլոքոստի միջոցով անհատ հրեա մարդկանց և հրեա ժողովրդի նկատմամբ պատճառած նյութական վնասների փոխհատուցումների ծրագիր»: Արդեն շուրջ յոթ տասնամյակ «Պահանջների կոնֆերանսը» արդյունավետ գործում է, և այս ժամանակահատվածում, տարբեր գնահատականներով, հրեա մարդկանց ու Իսրայել պետությանը տրամադրվել է փոխհատուցում ավելի քան 70 մլրդ ԱՄՆ դոլարի չափով:

«Պահանջների կոնֆերանսի» 70-ամյա փորձառությունը հուշում է առնվազն մի քանի հետևություններ, որոնք կարող են օգտակար լինել նաև հայոց պահանջատիրության տեսանկյունից.

ա) Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ներկայացման և ստացման հարցը գործընթաց է, որը կարող է տևել տասնյակ տարիներ: Հրեաների պարագայում այն շարունակվում է շուրջ 70 տարի:

բ) Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների փոխհատուցումը

ոչ մի կապ չունի «արյան գնի» հետ, որը ենթակա չէ վճարման: Փոխհատուցման փաստը չի նշանակում ցեղասպանությունն իրականացրած գաղափարախոսությունը կրող ժողովրդի ներկայացուցիչների ներում ցեղասպանությունը վերապրածների կամ ցեղասպանության ենթարկված ժողովրդի կողմից: Երկու կողմերը կարող են ունենալ նորմալ միջպետական հարաբերություններ, միևնույն ժամանակ նման հարաբերությունների առկայությունը կամ բացակայությունը չի կարող խոչընդոտ դիտվել փոխհատուցման գործընթացի ձևավորման համար:

գ) Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների փոխհատուցումների դրսևորումները տարաբնույթ են: Դրանք կարող են լինել ինչպես դրամական ուղղակի և անուղղակի փոխհատուցումներ վերապրածներին ու զոհերի ժառանգներին (թե՛ միանվագ, թե՛ տարիներ ու տասնամյակներ շարունակվող), այնպես էլ նյութական փոխհատուցումներ (դրամի, ենթակառուցվածքների, դրամաշնորհների տրամադրման և այլ ձևերով, հայոց պարագայում՝ նաև հողային) ցեղասպանության ենթարկված ժողովրդի իրավահաջորդը հանդիսացող պետական միավորմանը:

դ) Ցեղասպանության տուժածներ դիտվում են ոչ միայն ցեղասպանության իրականացման տարիներին զոհվածները, այլև նրանք, ովքեր (1) իրենց բնակության վայրերից ենթարկվել են բռնի տեղահանման, (2) տարհանվել են համակենտրոնացման ճամբարներ, (3) բռնի աշխատել են աշխատանքային գումարտակներում և այլուր, (4) ենթարկվել են որոշակի բարոյական կամ այլ բնույթի գրկանքների, հալածանքների, (5) հնարավորություն չեն ունեցել ստանալ համապատասխան կրթություն, զուրկ են եղել մասնագիտական աճի հնարավորություններից և այլն:

ե) Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ներկայացման, ստացման ու բաշխման գործի իրականացման համար լավագույն ձևը միջազգային ոչ կուսակցական և ոչ կառավարական կազմակերպության ստեղծումն է, որը կաշկանդված չէ շահառու հանդիսացող պետության օրենքներով: Այդ մարմինը նաև հետազոտական-իրավական գործունեություն իրականացնող կառույց է, այն պետությունից ստանում է որոշակի իրավասություններ և գործում է դրանց շրջանակներում՝ միաժամանակ ներկայացնելով ցեղասպանության ենթարկված ժողովրդի աշխարհով մեկ սփռված ժառանգների շահերը:

զ) Նման մարմնի ձևավորման փորձ արվեց նաև Հայաստանում և Սփյուռքում 2006 թ., ի դեմս Արևմտահայերի ազգային համագումարի նախապատրաստման միջազգային կազմակերպչական կոմիտեի ստեղծման<sup>67</sup>, որը որոշ ընդմիջումներով գործեց մինչև 2011 թ. դեկտեմբեր, երբ Փարիզի Սևր արվարձանում հրավիրվեց Արևմտահայոց երրորդ համագումարը ու ստեղծվեց «Արևմտահայոց ազգային համագումար» (ԱԱՀ) միջազգային ոչ կառավարական կազմակերպություն՝ գրանցված Փարիզում: Կազմակերպությունը հրավիրեց չորրորդ համագումար Փարիզում 2015

67 Տե՛ս մասնավորապես՝ «Ուղերձ Հայոց Մեծ եղեռնը վերապրածների ժառանգներին տարագրության մեջ լիազոր ներկայացուցչություն հիմնելու համար», *Հայաստանի Հանրապետություն* օրաթերթ (Երևան), 25 հոկտեմբերի 2006:

թ. մարտին: 2012 թ. Հայաստանում ստեղծվեց «Արևմտահայերի ժառանգների միավորում» հասարակական կազմակերպությունը:

Իմ համոզմամբ՝ անկախ Հայոց ցեղասպանության և, մասնավորապես, հայրենազրկման փաստի պատճառով հայոց իրողությունների առանձնահատկությունների առկայության՝ Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող մարմնի՝ «Պահանջների կոնֆերանս»-ի գործունեության փորձի շարունակական ուսումնասիրությունը միայն կնպաստի հայոց պահանջատիրության քաղաքականության մշակման գործին:

\*\*\*

Վերջում մեկ անգամ ևս շեշտեմ, որ «... ցանկացած էթնիկ կամ ազգային ընդհանրության համար փորձություններով լի անցյալի հիշողությունը ոչ թե բեռ է, որ կարելի է հարկ եղած դեպքում թոթափել, այլ հարստություն, որ պետք է կարողանալ հավուր պատշաճի օգտագործել»<sup>68</sup>:

## THE MOTTO “I REMEMBER AND DEMAND” AND THE CHALLENGES OF TRANSMITTING THE MEMORY OF THE ARMENIAN GENOCIDE IN THE 21<sup>ST</sup> CENTURY

*Harutyun T. Marutyan,  
Armenian Genocide Museum-Institute, Armenia*

### SUMMARY

The Pan-Armenian Declaration, adopted on January 29, 2015 at the meeting of the State Commission on Coordination of the events for the commemoration of the 100<sup>th</sup> anniversary of the Armenian Genocide, notes that it “considers the 100<sup>th</sup> anniversary of the Armenian Genocide an important milestone on the ongoing struggle for historical justice under the motto “I remember and I demand.”” Thus, it was proposed to consider this motto as a short formulation of the policy of memory of Armenians. This raises questions related to the components of this motto and requiring clarification in the context of conveying the memory of the Genocide in the 21<sup>st</sup> century: Who do I remember? What do I remember? How do I remember? What do I demand? From whom do I demand? How do I demand?

The article proposes and justifies the answers to these questions. In particular, on the first issue, it is proposed to compile an electronic database of victims and survivors of the Genocide, their memories, video and audio recordings. The necessity of reformulating the name of the day of commemoration of the victims of the Genocide is substantiated. Answering the question “what do I remember?,” it is proposed to remember also the self-defense battles during the Genocide; the humanitarian assistance of Armenian and foreign benefactors; humanitarian resistance to the perpetrators of the genocide; mutual assistance of family members, relatives, friends; moral victories; the struggle to stay alive. In

---

68 Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը*, 16:

answer to the question “how do I remember?” talks about the problems of mourning and worthy memory; commemorative processions; the construction of monuments (khachkars); the introduction of the “Park of Memory” culture; forms of using the memory of the Genocide as a means of strengthening the Armenian Diaspora communities; the need to organize exhibitions; highlighting specific people and organizations from the collective image of the victims of the Genocide processions with their portraits; creation of methods of teaching genocide and other problems.

In connection with the question “what do I demand?” talks about various manifestations of Armenian demands (land, financial, moral), the question of the need to form a state approach to the problem is raised. Touching upon the question “from whom do I demand?,” the views prevailing in the society (from the world, from Turkey, from the Armenians, etc.) are considered. When discussing the question “how do I demand?” we are talking about the creation of such structures, similar to which were formed in due time to solve analogous problems and successfully passed the exam for decades, and have an experience, knowledge of which will also be useful for Armenians (for example, the “Conference on Jewish material claims against Germany”).

**Key words:** motto, memory of the Armenian Genocide, memory transmission, victims, survivors of the Genocide, those who resist, self-defense, Holocaust, database, rescue.

## ДЕВИЗ “ПОМНЮ И ТРЕБУЮ” И ВЫЗОВЫ 21-ГО ВЕКА, СВЯЗАННЫЕ С ПЕРЕДАЧЕЙ ПАМЯТИ О ГЕНОЦИДЕ АРМЯН

*Արտյուն Տ. Մարտյան*

*Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения*

### РЕЗЮМЕ

Во Всеармянской декларации, принятой 29 января 2015 г. на заседании Государственной комиссии по координации мероприятий, посвященных 100-летию Геноцида армян, отмечается, что она “рассматривает 100-летие Геноцида армян как важную веху в процессе продолжения борьбы за историческую справедливость под девизом “Помню и требую.”” Таким образом предлагалось считать этот девиз краткой формулировкой политики памяти армян. В связи с этим возникают вопросы, относящиеся к компонентам данного девиза и требующие уточнения в контексте передачи памяти о Геноциде в 21-м веке: кого помню? что помню? как помню? что требую? от кого требую? как требую?

В статье предлагаются и обосновываются ответы на эти вопросы. В частности, по первому вопросу предлагается составить электронную базу данных о жертвах и переживших Геноцид, их воспоминаний, видео- и аудио-записей. Обосновывается необходимость переформулирования названия дня памяти жертв Геноцида армян. Отвечая на вопрос “что помню?”, предлагается помнить также самооборонительные бои в годы Геноцида, гуманистическую помощь армянских и зарубежных благодетелей, гуманитарное сопротивление исполнителям геноцида, взаимопомощь членов семьи, родственников, друзей, моральные победы, борьбу за то, чтобы

остаться в живых. В ответе на вопрос “как помню?” говорится о проблемах скорби и достойной памяти, памятных шествий, строительстве памятников (хачкаров), внедрения культуры “Парка памяти,” формах применения памяти о Геноциде как средства укрепления армянских общин диаспоры, необходимости организации выставок, выделения из собирательного образа жертв Геноцида конкретных людей и организации шествий с их портретами, создания методики преподавания геноцида и других проблемах.

В связи с вопросом “что требую?” говорится о различных проявлениях армянских требований (земельных, финансовых, моральных), выдвигается вопрос необходимости формирования государственного подхода к проблеме. Касаясь вопроса “от кого требую?”, рассматриваются бытующие в обществе представления (от мира, от Турции, от армянства и т.д.). При рассмотрении вопроса “как требую?” речь идет о создании таких структур, подобные которым в свое время были сформированы для решения схожих проблем и успешно выдержали экзамен на протяжении десятилетий, имеют опыт, знание которого будет полезно также для армян (например, действующая семьдесят лет “Комиссия по еврейским материальным искам к Германии”).

**Ключевые слова:** девиз, память о Геноциде армян, передача памяти, жертвы, пережившие Геноцид, сопротивляющиеся, самооборона, Холокост, база данных, спасение.

## REFERENCES

A-Do. *Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին* [Great Events in Vaspurakan]. Yerevan: Luys, 1917;

Aghalaryan, Kristina. «Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Հիմնարկին մէջ Պատահական Չեմ Յայտնուած... Հարցազրոյց Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Հիմնարկի Տնօրէն' Դուկո. Յարութիւն Մարութեանի Հետ» [I am not Appeared Accidentally at the Armenian Genocide Museum-Institute... Interview with Armenian Genocide Museum-Institute Director Harutyun Marutyan]. *Zart'onq* (Beirut), 20 November 2018;

Armenpress. «Եղեռնի զոհերի հուշարձանի մոտ» [At the Yeghern Victims Monument]. *Patma-banasirakan handes* 2 (1975): 79-80;

Arutyunyan, Ashot. *Кавказский фронт: 1914-1917 гг.* [The Caucasian Front: 1914-1917]. Yerevan: Hayastan, 1971;

Gh[azarian], V[ache]. «Ռամկավար ազատական կուսակցութեան դիրքորոշումները» [The Stances of the Ramkavar Azatakan Party]. *Baika monthly* (Watertown) 12 (1994);

Harut'yunyan, Avetis. «Վան-Վասպուրականի ազգաբնակչության մեծ գաղթը. պատճառները, ընթացքը, հետևանքները և պատասխանատվությունը» Հայաստանի մայրաքաղաքները: Գիրք I. Վան: Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբերի 2010 թ.) նյութերի ժողովածու (կազմող, խմբագիր և ներածության հեղինակ Հ. Տ. Մարության) [The Great Migration of the Population of Van-Vaspurakan: Causes, Results and Responsibility in Capitals of Armenia. Book 1: Van. Proceedings of the International Conference, Dedicated

to 2865<sup>th</sup> Anniversary of the First Record about City of Van (October 7-9, 2010) (compiled and edited by Harutyun Marutyan)]. Yerevan: Gitut'yun, 2013, 170-196;

Harut'yunyan, Avetis. *Վան-Վասպուրականի կրոնամշակութային կյանքը և պետականության ստեղծման փորձը (1908-1918 թթ.)* [Religious and Cultural Life of Van-Vaspurakan and the Attempt of the Restoration of Statehood (1908-1918)]. Ejmiadzin: Publ. Of Holy See of Saint Ejmiadzin, 2018;

Iskahadian, Harout'one. *Վկայարան Հայոց ցեղասպանության* [Testimonies of the Armenian Genocide]. Beirut, vol. I-IX, 2010- ;

Karapetyan, Murad. *Հայերի մասնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմին (1914-1918 թթ.)* [Participation of Armenians in the First World War (1914-1918)]. Yerevan: Gitut'yun, 2014.

Kassouny, Yervant H. *Լուսարձակի տակ անհաճոյ ըլլալու երանությունը* [The Felicity of Being Unpleasant Under the Spotlight]. Beirut: E.H.Q., 2017;

Keorkizian, Arsen. *Վասպուրականի հերոսամարտը: 1915 ապրիլի 7 – 1915 մայիսի 7: Յոյս և լոյս* [Heroic Battle of Vaspurakan. 1915 April 7 – 1915 May 7. Hope and Light]. Beirut: Publ. of Teqeyan Cultural Union, 1965;

Khudaverdyan, Konstantin (ed.). *Армянский вопрос. Энциклопедия* [The Armenian Question: Encyclopedia]. Yerevan: Haykakan hanragitarani glkhavor khmbagrut'yun, 1991;

Levon Mesrop (ed.). *1915. Աղէտ և վերածնունդ* [1915. Catastrophe and Rebirth]. Paris: Araks, 1952;

Marut'yan, Harut'yun. «Տրավմատիկ հիշողությունն իբրև հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոն Թուրքիայում» [“Traumatic Memory as an Important Factor for Preservation of Armenian Identity in Turkey”]. *Turqiayi hayut'yan khndirneri shurj. Teghekagir “Noravanq” himnadrami* 22 (2008): 110-121;

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Volume 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitutyun, 2009. Anthropology of Memory 3;

Marut'yan, Harut'yun. «Հրեական հայրենադարձության փորձից. Ալիյա. 1» [From the Experience of Jewish Repatriation. Aliyah. 1.], [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=787&sphrase\\_id=8529](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=787&sphrase_id=8529);

Marut'yan, Harut'yun. «Հայրենադարձության և արսորբցիայի իսրայելական փորձից» [From the Israeli Experience of Repatriation and Absorption]. *21-rd dar: Teghekatvakan-verlutsakan handes* 1 (2009): 88-102;

Marut'yan, Harut'yun. «Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը. ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը», *Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները. գիտական զեկուցումների ժողովածու*, գիտ. խմբ. Արտաշես Շահնազարյան, Հարություն Մարության, կազմողներ՝ Ասդրանիկ Արշակյան, Վլադիմիր Վարդանյան [“German Reparations to Jewry: Formation, Process and Recent Situation,” in *The Problems of Western Armenian's Claims: Collection of*

*Conference Papers*, edited by Artashes Shahnazaryan and Harutyun Marutyan, compliers Andranik Arshakyan and Vladimir Vardanyan]. Yerevan, 2009, 91-106;

Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները» [Structural Peculiarities of Armenian Genocide and Jewish Holocaust Memory]. *Patmabanasirakan handes* 2 (2011): 24-46;

Marut'yan, Harut'yun. «К вопросу об иконографическом восприятии памяти Первой мировой войны в армянской действительности» [On the Question of the Iconographic Perception of World War I Memory in the Armenian Reality]. *Patmabanasirakan handes* 1 (2013): 3-21;

Marut'yan, Harut'yun. «Թանգարան և հուշարձան (հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն)» [Museums and Monuments (Comparative Analysis of Armenian and Jewish Experience)]. *Études Arméniennes Contemporaines* 3: Juifs, Arméniens: un siècle d'État (2014): 57-79;

Marut'yan, Harut'yun. «Ինքնապաշտպանության ֆենոմենը Հայոց ցեղասպանության տարիներին և հիշատակի օրվա վերաբանաձևման խնդիրը» [The Phenomenon of Self-defense during the Years of the Armenian Genocide and the Problem of Reformulation of the Memory Day]. *Ts'eghaspanagitakan handes* 3, no. 1-2 (2015): 76-80;

Marut'yan, Harut'yun. «Փոխհատուցման ստացման հրեական փորձից. «Պահանջների կոնֆերանս» կազմակերպության ձևավորումը և գործունեությունը», *Հայոց ցեղասպանությունը և հատուցման հիմնասինդիրը: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու*, խմբ. Արմեն Մարության [“From the Jewish Experience of Receiving Compensations: Creation and Activities of the “Claims Conference” Organization,” in *The Armenian Genocide and the Problem of Reparation. Proceedings of the International Conference* (ed. Armen Maruqyan)]. Yerevan: Institute of History of the National Academy of Sciences of Republic of Armenia, 2017, 156-173;

Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը, զարգացումները, մերօրյա վիճակը (մաս 1)» [Formation, Development, and Current State of the Armenian Genocide Victims Remembrance Day (Part 1)]. *Ts'eghaspanagitakan handes* 6, no. 1 (2018): 105-129;

Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը, զարգացումները, մերօրյա վիճակը (մաս 2)» [Formation, Development, and Current State of the Armenian Genocide Victims Remembrance Day (Part 2)]. *Ts'eghaspanagitakan handes* 6, no. 2 (2018): 103-142;

Marut'yan, Harut'yun. «Ինչպես հաղթահարել «զոհի բարդույթը»» [How to Overcome the “Victime Stereotype”]. *Hayastani Hanrapetut'yun* (Yerevan), 12 March 2019;

Marut'yan, Harut'yun. «Ներածություն», *Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու*, խմբ. Հարություն Մարության, Նարինե Մարգարյան [“Introduction,” in *The Rescue of Armenians in the Middle East in 1915-1923: International Conference Proceedings*, November



9-11, 2020, eds.: Harutyun Marutyan, Narine Margaryan]. Yerevan: Armenian Genocide Museum-Institute Foundation, 2020, 11-26;

Marut'yan, Harut'yun. «Գերեզմանոցային մշակոյթի դրսևորումները հայոց յուշարձանային համալիրներում» [The Manifestations of Cemetery Culture in Armenian Monuments and Memorials]. *Handes amsoya* 1-12 (2020): 445-468;

Minasyan, Edik. «Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թվականին» [Self-Defense Battles of Armenians in 1915]. *Haykakan banak* 1-2 (2015): 88-134;

Nazaryan, A. S. «Վուվկայան բանակի սոցիալական և ազգային կազմը (1914-1917 թթ.)» [The Social and National Structure of Caucasian Army]. *Banber Yerevani hamalsarani* 3 (1989), 146-151;

Papian, Ara. *Հայկական հարցի լուծման հայեցակարգ. Հայկական հարցի լուծումը որպես հայոց պետականության հզորացման եզակի հնարավորություն և հայ ժողովրդի հարստեման միակ ուղի* [Strategy Paper on the Armenian Cause: The Resolution of the Armenian Question as a Singular Opportunity for the Consolidation of Armenian Statehood and the Only Path to the Endurance of the Armenian People], <http://www.modusvivendi-center.org/hy/node/2574>;

Petrosyan, Armen. «Հայոց ցեղասպանությունը որպես ազգածնություն» [The Armenian Genocide as a Birth of a Nation]. *Hayats'q Yerevanits' Hayagitakan* 4 (1997): 50-51;

Ramkavar Azatakan Party's Representatives' 28<sup>th</sup> General Meeting's Record Office, «Հաղորդագրություն» [Information], <https://ramgavar.am/%D5%BC%D5%A1%D5%AF/%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%AB%D6%82%D5%B6>;

Sahakyan, Ruben. *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին* [The Genocide of Western Armenians and Self-Defense Battles in 1915]. Yerevan: Gitut'yun, 2005;

Sahakyan, Ruben. *Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը* [Self-Defense Battles in Western Armenia and the Armenian Revolutionary Federation]. Yerevan: Self. publ., 2010;

Therault, Henry C.; Zayas, Alfred de; McCalpin, Jermaine O.; Papian, Ara. *Արդարացի լուծում: Հայոց ցեղասպանության հատուցումները: Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խմբի զեկույցը: Ապրիլ 2015* [Resolution with Justice: Reparations for the Armenian Genocide. The Report of the Armenian Genocide Reparations Study Group. April 2015], [http://www.armeniangenocidereparations.info/wp-content/uploads/2017/10/brochure\\_arm.pdf](http://www.armeniangenocidereparations.info/wp-content/uploads/2017/10/brochure_arm.pdf);

T'rvants', Anush. «Վերագտնենք մեր արժանապատվությունը» [Let us Retrieve Our Dignity. Interview with Harut'yun Marut'yan]. *Zhamanak* (Istanbul), 3 October 2018;

Svazlian, Verjine. *Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ (երկրորդ, համալրված հրատարակություն)* [The Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors (second revised edition)]. Yerevan: Gitut'yun, 2011;

Այսուհետ աշխարհի ցանկացած կետից կարելի է «շրջայց» կատարել Հայոց

ցեղասպանության թանգարանում [From now on it is Possible to make a “Tour” in the Armenian Genocide Museum], <http://www.genocide-museum.am/arm/12.10.21.php>;

*Զեկոյց արեւմտահայութեան իրաւունքներու վերաբերեալ* [Presentation on the Rights of the Western Armenians], <https://www.cnarmeniens.org/congress-document1>;

Էրդողանի հրամանով կստեղծվի ցեղասպանության ինստիտուտ [According to the Decree of Erdoghan Genocide Institute will be Created], <https://www.iammedia.am/en/post/recognize-armenian-genocide-15-7>;

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հրապարակվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցի համահայկական հռչակագիրը: Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցի համահայկական հռչակագիր [The Pan-Armenian Declaration on the 100th Anniversary of the Armenian Genocide was promulgated at the Tsitsernakaberd Memorial Complex], <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>;

Ծրագիր Հայ Յեղափոխական Դաշնակցության, հաստատված Հ.Յ.Դ. ԻԷ Ընդհանուր (Արտակարգ) Ժողովի կողմից 1998 թ. [Program of the Armenian Revolutionary Federation, confirmed at the 38<sup>th</sup> General (Extraordinary) Meeting in 1998], <https://old.arfd.am/?p=6815>;

*Հայ ժողովրդի պատմություն, հ. VI. Հայաստանը 1870-1917 թվականներին* [History of Armenian People. Vol. VI. Armenia in 1870-1917]. Yerevan: Publishing House of Academy of Sciences of Armenian SSR, 1981;

Հայկական ՍՍՀ օրենքը «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին» [The Law of Armenian SSR “On the Condemnation of the 1915 Armenian Genocide in the Ottoman Turkey”], <http://www.irtek.am/views/act.aspx?aid=8170>;

Հայոց ցեղասպանությունը վերապրածների ընտանիքների հետքերով» ժամանակավոր ցուցադրության բացումը [Opening of the Temporary Exhibition “Tracing the Families of the Armenian Genocide Survivors”], <http://www.genocide-museum.am/arm/21.04.2021.php>;

*Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու (կազմողներ՝ Գոհար Ավագյան, Ամատունի Վիրաբյան, գլխ. խմբ. Ամատունի Վիրաբյան)* [The Armenian Genocide in Ottoman Turkey. Testimonies of Survivors. Collection of Documents (compilers Gohar Avagyan, Amatuni Virabyan, ed. Amatuni Virabyan). Yerevan, National Archives of Armenia, vol. 1-3, 2012;

Հարցազրույց ՀՅԹԻ նորընտիր տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Հարություն Մարությանի հետ [An Interview with Newly Elected Director of the Armenian Genocide Museum-Institute Dr. Harutyun Marutyan], <http://www.genocide-museum.am/arm/news-27.09.2018-Marutyan-interview.php>;

Հարցազրույցը Հայոց ցեղասպանութեան թանգարանի տնօրէն Յարութիւն Մարութեանի հետ [Interview with Armenian Genocide Museum Director Harutyun Marutyan]. *Azat Or* (Athens), 13 January 2020.

**Հեղինակի մասին**  
**About the Author**  
**Об авторе**

**Հարություն Տ. Մարության**, պատմ. գիտ. դոկտոր, ազգագրագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող (համատեղությամբ):

Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանության հիշողություն և ազգային ինքնություն, պատկերագրություն:

Էլ. փոստի հասցե՝ agmidirector@genocide-museum.am

**Harutyun T. Marutyan**, PhD in History, social/cultural anthropologist, Director of Armenian Genocide Museum-Institute Foundation; Head Researcher, Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia (part time).

Research fields – genocide memory and national identity, iconography.

E-mail: agmidirector@genocide-museum.am

**Арутюн Т. Марутян**, доктор ист. наук, этнограф, Директор Фонда “Музей-институт Геноцида армян”; Главный научный сотрудник Института археологии и этнографии Национальной академии наук Армении (по совместительству).

Область исследований – память о геноциде и национальная идентичность, иконография.

Эл. почта: agmidirector@genocide-museum.am

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սուրեն Ա. Մանուկյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հոդվածն ուսումնասիրում է ցեղասպանագիտության՝ որպես գիտակարգի մեջ առաջացած բանավեճերը և քննարկումները՝ մարդկության դեմ ուղղված այդ հանցագործության բնորոշման, սահմանման ընդլայնման, զանգվածային այլ սպանությունները ցեղասպանություն որակելու վերաբերյալ: Հոդվածի քննության առանցքային կետը ցեղասպանագիտության մեջ դասական համարվող Կաց – Չառնի բանավեճի ներկայացումն է: Բերվում են նաև ցեղասպանագիտությունը տեսականացնող մի շարք գիտնականների՝ ցեղասպանության դասակարգումները, որոնք շատ հաճախ հանգեցնում են գիտական նոր տերմինների առաջացմանը:

**Բանալի բառեր՝** ցեղասպանություն, տոտալ և մասնակի ցեղասպանություններ, Կաց – Չառնի բանավեճ, Հոլոքոստ, Վահագն Դադրյան, պոլիտիցիդ, գենդերցիդ, էլիտիցիդ, էթնոցիդ:

Հոդվածը ներկայացվել է 03.09.2021: Ընդունվել է տպագրության 15.12.2021:

The article was submitted on 03.09.2021 and accepted for publication on 15.12.2021.

Статья поступила 03.09.2021 и была принята к публикации 15.12.2021.

**Ինչպես հղել՝** Սուրեն Ա. Մանուկյան, «Ցեղասպանությունների գիտական դասակարգումների հարցի շուրջ», *Ցեղասպանագիտական հանդես* 9, no. 2 (2021), 55-75:

**How to cite:** Suren A. Manukyan, “On the Academic Classifications of Genocides,” *Ts’eghaspanagitakan handes* 9, no. 2 (2021): 55-75.

**Как сослаться:** Сурен А. Манукян, “К вопросу об академических классификациях геноцидов,” *Тсехаспанагитакан андес* 9, no. 2 (2021): 55-75.

### Ներածություն

Ցեղասպանություն հանցագործությունը մարդկության ողջ պատմության անբաժանելի մասն է կազմում: Պատահական չէ, որ ՄԱԿ-ի «Ցեղասպանությունների կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի առաջաբանում նշվում է, որ պատմության բոլոր ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը՝ կոչ անելով միջազգային համագործակցության՝ այդ արհավիրքից ազատվելու համար:

Սկսած աստվածաշնչային ժամանակներից՝ տարբեր պետություններ և ազգեր իրենց քաղաքական խնդիրները փորձել են լուծել բռնի միջոցներով՝ ոչնչացնելով ազգային, էթնիկ, կրոնական և ռասայական խմբերի: Անկախ գոհերի թվից, սպանությունների իրականացման ձևերից կամ պատճառներից՝ այս ոճիրներից

շատերը համապատասխանում են Ռաֆայել Լեմկինի՝ «ցեղասպանություն» հասկացության բնորոշմանը<sup>1</sup>:

Նշենք, որ թեև խոսքը մեկ երևույթի մասին է, միևնույն է, այն միատարր կամ նույնական չէ: Ավելին՝ ցեղասպանագետների շրջանում առկա է բանավեճ, թե մարդկության պատմության ընթացքում տեղի ունեցած զանգվածային սպանություններից որոնք համարել ցեղասպանություն, իսկ որոնք՝ ոչ:

Որոշակի հատկանիշներից ելնելով՝ քննարկման մեկ այլ տիրույթ է ցեղասպանությունների տարբերակումն ու դասակարգումը, որոնց շնորհիվ գիտական քննարկման ոլորտ են ներմուծվում նոր տերմիններ: Սույն հոդվածի խնդիրն է ներկայացնել այդ քննարկումները՝ առանձնացնելով ցեղասպանագիտության մեջ կարծրացած որոշ տեսակետներ:

### Կաց - Չառնի բանավեճը

Ցեղասպանագիտության մեջ Կաց - Չառնի բանավեճը կարելի է համարել դասական օրինակ: Այն ընթանում է ցեղասպանության հասկացության նեղ՝ սահմանափակ թվով պատմական իրողությունները բնորոշելու, և լայն՝ ներառական ընկալման շուրջ, երբ ցեղասպանություն են անվանվում զանգվածային սպանությունների շատ դեպքեր:

Առաջին մոտեցման ամենահայտնի ներկայացուցիչը Բոստոնի համալսարանի պրոֆեսոր, ԱՄՆ Հոլոքոստի հիշատակի թանգարանի ակադեմիական խորհրդի նախկին համանախագահ Սթիվեն Լ. Կացն է, որը պնդում է, որ Հոլոքոստը ժամանակակից պատմության միակ ցեղասպանությունն է: Իր հերթին Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության հիմնադիրներից և առաջին նախագահներից Իսրայել Չարնին առաջարկում է հանցագործության որակման հարցում ավելի ընդհանրական մոտեցում, ինչը թույլ կտա մեծ թվով զանգվածային սպանություններ ներառել «ցեղասպանություն» հասկացության մեջ<sup>2</sup>:

Երկու մոտեցումներն էլ չեն սահմանափակվում վերոնշյալ գիտնականներով, կողմնակիցների միջև ընթանում են թե՛ քննարկումներ:

### Հոլոքոստի բացառիկության դրույթը

Սթիվեն Կացի ուսումնասիրության հիմնադրույթը Հոլոքոստի եզակիությունն է: «Հոլոքոստը պատմության մեջ» աշխատությունում հեղինակը Հոլոքոստը ներկայացնում է որպես ցեղասպանության բնորոշմանը և ՄԱԿ-ի կոնվենցիային համապատասխանող միակ հանցագործություն: Մյուս եզրակացության նա հանգել է՝ ուսումնասիրելով զանգվածային սպանությունների հարյուրավոր դեպքեր, որոնցից

1 Մյան օրինակների մասին տե՛ս Ben Kiernan, *Blood and Soil: A World History of Genocide and Extermination from Sparta to Darfur* (New Haven: Yale University Press, 2007); Norman M. Naimark, *Genocide: A World History* (Oxford: Oxford University Press, 2017) .

2 Daniel Feierstein, "Leaving the Parental Home: An Overview of the Current State of Genocide Studies," *Genocide Studies and Prevention* 6, no. 3 (2011): 258.

և ոչ մեկն, ըստ հեղինակի, լիարժեքորեն չի համապատասխանել Հոլոքոստին: Կացի համոզմամբ՝ գոյություն ունի ցեղասպանության միայն մեկ լիարժեք օրինակ<sup>3</sup>: Անդրադառնալով 1994 թ. Ռուսնդայում տեղի ունեցած կոտորածներին՝ Կացն այն միտքն է հայտնում, որ ցեղասպանական մտադրություն գոյություն չի ունեցել: Ընդհանրապես հույժ-թույժի հակասության մեջ բացառելով ցեղասպանական բաղադրիչը՝ այն համարում է ընդամենը ցեղային գերիշխանության համար մղվող պատերազմ<sup>4</sup>: Հայոց ցեղասպանության հարցում Կացը բացահայտ ժխտողական դիրքորոշում ունի: Նա պնդում է, որ հայերի որոշ մասի (ըստ նրա՝ 17–27%) վերապրելը դեռևս «հայկական ժառանգության կրող յուրաքանչյուր անհատի ֆիզիկական ոչնչացում չէ»<sup>5</sup>:

Նույն կարծիքին է Ամհերսթոմ Մասաչուսեթսի համալսարանի պատվավոր պրոֆեսոր Գյունթեր Լևին, որը պնդում է, որ Հոլոքոստի ժամանակ միայն հրեաներն էին դարձել ցեղասպանության զոհ, և զոհ պետք է համարել բոլոր հրեաներին<sup>6</sup>, քանի որ գոյություն ունեւ բոլոր հրեաներին անխտիր սպանելու մտադրություն: Հայոց ցեղասպանության պարագայում նա ժխտողական դիրքերում է. հեղինակի համաձայն՝ աշխարհում ապրող հայերի 40%-ի սպանությունը չի կարող համարվել ցեղասպանություն<sup>7</sup>: Թե՛ Կացը, թե՛ Լևին, բերելով որոշ թվով հայերի վերապրելու փաստարկը, չսկստելու են տալիս Հոլոքոստի նույնաբովանդակ իրողությունը: 1945 թ. մայիսի դրությամբ Եվրոպայում նույնպես հարյուր հազարավոր հրեաներ էին վերապրել, իսկ աշխարհի տարբեր մասերում միլիոնավոր հրեաներ էին բնակվում:

Հայտնի ցեղասպանագետ Հենրի Հաթենբախը իրավացիորեն քննադատում է Կացի մեթոդաբանությունը: Նա պնդում է, որ Հոլոքոստի ընտրությունը որպես համեմատության նշանող ներկայացնելը սխալ է: Պատասխանն այս դեպքում կանխորոշված է, քանի որ յուրաքանչյուր ցեղասպանություն առանձնահատուկ է և կամայական երկու դեպք չեն կարող լիովին համընկնել:

Բացի այդ Կացն իր հետազոտությունը գիտակցաբար կառուցում է այն եզրակացության շուրջ, որը ցանկացել է ապացուցել նախքան ուսումնասիրությունը,

3 Steven T. Katz, *The Holocaust in Historical Context. Volume I. The Holocaust and Mass Death before the Modern Age* (New York: Oxford University Press, 1994).

4 Liz McMillin, “The Uniqueness of the Holocaust,” in *Chronicle of Higher Education*, <http://chronicle.com/article/The-Uniqueness-of-the/90491/>, դիտվել է 27.08.2021; David Stannard, “Uniqueness as Denial: The Politics of Genocide Scholarship,” in *Is the Holocaust Unique? Perspectives on Comparative Genocide*, ed. Alan Rosenbloom (Boulder, CO: Westview, 2009).

5 Steven Katz, “Uniqueness: The Historical Dimension,” in *Is the Holocaust Unique?* 69; Steven Katz, “The ‘Unique’ Intentionality,” 175–176; Hannibal Travis, “On the Original Understanding of the Crime of Genocide,” *Genocide Studies and Prevention* 7, no. 1 (2012): 32.

6 Guenter Lewy, *The Nazi Persecution of the Gypsies* (Oxford: Oxford University Press, 2000), 225–226.

7 Guenter Lewy, “The First Genocide of the 20th Century? (Armenian Massacres, 1915–1916),” December 2005, <https://www.commentary.org/articles/guenter-lewy/the-first-genocide-of-the-20th-century/>, դիտվել է 16.08.2021: Նույն ամսագրի 2006 թ. փետրվարյան համարում այս ժխտողական դրույթներին հակադարձում են բազմաթիվ գիտնականներ, այդ թվում Քոլգեյթի համալսարանի դասախոս Փիթեր Բալաքյանը, Միչիգանի համալսարանի պրոֆեսոր Դենիս Փափազյանը և Իսրայել Չառնին, <https://www.commentary.org/articles/reader-letters/genocide/>, դիտվել է 16.08.2021:

այն է՝ հաստատել, որ Հոլոքոստը եզակի է, առանձնահատուկ, միակ և անհամեմատելի, յուրատեսակ սուպեր-ցեղասպանություն, իսկ մյուսները՝ ցեղասպանության ոչ լիարժեք օրինակներ: Այս թերի մեթոդաբանության կիրառմամբ Կացը հայտարարում է, որ ցեղասպանության հանցագործության մասին անհրաժեշտ գիտելիք կարելի է քաղել Հոլոքոստից, այլ ցեղասպանություններից ստացված պատկերացումները երկրորդական են<sup>8</sup>:

Այս նեղ ընկալման կողմնակիցները թեն փոքրաթիվ են, սակայն նրանց շարքում կան ճանաչված գիտնականներ, ինչպես օրինակ՝ Իռլանդիայի Գալվեյի համալսարանի պրոֆեսոր Ուիլյամ Շաբասը, որը նույնիսկ որոշ ժամանակ գլխավորել է թեման ուսումնասիրող գիտնականներին միավորող Ցեղասպանագետների միջազգային ընկերակցությունը<sup>9</sup>: Շաբասը կարծում է, որ Հոլոքոստը և Ռուանդայի ցեղասպանությունը ներկայացնում էին իրական, լեզալ ցեղասպանություններ<sup>10</sup>, մինչդեռ Հայոց ցեղասպանությունը, Բանգլադեշը, Բիաֆրան, Կամբոջան, Բոսնիան և Հերցեգովինան, Կոսովոն և Դարֆուրը այդպիսին չեն<sup>11</sup>: Նա պնդում է, որ ցեղասպանությունը պահանջում է ամբողջ խումբը ոչնչացնելու «ռասիստական ատելության» շարժառիթ, այն դեպքում, երբ օրինակ ռասայական գործոնի միախառնումը քաղաքական/ռազմական պատճառների հետ բացառում են հատուկ ցեղասպանական մտադրությունը<sup>12</sup>:

Պետք է նշել, որ ի տարբերություն Կացի և Լևիի, Շաբասն ընդունում է ցեղասպանության հասկացության ձևավորման վրա Հայոց ցեղասպանության փաստի ազդեցությունը<sup>13</sup>:

8 Henry R. Huttenbach, "From the Editor: Towards a Conceptual Definition of Genocide," *Journal of Genocide Research* 4, no. 2 (2002):168.

9 Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության պաշտոնական կայքէջը՝ <https://genocidescholars.org/>: Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության մասին տե՛ս նաև Սուրեն Մանուկյան, «Ցեղասպանագիտությունը՝ որպես գիտաճյուղ. ձևավորման և զարգացման պատմությունը», *ՎԷՄ համահայկական հանդես* 11, no. 3 (2019), 30-32:

10 William Schabas, "Problems of International Codification – were the Atrocities in Cambodia and Kosovo Genocide?" *New England Law Review* 35, no. 2 (2001): 287–302, 296, 301–302; William Schabas, "Was Genocide Committed in Bosnia and Herzegovina? First Judgments of the International Criminal Tribunal for the Former Yugoslavia," *Fordham International Law Journal* 25, no. 1 (2001): 23–53, 45–47; William Schabas, "National Courts Finally Begin to Prosecute Genocide, the 'Crime of Crimes,'" *Journal of International Criminal Justice* 1, no 1 (2003): 39–63, 39, 41, 45, 55, 58; William Schabas, "The Jelisc Case and the Mens Rea of the Crime of Genocide," *Leiden Journal of International Law* 14, no. 1 (2001): 125–139; William Schabas, "Genocide Law in a Time of Transition: Recent Developments in the Law of Genocide," *Rutgers Law Review* 61, no. 1 (2008): 161–192; Travis, "On the Original Understanding of the Crime of Genocide," 32.

11 William Schabas, *Genocide in International Law* (Cambridge: Cambridge University Press, 2009), 102.

12 William Schabas, "State Policy as an Element of International Crimes," *Journal of Criminal Law and Criminology* 98, no. 3 (2008): 953–982, 970–971; Travis, "On the Original Understanding of the Crime of Genocide," 32.

13 Նույն տեղում, 36:



## Ներառական մոտեցումը

Իսրայել Չաունին չափազանց մեծացնում է այն դեպքերի շրջանակը, որոնք կարելի է ներառել ցեղասպանություն հասկացության մեջ: Այդ բազմաթիվ օրինակները հանդիպում են իր կողմից խմբագրված «Ցեղասպանության հանրագիտարանում»<sup>14</sup>: Նա ակտիվորեն քարոզում է Ֆլորիդայի միջազգային համալսարանի իրավաբանության պրոֆեսոր Հանիբալ Թրևիսի մոտեցումը, որը մեղադրում է տեսության հակառակորդներին զոհերի նկատմամբ կարեկցանքի պակասի մեջ<sup>15</sup>:

Թեև Չաունիի մոտեցումը թվում է ավելի բարոյական և հիմնավորված, քան Հոլոքոստի բացառիկության դրույթը, այն նույնպես բացասական կողմեր ունի, քանի որ ցեղասպանության հանցագործության որոշ հատկանիշներ անտեսվում են, իսկ սահմանները՝ տարրալուծվում: Ստացվում է, որ ցանկացած զանգվածային սպանություն, անկախ շարժառիթներից և հասցրած վնասներից, կարող է տեղավորվել այս հասկացության մեջ<sup>16</sup>:

Ներառական մոտեցման կողմնակիցները ևս դասակարգում են առաջարկում: Օրինակ, Ռաբբերսի համալսարանի Ցեղասպանագիտության կենտրոնի ղեկավար Ալեքսանդր Լաբան Հինթոնը, նկարագրելով ցեղասպանությունների ուսումնասիրման պատմությունը, առաջարկում է ցեղասպանությունների հետևյալ յուրատեսակ դասակարգումը, որը մեջբերում ենք նույնությամբ.

ա) Նախատիպ՝ Հոլոքոստ,

բ) եռյակ՝ Հոլոքոստ, Հայոց ցեղասպանություն, Ռուանդայի ցեղասպանություն,

գ) քսաներորդ դարի հիմնական ցեղասպանություններ՝ Հոլոքոստ, Հայոց ցեղասպանություն, Կամբոջա, Ռուանդա, Բոսնիա, Դարֆուր (21-րդ դար), տեղաբնիկ ժողովուրդների ոչնչացում (դիտարկվելով որպես ամբողջական երևույթ),

դ) երկրորդ շրջանակ՝ Արևելյան Պակիստան, քրդական դեպք, Գվատեմալա, Նամիբիա, Կոսովո, Կարթագեն, գաղութարարների կողմից իրականացված ցեղասպանություններ, ուկրաինական կամ խորհրդային դեպք,

ե) ծայրամասային շրջանակ՝ Ինդոնեզիա, Արգենտինա, տեղաբնիկների ոչնչացման որոշ դեպքեր, անտիկ շրջանի ցեղասպանություններ, ասորական և հուսական դեպքեր, Արևելյան Թիմոր, Բուրունդի, Մադյական Չինաստան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն,

զ) մոռացված ցեղասպանություններ՝ բազմաթիվ թաքնված, մոռացված դեպքեր<sup>17</sup>:

Տեսնում ենք, որ Հինթոնը նույնպես շատ մոտ է Չաունիի ներառական մոտեցմանը, սակայն փորձում է այն առավել դասակարգված դարձնել:

Պետք է նկատել, որ գիտնականների մեծ մասի դիրքորոշումներն այս երկու

14 *Encyclopedia of Genocide*, ed. Israel Charny (Santa Barbara, CA: ABC-CLIO, 2000).

15 Travis, "On the Original Understanding of the Crime of Genocide," 30–55.

16 Huttenbach, "Towards a Conceptual Definition of Genocide," 169.

17 Alexander Laban Hinton, "Critical Genocide Studies," *Genocide Studies and Prevention* 7, no. 1 (2012): 13.

մոտեցման միջև են, թե որ դեպքը կարելի է համարել ցեղասպանություն, իսկ որը՝ ոչ։ Այսպես ԽՍՀՄ գոյության առաջին տարիներին՝ 1932-1933 թթ., Ուկրաինայի տարածքում բռնկված սովը, որի հետևանքով զոհերի թիվը հասավ 6 միլիոնի, ուկրաինացիները համարում են մարդածին՝ խորհրդային վերնախավի կողմից ազգային դիմադրությունը կոտորելու նպատակով կազմակերպված հատուկ գործողություն։ Դա արտահայտվում է նաև անվան մեջ՝ հոլոդոմոր [Голодомор]՝ սպանություն սովի միջոցով։ Ցեղասպանագետների մեկ այլ խումբ համաձայն չէ դրա հետ՝ նշելով, որ այդ տարիներին սով միայն Ուկրաինայում չէր, այլ նաև Մերձվոլգյան շրջանում և հյուսիսային Ղազախստանում, ինչն առավել սխալ կառավարման, մատակարարման խնդիրների հետևանք էր, այլ ոչ թե ուկրաինացիների ծրագրված ոչնչացում<sup>18</sup>։ Կամ արդյո՞ք Կամբոջայում մեծ թվով սպանությունները կարելի է ներառել այս ցանկի մեջ, քանի որ 1975-1979 թթ. ծայրահեղ մարքսիստական հայացքներ ունեցող Կարմիր քմերների վարչակարգի զոհերի մեծ մասը հենց կամբոջացիներ էին։ Այստեղ դժվար է խոսել ռասայական, ազգային, էթնիկ կամ կրոնական տարբերակմամբ որևէ խմբի ոչնչացման մտադրության մասին։ Իհարկե, Կամբոջայի դեպքում, պետք է հիշել, որ ոչնչացվեցին նաև այդ երկրում բնակվող ազգային և կրոնական բոլոր փոքրամասնությունները՝ բուդդայական հոգևորականներ, չինացիներ, վիետնամցիներ, մուսուլման Չամ խումբը<sup>19</sup>։ Ամեն դեպքում ցեղասպանագետների մեծամասնության մոտ կա որոշակի համաձայնություն այս հանցագործությունը մասնակի ցեղասպանությունների շարքին դասելու շուրջ։

### Տոտալ և մասնակի ցեղասպանություններ

ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանությունների կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի հոդված II-ը սահմանում է, որ ցեղասպանություն նշանակում է մի շարք գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի՝ որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ։ Ըստ այս դրույթի՝ վերջին հատվածի ցեղասպանությունները կարելի է դասակարգել տոտալ և մասնակի ցեղասպանությունների։

18 Robert Conquest, *The Harvest of Sorrow: Soviet Collectivization and the Terror-Famine* (New York: Oxford University Press, 1986); Robert W. Davies, Stephen G. Wheatcroft, *The Years of Hunger: Soviet Agriculture, 1931–1933* (Basingstoke: Palgrave Macmillan, 2004); Yaroslav Bilinsky, “Was the Ukrainian Famine of 1932-1933 Genocide?” *Journal of Genocide Research* 1, no. 2, (1999): 147-156; Norman Naimark, *Stalin’s Genocides* (Princeton: Princeton University Press, 2010); Timothy Snyder, *Bloodlands: Europe Between Hitler and Stalin* (New York: Basic Books, 2010); Anne Applebaum, *Red Famine: Stalin’s War on Ukraine* (New York: Anchor, 2018).

19 Alexander Laban Hinton, *Why Did they Kill?: Cambodia in the Shadow of Genocide* (Berkeley, Los Angeles: University of California Press, 2004); Ben Kiernan, *The Pol Pot Regime: Race, Power and Genocide in Cambodia under the Khmer Rouge, 1975–1979* (New Haven: Yale University Press, 2002).

*Տոտալ ցեղասպանություններ*

Տոտալ ցեղասպանությունն իրականացվում է, երբ հիմնական նպատակը թիրախ խմբի ամբողջական բնաջնջումն է՝ կանխելով նույնիսկ գոհի վերարտադրության հնարավորությունը: Այն նաև ուղղված է վերացնելու տվյալ խմբի մշակույթը և հիմնարար ինստիտուտները, հետագայում նաև ցանկացած հիշողություն խմբի և նրա դեմ իրականացված ոճրի մասին: Միայն 20-րդ դարում տեղի են ունեցել տոտալ ցեղասպանության չորս դեպք<sup>20</sup>, ինչը հանգեցրել է միլիոնավոր մարդկային զոհերի<sup>21</sup>:

Համընդհանուր՝ տոտալ ցեղասպանություն ասելիս ի նկատի է առնվում առաջին հերթին ոճրագործի մտադրությունը և ոչ թե փաստացի իրողությունը, քանի որ բոլոր դեպքերում այս մտադրությունն անհնար է լիովին իրականացնել: Տոտալ ցեղասպանություն են անվանում նաև այն դեպքերը, երբ բռնության աստիճանը հասնում է շատ մեծ չափերի՝ գալով պետական ապարատից և ապահովելով հասարակության լայն շերտերի ներգրավվածությունը:

*ա) Հայոց ցեղասպանություն (Մեծ եղեռն)*

Երիտուրքական կուսակցության նախաձեռնությամբ, հետագայում նաև քեմալական ուժերի կողմից Արևմտյան Հայաստանում, Օսմանյան կայսրության հայաբնակ այլ շրջաններում մոտ մեկուկես միլիոն հայերի բնաջնջումը 1915-1923 թթ., ինչպես նաև Անդրկովկասում իրականացված ցեղասպանական գործողությունները, որը կատարվել է նախ հայ զինվորականների, վերնախավի, ապա՝ բնակչության մյուս հատվածի կոտորածների, տեղահանությունների, անապատներում համակենտրոնացնելու, բռնի կրոնափոխության, հայ երեխաներին ձուլման նպատակով մուսուլմանական ընտանիքներ տեղափոխելու մեթոդներով: Ոչնչացվել են հայկական մշակույթային ժառանգության բազմաթիվ նմուշներ<sup>22</sup>: Մեծ եղեռնի տարիներին միաժամանակ իրականացվել է նաև Օսմանյան կայսրության տարածքում ապրող հույների և ասորիների բնաջնջումը<sup>23</sup>: Թուրքիան մինչ օրս շարունակում է հերքել

20 Հին դարերում և միջնադարում կարող ենք հանդիպել տոտալ ցեղասպանությունների բազմաթիվ «հաջողված» օրինակների՝ Կարթագենի ոչնչացումը, միջնադարյան կատարների կրոնական համայնքի վերացումը, հյուսիսամերիկյան հնդկացիական բազմաթիվ ցեղերի անհետացումը:

21 Christian P. Scherrer, “Towards a Theory of Modern Genocide. Comparative Genocide Research: Definitions, Criteria, Typologies, Cases, Key elements, Patterns and Voids,” *Journal of Genocide Research* 1, no. 1 (1999): 13-23.

22 *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, ed. by Ronald G. Suny, Fatma M. Göçek, and Norman M. Naimark (New York, NY: Oxford University Press, 2011); Taner Akcam, *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility* (New York: Metropolitan Books, 2006); Donald Bloxham, *The Great Game of Genocide. Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians* (Oxford: Oxford University Press, 2005); Vahakn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence, Oxford: Berghahn Books, 2005); Raymond Kevorkian, *The Armenian Genocide: A Complete History* (London, New York: I.B. Tauris, 2011); Uğur Ümit Üngör, *The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913-1950* (Oxford: Oxford University Press, 2011).

23 *Genocide in the Ottoman Empire: Armenians, Assyrians, and Greeks, 1913-1923*, ed. George Shirinian (New York, Oxford: Berghahn Books, 2017).

ոճրագործությունը՝ ժխտողական պետական քաղաքականության վրա հսկայական գումարներ ծախսելով<sup>24</sup>:

*բ. Հրեից ցեղասպանություն (Հոլոքոստ, Շոա)*

Նացիստական Գերմանիայի և նրա եվրոպական դաշնակիցների, ինչպես նաև նրանց կողմից գրավված տարածքների բնակչության կողմից մոտ 6 միլիոն հրեաների, ինչպես նաև միլիոնավոր գնչուների, սլավոնական տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների, ռազմագերիների, սեռական և կրոնական որոշ փոքրամասնությունների, ինչպես նաև քաղաքական ընդդիմախոսների կազմակերպած ոչնչացումն է: Այն իրականացվել է նախ Գերմանիայի կողմից օկուպացված Արևելյան Եվրոպայում՝ հատուկ խմբերի (Einsatzgruppen) կողմից հիմնականում գնդակահարությունների միջոցով: Հետագայում ոչնչացման միջոց են դարձել հարյուրավոր համակենտրոնացման և մահվան ճամբարները, որտեղ զոհերը մահանում էին հարկադիր աշխատանքի և գազային խցիկներում թունավորման միջոցով<sup>25</sup>:

*գ) Կամբոջայում իրականացված ցեղասպանությունը*

Տեղի է ունեցել 1975-1979 թթ. և ուղղված էր ինչպես քաղաքաբնակ և ընդդիմադիր հայտարարված շրջանների բնակիչ կամբոջացիների, այնպես էլ՝ մի շարք փոքրամասնությունների՝ վիետնամցիների, չինացիների, իսլամ դավանող չամ ազգության ներկայացուցիչների դեմ: Ծայրահեղ մարքսիստական գաղափարներով տոգորված Կարմիր քմերների կուսակցությունը ցանկանում էր ստեղծել ագրարային՝ սոցիալիզմի վրա հիմնված պետություն: Խոսք էր գնում նոր հասարակության կառուցման մասին: Այն իրականացնելու համար քաղաքային բնակչությունը տեղափոխվեց գյուղեր, որտեղ պարտադրվեց հարկադիր աշխատանք: Իրականացման մեթոդներն էին սովը և զանգվածային սպանությունները՝ նույնիսկ փոքրիկ զանցանքների համար: Էթնիկ և կրոնական փոքրամասնություններն ուղղակի բնաջնջվեցին: Ցեղասպանությանը զոհ գնաց 1,5-2 մլն մարդ<sup>26</sup>:

24 Fatma M. Göçek, *Denial of Violence: Ottoman Past, Turkish Present and Collective Violence against the Armenians, 1789–2009* (Oxford: Oxford University Press, 2015); Doğan Gürpınar, “The Manufacturing of Denial: The Making of the Turkish ‘Official Thesis’ on the Armenian Genocide between 1974 and 1990,” *Journal of Balkan and Near Eastern Studies* 18, no. 3 (2016): 217–240; Richard G. Hovannisian, “Denial of the Armenian Genocide 100 Years Later: The New Practitioners and their Trade,” *Genocide Studies International* 9, no. 2 (2015): 228–247; Dikran Kaligian, “Anatomy of Denial: Manipulating Sources and Manufacturing a Rebellion,” *Genocide Studies International* 8, no. 2 (2014): 208–223.

25 Raul Hilberg, *The Destruction of the European Jews* (New Haven: Yale University Press, 2003); Donald Bloxham, *The Final Solution: A Genocide* (Oxford: Oxford University Press, 2009); Ian Kershaw, *The Nazi Dictatorship: Problems and Perspectives of Interpretation* (London: Arnold, 2000); Omer Bartov, *Germany's War and the Holocaust: Disputed Histories* (Ithaca, NY: Cornell University Press, 2003).

26 Elizabeth Becker, *When the War Was Over: Cambodia and the Khmer Rouge Revolution* (New York: Public Affairs, 1998); Ben Kiernan, *The Pol Pot Regime: Race, Power and Genocide in Cambodia under the Khmer Rouge* (New Haven, CT: Yale University Press, 2008).

դ) Հուրթու ցեղախմբի կողմից թուրքի ցեղախմբի ցեղասպանությունը Ռուանդայում 1994 թ. ապրիլ-հուլիս ամիսներին, ընդամենը 100 օրվա ընթացքում, տեղի ունեցավ մոտ 800000 թուրքիների սպանությունը: Այս ցեղասպանությունը ծրագրվել և իրագործվել էր Ռուանդայում մեծամասնություն կազմող հուրթու ցեղի ներկայացուցիչներից բաղկացած ռազմական խոնտալի կողմից: Կոտորածները հիմնականում իրականացվել են սառը զենքի՝ լայնսայր դասակների՝ մաչետների միջոցով, հասարակ բնակչության լայն զանգվածների մասնակցությամբ և միջազգային հանրության հանցավոր անգործության պայմաններում<sup>27</sup>:

### Մասնակի ցեղասպանություններ

20-րդ դարում տեղի են ունեցել բազմաթիվ այլ ցեղասպանական գործողություններ, որոնց նպատակն էր որոշակի խմբի մասնակի ոչնչացումը՝ այդ խմբի նկատմամբ գերիշխանություն հաստատելու նպատակով: Ցեղասպանությունների ուսումնասիրությամբ զբաղվող տարբեր գիտնականների կողմից առանձնացվում են 1937-1938 թթ. ճապոնական բանակի կողմից չինական Նանկին քաղաքի բնակչության կոտորածը<sup>28</sup>, 1940-ականներին խորվաթական ֆաշիստական վարչակարգի կողմից սերբերի ոչնչացումը<sup>29</sup>, 1965-1966 թթ. Ինդոնեզիայում կոմունիստների զանգվածային սպանությունները<sup>30</sup>, Ինդոնեզիայի կողմից Թիմորում և Արևմտյան Պապուայում վարած քաղաքականությունը<sup>31</sup>, 1970-ականներին Պարագվայում տեղաբնիկ հնդկացիների Աչե խմբի ոչնչացումը<sup>32</sup>, 1971 թ. անկախության համար մղվող պատերազմում Պակիստանի կողմից Բանգլադեշի բնակչության ցեղասպանությունը<sup>33</sup>, 1981-1983 թթ.

27 Scott Straus, *The Order of Genocide: Race, Power, and War in Rwanda* (Ithaca, NY: Cornell University Press, 2006); Mahmood Mamdani, *When Victims Become Killers: Colonialism, Nativism, and the Genocide in Rwanda* (Princeton, NJ: Princeton University Press, 2001); Linda Melvern, *Conspiracy to Murder: The Rwanda Genocide and the International Community* (London: Verso, 2004); Jean Hatzfeld, *Machete Season: The Killers in Rwanda Speak*, trans. Linda Coverdale (New York: Farrar, Straus & Giroux, 2005); Lee Ann Fujii, *Killing Neighbors: Webs of Violence in Rwanda* (Ithaca, NY: Cornell University Press, 2009).

28 Iris Chang, *The Rape of Nanking* (New York: Penguin, 1998).

29 Stevan K. Pavlowitch, *Hitler's New Disorder: The Second World War in Yugoslavia* (London: Hurst Publishers Ltd., 2008); Rory Yeomans, *Visions of Annihilation: The Ustasha Regime and the Cultural Politics of Fascism, 1941-1945* (Pittsburgh: University of Pittsburgh Press, 2012).

30 Robert Cribb, Charles Coppel, "A Genocide that Never Was: Explaining the Myth of anti-Chinese Massacres in Indonesia, 1965-66," *Journal of Genocide Research* 11, no. 4 (2009): 447-465; *The Indonesian Genocide of 1965: Causes, Dynamics and Legacies*, eds. Katharine McGregor, Jess Melvin, Annie Pohlman (Palgrave Macmillan, 2018); Geoffrey B. Robinson, *The Killing Season: A History of the Indonesian Massacres, 1965-66* (Princeton: Princeton University Press, 2018); John Roosa, *Buried Histories: The Anticommunist Massacres of 1965-1966 in Indonesia* (Madison, Wisconsin: University of Wisconsin Press, 2020).

31 *East Timor at the Crossroads: the Forging of a Nation*, eds. Peter Carey, Carter Bentley (Honolulu, HI: University of Hawaii Press, 1995); Matthew Jardine, *East Timor: Genocide in Paradise* (Berkeley, CA: Odonian Press, 1999); John G. Taylor, *East Timor: The Price of Freedom* (London: Zed Books, 2000).

32 Richard Arens, *Genocide in Paraguay* (Philadelphia, PA: Temple University Press, 1976).

33 Rounaq Jahan, "Genocide in Bangladesh," in *Century of Genocide: Eyewitness Accounts and Critical*

Գվատեմալայի ռազմական ռեժիմի կողմից մայա հնդկացիների սպանությունը<sup>34</sup>, 1986-1989 թթ. քրդերի զանգվածային ոչնչացումը Իրաքում<sup>35</sup>, 1992-1995 թթ. բոսնիական էթնիկ զտումները<sup>36</sup>, որի մեկ դրվագ՝ Սրբերինիցայում բոսնիացի մուսուլմանների սպանությունը, դատարանի որոշմամբ որակվել է որպես ցեղասպանական գործողություն<sup>37</sup>, Սուդանի Դարֆուր նահանգում այսօր էլ շարունակվող էթնիկ զտումները<sup>38</sup>, Իսլամական պետություն ահաբեկչական կազմակերպության կողմից եզդի բնակչության նկատմամբ ցեղասպանական գործողությունները<sup>39</sup>:

Եթե տոտալ ցեղասպանությունների պարագայում գիտնականների մոտ հիմնականում գոյություն ունի ընդհանուր համաձայնություն այն հարցի շուրջ, թե արդյոք կատարվածը կարելի է բնորոշել որպես ցեղասպանություն, ապա մյուս բոլոր դեպքերում մասնագետները տարակարծիք են, երբեմն էլ ներքաշվում են քաղաքական քննարկումների և հիշողության համար մոլոր մարտերի մեջ:

### Այլ դասակարգումներ

Ցեղասպանությունների՝ տոտալի և մասնակիի բաժանումը միակը չէ: Ինչպես ցանկացած գիտաճյուղում, այնպես էլ ցեղասպանագիտությունում, տարբեր գիտնականներ, որոշակի հատկանիշների հիման վրա հենվելով, փորձել են առաջարկել իրենց դասակարգումները: Դրանք օգնում են ավելի լավ հասկանալ ցեղասպանու-

---

Views, eds. Samuel Totten et al. (New York: Garland Publishing, 1997); Richard Sisson, Leo Rose, *War and Secession: Pakistan, India, and the Creation of Bangladesh* (Berkeley, CA: University of California Press, 1990); Wardatul Akman, "Atrocities against Humanity during the Liberation War in Bangladesh: a Case of Genocide," *Journal of Genocide Research* 4, no. 4 (2002): 543-559.

34 Daniel Wilkinson, *Silence on the Mountain: Stories of Terror, Betrayal, and Forgetting in Guatemala* (Boston, MA: Houghton Mifflin Company, 2002); Roderick Leslie Brett, *The Origins and Dynamics of Genocide: Political Violence in Guatemala* (London: Palgrave Macmillan, 2016); Robert Carmack, *Harvest of Violence: The Maya Indians and the Guatemalan Crisis* (Norman, Oklahoma: University of Oklahoma Press, 1988).

35 George Black, *Genocide in Iraq: the Anfal Campaign against the Kurds* (Human Rights Watch, 1993).

36 Norman Cigar, *Genocide in Bosnia: the Policy of "Ethnic Cleansing"* (College Station, TX: Texas A&M University Press, 1995); Ivana Macek, *Sarajevo Under Siege: Anthropology in Wartime* (Philadelphia, PA: University of Pennsylvania Press, 2009); Ed Vulliamy, *Seasons in Hell: Understanding Bosnia's War* (New York: St. Martin's Press, 1994); Paul R. Bartrop, *Bosnian Genocide: The Essential Reference Guide* (Greenwood Press, 2016).

37 <https://news.un.org/en/story/2007/02/210142-un-world-court-acquits-serbia-genocide-bosnia-finds-it-guilty-inaction>, Արդարադատության միջազգային դատարանի որոշումը՝ <https://www.icj-cij.org/en/case/91/judgments>, դիտվել է 25.09.2021:

38 Martin W. Daly, *Darfur's Sorrow: a History of Destruction and Genocide* (Cambridge: Cambridge University Press, 2007); John Hagan, Wenona Rymond-Richmond, *Darfur and the Crime of Genocide* (Cambridge: Cambridge University Press, 2009).

39 Beth Van Schaack, "The Iraq Investigative Team and Prospects for Justice for the Yazidi Genocide," *Journal of International Criminal Justice* 16 (2018): 113-139; Pieter Nanninga, "Religion and International Crimes: the Case of the Islamic State" in *Perpetrators of International Crimes: Theories, Methods, and Evidence*, eds. Alette Smeulers, Maartje Weerdesteijn, Barbora Hola (Oxford: Oxford University Press, 2019).

թյուն երևույթը, ինչպես նաև առանձին դեպքերի առանձնահատկությունները՝ ենթարկելով դրանք համեմատական վերլուծության:

Այսպես, ցեղասպանություն եզրույթի հեղինակ Ռաֆայել Լեմկինը, հանցագործությունը նկարագրելուց զատ, ցեղասպանությունները բաժանել է երեք տիպի: Ըստ ցեղասպանագիտության արգենտինական դպրոցի ներկայացուցիչ Դենիել Ֆեյերսթայնի՝ Լեմկինը բաժանման չափանիշ էր վերցրել ցեղասպանությունների նպատակը: Ըստ այդմ, տարանջատում է ցեղասպանություններ,

1. որոնց նպատակն է ամբողջովին ոչնչացնել ազգը կամ խումբը: Նման քաղաքականությունը բնորոշ էր Հին աշխարհին,

2. որոնք ձգտում են ոչնչացնել մշակույթը՝ խմբի ներկայացուցիչներին ձուլելու, այլ ոչ թե սպանելու միջոցով: Հետագայում այս երևույթը ստացավ «էթնոցիդ» անվանումը,

3. որոնք նպատակ ունեն ոչնչացնել ինչպես խումբը, այնպես էլ նրա մշակույթը: Որպես սրա նախատիպային օրինակ Լեմկինն առանձնացնում է նացիստական Գերմանիայում իրականացված ցեղասպանությունը<sup>40</sup>:

Հիմնվելով ոճրագործի նպատակադրության, թիրախավորված խմբի բնույթի, հասցրած վնասի, իրականացման դարաշրջանի, ոչնչացման մեթոդների և այլ բնորոշիչների վրա՝ իրենց դասակարգումներն են առաջարկել նաև Ֆրենք Չոքը և Քուրթ Յոնասոնը, Իսրայել Չաունին, Հելեն Ֆայնը, Լեո Քուպերը, Ռոջեր Սմիթը, Բարբարա Հարֆը և ցեղասպանագիտության զարգացման մեջ ներդրում ունեցած բազմաթիվ այլ հետազոտողներ<sup>41</sup>:

Մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում անվանի ամերիկահայ գիտնական, սոցիոլոգ Վահագն Դադրյանի<sup>42</sup> դիրքորոշումը, որը ցեղասպանությունների իր դասակարգումն առաջարկել է դեռևս 1975 թ., երբ ցեղասպանագիտությունը նոր էր ձևավորվում որպես գիտաճյուղ: Թերևս նա առաջին գիտնականն է, ով Լեմկինից հետո նման փորձ է կատարել: Բացի այդ, եթե Լեմկինն այդ դասակարգումն արել է այլ խնդիրների լուսաբանմանը զուգահեռ, ապա Դադրյանը դրան առանձին հոդված է նվիրել, որը լույս է տեսել 1975 թ. *International Review of Modern Sociology* հանդեսում<sup>43</sup>:

Դադրյանը ցեղասպանությունները դասակարգում է ըստ արդյունքների՝ առանձնացնելով.

1. *Մշակութային ցեղասպանություն (Cultural genocide)*, որը ներառում է հետևյալ գործողությունները. խմբի բռնի կրոնափոխություն, զոհ խմբի երեխաների տեղափոխում ոճրագործ խումբ, էթնիկ պատկանելության փոփոխմանն ուղղված

40 Daniel Feierstein, *Genocide as Social Practice: Reorganizing Society under the Nazis and Argentina's Military Juntas* (New Brunswick, New Jersey: Rutgers University Press, 2014), 40.

41 Բոլորի մասին տե՛ս նույն տեղում, 39-48:

42 Վահագն Դադրյանի մասին տե՛ս օրինակ Սուրեն Մանուկյան, «Ցեղասպանագիտության դասականը: Վահագն Դադրյանի պայծառ հիշատակին», *ՎԷՄ համահայկական հանդես* 3 (2019), 178-192:

43 Vahakn Dadrian, "A Typology of Genocide," *International Review of Modern Sociology* 5, no. 2 (1975): 201-212.



խտրական քաղաքականություն, ձուլման կանխամտածված փորձեր: Այս պարագայում բացառվում է փոքրամասնության մասնակցությունը պետական կառավարմանը՝ թույլատրելի միակ ինքնավարությունը թողնելով մշակութայինը կամ կրոնականը: Հոռի խումբը սովորաբար չի ընկալվում որպես անմիջական սպառնալիք, որի նկատմամբ անհրաժեշտ է միանշանակ բռնություն կիրառել: Խմբի ձուլումը դիտվում է առավել շահավետ: Դադրյանը որպես օրինակ նշում է հրեաների նկատմամբ գործադրված բռնությունները 13-15-րդ դարերում Իսպանիայում (իրավունքների սահմանափակում, տարբերանշանների՝ դեղին աստղի կիրառության պարտադրանք, կոտորածներ, կրոնափոխություն, արտաքսում)<sup>44</sup> և 1895-1896 թթ. Համիդյան կոտորածներն Օսմանյան կայսրությունում<sup>45</sup>: Դադրյանը բերում է գերմանացի միսիոներ Լեփսիուսի տվյալները, համաձայն որոնց իսլամացվել են 646 հայկական գյուղեր, իսկ բռնի կրոնափոխվածների թիվը կազմել է մոտ 250000 - 300000<sup>46</sup>:

2. *Թաքնված գեղասպանություն (Latent genocide)*, որը հիմնականում պատերազմի կողմնակի արդյունք է: Դադրյանն անդրադառնում է պատերազմի ընթացքում քաղաքացիական բնակչության ոմբակոծմանը կամ տեղահանությանը<sup>47</sup>, որոնց ժամանակ կարող են մեծ կորուստներ արձանագրվել: Նման օրինակներ են Երկրորդ աշխարհամարտի ժամանակ իրականացված ոմբակոծումները, որոնք Գերմանիայում և Հապոնիայում մարդկային բազմաթիվ կյանքեր խլեցին<sup>48</sup>: 1945 թ. փետրվարի 13-15-ը Դրեզդենի ոմբակոծումները մինչև 25 հազար մարդու մահվան պատճառ դարձան<sup>49</sup>: Ավելի մեծ էր 1945 թ. մարտի 9-10-ի Տոկիոյի ոմբահարումների զոհերի թիվը. տարբեր հաշվարկներով մինչև 100 հազար մարդ<sup>50</sup>:

Դադրյանն ընդգծում է նաև այն դեպքերը, երբ մեկ այլ վայր տեղափոխման հետևանքով խումբը ոչնչացվում է կամ տարրալուծվում: Նա կրկին բերում է

44 Իսպանիայում հրեաների նկատմամբ իրականացված քաղաքականության մասին տե՛ս Dario Fernandez-Morera, *The Myth of the Andalusian Paradise: Muslims, Christians, and Jews under Islamic Rule in Medieval Spain* (Wilmington: Intercollegiate Studies Institute, 2016); Norman Roth, *Conversos, Inquisition, and the Expulsion of the Jews from Spain* (Madison, Wisconsin: University of Wisconsin Press, 2002); Norman Roth, *The Bible and Jews in Medieval Spain* (Abingdon-on-Thames: Routledge, 2021):

45 Համիդյան կոտորածների մասին տե՛ս Արման Կիրակոսյան, *Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը* (Երևան, Գիտություն, 1999); Arman Kirakossian, *British Diplomacy and the Armenian Question* (Princeton and London: Gomidas Institute, 2003); Arman Kirakossian, *The Armenian Massacres 1894-1896: British Media Testimony* (Armenian Research Center: University of Michigan Dearborn Press, 2008).

46 Dadrian, "A Typology of Genocide," 205.

47 Խոսքը չի գնում այն դեպքերի մասին, երբ տեղահանությունն ուղղակի օգտագործվում է գեղասպանությունը բողոքելու համար:

48 Dadrian, "A Typology of Genocide," 206.

49 Sinclair McKay, *The Fire and the Darkness: The Bombing of Dresden, 1945* (New York, NY: St. Martin's Press, 2020); *Firestorm: The Bombing of Dresden*, eds. Paul Addison, Jeremy A. Crang (London: Pimlico, 2006).

50 *The Firebombing of Dresden and Tokyo: The History and Legacy of the Allies Controversial Bombing Campaigns Near the End of World War II*, ed. Charles River (Scotts Valley: CreateSpace Independent Publishing Platform, 2017).

Իսպանիայում բռնի կրոնափոխ հրեաների օրինակը: Նրանց տեղահանեցին Գրանադայից և ցրեցին երկրով մեկ՝ հետագայում արտաքսելով Իսպանիայից: 1609 թ. թագավոր Ֆիլիպ II-ի որոշմամբ նրանց Ամերիկա տեղափոխեցին՝ ծայրահեղ դաժանության կիրառմամբ ու հսկայական չափերի հասնող զոհերի գնով (200000 – 3000000)<sup>51</sup>: Վերջին օրինակը, որ բերում է Դադրյանը, ամերիկյան հնդկացիների դեպքն է, մասնավորապես՝ չերոքի ցեղի բռնի տեղահանումը Ջորջիա նահանգից: ԱՄՆ կոնգրեսը որոշում կայացրեց բոլոր հնդկացիներին տեղափոխել Միսիսիպի գետից արևմուտք, որին զոհ գնաց չերոքի բնակչության գրեթե կեսը<sup>52</sup>:

3. *Պատժիչ ցեղասպանություն (Retributive genocide)*, որի նպատակն է պատժել այն փոքրամասնությանը, որը մարտահրավեր է նետել գերիշխող խմբին: Վախեցնելով հավանական հակառակորդին՝ ոճրագործը փորձում է կանխել հնարավոր զարգացումները: Այն կարող է տեղային բնույթ կրել, իրականացվել տեղային իշխանությունների կողմից, իսկ որոշ դեպքերում հետախուզական բնույթ ունենալ՝ պարզելու համար զոհ խմբի արձագանքը:

Որպես օրինակ Դադրյանը նշում է հրեական պոգրոմները Ռուսաստանում: Դրանք առաջին հայացքից ինքնաբերաբար բռնկվող, սակայն իրականում իշխանության կողմից հրահրվող կամ վերջիններիս թողություններ իրականացվող գործողություններ էին: Ամենահայտնի պոգրոմներից էր Բիշնի 1903 թ. պոգրոմը, որ դարձավ լայնամասշտաբ կոտորածների ազդանշան՝ տարածվելով ավելի քան 600 բնակավայրի վրա<sup>53</sup>: Դադրյանը բերում է նաև Համիդյան<sup>54</sup> և Ադանայի կոտորածների օրինակները<sup>55</sup>:

Հաջորդ օրինակը թուրքիների և հույների երկուստեք կոտորածներն են Ռուանդայում և Բուրունդիում: Քանի որ թուրքի ցեղախումբը երկար ժամանակ գերիշխող դիրք էր զբաղեցնում Ռուանդայում, մեծամասնություն կազմող հույների ապստամբությունից հետո, հազարավոր թուրքիներ ստիպված էին հեռանալ Բուրունդի: Հույները, հռչակելով Ռուանդայի անկախությունը, հանրապետությունը պաշտպանելու պատրվակի ներքո իրականացրին թուրքիների կոտորածներ<sup>56</sup>: Թուրքիները Բուրունդիում իրականացրին նմանատիպ կոտորածներ հույների նկատմամբ<sup>57</sup>:

Մյուս օրինակը Բիաֆրայում տեղի ունեցած դեպքերն են: Երկրի հյուսիսում բնակվող հաուսա և ֆուլա մուսուլմանական ցեղերը ապստամբեցին իշխանության անցած քրիստոնյա իրո ցեղախմբի դեմ, որը զբաղեցնում էր Նիգերիայի հարավ-արևելյան

51 Dadrian, “A Typology of Genocide,” 206.

52 Նույն տեղում, 207:

53 James W. Parkes, *The Jewish Problem in the Modern World* (Oxford: Oxford University Press, 1939), 63-74.

54 Dadrian, “A Typology of Genocide,” 207.

55 Նույն տեղում:

56 Նույն տեղում, 208:

57 Նույն տեղում:

մասը: Իբր կառավարության կողմից սկսված սպանությունները պատճառ դարձան ռազմական ապստամբության, որը տապալեց կառավարությունը: Ապստամբությանը զոհ գնացին հյուսիսում բնակվող 30000 իրո ցեղի ներկայացուցիչներ: Մյուսները փախան երկրի հարավ-արևելք, որտեղ 1967 թ. մայիսի 30-ին հռչակեցին Բիաֆրայի անկախությունը: Այնուհետև Նիգերիայի ռազմական առաջնորդ Գոլոնի կողմնակիցները, իր իսկ բնորոշմամբ, ձեռնարկեցին «փոքրիկ վիրահատական քաղաքական գործողությունը»՝ 1967-1970 թթ. սպանելով և սովի մատնելով մի քանի միլիոն իրո ցեղի ներկայացուցիչներ<sup>58</sup>:

4. *Ուտիլիտար ցեղասպանություն (Utilitarian genocide)*, որի նպատակն է ձեռք բերել վերահսկողություն թիրախ խմբի տնտեսական ռեսուրսների նկատմամբ: Օրինակ՝ հրեաների դեմ իսպանական ինկվիզիցիայի պայքարի իրական նպատակը նրանց ունեցվածքին տիրանալն էր<sup>59</sup>: Նույն պատճառը կարելի է գտնել հնդկացիների բնաջնջման հիմքում: Չերոքի ցեղի հեռացումը և ոչնչացումը կապված էր Ջորջիա նահանգում ոսկու հանքերի հայտնաբերման հետ<sup>60</sup>: Բրազիլիայի հնդկացիները 16-17-րդ դդ. ոչնչացվեցին պորտուգալացի գաղութարարների կողմից գետերի հոսանքների մոտ բնակվելու պատճառով<sup>61</sup>:

5. *Օպտիմալ՝ առավելագույն ցեղասպանություն*, որի դեպքում թիրախային խումբն ամբողջովին ոչնչացվում է: Չոհերի թիվը հասնում է մեծ չափերի, իսկ ցեղասպանությունը ծրագրողների նպատակը բնակչության լիակատար ոչնչացումն է: Դադրյանը նշում է, որ համալիր բոլոր նախապայմանների համընկնումը միայն կարող է հնարավոր դարձնել նման ցեղասպանությունը: Եվ պատահական չէ, որ նա բերում է միայն երկու օրինակ՝ Հայոց ցեղասպանությունը և Հոլոքոստը, որոնք իրագործվեցին երկու համաշխարհային պատերազմների ժամանակ: Երկու դեպքում էլ պատերազմական իրավիճակը թույլ տվեց քաղաքական կուսակցություններին կենտրոնացնել և առավելագույնի հասցնել իրենց իշխանությունը, միաժամանակ թուլացնելով հնարավոր զոհերին: Այս զոհերի խոցելիությունը չափազանց կարևոր փոփոխական է Դադրյանի տեսության մեջ<sup>62</sup>:

Դադրյանի այս վերջին դասակարգումը համընկնում է ավելի ուշ գիտնականների կողմից առաջ քաշված տոտալ՝ համապարփակ ցեղասպանության նկարագրության հետ: Դադրյանը պարզապես չէր կարող կանխատեսել, որ 1975-1979 թթ. Կամբոջայում և 1994 թ. Ռուանդայում կիրականացվեն օպտիմալ ցեղասպանություններ և դրանք ներառել ցանկում:

Դասակարգումներից բացի Դադրյանը նաև առաջարկել է ցեղասպանություն հանցագործության իր սահմանումը. «Ցեղասպանությունը պաշտոնական լիազո-

58 Նույն տեղում:

59 Juan A. Llorente, *A Critical History of the Inquisition of Spain* (Williamstown: The John Lilburne Co, 1967).

60 Marion L. Starkey, *The Cherokee Nation* (New York: Alfred A. Knopf, 1946), 282-301.

61 Dadrian, "A Typology of Genocide," 209.

62 Նույն տեղում, 210:

բույություններով և/կամ իշխանության բոլոր ռեսուրսների հասանելիությամբ օժտված գերիշխող խմբի հաջողված փորձն է հարկադրանքի կամ մահացու բռնության միջոցով նվազեցնել փոքրամասնություն խումբը, որի վերջնական ոչնչացումը համարվում է ցանկալի և օգտակար, և որի խոցելիությունը ցեղասպանության որոշման ընդունմանը նպաստող կարևոր գործոն է»<sup>63</sup>: Այս սահմանման մեջ բացակայում է ոչնչացնելու մտադրության շեշտադրումը, որը շատ գիտնականների կարծիքով ՄԱԿ-ի կոնվենցիայի ամենամեծ բացթողումն է, քանի որ ցեղասպանական գործողության մեջ դրա առկայությունը գրեթե անհնար է ապացուցել: Դադրյանի սահմանման մեջ անտեսված է նաև ռասայական, կրոնական, ազգային և էթնիկական ինքնությամբ տարանջատվող խմբի թիրախավորումը: Փոխարենը կարելի է հասկանալ, որ խոսք է գնում ցանկացած փոքրամասնություն կազմող խմբի մասին:

Տարիների ընթացքում բազմաթիվ ցեղասպանագետներ, ելնելով իրենց հետազոտական փորձից, առաջարկել են ցեղասպանություն հանցագործության իրենց սահմանումները՝ առաջ քաշելով նաև գիտական նոր տերմիններ<sup>64</sup>: Սրա պատճառներից մեկը ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան է, որում առկա են մի շարք խնդրահարույց և ոչ հստակ ձևակերպումներ<sup>65</sup>: Ի տարբերության ՄԱԿ-ի կոնվենցիայի, դրանք չունեն իրավական պարտավորեցնող ուժ, այլ կրում են ճանաչողական և խորհրդատվական բնույթ:

### Ցեղասպանությանը հարակից գիտական տերմիններ

#### *Պոլիտիցիդ*

Հետազոտողների մոտ առաջին խնդիրը, որն առաջանում է ՄԱԿ-ի կոնվենցիայի հետ կապված, հանցագործության բնորոշումից քաղաքական խմբերի ոչնչացումը բացառելն է: Որոշ ցեղասպանագետներ կարծում են, որ քաղաքական խմբերը հաճախ դառնում են հենց իշխանության համար քաղաքական պայքարի զոհեր: ՄԱԿ-ի կոնվենցիայի կազմման քննարկումների ընթացքում քաղաքական խմբերի վերաբերյալ կողմերը չեկան փոխհամաձայնության, քանի որ համարվեց, որ, ի տարբերություն ռասայական, կրոնական, ազգային և էթնիկ խմբերի, քաղաքական ինքնությունը բնատուր, ֆիքսված և հարատև չէ: Շատ երկրների ներկայացուցիչներ խուսափում էին նաև քաղաքական խմբերի հիշատակումից՝ մտավախություն ունենալով, որ այս կետը կարող է կիրառվել հենց իրենց դեմ, քաղաքական խմբերի թիրախավորման, հետապնդման, երբեմն նույնիսկ ամբողջական ոչնչացման հաճախակի հանդիպող դեպքերի պարագայում:

63 Dadrian, “A Typology of Genocide,” 204.

64 Այս բնորոշումների մասին տե՛ս Adam Jones, *Genocide. A Comprehensive Introduction* (Abingdon-on-Thames: Routledge, 2011), 16-20:

65 Տե՛ս օրինակ, Սուրեն Մանուկյան, ««Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի կիրառման հնարավորություններն ու դժվարությունները», *Հայկական քաղաքագիտական հանդես* 1 (2021), 27-48:

Քաղաքագետներ Բարբարա Հարֆը և Ռոբերտ Գուրը 1988 թ. գիտական ոլորտ ներմուծեցին պոլիտիցիդ եզրը, նկարագրելու համար մարդկանց քաղաքական խմբերը<sup>66</sup>, որոնք թիրախավորվել են ոչ թե բնածին հատկանիշների, այլ իրենց քաղաքական հայացքների, քաղաքական որևէ հոսանքի հետևելու, սովորաբար՝ վարչակարգին ընդդեմ լինելու համար<sup>67</sup>։ Պոլիտիցիդը և ցեղասպանությունը երբեմն դժվար է տարանջատել, քանի որ փոքրամասնությունները դառնում են հարձակման թիրախ հաճախ քաղաքական նկատառումներից ելնելով։ Հարֆն ու Գուրը պատմության ընթացքում հանդիպող բազմաթիվ դեպքեր ներկայացնում են որպես գենո-պոլիտիցիդներ<sup>68</sup>։ Տերմինն իրավաբանական շրջանառության մեջ չդրվեց, մնալով միայն գիտական բառապաշարում։ Օրինակ, քաղաքագետ Մանուս Միդլարսկին պոլիտիցիդ է անվանում ստալինյան բռնաճշմունքները<sup>69</sup>։ Շաբաղը, խոսելով այս նույն երևույթի՝ քաղաքական նկատառումներով սպանությունների մասին, օգտագործում է «մարդկայնության դեմ իրականացված հանցագործություն» եզրույթը<sup>70</sup>։

### Էլիտիցիդ

Մտավորականության նպատակային ոչնչացումը, հանդիպելով պատմության ողջ ընթացքում, երկար ժամանակ որևէ բնորոշում չի ստացել։ 1992 թ. բրիտանացի լրագրող Մայքլ Նիկոլսոնը օգտագործել է էլիտիցիդ տերմինը Բոսնիա և Հերցեգովինայում սերբերի կողմից մուսուլման և խորվաթ քաղաքական ակտիվիստների, մտավորականների կոտորածները նկարագրելու համար<sup>71</sup>։ Էլիտիցիդը կարող է լինել յուրաքանչյուր ցեղասպանության իրականացման մի փուլ, ինչպես 1915 թ. ապրիլին Օսմանյան կայսրության հայ մտավորական, քաղաքական վերնախավի ձերբակալությունն ու սպանությունը՝ Հայոց ցեղասպանության համատեքստում։ Նման օրինակներ են նաև նացիստների կողմից լեհական մտավորականության կոտորածը, Բանգլադեշի ցեղասպանության ընթացքում Դաքքայի համալսարանի վրա հարձակումը<sup>72</sup>։

66 Barbara Harff, Ted Gurr, "Toward Empirical Theory of Genocides and Politicides: Identification and Measurement of Cases since 1945," *International Studies Quarterly* 32, no. 3 (1988): 359–71.

67 Barbara Harff, "Recognizing Genocides and Politicides," in *Genocide Watch*, ed. Helen Fein (New Haven, CT: Yale University Press, 1992), 27–41.

68 Daniel Feierstein, "Leaving the Parental Home: An Overview of the Current State of Genocide Studies," *Genocide Studies and Prevention* 6, no.3 (2011): 259.

69 Manus Midlarsky, *The Killing Trap: Genocide in the Twentieth Century* (New York: Cambridge University Press, 2005), 22, 309–310, 321.

70 Robert Crib, "Political Genocides in Postcolonial Asia," *The Oxford Handbook of Genocide Studies*, eds. D. Bloxham, D. Moses (New York: Oxford University Press, 2010), 446.

71 Cathie Carmichael, "Genocide and Population Displacement in Post-Communist Eastern Europe," *The Oxford Handbook of Genocide Studies*, ed. Donald Bloxham, Dirk Moses (New York: Oxford University Press, 2010), 521.

72 1971 թ. մարտի 25-ին պակիստանյան բանակը, սկսելով «Լուսարձակ» գործողությունը, հարձակում գործեց Դաքքայի համալսարանի վրա՝ այնտեղ գտնվող մտավորականներին ոչնչացնելու նպատակով։ Միայն մարտի 25-ին սպանվեցին 200-ից ավելի ուսանողներ, 10 դասախոս և 12 աշ-

### Գենդերցիդ

Այս տերմինն առավել հաճախ է գործածվում ցեղասպանագիտության մեջ մարդկանց խմբի սեռային պատկանելությամբ պայմանավորված զանգվածային սպանությունը բնորոշելիս: Այն առաջին անգամ օգտագործել է փիլիսոփա Մերի Էն Ուորենը 1985 թ. տպագրած *Gendercide: The Implications of Sex Selection* գրքում<sup>73</sup>: Ցեղասպանագիտության ոլորտում տերմինը շրջանառության մեջ դրել է Ադամ Ջոնսը<sup>74</sup>՝ ցույց տալով ցեղասպանությունների ընթացքում արական և իգական սեռերի նկատմամբ ոճրագործի գործելաոճի տարբերությունը՝ զոհերի ֆիզիոլոգիական առանձնահատկություններից ելնելով:

### Էթնոցիդ

Էթնոցիդն առաջին անգամ կիրառել է Ռաֆայել Լեմկինը որպես գենոցիդ տերմինին համարժեք տերմին: Սակայն այն չի մտել ո՛չ իրավական, ո՛չ ցեղասպանագիտական շրջանառության մեջ և մոռացվել է:

1970-ականներին մի խումբ եվրոպացի մարդաբաններ վերստին գործածեցին տերմինը մշակույթի կանխամտածված ոչնչացման երևույթը բնորոշելու համար: Սա, փաստորեն, նկարագրում է ցեղասպանական մեկ այլ երևույթ, երբ ոչնչացնելով մշակույթը, վերջ է դրվում մարդկային խմբի գոյությանը: Հաճախ սա անվանում են նաև մշակութային ցեղասպանություն, սակայն որոշ հետազոտողների կարծիքով, եթե մշակութային ցեղասպանությունն այնուամենայնիվ ընթանում է էթնիկ սպանություններին զուգահեռ, ապա էթնոցիդը սպանությունների հետ առհասարակ կապ չունի<sup>75</sup>: Տերմինը լայնորեն կիրառվում է գաղութարարների կողմից տեղաբնիկ ժողովուրդների ձուլման և ուծացման քաղաքականությունը բնութագրելու համար: Էթնոցիդի օրինակ է Հյուսիսային Ամերիկայում և Ավստրալիայում տեղաբնիկ հնդկացիների և աբորիգենների երեխաների բռնի տեղափոխումը պետական դպրոցներ կամ սպիտակամորթ եվրոպացիների ընտանիքներ, որի ընթացքում տեղի էր ունենում նրանց ինքնության վերափոխում և աստիճանական ձուլում<sup>76</sup>:

Հետազոտողների կողմից ցեղասպանությունների դասակարգումների և հանցագործության նոր սահմանումների քննարկումները հանգեցրին նոր տերմինների առաջացմանը. կնասպանություն՝ *femicide*, լեզվասպանություն՝ *linguicide*, ողջ մարդկության սպանություն՝ *omnicide*, ցեղասպանական սպանություն՝ *genocidal killing*<sup>77</sup> և այլն: Դրանց օգտագործումը գիտական ոլորտում թույլ է տալիս դիտարկել

խառակից: Maloy Dutta, “Pak Army killed 200 students, 10 teachers at DU on March 25,” *The Daily Observer*, 25 March 2015, <https://www.observerbd.com/2015/03/25/79918.php>, դիտվել է 22.11.2021.

73 Mary Ann Warren, *Gendercide: The Implications of Sex Selection* (Totowa: Rowman & Allanheld, 1985).

74 Adam Jones, “Gendercide and Genocide,” *Journal of Genocide Research* 2 (2002): 185–187.

75 Barry Sautman, “Cultural Genocide and Tibet,” *Texas International Law Journal* 38 (2003): 173–248.

76 Andrew Woolford, “*This Benevolent Experiment*”: *Indigenous Boarding Schools, Genocide and Redress in North America* (Nebraska: University of Nebraska Press, 2015).

77 Eric Markusen, Damir Mirkovic, “Understanding Genocidal Killing in the Former Yugoslavia:

ցեղասպանության երևույթը տարբեր կողմերից, բացահայտել դրա էությունը, նպաստել ընդհանուր ճանաչողության բարձրացմանը, սակայն դրանք, ի տարբերություն ցեղասպանություն տերմինի, հանցագործության իրավական բնորոշում չեն և միջազգային իրավական պատասխանատվության չեն կարող հանգեցնել:

### Ամփոփիչ դիտարկումներ

Ամփոփելով կարող ենք նշել, որ վեճերը ցեղասպանագիտության առարկայի, նրա սահմանների շուրջ առ այսօր շարունակվում են: Դրա պատճառը հանցագործության և այն բնորոշող տերմինի շուրջ գոյություն ունեցող տարակարծություններն են: Նրանց մի մասն առաջարկում է նոր սահմանումներ և անվանումներ, որոնք իրավական ուժ չեն կարող ունենալ: Շարունակվում են բանավեճերը նաև ցեղասպանական դեպքերի շուրջ: Ընդհանրացնելով այդ քննարկումները՝ կարելի է եզրակացնել, որ մասնագետների մեծ մասը կիսում է երկու ծայրահեղական մոտեցում, այն է՝ Հոլոքոստի բացառիկության դրույթը և ընդհանրական՝ գրեթե բոլոր դեպքերը որպես ցեղասպանություն դիտարկելը: Գոյություն ունի որոշակի համաձայնություն չորս հիմնական՝ համապարփակ ցեղասպանությունների հարցում՝ Հայոց ցեղասպանություն, Հրեից ցեղասպանություն, Կամբոջայում և Ռուանդայում իրականացված ցեղասպանություններ: Մյուս բոլոր դեպքերը դառնում են գիտական, հաճախ նույնիսկ քաղաքական բանավեճի առարկա: Հետազոտողներն առաջ են քաշում ցեղասպանական դեպքերի իրենց դասակարգումը: Հոդվածում ընդարձակ կերպով ներկայացվում է Վահագն Դադրյանի՝ ըստ ցեղասպանական դեպքերի արդյունքների ցեղասպանությունների դասակարգումը:

Այս գործընթացին զուգահեռ շարունակվում է մի շարք տերմինների կիրառումը, որոնք թեև չեն համընկնում ցեղասպանության հանցագործության հետ, սակայն օգտակար են հարակից հարցեր պարզաբանելու համար՝ պոլիտիցիդ, գենդերցիդ, էլիտիցիդ:

---

Preliminary Observations,” in *Collective Violence*, eds. C. Summers, E. Markusen (Lanham: Rowman & Littlefield, 1999), 37; Jones, *Genocide. A Comprehensive Introduction*, 26-28.



## ON THE ACADEMIC CLASSIFICATIONS OF GENOCIDES

*Suren A. Manukyan*

*Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia*

### SUMMARY

Discussion continues over the subject of genocide, the boundaries of the crime, as genocide scholars debate its key concept, the term genocide. Some of them have contributed their own definitions of the phenomenon, which cannot have legal force. Disputes continue over whether the massacres can be considered genocide or not. It can be summed up that most scholars are in the middle ground between the two farthest approaches (if some argue for the uniqueness of the Holocaust, then the other camp offers a broad, almost universal inclusion of mass murder cases under the definition of genocide). There is almost complete consensus on the four major genocides: the Armenian Genocide, the Holocaust, the Cambodian Genocide, and the Rwandan Genocide. But many more other cases are the subject of academic and often political debate.

To clarify this debate, comparative genocide studies and the classification of genocides can be helpful. The classification of Vahakn Dadrian is essential for us. He divided genocidal cases into four groups: Cultural, Latent, Retributive, Utilitarian and Optimal genocide, based on the outcome of the genocide.

In parallel with this process, several terms continue to be used that do not correspond with genocide, but help explain related issues: politicide, gendercide, eliticide. However, we should remember that genocide is a legal term; the others are not.

**Key words:** Genocide, total and partial genocides, Katz-Charny debate, Holocaust, Vahakn Dadrian, politicide, gendercide, eliticide, ethnocide.

## К ВОПРОСУ ОБ АКАДЕМИЧЕСКИХ КЛАССИФИКАЦИЯХ ГЕНОЦИДОВ

*Сурен А. Манукян*

*Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения*

### РЕЗЮМЕ

Дискуссии по поводу определения геноцида, его границ продолжают до сих пор, поскольку ученые, исследующие геноцид, обсуждают его определение - термин геноцид. Некоторые из них предлагали свои собственные определения этого явления, которые, однако, не могут иметь юридической силы. Продолжаются споры о том, какие массовые убийства можно считать геноцидом, а какие не подходят под это определение. Можно сказать, что большинство ученых находятся между двумя самыми радикальными подходами (если одни отстаивают уникальность

Холокоста, то другие предлагают широкое, почти универсальное включение всех случаев массовых убийств в определение геноцида). Существует почти полный консенсус по четырем основным тотальным геноцидам: геноциду армян, холокосту, геноциду в Камбодже и геноциду в Руанде. Но гораздо больше случаев являются предметом академических и часто политических дебатов.

Для прояснения этой дискуссии, могут быть полезными сравнительные исследования геноцида и классификация геноцидов. Нами выделена классификация известного социолога Ваакна Дадряна. Основываясь на результатах геноцида, он разделил случаи геноцида на четыре группы: культурный, скрытый, карательный, утилитарный и оптимальный геноцид.

Параллельно с этим процессом в научной литературе продолжают использоваться несколько терминов, которые не совпадают с определением геноцида, но помогают объяснить смежные явления: политцид, гендерцид, элитоцид. Однако нужно помнить, что если геноцид – это юридический термин, то другие не имеют юридического обоснования.

**Ключевые слова:** геноцид, тотальный и частичный геноцид, дискуссия Кац-Чарни, Холокост, Ваагн Дадрян, политцид, гендерцид, элитцид, этноцид.

## REFERENCES

Kirakossian, Arman. *Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը* [Armenian Diplomacy and Question of Western Armenians]. Yerevan: Gitut'yun, 1999;

Manukyan, Suren. Ցեղասպանագիտության դասականը: Վահագն Դադրյանի պայծառ հիշատակին [The Classic of Genocide Study. To the Bright Memory of Vahagn Dadryan]. *VEM hamahaykakan handes* 3 (2019): 178-192;

Manukyan, Suren. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի կիրառման հնարավորություններն ու դժվարությունները [Opportunities and Challenges of Implementing the “Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide”]. *Haykakan qaghaqagitakan handes* 1 (2021): 27-48;

Manukyan, Suren. Ցեղասպանագիտությունը՝ որպես գիտաճյուղ. ձևավորման և զարգացման պատմությունը [Genocide Studies as a Scientific Discipline. History of Origin and Development]. *VEM hamahaykakan handes* 3 (2019): 8-44;

## Հեղինակի մասին

### About the Author

### Об авторе

**Սուրեն Ա. Մանուկյան**, պատմ. գիտ. թեկն., արևելագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Վահագն Դադրյանի անվան Համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ, ԵՊՀ Հայագիտական

հետազոտությունների ինստիտուտի Ցեղասպանագիտության բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանության ոճրագործներ, համեմատական ցեղասպանագիտություն:

Էլ. փոստի հասցե՝ [manukyan.suren@genocide-museum.am](mailto:manukyan.suren@genocide-museum.am)

**Suren A. Manukyan**, PhD in History, orientalist, Head of the Comparative Genocide Studies Department named after Vahakn Dadrian, Armenian Genocide Museum-Institute Foundation, and Head of the Department of Genocide Studies at Institute of Armenian Studies, Yerevan State University.

Research fields – genocide perpetrators studies, comparative genocide studies.

E-mail: [manukyan.suren@genocide-museum.am](mailto:manukyan.suren@genocide-museum.am)

**Сурен А. Манукян**, канд. ист. наук, востоковед, заведующий Отделом сравнительного изучения геноцидов им. Ваагна Дадряна Фонда “Музей-институт Геноцида армян,” заведующий Отдела геноцидоведения Института арменоведения Ереванского государственного университета.

Область исследований – изучение преступников, виновных в осуществлении геноцида, сравнительное изучение геноцидов.

Эл. почта: [manukyan.suren@genocide-museum.am](mailto:manukyan.suren@genocide-museum.am)

**ԳԵՎՈՐԳ ՀԱԼԱՋՅԱՆԻ «ԴԵՊԻ ԿԱԽԱՂԱՆ» ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՀԵՏՈ ԹՐԲԱՑԱԾ ՀԱՅԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ՝**

*Աննա Մ. Օհանջանյան  
Մատենադարան, Հայաստան*

Գևորգ Հալաջյանի (Թափառականի) օրագրություն-հուշագրությունը լույս է տեսել ԱՄՆ-ում դեռևս 1932 թվականին, սակայն այդպես էլ չի արժանացել համապատասխան գիտական ուսումնասիրության և համակարգման: Խիստ ծավալուն այս աշխատանքն անգերագնահատելի սկզբնաղբյուր է 1924-1928 թթ. Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում թրքացած և ուծացող հայերի վերաբերյալ: Հանրապետական Թուրքիայի Անկախության ատյանի առջև կանգնելու պարտադրանքով Հալաջյանը ճամփորդում է Ադանա, Դիարբեքիր, Խարբերդ, Մալաթիա, բանտարկվում Սեբաստիայում, ավելի ուշ բանտից փախչում Բուլղարիա, ապա՝ Ամերիկա:

Սույն հոդվածում Հալաջյանի օրագրության հիման վրա փորձելու ենք վերլուծել Հայոց Ցեղասպանության ժամանակ թրքացած հայերի, «թրքացած» և ապա՝ սրբազանացված եկեղեցիների և մատուռների վերաբերյալ նրա թողած տվյալները, թրքացման դեպքերը, ձևերն ու մեխանիզմները՝ համեմատական անցկացնելով ավելի վաղ դարերում՝ Օսմանյան շրջանում կիրառվող իսլամացման ձևերի, մեխանիզմների և այդ գործընթացն առաջ մղող դերակատարների հետ՝ վեր հանելու համար ոչ միայն նմանությունները, այլև հայեցակարգի փոխարինման արդյունքում առաջ եկած տարբերությունները:

**Բանալի բառեր՝** թրքացման մեխանիզմներ, մահմեդականացում, կրոնափոխություն, շեյխ Սայիդի ապստամբություն, Անկախության ատյան

Հոդվածը ներկայացվել է 02.09.2021: Ընդունվել է տպագրության 16.11.2021:

The article was submitted on 02.09.2021 and accepted for publication on 16.11.2021.

Статья поступила 02.09.2021 и была принята к публикации 16.11.2021.

**Ինչպես հղել՝** Աննա Մ. Օհանջանյան, «Գևորգ Հալաջյանի «Դեպի կախաղան» օրագրությունը՝ Հայոց ցեղասպանության ժամանակ և հետո թրքացած հայերի վերաբերյալ սկզբնաղբյուր» *Ցեղասպանագիտական հանդես* 9, no. 2 (2021), 76-92:

**How to cite:** Anna M. Ohanjanyan, “Gevorg Halajyan’s diary ‘To the Gallows’ as a Primary Source on Turkified Armenians during and after the Armenian Genocide,” *Ts’eghaspanagitakan handes* 9, no. 2 (2021): 76-92.

**Как сослаться:** Анна М. Оганджаниян, “Дневник Геворга Аладжяна ‘На виселицу’ как первоисточник о тюркизированных армянах во время и после Геноцида армян,” *Тсехаспанagitакан андес* 9, no. 2 (2021): 76-92.

---

1 Հոդվածը զեկույցի տեսքով ամփոփ ներկայացվել է «Հայոց ցեղասպանության, հայկական պահանջատիրության և արցախյան հիմնահարցի խաչմերուկներում. հետահայաց գնահատումներ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովի ժամանակ (2021 թ. սեպտեմբերի 16-18, Երևան, ՀՅԺԻ հիմնադրամ, ՀՀ ԳԱԱ):

## Ներածություն

Գևորգ Հալաջյանը, նույն ինքը Թափառականը, ծնվել է Երզնկայի Բալաբանի լեռնապարի Խնձորենկ գյուղում, Հալաջյան գերդաստանում: Մինչև 1914 թ. ապրել է Դերսիմի լեռնաբնակ հայերի ու քրդերի մեջ: «Դեպի կախաղան» վերնագրված իր օրագրության մեջ Հալաջյանը ներկայացնում է իր գերդաստանի ճակատագիրը: 78 հոգանոց Եզակյան, Պալայան և Հալաջյան գերդաստանից 1915-1922 թթ. ընթացքում ողջ են մնում միայն երկու-երեք հոգի<sup>2</sup>: Երկու եղբայրները փրկվում են ջարդից՝ տեղափոխվելով Եվրոպա: Թե ինչո՞վ է զբաղվել Հալաջյանը 1915-1924 թթ.՝ դժվար է ասել: «Դեպի կախաղան»-ից տեղեկանում ենք, որ կնոջ և դստեր՝ Նունոյի հետ միասին բնակվել է Կոստանդնուպոլսում՝ Մեծ կղզում (Büyükada): 1924 թ. Գամեր Լուրժի անունով քուրդ ցեղապետի հետ համաձայնության գալով՝ Հալաջյանը փորձում է աջակցել Շեյխ Սալիդի կազմակերպած Դերսիմի ապստամբությանը<sup>3</sup>, ինչի համար 1925 թ. ձերբակալվում է, տեղափոխվում Խարբերդ, կանգնում Անկախության ատյանի (İstiklâl Mahkemesi)<sup>4</sup> առջև և դատապարտվում տասնհինգ տարվա շրթայակիր բանտարկության և հարյուր մեկ տարվա բանտարգելության՝ Սերաստիայի բանտում: Բանտում ստեղծում է գործակալական ցանց՝ թրքացած և թրքացող գավառահայության, մասնավորապես, կանանց և աղջիկների փախուստը Եվրոպա, ԱՄՆ, Սիրիա և Խորհրդային Հայաստան կազմակերպելու համար: 1928 թ. Հալաջյանը փախչում է Սերաստիայի բանտից, սկզբում՝ Կոստանդնուպոլիս, ապա՝ Բուլղարիա: Թե երբ է մեկնել ԱՄՆ, հայտնի չէ, սակայն 1932 թ. սկսած տեղեկություններ կան, որ բնակվել է ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Ֆոքսբորո քաղաքում: Նույն թվականին լույս է տեսել «Դեպի կախաղան» օրագրությունը: Բանաստեղծություններ է տպել Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» օրաթերթի գրեթե բոլոր համարներում՝ «Թափառական» մականվամբ<sup>5</sup>: 1955 թ. օգոստոսին Խորհրդային Հայաստանում՝ Ծաղկաձորում, գրում է «Դերսիմի հայերի ազգագրությունը» գիրքը, որի առաջին մասը տպագրվել է 1973 թ., իսկ մնացած մասը պահվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում<sup>6</sup>: Այս արխիվի թղթապանակներից մեկում են պահվում նաև քրդական ապստամբություններին վերաբերող արժեքավոր տեղեկություններ, մասամբ, անտիպ<sup>7</sup>: Գևորգ Հալաջյանը մահացել է 1966 թ. ԱՄՆ-ում:

2 Գևորգ Հալաջյան, *Դեպի կախաղան* (Բոստոն, «Հայրենիք» տպ., 1932), 12:

3 Շեյխ Սալիդի ապստամբության վերաբերյալ տե՛ս Robert Olson, *The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellion, 1880-1925* (Austin, TX: University of Texas Press, 1989); Uğur Ümit Üngör, *The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Turkey 1913-1950* (Oxford: Oxford University Press, 2011), 122-148.

4 Անկարայում և Դիարբեքիրում գործող Անկախության ատյանների վերաբերյալ տե՛ս Üngör, *The Making of Modern Turkey*, 127-130:

5 Օրինակի համար տե՛ս, Գևորգ Հալաջյան, «Հօրս տունը», *Հայրենիք* 121, no. 1, (1932), 35:

6 Տե՛ս Գևորգ Հալաջյան, «Դերսիմի հայերի ազգագրությունը», *Հայ ազգագրություն և բանասիրություն: Նյութեր և ուսումնասիրություններ*, հ. 5 (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973), 8:

7 Գևորգ Հալաջյան, «Դերսիմի ազգագրական նյութերը», ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրու-

Վերջին տասնամյակում Հալաջյանի «Դեպի կախաղան» օրագրության նկատմամբ հետաքրքրությունը Հայաստանում բավականին աճեց: Արևելահայերենով վերատպվեցին գրքի՝ հայերին վերաբերող դրվագները<sup>8</sup>, եղան դասախոսություններ նրա մասին<sup>9</sup>, սակայն հանրության հետաքրքրությունը հիմնականում բևեռվեց Հալաջյանի կերպարին՝ որպես «ընդօրինակման արժանի հերոսի»<sup>10</sup>, և այն հնարքներին, որոնցով վերջինս գործում էր բանտում և հաջողում իր ծրագրերը: Արդյունքում հեղինակի օրագրությունը քիչ թե շատ հանրայնացվեց, սակայն դրա պարունակած հարուստ նյութը համակարգված գիտական ուսումնասիրության այդպես էլ չարժանացավ: Դեռ 2015 թ. նախատեսվում էր օրագրությունն ամբողջությամբ թուրքերեն թարգմանել և տպագրել այն Կոստանդնուպոլսում, սակայն մինչ օրս տեղեկություն չունենք արդյունքի վերաբերյալ<sup>11</sup>: Հալաջյանի օրագրությունն այս պահին ամբողջությամբ փոխադրված է արևելահայերենի, թարգմանված է ռուսերեն<sup>12</sup> և սպասում է իր հրատարակչին:

Թափառականը տպագրությունից առաջ խմբագրել է օրագրությունը: Իր իսկ պնդմամբ օրագրության մի շարք հատվածներ չեն ներառվել տպագիր հատորի մեջ, փոխվել են նաև որոշ դերակատարների անունները: Այդ պատճառով դժվար է ասել, թե ինչպիսին է եղել բնագրի բովանդակությունը: Տեղեկություններ չունենք նաև այն մասին, թե որտեղ է այսօր պահվում բնագիրը, որն, անշուշտ, շատ ավելի կարևոր տվյալներ է պարունակում, քան տպագրված հատորը: 1928 թ. բանտից փախուստից ու Կոստանդնուպոլիս մեկնելուց հետո տեղի ունեցած դեպքերի մանրամասները Հալաջյանը խոստանում է մաս-մաս տպագրել «Հայրենիք» օրաթերթում, ինչպես նաև հրատարակել օրագրության երկրորդ հատորը, որն այդպես էլ լույս չի տեսնում<sup>13</sup>:

Հանրապետական Թուրքիայի Անկախության ատյանի առաջ կանգնելու համար Հալաջյանն անցել է Մերսին, Ադանա, Ուրֆա, Դիարբեքիր, Խարբերդ, Մալաթիա երթուղով և հասել Սերաստիա՝ արձանագրելով տեսածն ու լսածը Հայոց ցեղասպանությունից հետո հայերի շարունակական թրջացման վերաբերյալ<sup>14</sup>: Սույն հոդվածում Հալաջյանի օրագրության վերլուծության հիման վրա փորձելու ենք

---

թյան ինստիտուտի արխիվ, գործ 5ա (մեքենագիր):

8 Թափառական (Գևորգ Հալաջյան), *Դեպի կախաղան*, խմբ.՝ Արծրուն Պեպանյան (Երևան, 2014):

9 Գևորգ Հալաջյան, *Դեպի կախաղան*, Մաս 1, <https://www.youtube.com/watch?v=qx9Oji9qWuc>, դիտվել է 18.10.2021:

10 «Վերելք» ակումբի տեսաշարը <https://livenews.am/press/tag/գևորգ-հալաջյան/>, դիտվել է 18.10.2021:

11 Գևորգ Հալաջյանի «Դեպի կախաղան» բանտային օրագիրը, <https://www.aravot.am/2015/03/05/548207/>, դիտվել է 21.10.2021

12 Օրագրությունը արևելահայերենի փոխադրել և ռուսերեն է թարգմանել Մհեր Բեյլերյանը: Մեր շնորհակալությունն ենք հայտնում թարգմանչին՝ դրանց անտիպ օրինակները մեզ տրամադրելու համար:

13 Հալաջյան, Դեպի կախաղան, 845 էջի ծանոթագրությունը: Այստեղ Հալաջյանը խոստանում է նկարագրել հանգամանքները, որոնց պատճառով ստիպված եղավ լքել Պոլիսը, սակայն մինչ օրս դրանք մնում են չբացահայտված, ինչպես և պատճառը, թե ինչու Թափառականն այդպես էլ չհրատարակեց օրագրության երկրորդ մասը:

14 Օրագրության մեջ Թափառականը գետնից է Պոլսից Սերաստիա իր անցած ճանապարհի գծագիր քարտեզը: Տե՛ս Հալաջյան, *Դեպի կախաղան*, 840:

ներկայացնել և վերլուծել քեմալական Թուրքիայում հայերի թրքացման մեխանիզմներն ու եղանակները, որոնք հեղինակը նկարագրում է՝ քաղելով դրանք իր գրույցներից այս կամ այն թուրք, քուրդ կամ էլ թրքացած հայ պաշտոնյայի հետ: Համեմատական ենթանցկացնելու նաև Օսմանյան Թուրքիայում քրիստոնյաների թրքացման տարածված եղանակների հետ՝ վեր հանելու համար քեմալական Թուրքիայում կրոնափոխության հայեցակարգի մանրամասները:

### Հայերի թրքացման մեխանիզմները

«Դեպի կախաղան»-ը մահմեդականացման, ավելի ճիշտ, թրքացման դեպքերի մի ողջ շտեմարան է, որն անհրաժեշտ է քննել, վերլուծել և այդ հենքի վրա որոշակի ընդհանրացումներ անել, որոնք խիստ կարևոր են ներկայիս իրավիճակը ճիշտ գնահատելու համար, քանի որ այսօր մեր արած շատ հարցադրումներ արդեն իսկ գտել են իրենց պատասխանը Հալաջյանի գործում:

Օրագրությունն սկսվում է 1924 թ. նոյեմբերի 25-ով և ընդգրկում է Հայոց ցեղասպանության սկզբնավորումից տասը տարի անց Արևմտյան Հայաստանի ամայացող և թշվառության մեջ գտնվող գավառներում հայերի՝ մեծ թափ առած թրքացման, հայերի և քրդերի կոտորածների, լեռնաբնակների ապստամբությունների մանրամասն նկարագրությունները:

Օսմանյան կայսրությունում հատկապես 17-18-րդ դարերում մահմեդականացումը տեղի էր ունենում երկու եղանակով՝ բանավոր՝ «շահադան»<sup>15</sup> արտասանելով կամ թվատառությամբ<sup>16</sup>: Երկու դեպքում էլ թրքացումն ուղեկցվում էր անվանափոխությամբ, այսինքն՝ կրոնափոխը վերցնում էր թուրքական անուն: 17-րդ դարի հեղինակ Երեմիա Չելեբի Քյոմյորճյանն (1637-1695) իր անտիպ «Գիրք պատմաբանությունաց»<sup>17</sup> աշխատության մեջ հանգամանորեն նկարագրում է այսպես կոչված «ակամայից», այսինքն՝ խաբեությամբ հրահրված կրոնափոխությունների մեխանիզմները<sup>18</sup>: Հայերի համար թրքացման ամենից վտանգավոր եղանակը թվատառությունն էր: Բանավոր կրոնափոխությունը հնարավորություն էր տալիս ծածուկ դավանել

15 «Շահադա»-ն (արաբ. *aš-šahādah*) մահմեդական հավատի խոստովանությունն է՝ սեղմ ոճով շարադրված, որը երեք անգամ արտասանելով յուրաքանչյուրը կարող էր ընդունել իսլամ: Վերջինիս բովանդակությունն էր. «Ես վկայում եմ, որ չկա Աստված Ալլահից բացի, նաև վկայում եմ, որ Մուհամեդը նրա պատվիրակն է»:

16 Օսմանյան կայսրությունում կրոնափոխության մեխանիզմների և նպատակների մասին տե՛ս Marc David Baer, *Honored by the Glory of Islam* (Oxford: Oxford University Press, 2008); Tijana Krstić, *Contested Conversions to Islam: Narratives of Religious Change in the Early Modern Ottoman Empire* (Stanford, CA: Stanford University Press, 2011).

17 Երեմիա Չելեբի Քյոմյորճյան, *Գիրք պատմաբանությունաց*, Վենետ. ձեռ. 509, 234ա-264ա:

18 «Ակամայից» կրոնափոխությունների վերաբերյալ տե՛ս Krstić, *Contested Conversions*, 143-164. Երեմիա Չելեբին նկարագրում է խաբեությամբ կրոնափոխելու բազմաթիվ եղանակներ և օրինակներ, որոնցում ներգավված էին օսմանյան հասարակության բոլոր խավերի, սեռի և տարիքի իսլամադավանները՝ սկսած սուլթաններից մինչև թուրք մանչուկներ: Քյոմյորճյան, *Գիրք պատմաբանությունաց*:



քրիստոնեությունը, սակայն թլփատությունը խարան էր ողջ կյանքի ընթացքում: Ինչպիսին էլ լինե՞ր կրոնափոխության եղանակը, իսլամ ընդունելուց հետո այն «ուրանալը» անվերապահորեն հանգեցնում էր մահապատժի: «Կրոնս հայիոյեցիր» ամբաստանությամբ մահմեդականները հաճախ էին մղում քրիստոնյաներին թրքացման, մինչդեռ «ուրացման» մեղադրանքը շատերի նահատակության պատճառ էր դառնում<sup>19</sup>: Մահմեդականացման պատճառները բազմազան էին՝ բռնի, խաբեությամբ, նաև կամավոր<sup>20</sup>, սակայն զանգվածային բնույթ էին կրում միայն որոշակի ժամանակաշրջանում և որոշակի քաղաքականության պարտադրման արդյունքում, օրինակ՝ *բաղըզադելի*ների շարժման տարբեր փուլերի ընթացքում, երբ մահմեդականացման գործընթացին լծվում էին ստորին խավերի ներկայացուցիչները, այսպես կոչված «շուկայի զանգվածը»<sup>21</sup>, ինչպես նաև սուլթան Մեհմեդ IV-ի (1648-1687) և քարոզիչ Վանի Մեհմեդ Էֆենդիի (մահ. 1685) մաքրակրոնության քաղաքականության պարտադրմամբ<sup>22</sup>:

Դատելով Հալաջյանի օրագրությունից՝ թրքացման մեխանիզմները նոր ձևավորվող, աշխարհիկացման և արդիականացման ճանապարհը բռնած քեմալական Թուրքիայում տարբերվում էին նախկինում ընթացող մահմեդականացման գործընթացից: Քեմալական Թուրքիայում հստակորեն կատարվում էր հայեցակարգի փոխարինում (անգլ. concept substitution): Այսպես, Օսմանյան շրջանում լայն տարածում ստացած «կրոնս հայիոյեց» ամբաստանությունը, որը հրաշալի գործիք էր մահմեդական հասարակության ձեռքին՝ քրիստոնյաներին կրոնափոխելու համար, ոչ թե վերացավ, այլ նոր ժամանակներում պարզապես փոխարինվեց՝ «Գազի փաշային հայիոյեց» ամբաստանությամբ: Եթե որևէ մեկը, տեղի կամ անտեղի, ամբաստաներ «Գազի փաշային հայիոյեց» համար, նախ ծեծի էր ենթարկվում, ապա դատապարտվում մեկից-երկու տարի բանտարկության<sup>23</sup>: Հայերի պարագայում այսպիսի ամբաստանությունն անխուսափելիորեն հանգեցնում էր թրքացման:

19 Ժամանակագիրները նահատակությունների բազմաթիվ պատմություններ են գրի առել, որոնցից, թերևս ամենից արժանահավատները Երեմիա Չելեբիի՝ որպես ականատեսի պատմություններն են:

20 Ըստ 17-րդ դարի մեկ այլ ժամանակագրի՝ Գրիգոր Դարանաղցու (մահ. 1643 թ.), կամավոր իսլամացման պատճառ կարող էին լինել անտեղյակությունը, պարտքերը և, իհարկե, ամուսնությունները մահմեդական կանանց հետ: Գրիգոր Դարանաղցի, *Ժամանակագրություն*, խմբ.՝ Մեսրոպ Նշանեան (Երուսաղեմ: Սր. Յակոբեանց տպ., 1915):

21 Քաղըզադելիների շարժման վերաբերյալ տե՛ս Madeline C. Zilfi, *The Politics of Piety: The Ottoman Ulema in the Post Classical Age* (Minneapolis: Bibliotheca Islamica, 1988), 129-182. Idem, "The Kadizadelis: Discordant Revivalism in the Seventeenth-Century Istanbul," *Journal of Near Eastern Studies* 45, no. 4 (1986): 251-269: Շարժման փուլերի և քաղաքական բաշխվածության վերաբերյալ տե՛ս Marinos Sariyannis, "The Kadizadeli movement as a Social and Political Phenomenon: the Rise of a Mercantile Ethic?" in *Political Initiatives from the Bottom-Up in the Ottoman Empire* (Halcyon Days in Crete VII, A Symposium Held in Rethymno, 9-11 January 2009), ed. A. Anastasopoulos (Rethymno: Crete University Press, 2012), 263-289; Ekin Tuşalp Atiyas, "The 'Sunna-Minded' Trend," in *A History of Ottoman Political Thought up to the Early Nineteenth Century* (Handbook of Oriental Studies. Section 1 The Near and Middle East), vol. 125 (Leiden: Brill 2018), 233-278.

22 Baer, *Honored by the Glory*, 105-119.

23 Հալաջյան, *Դեպի կախաղսն*, 402:

«Քեմալական եռոտանու», այն է՝ կրոնի, ազգության և աշխարհիկացման<sup>24</sup> խառնուրդ քաղաքականության պարտադրմամբ կերտվում էր թուրքական նոր ինքնություն, որի համար բավարար չէր լոկ մահմեդականացումը<sup>25</sup>։ Մահմեդականացումը բուն թրքացման առաջին փուլն էր միայն։ Մուստաֆա Քեմալը հիացած էր «ազգի կերտման գործընթացում կրոնի միավորիչ ուժով»<sup>26</sup>, և ձգտում էր ստեղծել աշխարհիկ պետական իսլամ՝ ի հակադրություն ժողովրդական հետամնաց իսլամի, որը համարում էր արդիականացման խոչընդոտ<sup>27</sup>։ Մահմեդականացման փուլից հետո, այնուամենայնիվ, անհրաժեշտ էր ջնջել ազգային, «հետադիմական» կրոնական գիտակցությունը, և ներարկել «նոր թուրքի» գիտակցություն, ինչը համատարած կիրառվում էր հատկապես անպաշտպան մնացած գավառահայերի նկատմամբ։ Հայոց ցեղասպանության տարիներին արդեն իսկ իսլամացած հայերն անցնում էին ուծացման երկրորդ փուլով՝ վերջնական թրքացմամբ։ Այն, որ հայերի թրքացումն ու ուծացումը քեմալական պետության օրակարգում էր, և վերջինիս «սոցիալական ինժեներիայի» (անգլ. social engineerig) կարևոր թիրախներից մեկը, հստակ երևում է Գևորգ Հալաջյանի և Ադանայի գաղտնի ոստիկան Ալիի միջև եղած խոսակցությունից, որի ընթացքում Ալին հայտնում է, որ վերջին տարիներին հայերի թիվը ճշտելիս, պաշտոնական տեղեկագրում հաստատել էին, թե հայ չկա Ադանայում, քանի որ այդպես էր հրահանգված<sup>28</sup>։ Իրականում, Ադանայում կար 460-ից ավելի հայ, որոնք ապրում էին թուրքի անունով և հայտարարում, թե թուրք են։ Քչերն էին կրոնափոխությունից հետո պահում իրենց ազգային ծագումը։ Եթե կային այդպիսիք, ապա գտնվում էին ոստիկանության հսկողության տակ, բայց չէին արտաքսվում, գրանցվում էին որպես կրոնափոխ (թուրք. mihnedi), քանի որ կարճ ժամանակում կառավարության ճշումների տակ պետք է վերջնականապես թրքացվեին<sup>29</sup>։

Ըստ Հալաջյանի՝ հանրապետական Թուրքիայում թրքացման համար թվաատությունն այլևս բավարար չէր։ Պարտադիր պայման էր ընտանիքի աղջիկներին թուրքերին կնության տալը և մշակութային թրքացումը, այն է՝ մանուկներին թրքա-

24 «Քեմալական եռոտանի» եզրույթ և այս կոնցեպտի մանրակրկիտ վերլուծությունը տե՛ս Cemal Karakas, "Turkey: Islam and Laicism between the Interests of State, Politics, and Society," *PRIF Reports* 78 (2007): 8-19.

25 Քրիստոնյաների մահմեդականացման վերաբերյալ մոնոդոլական շրջանից մինչև 20-րդ դարը տե՛ս A.C.S. Peacock, Bruno De Nicola, Sara Nur Yildiz, "Introduction," in *Islam and Christianity in Medieval Anatolia*, eds. A.C.S. Peacock, et. al (London and New York: Routledge, 2016), 1-20.

26 Karakas, *Turkey: Islam and Laicism*, 8.

27 Սա էր պատճառը, որ քեմալականները սկզբում փորձեցին իսլամը ռեֆորմի ենթարկել՝ ստեղծելով «արդի իսլամ» (*Çağdaş İslam*), որը այսպես կոչված «ռացիոնալ» կամ «լուսավորչական» կրոն էր լինելու, սակայն պահպանողական շրջանակների ճնշման ներքո հրաժարվեցին այդ գաղափարից, մինչև ժամանակ պահելով իսլամը որպես ազգակերտման քաղաքիչ՝ ապագայում այդ նույն շրջանակների կողմից հնարավոր խաչընդոտների չեզոքացման համար։ Տե՛ս Karakas, *Turkey: Islam and Laicism*, 10-11. Հարցի քննարկումը տե՛ս նաև Lerna Ekmekcioğlu, *Recovering Armenia: The Limits of Belonging in Post-Genocide Turkey* (Stanford: Stanford University Press, 2016), 103-109.

28 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 101-102:

29 Նույն տեղում, 102:

կան վարժարան ուղարկելը: Հալաջյանի հետ զրույցի ժամանակ Սեբաստիայի մեծահարուստ թրքացած հայերից մեկը խոստովանում է, թե թուրքերը «... չեն հավատում մեր անվանափոխությանը: Նույնիսկ մեր զավակների թվատոմարները չեն հավատում: Թուրք լինելու համար պայման են դնում ամուսնությունը թուրքերի հետ և թուրքական մշակույթի ընդունումը»<sup>30</sup>:

Հայ տղամարդկանց մեծ մասը թրքացվում էր աշխատանք ստանալու դիմաց: Ուրֆայում, Բիրեջիկի թաղապետարանի նախագահ Սուլեյման Սուրեհիի խոսքից հայտնի է դառնում, որ տեղի 45-ից ավելի հայերը թրքացվել են և պահվել՝ թուրքերին արհեստ սովորեցնելու նպատակով, ոմանք ամուսնացել են թրքուհիների հետ, ոմանք էլ իրենց քույրերին կնության են տվել թուրքերին, որպեսզի թրքացումը վերջնականապես ամրագրվի: «Ամեն դեպքում Բերիջեկը մաքրված է հայերից, և անհանգստանալու կարիք չկա», - հայտնում է Սուրեհիին<sup>31</sup>: Ի թիվս այլոց, հայերի թրքացումը Քեմալի սոցիալական ծրագրի կենտրոնում էր այն պատճառով, որ վերջինս ձգտում էր «վիճակագրության» հիման վրա, այսպես ասած՝ «գիտականորեն» ապացուցել, որ Արևմտյան Հայաստանի հայաբնակ տարածքներում մահմեդական բնակչությունն ավելի շատ էր, քան հայ բնակչությունը<sup>32</sup> և, փաստորեն, միջին օղակների տարբեր պաշտոնյաներ տեղում փորձում էին լուծել վիճակագրության հարցը՝ քաղաքներն ու գյուղերը «հայերից մաքրելով»:

Պատկերը նույնն էր նաև Դիարբեքիրում: Հալաջյանի զրույցներից մեկի ընթացքում պարզվում է, որ մինչև 1920-1922 թթ. արտագաղթը, զանազան շրջաններից Դիարբեքիրում հավաքված հայերի թիվը 13000-14000 էր հասել՝ լրջորեն մտահոգելով թուրքերին: Արտագաղթից հետո հայերի թիվը պակասում է՝ հասնելով հազիվ 2500-3000-ի: Այնուամենայնիվ, այդ հայերն էլ՝ որպես գործոն, տարր, զուրկ էին քաղաքական արժեքից, քանի որ մեծամասնությունը կին ու երեխա էր, որ գտնվում էին թուրք բեյերի ազարակներում, իսկ մնացածն արհեստավորներ էին, որ կրոնափոխ էին եղել և աշխատում էին քաղաքում<sup>33</sup>: Պետական քաղաքականության մասն էր հայերին որպես արհեստավորներ պահելը և ժամանակի հետ վերջնականապես թրքացնելը: Հարցով զբաղվում էր օրենսդիր մարմինը՝ Ազգային ժողովը, որը թելադրել էր կառավարությանը միջոցներ ձեռնարկել «5-6 տարում արմատապես լուծելու այդ հարցը՝ առանց աղմուկի», ինչի արդյունքում թուրքերը թե՛ լավ արհեստավորներ կունենային, թե՛ երկրի թրքությունը/թրքական տարրը կավելանար: Արհեստավոր տղամարդկանց արգելված էր արտագաղթել երկրից՝ փաստորեն, դատապարտելով

30 Նույն տեղում, 298: Թերևս, խոսքը քեմալականների մշակութային ռեֆորմի առաջադրած նոր նորմերին համապատասխանելու մասին է: Մուստաֆա Քեմալի մշակութային ռեֆորմի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Erik Jan Zürcher, *Turkey. A Modern History* (London: I.B. Tauris, 2004), 176-205.

31 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 121-122:

32 Fatma Ülgen, “Reading Mustafa Kemal Atatürk on the Armenian Genocide of 1915,” *Patterns of Prejudice* 44, no. 4 (2010): 376. Տե՛ս նաև Ekmekçioğlu, *Recovering Armenia*, 33:

33 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 143:

նրանց պարտադիր թրքացման:<sup>34</sup> Հարցի, թե ինչպե՞ս կարելի է թրքացնել մի ողջ ժողովուրդ, որ «ազգային մշակույթին ու անկախության ձգտելու իդեալ ունի», պատասխանն էր. դժվար կլինե՞ր դա անել, եթե «գավառահայության կապը խզված չլինե՞ր արտաքին աշխարհի հետ»:<sup>35</sup>

Փաստացի, տեղեկատվական անդունդ կար Կոստանդնուպոլսի և գավառահայության միջև, քանի որ Կոստանդնուպոլսում կարծում էին, թե Թուրքիայում Կոստանդնուպոլսի հայերից բացի ուրիշ հայեր չկային: Ըստ Հալաջյանի, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանն անգամ լուր չունե՞ր գավառահայության մասին: Գավառահայությունը կտրված էր արտաքին աշխարհից, և շատ վայրերում հայկական վարժարաններ չկային: Ինչպես տեղեկացնում էր Դիարբեքրի երեսփոխան Շերեֆ բեյը, զարգացած հայերը հիմնականում արտագաղթել էին, իսկ մնացողների 80 տոկոսն անգրագետ էր<sup>36</sup>: Նոր սերունդը դաստիարակվում էր թուրքական վարժարաններում, և սերնդափոխության միջոցով կատարվում էր «անաղմուկ» ուժացումը: Արտասահման ուղարկվող հայերի նամակները գրաքննություն էին անցնում, կոնկրետ Դիարբեքրում հայերեն թերթերն արգելված էին, գավառահայությունը ծանոթ չէր նույնիսկ Կոստանդնուպոլսում հրատարակվող հայերեն թերթերին: Խրախուսվում էին ամուսնությունները հայերի և թուրքերի միջև<sup>37</sup>: Այս ամենը համարում էին Մուստաֆա Բեմալի ուժացման «առաջադիմական» միջոցների հաջողության ապացույց, որը կարծես թե ավելի արդյունավետ էր, քան հայերի բազմաձև «չարաշուք տարագրությունը»<sup>38</sup>: Հայերը որակվում էին «ընդդիմադիրներ», և հայերի ու թուրք ընդդիմադիրների միջև հավասարության նշան էր դրվում: Հալաջյանը գրում է. «Այլևս պարզ ու հստակ է, որ կառավարությունը ձեռնարկել է հայերին բնաջնջելու նոր քաղաքականություն, բայց «առանց աղմուկի»: Եվ ո՞վ պիտի լինի լսողը կամ աղմուկ բարձրացնողը, երբ օրը ցերեկով կրկնվում է 1915-ի Եղեռնը»<sup>39</sup>:

Հանրապետական Թուրքիան թրքացման նորանոր լծակներ էր տրամադրում՝ Արևմտյան Հայաստանի գավառները հայերից վերջնականապես մաքրելու համար: Այսպես, կանանց և աղջիկներին փախցնելու դեպքերն արդարացվում էին հանրապետական Թուրքիայի ազատականության քարոզով: Թափառականը հիշատակում է այդպիսի մի դեպք: Երբ թուրքերը փախցնում են Ուրֆայի Մինաս վարպետի աղջկան, ի պատասխան հոր բողոքի, ծաղրում են, թե՛ «սա հանրապետական երկիր

34 Նույն տեղում, 144:

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում:

37 Օսմանյան շրջանի «ներառականության», ապա երիտթուրքերի և քեմալականների հայ կանանց և երեխաների ուժացման վերաբերյալ տե՛ս Lerna Ekmekcioğlu, “A Climate for Abduction, a Climate for Redemption: The Politics of Inclusion during and after the Armenian Genocide,” *Comparative Studies in Society and History* 55, no. 3 (2013): 522-553.

38 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 144:

39 Նույն տեղում:

է, և ամեն մարդ ազատ է ամուսնանալ նրա հետ, ում հավանում է»<sup>40</sup>: Թրքացած կամ քրդացած հայերն, ըստ Թափառականի, թաքցնում էին իրենց ինքնությունը՝ հիմնականում իրենց տներերի վախից: Դրդելով հայերին սեփական ինքնության ժխտմանը՝ փորձում էին իսպառ ջնջել հայ լինելու գիտակցությունը: Այնուամենայնիվ, քիչ չէին նաև դեպքերը, երբ հայերը ծալոված ապրում էին՝ որպես թուրք կամ քուրդ, սպասելով հարմար առիթի գերությունից ազատվելու համար: Կանայք հարեմներում հակառակ թրքացած լինելուն, պահում էին իրենց ազգային գիտակցությունը և ապրում հստակ նպատակի՝ փախուստի համար: Ինչ վերաբերվում է տղամարդկանց, Հալաջյանը հիշում է Աջար Իբրահիմին՝ թրքացած կաթոլիկ մի հայի, Սեբաստիայի Բարգնիք (Բրգնիկ) գյուղից<sup>41</sup>, որ «կտրիճ հայ է, քաջ կռվողի համբավ ունի բանտում, բայց մոլեռանդ թուրք է ձևանում»<sup>42</sup>: Թերևս, այս դեպքերն էին, որ լավատեսություն էին ներշնչում Հալաջյանին և նրա գրուցակիցներից Տիգրան աղային, որը կարծում էր, թե թեև «նոր չէ, որ իրագործվում է հայերին թրքացնելու կամ կողոպտելու քաղաքականությունը», սակայն «հայը չի թրքանում»<sup>43</sup>:

Պատահում էին դեպքեր, երբ ամուսնությունը հայուհիների կրոնափոխության պատճառ չէր դառնում: Օսմանյան կայսրության պայմաններում մահմեդական ամուսինները հաճախ թույլ էին տալիս իրենց կանանց մնալ քրիստոնյա՝ պայմանով, որ վերջիններս պետք է շարունակեին հաճախել եկեղեցական ծեսերին, կիրակնօրյա Պատարագին և ստանային Հաղորդություն: Եթե այս պայմանը չէր կատարվում, կինը պարտավորվում էր իսլամ ընդունել<sup>44</sup>: Նմանատիպ «հանդուրժողական» ամուսնությունների դեպքեր են հանդիպում նաև քեմալական Թուրքիայում, որոնք, սակայն, պայմանավորված էին աշխարհիկացման և արդիականացման միտումներով: «Դեպի կախաղանի» էջերին հանդիպում ենք արաբկիրցի Թուրան բեյին, ում կինը հայ ուսուցչուհի էր, և պահում էր «ազգությունը», քանի որ նրանց ամուսնությունը կրոնական չէր, այլ քաղաքացիական: Ըստ Թուրան բեյի՝ «կրոնը խղճի գործ է, հայը թող գնա եկեղեցի, իսկ թուրքը՝ մզկիթ: Կրոնը ինչ գործ ունի մեր ընտանեկան կապի հետ»<sup>45</sup>: Այնուամենայնիվ, թրքացման ամենից շատ ենթարկվում էին կանայք, որոնց էլ Հալաջյանը փորձում էր ամեն գնով ազատել հարեմներից՝ հուսալով, որ կկարողանա ստանալ Խորհրդային Հայաստանի աջակցությունն այս հարցում. խիստ բարդ մի խնդիր<sup>46</sup>:

40 Նույն տեղում, 129: Խնդրի քննարկումը տե՛ս նաև Ekmekçioğlu, “A Climate for Abduction.”

41 Բրգնիկը դեռ 17-րդ դարից հայտնի էր կաթոլիկ հայ բնակչությամբ: Բրգնիկից էր հայտնի նահատակ, կաթոլիկ Միքայել Սեբաստացին: Տե՛ս Նոննա Սարգսյան, «Միքայել Սեբաստացի (Բրգնիկցի) նոր նահատակը», *Բանբեր Մատենադարանի* 24 (2017), 189-208:

42 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 330:

43 Նույն տեղում, 651:

44 Այս մասին տե՛ս Emese Muntan, “Negotiating Catholic Reform: Global Catholicism and Its Local Agents in Northern Ottoman Rumeli (1570s-1680s),” (PhD diss., Central European University, 2021), 174-179.

45 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 181:

46 Հալաջյանը հսկայական ջանքեր է ներդրել գավառահայերի վիճակագրությունը կազմելու և Խորհրդային Հայաստանի իշխանություններին ներկայացնելու համար, ինչում վերջինիս օգնել են

## Արբազան տարածքի վերափոխում

Թրքացման էին ենթարկվում նաև արբազան տարածքները: Թեև հանրապետական Թուրքիայում իսլամը ճանաչվեց երկրի պաշտոնական կրոն, աշխարհիկացման գործընթացի անքակտելի մասը և մշակութային ռեֆորմի կարևոր բաղադրիչներից էր կրոնական խորհրդանիշների փոխարինումը<sup>47</sup>: Նախկինում՝ Օսմանյան շրջանում, մեծ թափով էր ընթանում քրիստոնյաների արբազան տարածքների՝ հատկապես եկեղեցիների մահմեդականացումը մի քանի պատճառով: Նախ, մզկիթների քանակը բավարար չէր նախկին Բյուզանդիայի տարածքում, և նորերը կառուցելու փոխարեն մահմեդական վարչակազմը գերադասում էր արդեն կառուցված շինությունների բռնագավթումը՝ տվյալ թաղամասը *սուննի* մահմեդականներով, այդ թվում՝ նորադարձներով բնակեցնելու<sup>48</sup> և մահմեդական բնակչության սուննիթիզացման համար<sup>49</sup>: Երկրորդ, արբազան տարածքի իսլամացումը կամ վերջինիս սպառնալիքը հավելյալ լծակ էր *դիմիմի*՝ ոչ մահմեդական հարկատու ժողովուրդների կառավարման համար, սակայն լինում էին դեպքեր, երբ հնարավոր էր կամ բողոքելով, կամ կաշառքով եկեղեցին հետ ստանալ<sup>50</sup>: Երբեմն եկեղեցիների առգրավումը կամ փակումը պայմանավորված էր լինում հենց քրիստոնյա ազգերի՝ տվյալ եկեղեցու պատկանելության շուրջ բորբոքվող վեճերով, որոնք կարող էին հավելյալ խժժությունների տեղիք տալ կայսրությունում:

Հալաջյանի օրագրության գրության ժամանակներում՝ 1924-1928 թթ., արբազան վայրերի իսլամացումն սկսում է զիջել իր դիրքերը դրանց աշխարհիկացմանն ու ապարբազանացմանը (անգլ. *desacralization*): Աշխարհիկացման են ենթարկվում ոչ միայն եկեղեցիները, այլև մզկիթները: Այսպես, 1928 թ. Հալաջյանը նկարագրում է, թե ինչպես էին քանդում Սերաստիայի մզկիթներից մեկը՝ Գուրչունլու Յեշիլ մզկիթը (*Gürcünlü Yeşil Cami*)՝ Մուստաֆա Քեմալ փաշայի անվան հրապարակը կառուցելու և նրա արձանը կենտրոնում կանգնեցնելու համար<sup>51</sup>: Հալաջյանն անդրադառնում է

---

բազմաթիվ ծաղյալ հայուհիներ, որոնցից շատերն ամուսնացած էին թուրք պաշտոնյաների հետ: Այս վիճակագրությունը Թափառականը տպագրել է «Դեպի կախաղանի» վերջին էջերին (854-877):

47 Zürcher, *Turkey*, 192-193.

48 Այս մասին տե՛ս Marc David Baer, “The Great Fire of 1660 and the Islamization of Christian and Jewish Space in Istanbul,” *International Journal of Middle East Studies* 36, no. 2 (2004): 159-181.

49 Օսմանյան կայսրության սուննիթիզացման քաղաքականության մասին տե՛ս Derin Terzioğlu, “How to Conceptualize Ottoman Sunnitization: A Historiographical Discussion,” *Turcica* 44 (2012–2013): 301–338.

50 Այսպիսի մի շարք պատմություններ է ներկայացնում Երեմիա Քյոմյուրճյանը՝ խոսելով ոչ միայն հայոց եկեղեցիների, օրինակ՝ Բուրսայի եկեղեցիներից մեկի թալանման, այլև հույների և այլ քրիստոնյաների եկեղեցիների մասին: Օրինակ՝ պատմում է իր լսածը Մահմետի Ամբակումից, թե ինչպես էին մահմեդականները բռնագրավել հույների եկեղեցիներից մեկը, վերածել մզկիթի և մինարեթ կառուցել, ավելի ուշ հույները կարողացել էին կաշառքի միջոցով հետ վերցնել եկեղեցին և քանդել մինարեթը: Որոշ ժամանակ անց թուրքերը նորից են բռնագրավում նույն եկեղեցին: Քյոմյուրճյան, *Դիրք պատմաբանությունաց*:

51 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 658:

նաև մեդրեսեների (թուրք. medrese) (կրոնական իրավունքի դպրոցներ) և դերվիշական թեքքենեների (թուրք. tekke) փակմանը<sup>52</sup>: 1925 թ. հունիսին՝ Շեյխ Սայիդի մահապատժից հետո, նոյեմբերի 30-ին ընդունված 677 օրենքով Աթաթուրքը հրամայում է փակել դերվիշական թեքքենեներն ու թարիքաթները, քանի որ «լուսավորչության ու գիտության դարում» Թուրքիան «երբեք չէր կարող լինել շեյխների, դերվիշների, աշակերտների և հետևորդների» երկիր<sup>53</sup>: Աթաթուրքը ոչ միայն հետադիմական էր համարում դերվիշական ինստիտուտը և մահմեդական ուլեման, այլև լուրջ խոչընդոտ էր տեսնում՝ պայմանավորված վերջիններիս՝ հասարակության մեջ ունեցած բարձր դերով, կապերով և մահմեդական հասարակության վրա ունեցած մեծ ազդեցությամբ<sup>54</sup>:

Քեմալի վարած կրոնական քաղաքականությունը մեծ դժգոհություն էր առաջացնում մահմեդական բնակչության մեջ: Այսպես, Մալաթիա-Մերաստիա ճանապարհին, Հասան Չելեբի գյուղում, Հալաջանի և թուրք քաղաքական ամբաստանյալ խմբագիրների միջև զրույց է սկսվում քրդական ապստամբության վերաբերյալ, որի ընթացքում բոլորն անխտիր բողոքում են քեմալական իշխանության վարած աշխարհիկացման քաղաքականությունից: Երբ քաղբանտարկյալ Աբդուլ Ռեզաքն արդարացնում է դա «հայրենիքի շահի» պահանջով, ներկաները պոռթկում են. «Մի՛ ասեք հայրենիքի շահը, այլ Քեմալի ու Ըամթեի շահը և նրանց «քեյֆը» այդպես էր պահանջում: Հայրենիքի շահի ու քաղաքականության պահանջով էր, որ թեքքենեները, մեդրեսեները փակվեցին, մեր հարեմների սրբությունը աղարտվեց, պաշտոնյաների ու ուսուցիչների գլխին եվրոպական գլխարկ դրվեց, մեկ ոսկու փոխարեն 50 ոսկի տուրքերի ավելացում եղավ, չերքեզները կոտորվեցին և քրդերը, որ տարիներ ի վեր ծառայել են նույն դրոշին ու արյուն թափել հայրենիքի պաշտպանության համար, ջարդվեցին, թալանվեցին ու դեռ շարունակվում են գնդակահարությունները և կախաղանները»<sup>55</sup>: Թուրքերն ու քրդերը բողոքում էին, թե՛ «մինչ օրս վախենում էինք, թե գյավուրը կգրավի մեր երկիրը և ոտնակոխ կանի իսլամական սրբությունները՝ Ղուրանը, մզկիթը, հարեմը: Այսօր, երբ կառավարությունը պաշտոնապես կացնահարում է այդ սրբություններն արմատից, այլևս ի՞նչ վախ ունենք գյավուրից, թող գա ու գրավի մեր երկիրը»<sup>56</sup>: Շատերը խոսակցություններում փնտվում էին Գազի փաշային, թե՛ «երեկ ուստիկաններով սրճարաններից, փողոցներից մարդ հավաքող և մզկիթ դրկող Քեմալը, իր դիրքն ամրացնելուց հետո, այսօր ոչ միայն այդ մզկիթներն է քանդում, այլև աղոթատեղիները պոռնկանոց է դարձնում»<sup>57</sup>:

Եկեղեցիները և մզկիթները վերածվում էին բանտերի և զինանոցների: Այդպիսի

52 Նույն տեղում, 290-295:

53 Üngör, *The Making of Modern Turkey*, 132-133.

54 Zürcher, *Turkey*, 191-192. Ավելի մանրամասն դերվիշական թեքքենեների փակման վերաբերյալ տե՛ս John Robert Barnes, “A Short Note on the Dissolution of the Dervish Orders in Turkey,” *The Muslim World* 64, no. 1 (2007): 33-39.

55 Հալաջան, *Դեսի կախաղան*, 291:

56 Նույն տեղում:

57 Նույն տեղում, 452:



մի եկեղեցի-բանտում էր (թիվ 1 բանտը) Հալաջյանն սպասում Անկախության ատյանի առջև կանգնելու իր օրվան, որը 1908-1912 թթ. կառուցվել էր հայ բողոքականների կողմից և գտնվում էր Մեզրեից Խարբերդ տանող ճանապարհի վրա<sup>58</sup>։ Եկեղեցին քեմալական Թուրքիայի վերնախավի կողմից ընկալվում էր որպես ազգապահպան ինստիտուտ, և ոչ լոկ սրբազան վայր։ Եկեղեցին փակելով՝ փակում էին նաև վարժարանը, ինչն ստիպում էր հայ մանուկներին հաճախել թրքական վարժարան, մոռանալ հայ գիրն ու լեզուն, արդյունքում՝ սահուն կերպով թրքանալ։ Պատրիարքարանը չէր կարողանում, կամ, ինչպես Հալաջյանն է գրում, չէր ցանկանում պատշաճ կերպով միջամտել գավառահայության խնդիրները լուծելուն<sup>59</sup>, և վիճակը շարունակում էր մնալ իրապես ողբալի։

Ստեղծված իրավիճակում ջնջվում էին թե՛ դավանական, թե՛ կրոնական սահմանները։ Թափառականի հաղորդմամբ, օրինակ, Բալուում եկեղեցի կամ վարժարան չկար, և ոչ էլ գյուղի քահանա՝ «մեռել թաղելու համար։ Ամեն հայ մեռելաթաղ էր իր համար»<sup>60</sup>։ Դիարբեքիում հայերի թաղումները կատարում էին ասորի վարդապետները, քանի որ հայերը «ո՛չ ժամ, ո՛չ եկեղեցի» ունեին, և տղաները թուրքի դպրոց էին գնում<sup>61</sup>։ Ս. Կիրակոս եկեղեցին մատնված էր պարապուրդի, զանգակատունն ամբողջությամբ քանդված էր<sup>62</sup>։ Մալաթիայում քահանա և եկեղեցի չկար, հայերի թաղումները կատարում էր աշխարհական Գրիգոր Էֆենդին, կամ էլ թաղի իմամը<sup>63</sup>։ Սեբաստիայի՝ զգալի թվաքանակով հայությունը ո՛չ եկեղեցի ուներ, ո՛չ վարժարան։ Եկեղեցին (Սուրբ Նշան վանքի եկեղեցիները) գինվորական մթերանոցի էր վերածվել<sup>64</sup>, իսկ վարժարանի շենքն այրել էին։ Թուրքերն անգամ խոստովանում էին, թե մոռացել են, որ քաղաքում հայություն կա, որովհետև վաղուց է, ինչ չէին լսել եկեղեցիների զանգերի ձայնը<sup>65</sup>։

Թափառականը եկեղեցիների պահպանման, ինչպես նաև հայությանը թրքացու-

58 Դժվար է ասել, թե արդյոք սա նույն եկեղեցին է, որը 1973 թ. գրանցված է որպես «ասորական պատմական եկեղեցի» Դիարբեքիի մշակույթի և բնական ժառանգության պահպանության ցուցակում։ 2015 թ. դրությամբ այն օգտագործվում էր որպես ավտոկայանատեղի։ Տե՛ս «Խարբերդի հայկական եկեղեցին կվերածվի հյուրանոցի», ՊանԱրմենիան <https://www.panarmenian.net/arm/news/191587/>, դիտվել է 10.11.2021, նաև Տաթևիկ Սարգսյան, «Պատմական Խարբերդի հայկական եկեղեցու ճակատագիրը՝ «Դոդան»-ի ուշադրության կենտրոնում» <https://www.azatutyun.am/a/29610247.html>, դիտվել է 10.11.2021։

59 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 666։

60 Նույն տեղում, 861։

61 Նույն տեղում, 157-158։

62 Դիարբեքիի Ս. Կարապետ եկեղեցին այստեղ կանգուն մնացած միակ Հայ առաքելական եկեղեցին է։ 2019 թ. սկսվել են եկեղեցու վերանորոգման աշխատանքները։ 2022 թ. հունվարին Սուրբ Զատիկի Պատարագ է մատուցվելու այս եկեղեցում։ «Տիգրանակերտի Ս. Կիրակոս պատմական եկեղեցին վերաբացվելու է Զատիկին», <https://www.aliqmedia.am/2021/11/02/35756/>, դիտվել է 12.11.2021։

63 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 289։

64 Երկար ժամանակ Ս. Նշան վանքի տեղում թուրքական ռազմակայան էր։ Վանքի եկեղեցիներից մեկը 2019 թ. հանձնվել է վերանորոգման և գործելու է որպես թանգարան։

65 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 454։

մից հետո պահելու գրավական էր համարում տեղի քահանաներին: Այն քահանաները, որոնք քաջություն էին ունենում մնալու և պայքարելու եկեղեցու և հայության համար, կարողանում էին իրենց շուրջը համախմբել հայերին և թրքացումից փրկել գավառահայության մի մասնիկ: Այսպես, քանի դեռ Սեբաստիայում էր Սարգիս սրբազանը, եկեղեցին և ազգային կալվածքները չէին կարողանում առգրավել: Նրա մեկնումից հետո տեղի քահանան՝ տեր Սիոնը, վախենում էր անգամ կրոնական հազուստ կրել, և չէր կարող միջնորդել՝ սեբաստահայերի՝ այդքան փափագած դպրոցը բացելու համար: Հաճախ թրքացած հայ կանայք չէին հայտնում իրենց ինքնությունը Սիոն քահանային, քանի որ վերջինս չէր կարողանում պաշտպանել հայերին: Այս պայմաններում Սեբաստիայում հայերի հարաբերական պաշտպանությունն իր վրա էր վերցրել մեծահարուստ, առերես թրքացած մի հայ՝ ճաշարանապետ Դուրսուն էֆենդին, որը չէր կարողանում գաղթել, քանի որ պատասխանատվություն էր կրում տեղի հայ բնակիչների համար, և փորձում էր կազմակերպել նրանց մի փոքր մասի արտագաղթը (արդեն կազմակերպել էր 500 հայի գաղթը Հալեպ)<sup>66</sup>:

Սեբաստիայի քահանայի հակապատկերն էր Արաբկիրի տեր Գուրգենը, որին Հալաջյանը բնորոշում է որպես «քաջարի կրոնավոր», ով, ամեն վտանգ զանց առնելով, ոչ միայն մնում էր իր ժողովրդի մոտ, այլև հաջողում է վարժարան բացել և եկեղեցին գրավումից ազատել:

Մյուս օրինակելի քահանան, որին հիշում է Թափառականը, Կեսարիայում առաջնորդական փոխանորդ տեր Սերովքե Բուրմանյանն էր, որը ծաղկուն էր պահում կեսարիահայությունը՝ տարիներ շարունակ բաց պահելով եկեղեցին, օժանդակելով վանքին, որբանոցին և քաղաքի երկու վարժարաններին: Փախուստից հետո Հալաջյանն այցելում է Կեսարիայի տեր հորը՝ իր շնորհակալությունը հայտնելու հայերի բեկորները պահպանելու քաջության համար: Այս առիթով Հալաջյանը գրում է. «Վերջին տարիների փորձը ցույց է տվել, թե ինչ մեծ դեր կարող է կատարել մի Առաջնորդ կամ նույնիսկ գյուղական մի Տեր Պապա, ամեն պաշտպանությունից զուրկ ճղակոտոր ժողովրդի հուսալքված գավակների հանդեպ, եթե հովիվը, Առաջնորդը կամ ղեկավարը պատրաստակամություն ցուցաբերի հանուն իր ժողովրդի փրկությանը զոհաբերվելու: Ահա՛ հեռավոր Արաբկիրը՝ իր Տեր Գուրգենով, ահա՛ Կեսարիան՝ իր անվիատ փոխանորդով: Երկուսն էլ օրինանք են ոչ միայն իրենց հարազատ քաղաքների, այլև ողջ Անատոլիայի հայության համար: Արաբկիրն ու Կեսարիան երկու փայլող ջահեր են գավառահայության մթազնած հորիզոնին և խավարամած երկնականարի վրա: Մարեք այդ երկու ջահերը՝ կմարի և գավառահայությունը: Ժողովուրդը հուսահատության մեջ է և կառչելու շյուղ է փնտրում, և այդ երկու կենտրոնները փրկության կայաններ են այս դժբախտ ժողովրդի համար»<sup>67</sup>:

Երկար ջանքերից ու մտորումներից հետո Թափառականն, այնուամենայնիվ, գալիս է այն եզրակացության, որ գավառահայը չի կարող ապրել Թուրքիայում: Հայերի նկատմամբ կիրառվող ամենախիստ ճնշումները, տեղ-տեղ սպանության դեպքերը և

66 Հալաջյան, *Դեպի կախաղան*, 296:

67 Նույն տեղում, 547:

զանգվածային թրքացնելու պետական ձեռնարկը բացորոշ ապացուցում են, որ «թուրք կառավարությունը որոշել է հայ անունը սրբել Թրքահայաստանից»<sup>68</sup>: Փրկության միակ ճանապարհը գաղթելն է, բայց ո՞ր: «Ժողովուրդը - գրում է Թափառականը - հավատում է, որ հայրենիք ունի և հպարտությամբ գոռում է՝ “Հայաստան պիտի երթամ”»<sup>69</sup>, սակայն, դատելով Թափառականի հիասթափությունից, Խորհրդային Հայաստանը հակված չէր դռները բացելու գաղթական հայերի առջև<sup>70</sup>:

## GEVORG HALAJYAN'S DIARY “TO THE GALLOWS” AS A PRIMARY SOURCE ON TURKIFIED ARMENIANS DURING AND AFTER THE ARMENIAN GENOCIDE

*Anna M. Ohanjanyan*  
*Matenadaran, Armenia*

### SUMMARY

Gevorg Halajyan's (Taparakan) diary-memoir was published in the USA yet in 1932, but it has not been decently studied and systematized. This extensive work is an invaluable source about the Turkification and assimilation of Armenians in several provinces of Western Armenia in 1924-1928. To stand before the Independence Tribunal of Kemalist Turkey, Halajyan had to travel to Adana, Diyarbakir, Kharberd, Malatya, to be eventually imprisoned in the jail of Sebastia. Halajyan wrote down whatever he eye-witnessed and heard of about the conversion and assimilation of the Armenians in the provinces. Later he escaped from prison to Bulgaria and then to America.

This article analyzes the data Halajyan left about Turkified Armenians, as well as discusses the issue of desacralization of churches and chapels during the Armenian Genocide. It also singles out Turkification cases, forms, and mechanisms to compare them with the mechanisms of Islamization in the Ottoman period to reveal not only the similarities but, first of all, the differences, particularly, due to the concept substitution.

**Key words:** Turkification mechanisms, Islamization, conversion, the rebellion of Sheikh Said, Istiklal, Armenian Genocide.

---

68 Նույն տեղում, 546.

69 Նույն տեղում, 509:

70 Նույն տեղում, 547

## ДНЕВНИК ГЕВОРГА АЛАДЖЯНА “НА ВИСЕЛИЦУ” КАК ПЕРВОИСТОЧНИК О ТЮРКИЗИРОВАННЫХ АРМЯНАХ ВО ВРЕМЯ И ПОСЛЕ ГЕНОЦИДА АРМЯН

Анна М. Оганджян  
Матенадаран, Армения

### РЕЗЮМЕ

Дневник-мемуар Геворга Аладжяна (Тапаракан) был издан в США еще в 1932 году, но не был должным образом изучен и систематизирован. Этот обширный труд является бесценным источником о тюркизации и ассимиляции армян в нескольких провинциях Западной Армении в 1924-1928 годах. Чтобы предстать перед Трибуналом Независимости кемалистской Турции, Аладжян должен был отправиться в Адану, Тигранакерт или Диярбакыр, Харберд, Малатию, чтобы в конечном итоге оказаться в тюрьме Себастии. Аладжян записал все, что видел и слышал об обращении и ассимиляции армян в провинциях. Позже он сбежал из тюрьмы в Болгарию, а затем в Америку.

В статье вкратце проанализированы данные, оставленные Аладжяном о тюркизации армян, десаκραлизация церквей и часовен во время Геноцида армян. Выделены случаи, формы и механизмы тюркизации, чтобы сравнить их с механизмами исламизации в период Османской империи с целью выявления не только сходств, но, прежде всего, различий, в частности, из-за подмены понятий.

**Ключевые слова:** механизмы тюркизирования, исламизация, обращение в ислам, восстание шейха Саида, Истикляль, Геноцид армян.

### REFERENCES

«Գևորգ Հալաջյանի՝ “Դեպի կախաղան” բանտային օրագիրը» [Gevorg Halajyan's Jail Diary “To the Gallows”], <https://www.aravot.am/2015/03/05/548207/>;

Գևորգ Հալաջյան, *Դեպի Կախաղան*, Մաս 1 [Gevorg Halajyan, “To the Gallows”, Part I], <https://www.youtube.com/watch?v=qx9Ojl9qWuc>;

«Խարբերդի հայկական եկեղեցին կվերածվի հյուրանոցի» [The Armenian Church in Kharberd will be Turned into a Hotel], <https://www.panarmenian.net/arm/news/191587/>;

««Վերելք» ակումբի տեսաշարը» [The Video Series of “Verelk” Club], <https://livenews.am/press/tag/qևորգ-հալաջյան/>;

«Տիգրանակերտի Ս. Կիրակոս պատմական եկեղեցին վերաբացվելու է Զատիկին» [Saint Kirakos Historic Church of Tigranakert will be Reopened on the Easter Feast], <https://www.aliqmedia.am/2021/11/02/35756/>;

Halajyan, Gevorg. «Հօրս տունը» [My Father's Home]. *Hayreniq* 121, no. 1, (1932): 35;

Halajyan, Gevorg. *Դեպի կախաղան* [To the Gallows]. Boston: Hayreniq press, 1932;

Halajyan, Gevorg. *Դերսիմի ազգագրական նյութերը* (մեքենագիր) [Ethnographic Materials Concerning Dersim (typewritten)]. Archive of the Institute of Archeology and Ethnography of NAS RA, Folder nr. 5a (unpublished);

Halajyan, Gevorg. *Դերսիմի հայերի ազգագրությունը. Հայ ազգագրություն և բանասիրություն: Նյութեր և ուսումնասիրություններ*, հ. 5 [The Ethnography of the Armenians of Dersim. Armenian Ethnography and Folklore: Materials and Studies, vol. 5]. Yerevan: Arm SSR Academy Sciences press, 1973;

Nshanean, Hakob (ed.). *Ժամանակագրություն* [Chronology]. Jerusalem: St. James' press., 1915;

Pepanyan, Artsrun (ed.). *Դեպի կախաղան* [To the Gallows]. Yerevan, 2014;

Qyomyurchean, Yeremia Ch'elebi. *Գիրք պատմաբանությանը* [Book of Historiographies]. Mekhitarist Library of Venice, MS 509 (unpublished);

Safaryan, Aleqsandr. *Զիյա Գյոքալիք և Թյուրքականության հիմունքները* [Ziya Gökalp and the Basics of Turkism]. Yerevan: YSU Press, 2012;

Sargsyan, Nonna. «Միքայել Սեբաստացի (Բրգնիկ) նոր նահատակը» [The Neo-Martyr Miqayel of Sebastia (Brgnik)]. *Banber Matenadarani* 24 (2017): 189-208;

Sargsyan, Tat'evik. «Պատմական Խարբերդի հայկական եկեղեցու ճակատագիրը՝ «Դողան»-ի ուշադրության կենտրոնում» [The Destiny of Kharberd's Historic Armenian Church at "Doghan's" Attention], <https://www.azatutyun.am/a/29610247.html>.

### Հեղինակի մասին

#### About the Author

#### Об авторе

**Աննա Մ. Օհանջանյան**, պատմ. գիտ. թեկն., դոց., աստվածաբան, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարան»-ի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ պատմական աստվածաբանություն, կրոնագիտություն:

Էլ. փոստի հասցե՝ [annaohanjanyan@gmail.com](mailto:annaohanjanyan@gmail.com)

**Anna M. Ohanjanyan**, PhD in History, Associate Professor, Senior researcher at the Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots "Matenadaran."

Research fields – Historical Theology, Religious Studies.

E-mail: [annaohanjanyan@gmail.com](mailto:annaohanjanyan@gmail.com)

**Анна М. Оганджаниян**, канд. ист. наук, доцент, исследователь богословия, старший

*Աննա Մ. Օհանյան*

научный сотрудник научно-исследовательского института древних рукописей имени  
Месропа Маштоца “Матенадаран.”

Область исследований – историческое богословие, религиоведение.

Эл. почта: annaohanjanyan@gmail.com

## ՀԱԼԷՊԻ ՄԷՋ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ-ԱՄՔԱՍՏԱՆԱԳՐԵՐԸ ԵՒ ՍԱՍՈՒՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ (1919 Թ.)<sup>1</sup>

Միհրան Ա. Մինասեան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Յօդուածը բաժնուած է երկու մասի. առաջինը կը խօսի 1919 թ. Փարիզի հաշտութեան վե-  
հաժողովին ներկայացնելու նպատակով Հալէպի հայրենակցական միութիւններուն կամ  
խմբակցութիւններուն պատրաստած Ամբաստանագիր-Տեղեկագրերուն ստեղծման մասին,  
որոնցմէ իւրաքանչիւրը շրջանի մը հայոց կոտորածին ամփոփ պատմութիւնն է: Ընդհանուր  
գիծերով տրուած է անոնց փոշափած նիւթերուն ցանկը եւ առանձին-առանձին խօսուած է  
իւրաքանչիւր տեղեկագրի մասին: Հետաքրքրական է, որ տեղեկագրերուն մէջ մեծ բաժին  
յատկացուած է իւրաքանչիւր շրջանի թուրք ոճրագործներու անուանացանկերուն եւ հայոց կրած  
նիւթական կորուստներուն:

Յօդուածին երկրորդ մասով հրատարակութեան տրուած է յիշեալ տեղեկագրերէն Սասուն  
գաւառի տեղեկագիրը, ուր կան աշխարհագրական ընդհանուր տեղեկութիւններ եւ կարեւոր  
մանրամասնութիւններ Սասնոյ հայոց ընկերային կեանքին մասին՝ Իշխանաց եւ Ծերոց  
ժողովներ, հայ-քիւրտ յարաբերութիւններ, Սասնոյ հայութեան վիճակը 1894-96 եւ 1914-16  
թուականներուն եւ ամփոփ ցուցակ մը ջարդարարներու: Տեղեկագրին երկրորդ մասով տրուած  
են Սասնոյ վեց գաւառակներու՝ Տալտրիկի, Բուսանքի, Հաթնի-Մարաթուկի, Կուսգետի, Բոնա-  
շէն-Խութի եւ Խիանքի գիւղացուցակներն ու մարդահամարները, ուր յիշուած են 203 գիւղեր,  
իւրաքանչիւրը իր հայ բնակչութեան տուններու եւ անձերու թիւերով:

**Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանութիւն, Հալէպ, Միջ-Գաւառային հայրենակցական մի-  
ութիւն, Արամ Անտոնեան, փրոֆ. Հայկազուն Արամեան, Կարապետ Գաբրիէան, Հայոց ցեղա-  
սպանութեան Տեղեկագիր-Ամբաստանագրեր, Արեւմտեան Հայաստան, Կիլիկիա, Փոքր Ասիա,  
Սասնոյ գաւառակ, Վերսայի հաշտութեան վեհաժողով:

Հոդվածը ներկայացվել է 16.04.2021: Ընդունվել է տպագրության 15.09.2021:

The article was submitted on 16.04.2021 and accepted for publication on 15.09.2021.

Статья поступила 16.04.2021 и была принята к публикации 15.09.2021.

**Ինչպէս հղել՝** Միհրան Ա. Մինասեան, «Հալէպի մէջ պատրաստուած Հայոց ցեղասպանութեան  
տեղեկագիր-ամբաստանագրերը եւ Սասունի տեղեկագիրը (1919 թ.)», *Յեղասպանագիտական  
հանդես* 9, no. 2 (2021), 93-126:

**How to cite:** Mihran A. Minassian, “The Indictment Documents on the Armenian Genocide Written  
in Aleppo and the Sassoun Document (1919),” *Ts’eghaspanagitakan handes* 9, no. 1 (2021): 93-126.

**Как сослаться:** Мигран А. Минасян, “Созданные в Алеппо обвинительные справочники Гено-  
цида армян и справочник Сасуна (1919 г.),” *Тсехаспанагитакан андес* 9, no. 1 (2021): 93-126.

1 Հոդվածը զեկույցի տեսքով ամփոփ ներկայացվել է «Հայոց ցեղասպանության, հայկական  
պահանջատիրության և արցախյան հիմնահարցի խաչմերուկներում. հետախաչաց գնահատումներ  
և հեռանկարներ» միջազգային գիտաժողովի ժամանակ (2021 թ. սեպտեմբերի 16-18, Երևան, ՀՅԺԻ  
հիմնադրամ, ՀՀ ԳԱԱ):



\* \* \*

Առաջին աշխարհամարտի Զինադադարի յայտարարութենէն անմիջապէս ետք, Դեկտ. 1918-ին, Հալէպի կարգ մը ազգային մարմիններ եւ անհատ մտաւորականներ գաղափարը յղացած են Հայոց ցեղասպանութեան մասին պատմական տեղեկագիր մը պատրաստել՝ յղելու համար զայն մօտ ապագային Փարիզ-Վերսայի մէջ գումարուելիք Հաշտութեան վեհաժողովին:

Այս գործին առաջին արձագանգը կը գտնենք Արամ Անտոնեանի՝ տեղւոյն «Հայ Զայն» թերթի 11 Դեկտ. 1918-ի թիւին մէջ լոյս ընծայած «Կոչ Հալէպ գտնուող հայ գաղթականներուն» խորագրով յայտարարութեան մէջ, ուր ան դիմած է տեղւոյն արքութեաններուն՝ որպէսզի գրի առնեն ու իրեն յանձնեն ցեղասպանութեան օրերու իրենց յուշերն ու վկայութիւնները՝ հաշտութեան վեհաժողովին ներկայացուելիք տեղեկագրի պատրաստութեան ժամանակ օգտագործելու համար: Ան իր նպատակը ձեռնկերպած էր այսպէս՝ «Այս բոլոր ծանօթութիւնները հիմ պիտի կազմեն մասնաւոր տեղեկագրի մը որ պիտի մատուցուի Փարիզի հաշտութեան Քօնկրէին: Աւելորդ է ըսել թէ այդ տեղեկագիրը մեծագոյն զօրավիգը պիտի ըլլայ ամէն անոնց որոնք համաժողովին մէջ պիտի աշխատին Հայկական դատին եւ մեր ազգ. պահանջումներուն յաջողութեան»<sup>2</sup>:

Անտոնեան առանձին վեց կէտերով ընթերցողներուն յայտնած է զինք առաւել հետաքրքրող թեմաները, որոնք են՝ առաջին՝ գաւառական ջարդերու նկարագրութիւններ, նահատակներու թիւեր, ծանօթ անձնավորութեանց սպաննութիւններ, ջարդարարներու անուններ, կոտորածներու գլխաւոր վայրերու անցքերն ու Եփրատի գիծին վրայ պատահած դէպքերը: 2-րդ՝ արքայի ճանապարհին տեղի ունեցած բռնաբարութիւնները, առևանգումները, խոշտանգումներն ու անոնց հեղինակները: 3-րդ՝ համակեդրոնացման կայքերուն մէջ տեղի ունեցած սպաննութիւններն ու անոնց հեղինակները: 4-րդ՝ Բաս-Ուլ-Այնի եւ Տէր Զօրի կոտորածները, մանուկներու հրկիզումը ու այդ բոլորին դերակատարները: 5-րդ՝ անուանացանկը այն օտարադասներուն, որոնց մօտ հայ կիներ, աղջիկներ ու տղաք կը գտնուին, եւ վերջապէս 6-րդ՝ 1915-ին Հալէպէն Տիարպէքի դրկուելով ճանապարհին սպաննուած ծանօթ մտաւորականներու՝ Ակնունիի ու արքայակից ընկերներուն նահատակութեան մանրամասնութիւններն ու անոնց թաղման ստոյգ վայրերը:

Նշուած վեց կէտերէն ետք, Անտոնեան առաջարկած է դրկել նաեւ անունները այն հայերուն, որոնք արքութեաններու համակեդրոնացման կայքերուն կամ Հալէպի մէջ խոշտանգած կամ անբարեխիղճ վերաբերմունք ցուցաբերած են իրենց ազգակիցներուն նկատմամբ:

Անտոնեանի հրապարակած կոչին մէջ ըսուած է նաեւ թէ «...Պէտք չէ մոռնալ որ ժամանակ չկայ, Քօնկրէին բացումը մօտ է եւ թէ պէտք է փութալ»:

Անտոնեան նշած է նաեւ, որ բոլոր անոնք որոնք անկարող են իրենց յուշերը գրի առնելու, պարտին ներկայանալ Պարոն պանդոկի իր սենեակը ու ինք պատրաստ է թողթին յանձնելու անոնց պատմելիքները, ապա անելցուցած է, որ հաւաքուելիք բոլոր

2 «Հայ Զայն» օրաթերթ (Հալէպ), թիւ 20, 11 դեկտեմբեր 1918, 1:

նիւթերը իր կողմէ ֆրանսերէնի թարգմանուելով պիտի տրամադրուին Վեհաժողովին:

Անտոնեանի Կոչէն ետք, Հալէպի Հայկական միութիւնը եւս «Վերապրողներուն» վերնագրով յայտարարութեամբ մը հանդէս գալով յայտնած է. «կազմած ըլլալով «Տեղեկագրութեանց յատուկ դիւան»ը, որ պաշտօն ունի բռնագաղթի միջոցին կամ ետքը տեղի ունեցած խժոժութեանց, սպաննութեանց, առեւանգութեանց ու բռնաբարութեանց եւ ամեն կարգի դէպքերու տեղեկութիւնները հաւաքելու եւ զանոնք պէտք եղած տեղեր հասցնելու, կը խնդրուի բոլոր երկսեռ ազգայիններէ որ այդ կարգի իրենց անձնական դէպքեր եւ կամ վստահելի վկայութեանց վրայ հիմնուած տեղեկութիւնները, գրաւոր կամ բերանացի, հաճին հաղորդել նոյն դիւանին...»: Շարունակութեան մէջ շեշտուած է որ «դէպքերը թուականներով, տեղերու եւ չարագործներու անուններով նշանակելը մեծ առաւելութիւն կրնայ ունենալ»: Աւարտին նշուած են երեք անձեր, որոնց պէտք էր յանձնել վկայութիւնները՝ Յովսէփ Այվազեան, Ռուբէն Էճգաճեան եւ ԲԺ. [Խաչիկ] Պօղոսեան<sup>3</sup>:

Հաշտութեան վեհաժողովին ներկայացուելիք փաստաթուղթի մասին յաջորդ յիշատակութիւնը կատարուած է 14 Փետր. 1919-ին, Հալէպի Միջ-Գաւառային հայրենակցական միութեան ընդհանուր ժողովի ատենագրութեան մէջ, ուր ըսուած է հետեւեալը. «Հալէպի հայութեան կողմանէ Փարիզի Հայ միութեան համագումարին ներկայ գտնուելու համար ներկայացուցիչ մը ընտրուած եւ փութով ճամբայ հանելու համար պատրաստութիւններ տեսնուած էին, ազգին իրաւունքը պաշտպանել կարենալու համար հարկ էր ի ձեռին ունենալ ընդարձակ տեղեկագիր մը պատահած ջարդերու, ասոնց վայրերուն եւ ջարդարարներուն վերաբերութեամբ, առ այս ժողովս որոշեց իւրաքանչիւր մասնախումբի յանձնել դէպքերու նկարագրութիւն եւ ո՛ր տեղ, ինչ կերպով, որո՞նց կողմէ գործադրուած ըլլալու մասին տեղեկագրերու պատրաստութիւնը, աւելի գոհացուցիչ ըլլալու համար հարկ տեսաւ մանրամասնեալ քարտէսի մը, որուն պատրաստութիւնը յանձնուեցաւ Պ. Ի. Իսկիլիզեանի»<sup>4</sup>:

Այդ օրերու Հալէպի Միջ-Գաւառային միութեան պատասխանատուներէն Հայկազուն Արամեանի համաձայն, 20 Փետր. 1919-ին, Հալէպի մէջ տեղի ունեցած է 32 Միջ-Գաւառային միութիւններու (իմմա՝ հայրենակցական միութիւններու) համագումար մը, ուր որոշուած է պատրաստել ամբաստանագիր մը եւ յղել Միացեալ Նահանգներու նախագահ Ուուորտ Ուիլսոնին, եւ իւրաքանչիւր հայրենակցական միութիւն յանձն առած է պատրաստել «մանրամասն տեղեկագիր մը հայրենիքի տեղագրական, ազգագրական, պատմական, տեղահանումի, բնաջնջումի եւ ջարդարարներու մանրամասն տեղիքներով»<sup>5</sup>:

Այս տեղեկագրերուն մասին ունինք նաեւ հաղորդումները հմուտ բանասէր Կարապետ Գաբրիէանի, որ ուղղակիօրէն առնչուած էր սոյն աշխատանքին, ու իր տուած

3 «Հայ Զայն», թիւ 52, 12 յունուար 1919, 3:

4 Հալէպի Ազգային առաջնորդարանի արխիւ (յետ այսու՝ ՀԱԱ), Հալէպի Միջ-Գաւառային հայ միութեան թղթածրարներ, Միութեան 14 Փետր. 1919-ի ընդհանուր ժողովի նիստի ատենագրութիւն:

5 Մանուկ Գ. Ճիզմէճեան, *Խարքերդ եւ իր զաւակները* (Ֆրէզնոյ-Քալիֆորնիա, ա. հ., 1955), 303: Իր աղբիւրը՝ «Փրօֆ. Հայկ. Ա. Արամեան-Տեղեկագիր»:

տեղեկութիւնները պիտի համարել հաւաստի, մանաւանդ որ ինք յուշերը թուղթին յանձնած է տեղեկագրերու պատրաստութենէն ընդամէնը քանի մը տարի ետք:

Գաբիկեանի վկայութեամբ, Ազգ. Միութեան յանձնարարութեան վրայ, Միջ-Գաւառային միութիւնը պատրաստած է ընդարձակ ու մանրամասնեալ Տեղեկագիր մը, «կարելոք վիճակագրութիւններով պատկերելով իւրաքանչիւր գիւղի, քաղաքի, տեղի՝ Տարագրութենէ առաջ Հայ բնակչութեան թիւը, տեղահանումի համառօտ պատմութիւնը, վերապրող բեկորներու թիւը, Ազգային եւ անհատական վնասուց որքանութիւնը եւ այլ յարակից տեղեկութիւններ: Իբրեւ քարտուղար Միջ-Գաւառայինի, սոյն Տեղեկագրի պատրաստութիւնը իմ վրայ ծանրացաւ»: Գաբիկեան ապա աւելցուցած է, որ բժ. Ալթունեան, որ Տեղեկագիրը տարած էր Փարիզ, վերադարձին յայտնած է, որ Ազգային պատուիրակութիւնը «շատ գոհ» մնացած է իր կողմէ պատրաստուած այդ Տեղեկագրէն<sup>6</sup>:

Այս Տեղեկագրին մէջ ներկայացուած թեմաները գրեթէ նոյնն են Միջ-Գաւառային հայրենակցական միութեան նախաձեռնութեամբ պատրաստուած տեղեկագրերուն հարցաշարին հետ, որուն պիտի անդրադառնանք աւելի վար: Ըստ երեւոյթին, տեղեկագրերուն հիման վրայ պատրաստուած պիտի ըլլայ այս ընդհանուր տեղեկագիրը, որ միւս բոլոր տեղեկագրերուն ամփոփում-խմբագրումը պիտի համարել: Արդէն Գաբիկեանի ձեռքով ընդօրինակուած Քղիի տեղեկագրի ամփոփ տարբերակի աւարտին կայ այսպիսի ծանօթութիւն. «Քղիի տեղեկագրութիւնը գրեթէ համառօտել չուզեր, շատ ամփոփ է արդէն», ինչը կը խօսի կատարուած խմբագրման աշխատանքի մը մասին:

\* \* \*

Ծանօթ է, որ Հալէպը, 1919-ին դարձած էր արքութեան արեւմտահայութեան գլխաւոր հաւաքատեղին ու կը նմանէր խճանկարի մը, ուր նկատելի էին հայաշխարհի բոլոր գաւառներէն ու շրջաններէն հոն ապաստանած արքութեաններ: Ազգային առաջնորդարանի կողքին, տեղոյն արքութեաններուն կարիքները հոգալու համար ստեղծուած էր Հայ ազգային միութիւնը, որ ընդհանրապէս ունեցած է ներկայացուցչական հանգամանք եւ անոր մաս կազմած են մէկական հոգի հայ երեք համայնքներէն, ազգային երեք կուսակցութիւններէն եւ Բարեգործականէն:

Տեղոյն ազգային գործերուն ընթացքը հեշտացնելու համար, հիմնուած են նաեւ բազմաթիւ հայրենակցական միութիւններ, որոնցմէ իւրաքանչիւրը զբաղած է իր բնաշխարհի արքութեաններով ու եղած է կապը արտասահման գտնուող հայրենակիցներուն եւ արքութեաններուն միջեւ, եւ վերջապէս, հայրենակցական միութիւններուն աշխատանքը համակարգելու նպատակով ծնունդ առած է իր տեսակին մէջ եզակի կառոյց մը, որ կոչուած է «Միջ-Գաւառային հայրենակցական միութիւն» կամ՝ «Միջ-Գաւառային հայ միութիւն», որ իր կարգին եղած է կապը մէկ կողմէ Ազգային առաջնորդարանի ու Հայ ազգային միութեան, եւ միւս կողմէ

6 Գոմէկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), *Եղեռնապատում Փոքրն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ* (Պոսթըն, «Հայրենիք», հրատարակութիւն Ամերիկայի «Սեբաստիոյ Վերաշինութեան միութեան», 1924), 550:

բազմաթիւ հայրենակցական միութիւններուն ու անոնց հովանիին տակ գործող մասնախումբերուն:

Ուրեմն պատահական չէ որ հայաշխարհի տարբեր նահանգներուն կամ շրջաններուն վերաբերող ամբաստանագիր-տեղեկագրերուն պատրաստութեան գործը վստահուած ըլլայ նոյնինքն Միջ-Գաւառային հայրենակցական միութեան, կամ այդ գործը նախաձեռնուած ըլլայ թերեւս նոյնինքն այդ միութեան կողմէ<sup>7</sup>:

Ըստ երեւոյթին, պատրաստուելիք տեղեկագիրը առաւել վաւերական դարձնելու եւ նմանօրինակութիւնը պահպանելու համար, պատրաստուած է հարցարան մը, որ յղուած է տեղւոյն հայրենակցական միութիւններուն, որոնք ամբողջացնելով զայն՝ վերադարձուցած են Միջ-Գաւառայինին: Թէ՛ւ չենք տեսած յիշեալ հարցարանը, ու վստահ ալ չենք անոր գոյութենէն, բայց կարգ մը Տեղեկագրերու մէջ հանդիպող պատասխաններու յաջորդականութենէն ու զանոնք իրար հետ համեմատելէն կ'եզրակացնենք, որ ան իսկապէս գոյութիւն ունեցած է ու շօշափած է մօտաւորապէս հետեւեալ հարցերը.

1. Ծանօթութիւններ ներկայացուող վայրի աշխատակցական դիրքին մասին:
  2. Պատերազմէն առաջ անոր հայ ազգաբնակչութեան թուաքանակը:
  3. Աքտրի եւ կոտորածներու նկարագրութիւններ:
  4. Տեղւոյն հայութեան յարաբերութիւնները թուրքերու հետ 1915-էն առաջ:
  5. 1915-ի նահատակներուն մօտաւոր թիւը:
  6. Վերապրողներուն թիւն ու անոնց գտնուելու վայրերը:
  7. Նիւթական կորուստներու՝ անհատական եւ համայնքային, շարժուն եւ անշարժ գոյքերու մասին տեղեկութիւններ եւ վնասներու ընդհանուր գնահատում:
  8. Զարդարարներու եւ կոտորածներու պատասխանատուներու անուանացանկեր:
- Պատրաստուած Տեղեկագրերուն մէջ այս կէտը յաճախ եղած է ամէնէն ընդարձակն ու մանրամասնեալը: Այդպէս վարուած են գործնական նպատակներով, երեւի յոյս ունենալով, որ իրենց պատրաստած անուանացանկերը պիտի նպաստեն, որ ոճրագործները ձերբակալուին ու յանձնուին արդարութեան:

9. Առեւանգուած եւ թուրքերու կամ այլոց մօտ մնացած հայերուն մօտաւոր թիւն ու անոնց անուանացանկերը:

Բոլոր տեղեկագրերը չէ որ տուած են հարցարանին մէջ նշուած բոլոր կէտերուն պատասխանները, եւ յաճախ շրջանցուած են կարգ մը հարցումներ կամ անդրադարձած են միայն քանի մը կէտերու: Մարաշինն ու Սեւերէկինը, օրինակ, ունին միայն ոճրագործներու ցուցակներ եւ ոչ մէկ այլ տեղեկութիւն, եւայլն:

Պատրաստուած Տեղեկագրերէն մեզի ծանօթ են հետեւեալները.

1. ԱԳ ՇԷՀԻԲԻ ԳԱԻԱՌԱԿ (ԳՈՆԻԱՅԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻԻՆ)<sup>8</sup>: Պատրաստուած է 23 Փետր. 1919-ին, 8 էջ:

7 Ըստ Կարապետ Գաբիկեանի, Տեղեկագրին պատրաստութիւնը Հայ ազգային միութեան կողմէ թելադրուած էր Միջ-Գաւառային հայ միութեան: Տե՛ս Գուժկան Սեբաստիոյ, *Եղեռնապատում*, 550:

8 Այս եւ յաջորդ տեղեկագրերը կը պահուին Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի Նուպարեան մատենադարանի Արամ Անտոնեանի անուան ֆոնտին իրենց քաղաքներու յատուկ թղթածրարներուն մէջ,

Տեղւոյն հայութեան մասին ընդհանուր ծանօթութիւններէ ետք, Տեղեկագիրը ամփոփ ձեւով տուած է Ազ Շէհիրի հայոց արքայի պատմութիւնը: Քաղաքի 6000 հայերէն արքայութեան են 5300 հոգի, որոնցմէ մահացած են 4340, մինչ վերապրողներէն բազում կիներ ու աղջիկներ առեւանգուած են: Տեղեկագիրն մէջ տրուած է ազ շէհիրցիներու արքայի պատմութիւնը Ազ Շէհիրէն մինչեւ Օսմանիէ, Գաթմա, Պապ եւ հոսկ' սուրիական անապատ:

Առանձին գլուխով եւ «Գոնիա-Ազշէհիրի էշրաֆներուն ցանկը» վերնագրով կայ տեղի պետական պաշտօնեաներուն, «չէթէ»ներուն (հրոսակ) եւ հայոց կեղեքումներուն ու արքային մասնակից 87 ռճրագործներու անուանացանկ մը:

Տեղեկագիրն վաւերականութիւնը հաստատուած է 93 ազ շէհիրցի վերապրողներու ստորագրութեամբ:

2. ԱՄԱՆՈՍ: Վերնագիրն է «Ամանոս (այլ անուն) Հասանալէյլի եւ շրջակայ ուրն հայ գիւղերու համառօտ տեղեկագիրը»: Պատրաստուած է 22 Փետր. 1919-ին: Երեք էջանի ամփոփ տեղեկագիր մըն է, ուր նշուած է, որ 1915-էն առաջ Ամանոսը իր ուրն գիւղերով ունեցած է 750 հայ տուն, իսկ 1919-ին մնացած են միայն 100 կիսաւեր տուններ: Տրուած է նաեւ Ամանոսի հայոց նիւթական կորուստներուն ցանկը, որուն յաջորդած է Ամանոսի ու շրջակայ ուրն հայաբնակ գիւղերու կոտորածին պատասխանատու 72 ռճրագործներու անուանացանկ մը:

Այս Տեղեկագիրն հետ առկայ է նաեւ 20 Դեկտ. 1918-ին պատրաստուած 17 էջանի աւելի մանրամասն ֆրանսերէն այլ տեղեկագիր մը Ամանոսի հայոց տեղահանութեան ու կոտորածներուն մասին, ուր տրուած է անուանացանկը մօտ հարիւր ռճրագործներու:

3. ԱՅՆԹԱՊ: Վերնագիրն է «Այնթապու հայոց արտագաղթը»: Կը բաղկանայ 33 մեծադիր էջերէ:

Բաւական մանրամասն նկարագրած է Ցեղասպանութեան նախօրեակին Այնթապի հայոց վիճակը ու խօսած է բռնագրաւումներու, խուզարկութիւններու, ձերբակալութիւններու, բանտարկութիւններու եւ հոսկ' արքայի ու փճացումի մասին: Տեղեկագիրը Այնթապէն արքայութեան հայոց թիւը գնահատած է 32000՝ ըստ «կառավարութեան պաշտօնական տոմարի», որմէ վերապրելով Սուրիոյ զանազան շրջաններն ու Հալէպ ապաստանած են 12.000 հոգի, իսկ մնացեալ 20000-ը փճացած են: Այնթապի հայոց նիւթական կորուստին համար ըսուած է, որ ան «միլիոններու կը հասնի, որուն մանրամասնութիւնները ի պահանջել հարկին կրնանք ներկայացնել»:

«Կառավարական պաշտօնեաներն եւ կրօնական պետերը» եւ «Իթթիհատ թէրագգրի անդամները եւ քաղաքին ջոջերը» ենթավերնագրերով, 13 էջերու վրայ տրուած է անուանացանկը Այնթապի հայութեան արքային ու կողոպուտին մասնակից թուրքներուն, ուր յիշուած է անոնցմէ իւրաքանչիւրին պաշտօնը: Առաջին ցուցակը ունի 63, իսկ երկրորդը՝ 269 անուն, ընդամենը 332 անուն:

4. ԱՆԿԻԻԻԱ (ԱՆԳԱՐԱ): Վերնագիրն է «Angora. Récit du massacre et de la déportation des Arméniens:» Պատրաստուած է 17 Փետր. 1919-ին, ֆրանսերէն լեզուով,

---

բացի այն քանի մը հատէն, որոնց պիտի անդրադառնանք աւելի վար:

երևի անոր համար, որ տեղոյն հայերը մեծամասնութեամբ թրքախօս էին: Կը բաղկանայ 11 էջէ: Մանրամասն ձեռով նկարագրած է Անկիւրիոյ հայութեան կոտորածը, ապա երկու էջով տուած է անուանացանկը տեղոյն ոճրագործներուն: Պատրաստուած է ութը անձերու կողմէ, որոնց չորսը՝ հայ կաթողիկ վարդապետներ:

5. ԲԱՂԷՇԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ: Առանձին վերնագիր չունի: Կը բաղկանայ 16 էջէ: Ամէնախնամուած տեղեկագրերէն մէկն է, որ կը սկսի շրջանի հայութեան թուաքանակի մասին ծանօթութիւններով, ապա արագ ակնարկ մը շրջանի վանքերուն ու անոնց անհատնում հարստութիւններուն վրայ, որուն յաջորդած է օսմանեան բանակ զինուորագրուած հայ երիտասարդներու ճակատագրին մասին ակնարկ մը, յետոյ Բաղէշի, Մշոյ ու Սղերդի «չէթէպաշիններ»-ու՝ հրոսակապետերու եւ շարքային ոճրագործներու ընդարձակ անուանացանկեր, կոտորածներու եւ ինքնապաշտպանական մարտերու մանրամասնութիւններ եւ մասնակի ու զանգուածային սպաննութիւններու նկարագրութիւններ, ապա ոճրագործներու այլ ցուցակներ՝ «Բաղէշի ջարդի գլխաւոր կազմակերպիչներ»-ու եւ «գլխաւոր ջարդարարներ»-ու, յաջորդաբար վեց եւ մէկուկէս էջանի:

Տեղեկագրին մէջ ըսուած է որ Բաղէշին ու շրջակայքէն առեւանգուած են աւելի քան երկու հազար հայուհիներ, ու երկու էջերու վրայ տրուած է անոնց մասնակի մէկ անուանացանկը, ուր յիշուած են նաեւ առեւանգիչներուն անունները:

Բաղէշի օրինակով, կան նաեւ Մուշի եւ Սղերդի ոճրագործներուն ընդարձակ անուանացանկերը, յաճախ իւրաքանչիւրին գործած արարքներուն յիշատակութեամբ:

Տեղեկագիրը Բաղէշի ու շրջանի հայութեան թիւը գնահատած է 255 հազար, որմէ առեւանգուած է 3020, սպաննուած՝ 220500, տեղահանուած՝ 6400 եւ վերապրած՝ 25280 հոգի: Վերջիները «ընդհանրապէս գաղթէն առաջ ռուսական բանակի կողմէն գրաւուած վայրերու բնակիչներէն են...»: Մարդկային կորուստներուն յաջորդած է նիւթական կորուստներու ցանկը, ուր նշուած են նաեւ վանքապատկան հաստատութիւններու մշակութային կորուստները եւս:

Տեղեկագրին տուեալներուն ճշգրտութիւնը, իրենց ստորագրութիւններով, հաստատած են հալէպաբնակ 95 բաղիշէցի վերապրողներ:

6. ԳԱՐԱՄԱՆԻ ԳԱՒԱՌԱԿ (ԳՈՆԻԱՅԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ): Վերնագիրն է «Գոնիա-Գարամանի գաղթականութիւնը»: Կը բաղկանայ 7 էջէ: «Ի դիմաց Գարամանի Գաղ. մասնախումբի» գայն պատրաստած եւ ստորագրած է Դ. Թաճրեան:

Մանրամասն նկարագրութիւնն է գարամանցիներու աքսորի պատմութեան, թէ ինչպէս աքսորէ գերծ մնալու համար վճարած են 400 ոսկի կաշառք, բայց անօգուտ, ապա նկարագրուած է անոնց աքսորի ուղին՝ Էրէլլի, Պոզանթի, Տարսոն, Օսմանիէ, Գաթմա, Հալէպ, Մէսքէնէ եւ Ապու Հարար: Բաւական մանրամասն նկարագրուած են Մէսքէնէի ու Տէր Զօրի հալածանքներն ու կոտորածները, մանուկներու սպանողը, եւ այլն:

Տեղեկագրին համաձայն, 1500 գարամանցիներէն վերապրած են մօտ 250 հոգի միայն:

7. ԵՂԵՍԻԱ (ՈՒՐՖԱ) ԵՒ ԿԱՐՄՈՒՃ: Վերնագիրն է «Ուրֆա եւ Կարմուճ նաեւ մօտակայ հայ գիւղերը»: Պատրաստուած է 22 Փետր. 1919-ին ու կը բաղկանայ 15 էջերէ:

Մանրամասն եւ թիւերով հարուստ տեղեկագիր մըն է. նախ խօսուած է տեղւոյն հայութեան 1915-ի հերոսական ինքնապաշտպանութեան նախորդած Եղեսիոյ եւ Կարմուճի մասնակի դէպքերուն մասին, ապա հերոսամարտին, ուրֆացիներու «ջարդավայրեր»ուն, եւ այլն: Կան նիւթական վնասներու ընդարձակ ցուցակներ եւ 106 ոճրագործներու անուանացանկ մը, ուր առանձին գլուխներով յիշուած են նաեւ մօտակայ Սրուճ, Սամուստ եւ այլ գիւղերու ոճրագործները եւս:

Ըսուած է, որ 40 հազար ուրֆացիներէն վերապրած են եօթը հազարը միայն, որուն չորս հազարը կը գտնուի տարբեր գաղթավայրերու մէջ, իսկ երեք հազարը՝ օտարներու հարէմները:

Տեղեկագիրն վերջին վեց էջերը անուանացանկն է անոր վաւերականութիւնը հաստատող 292 վերապրող ուրֆացիներու՝ «Մենք ստորագրողներս ձեռքերնիս մեր խղճին վրայ դնելով այս անարդարութիւնները գործող թիւրք ժողովուրդէն արդար դատաստան կ'պահանջենք»: Ստորագրութիւններուն յաջորդած է Եղեսիոյ Հայրենակցական միութեան դիւանին ստորագրութիւնն ու Միութեան կնիքը, առ ի հաստատում տրուած տեղեկութիւններու վաւերականութեան:

8. ԶԷՅԹՈՒՆԻ ԵՒ ՖՈՆՆՈՒԶԻ միացեալ տեղեկագիր: Վերնագիրն է «Զէյթունի եւ Ֆրնուզի համառօտ Տեղեկագիր-վիճակացոյց եւ ամբաստանագիր»: Պատրաստուած է 27 Փետր. 1919-ին:

Ընդարձակ տեղեկագիր մըն է, ուր Զէյթունի աշխարհագրական դիրքը նկարագրելէ ետք, ընդհանուր ակնարկով մը խօսուած է Զէյթունի անցեալին մասին, ապա ըսուած է, որ Փետր. 1915-ին Մարաշի երեւելի իթթիհատական թուրքեր, թիւով 2750 հոգի, հանրագրութեամբ մը պահանջած են Կեդրոնի կառավարութենէն աքսորել Զէյթունի հայերը: Այս տեղեկութեան յաջորդած է Զէյթունի երեւելիներուն ձերբակալութեան պատմութիւնը, երբ անոնց մէկ մասը սպաննուած ու մնացեալները աքսորուած են Գոնիա-Սուլթանիէ, ապա տեղափոխուած են Գաթմա եւ հուսկ՝ Տէր Զօրի անապատ, ուր փճացուած են մեծամասնութեամբ: Տեղեկագիրը գէյթունցի նահատակներուն թիւը գնահատած է 27500-ով:

Այս տեղեկութիւններէն ետք, տրուած է Զէյթունի եւ Ֆրնուզի անշարժ կալուածներուն եւ շարժական գոյքերուն ցուցակն ու արժէքը, Զէյթունի շրջակայ 36 եւ Ֆրնուզի 12 հայաբնակ գիւղերուն ցանկը, Զէյթունի ու Մարաշի թուրք պաշտօնեաներուն, Մարաշի կառավարիչ Ալի Հայտարի հրաւիրած գաղտնի ժողովի մասնակիցներուն եւ վերջապէս գէյթունցիներու աքսորը պահանջող 2750 թուրքերէն 275-ին անուանացանկը:

Տեղեկագիրն վաւերականութիւնը հաստատած են գէյթունցի եւ ֆրնուզցի բազմաթիւ վերապրողներ:

9. ԷՎԷՐԷԿԻ ԳԱԻԱՌԱԿ: Վերնագիրն է «Համառօտ տեղեկագիր Էվերէկի գաւառակին»: Պատրաստուած է 25 Դեկտ. 1918-ին, 16 էջ:

Տեղեկագիրը առաւելաբար նկարագրութիւնն է Էվերէկի կառավարիչ Սալէի Զէքի

պէլի չարագործութիւններուն՝ զէնք որոնելու պատրուակով կատարած ձերբակալութիւններուն, խուզարկութիւններուն, բանտարկութիւններուն, խոշտանգումներուն, մասնակի եւ խմբային սպանութիւններուն, եւ այլն: Համառօտ յիշուած է նաեւ Օսմանեան խորհրդարանի նախկին անդամ Մուրատ Պոյաճեանի՝ Կեսարիոյ մէջ Զեքիի անմիջական մասնակցութեամբ սպանութեան դէպքը:

«Էվերէկի զոյգ Վասակները» ենթավերնագրով Տեղեկագիրը անդրադարձած է նաեւ 1915-ին տխուր դերակատարութիւն ունեցած տեղացի երկու հայ դաւաճաններու՝ Սարգիս Տօնիկեանի եւ Կիւպէնկ Քէլ Պետրոսեանի գործունէութեան, որոնք եղած էին Զեքիի գլխաւոր գործակիցներն ու կամակատարները:

Յիշեցումի կարգով ըսենք, որ Սալէի Զեքի պէյը, Էվերէկի մէջ իրեն վստահուած առաքելութիւնը «յաջողապէս» կատարել է ետք, որպէս իշխանութիւններուն հաւատարիմ ու վստահելի անձնատրութիւն, տարի մը ետք նշանակուեցաւ Տէր Զօրի կառավարիչ ու դարձաւ հոն հաւաքուած մօտ 200 հազար արքորական հայերու կոտորածին գլխաւոր իրագործողը:

10. ԷՏԻՐՆԷԻ ԿԱՄ ԱՏՐԻԱՆԱԳՈՒԼՍՈՅ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ: Վերնագիրն է «Ընդհանուր տեղեկագիր Էտիրնէի կուսակալութեան հայ վերապրող գաղթականաց»: Պատրաստուած է 19 Փետր. 1919-ին, 15 էջ: Լաւագոյն տեղեկագրերէն մէկն է: Նախ տրուած է Էտիրնէի մօտակայ հայաբնակ ամասներու հայութեան թուաքանակը, շրջանին մէջ տիրող իրավիճակը Ցեղասպանութեան նախօրեակին, ձերբակալութիւնները եւ մասնակի կամ խմբային արքորները քաղաք առ քաղաք եւ հոսկ՝ Տէր Զօրի մէջ էտիրնէցիներու կոտորածը:

Տեղեկագիրն համաձայն, նահանգը ունեցած է 32000 հայ բնակիչ, որմէ արքորուած է 25800 ու կոտորուած՝ 23500 հոգի:

Կան նաեւ տեղեկութիւններ վերապրած էտիրնէցիներու գտնուած վայրերուն եւ սուրիական անապատի մէջ արաբներու ու թուրքերու կողմէ առեւանգուած բազմատասնեակ մանուկներու, աղջիկներու եւ կիներու մասնակի անուանացանկ մը, ուր յիշուած է, թէ անոնք որո՞ւ կողմէ առեւանգուած են ո՞ր կը գտնուին:

Այս Տեղեկագիրը եւս ունի ոճրագործներու ընդարձակ անուանացանկ, իւրաքանչիւր ւաւան առանձին-առանձին:

Տեղեկագիրն վաւերականութիւնը իրենց ստորագրութիւններով հաստատած են էտիրնէցի 80 վերապրողներ:

11. ԿԱՐԻՆ: Վերնագիրն է “Déportation des Arméniens du vilayet d’Erzeroum:” Պատրաստուած է Ալֆոնս Առաքելեանի կողմէ, ֆրանսերէն լեզուով, 24 Փետր. 1919-ին: Սկիզբը բաւական մանրամասն խօսուած է Կարին քաղաքի աշխարհագրական դիրքին, տնտեսութեան ու հարստութիւններուն մասին, ապա տրուած է կարնէցիներու կոտորածի ու արքորի պատմութիւնը Կարինէն մինչեւ սուրիական անապատ: Ըստ Տեղեկագրին, Կարնոյ նահանգը ունեցած է 173000 հայ բնակչութիւն, որուն 42000 կը գտնուէր Կովկաս կամ Ամերիկա, 1600-ը Մուսուլ, 1300-ը՝ Ուրֆա եւ Հալէպ, 2200-ը՝ զանազան վայրեր, իսկ մնացեալները զոհ գացած են Ցեղասպանութեան:



Տեղեկագրին մէջ կայ նաեւ կարնեցիներու նիւթական վնասներու ցուցակ մը, որուն յաջորդած է 55 ոճրագործներու անուանացանկը:

12. ԿԵՍԱՐԻԱ ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ԻՆԸ ԱՐՈՒԱՐՁԱՆՆԵՐ: Վերնագիրն է. «Կեսարիոյ քաղաք, շրջակայ ինը արուարձաններով»: Պատրաստուած է 21 Փետր. 1919-ին, 6 էջ: Այս եւս խնամուած տեղեկագիր մըն է, ուր խօսուած է Կեսարիոյ ու շրջակայքի հայութեան թուաքանակին մասին, ապա անոր ճակատագիրը Յեղասպանութեան տարիներուն, երբ Կեսարիոյ մէջ կախաղան բարձրացուած են 72 հայեր, բազում ուրիշներ «անլուր չարչարանքներով սպաննուեցան» եւ մեծամասնութիւնը արքայապետ Տէր Զօր ու Ռաս Իւլ Այն եւ հոն փճացաւ: Առանձին խօսուած է Սր. Կարապետ վանքի մշակութային արժէքներուն մասին, եւ տրուած է հայութեան տնտեսական կորուստներուն ընդհանուր գնահատականը:

Այս եւս ունի ոճրագործներու ընդարձակ անուանացանկ մը, հետեւեալ ծանօթութեամբ՝ «Որչափ որ ամբողջ թուրք ազգաբնակչութիւնը վերջին աղէտներուն ուղղակի [եւ] անուղղակի կերպով մասնակցած, սակայն մենք միայն անոնց պարագլուխները ի ստորեւ նշանակել բաւ կը համարենք», որուն յաջորդած է 67 ոճրագործներու անուանացանկ մը:

Տեղոյն «Կեսարիոյ եւ շրջակայից Գաղթ. յանձնախումբ»ի կողքին, Տեղեկագիրը ստորագրած են Սր. Կարապետ վանքի վանահայր Սմբատ Վրդ. Սալպաշեան եւ 52 վերապրողներ:

13. ՄԱՐԱՇ: Վերնագիրն է «Մարաշի եւ շրջակայից հայոց ջարդի եւ տեղահանութեան հեղինակներն ու գործադրիչները»: Ոճրագործներու անուանացանկ մըն է միայն: Կը բաղկանայ հինգ էջերէ: Առաջին մասին մէջ յիշուած են 78 ոճրագործներ, աւելի ճիշդ՝ 78 ոճրագործ ընտանիքներ, որովհետեւ խնդրոյ առարկայ իւրաքանչիւր անձի հետ յիշուած են ոճիրներուն մասնակից անոր պարագաները՝ զաւակներ, եղբայրներ, եղբօրորդիներ, եւ այլք, ինչպէս, օրինակ, հետեւեալ անձը՝ «Պայազիտ Զատէ Գատիր Փաշա եւ որդիքը Հասան եւ Վահիտէտօին եւ Փաշա եւ եղբայրները Մէմէտ պէյ եւ Քէօր Ալի պէյ եւ ասոր որդին Հասան»: Ցանկին 61-78 անունները Սեբաստիոյ, Կիւրինի ու Ֆընտըճագի ջարդարարներուն անուանացանկն է:

Փաստաթուղթին երկրորդ մասը եւս ոճրագործներու «ընտանեկան» ցուցակ մըն է, «Յիշեալ հեղինակներու արքանեակներն ու երկրորդական գործիչները» ենթավերնագրով, ուր տրուած է անուանացանկը 69 ոճրագործներու եւ անոնց պարագաներուն:

Ցուցակին վաւերականութիւնը հաստատած են տեղոյն Մարաշի գաղթականաց յանձնաժողովին ուրբ անդամները:

14. ՊՈՒՐՍԱ: Պատրաստուած է ֆրանսերէն լեզուով, Ռուբէն Տօնապետեանի կողմէ, 4 Յունուար 1919-ին, 5 էջ: Ունի ընդհանուր ծանօթութիւններու բաժին մը, ապա անուանացանկը աւելի քան 40 նահատակներու, որուն յաջորդած է շրջանի ոճրագործներուն անուանացանկը:

15. ՍԱՍՈՒՆ: Մեծարժեք գործ մըն է, Սասնոյ եւ շրջակայքի քարտէսով, Սասնոյ մօտաւոր անցեալի համառօտ պատմութեամբ, կոտորածներու նկարագրութեամբ եւ ոճրագործներու հակիրճ անուանացանկով: Տրուած է նաեւ Սասնոյ վեց գաւառակներու 203 գիւղերու հայոց տոներուն եւ բնակչութեան մարդահամարները, յագեցած նիւթական կորուստներու ցանկերով: Պատրաստուած է 24 Փետր. 1919-ին:

Աւելի չենք մանրամասներ, որովհետեւ յաջորդ էջերով հրատարակութեան տուած ենք զայն ամբողջութեամբ:

16. ՍԵԲԱՍՏԻՈՅ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ: Վերնագիրն է «Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան»: Պատրաստուած է 27 Փետր. 1919-ին, 29 էջ:

Այս եւս խնամուած եւ մանրամասնեալ տեղեկագիր մըն է, ուր նկատի առնուած է Սեբաստիոյ նահանգի ամբողջ հայութիւնը, առանձին գաւառներու եւ շրջաններու բաժանումներով:

Այս եւս ունի հայ ազգաբնակչութեան թիւեր՝ շրջան առ շրջան, ըստ որուն, ամբողջ նահանգը ունեցած է 144625 հայ բնակիչ, որմէ բնաջնջուած է 139625 հոգի, ապա ժամանակագրական թումով տրուած է նահանգի հայութեան առնչուող դէպքերուն նկարագրութիւնը 1914-ի վերջերէն սկսեալ և գծուած է սեբաստահայութեան աքսորի ճանապարհը, յիշատակելով տասնեակ վայրեր ուր տեղի ունեցած են խմբային սպանութիւնները, հասնելով ընդհուպ մինչեւ սուրիական անապատ: Կայ նաեւ սեբաստահայութեան անհատական եւ համայնքային կորուստներուն գնահատականը եւ միւս տեղեկագրերուն նման ոճրագործներու ընդարձակ անուանացանկ մը:

Սեբաստիոյ օրինակով, եւ գրեթէ նոյն մանրամասնութիւններով, խօսուած է նահանգի հայաշատ գաւառներուն եւ շրջաններուն մասին եւս՝ Ամասիա, Մարգուան, Կիւմիշ Հաճի Քէօյ, Թոգաթ (Եդոնկիա), Կիւրին եւ Շապին Գարահիսար:

Սեբաստիոյ նահանգի Հալէպի Գաղթականաց մասնախումբի վարչութիւնը, Տեղեկագիրը հաստատած է անոր կցելով հետեւեալ ծանօթութիւնը՝ «Վաւերացում. Սոյն Տեղեկագրին ճշդութիւնը (իրականէն քիչ մ'ալ նուազ) կ'հաստատենք»:

17. ՍԵՒԵՐԷԿ: Վերնագիրն է «Սեւերէկի գլխաւոր ոճրագործներն են»: Միէջանի անուանացանկն է յիսուն ոճրագործներու, որոնցմէ շատերը տրուած են յոգնակիով ու նկատի առնուած են մէկէ աւելի անձերով՝ «Գատր աղային տղաքը», «Միւֆթին եւ տղան», «Մէհմէտ Էմինի տղան եւ Մուսթաֆա չաուշ եւ եղբայրները», եւայլն, այնպէս որ ցանկը կը պարունակէ տրուած յիսուն թիւէն աւելի մեծ թիւով ոճրագործներ: Ընդօրինակուած է Արամ Անտոնեանի ձեռագրով:

18. ՏԱՐՍՈՆ: Վերնագիրն է «Տարսոնի հայահալածներու մասին»: Պատրաստուած է տեղոյն հոգեւոր հովիւ Տէր Եղիշէ Քինյ. Տէմիրճեանի կողմէ, 3 էջ:

Առանձին-առանձին ներկայացուած են 11 թուրքերու արարքները, յաճախ մանրամասն, ինչպէս, օրինակ, պոլսեցի հարիւրապետի մը պատմութիւնը, ուր ըսուած է, որ Մարգուանի հայոց աքսորէն ետք, տեղոյն Ամերիկեան գոլէճի 112 ուսանողուհիներ առանձնացուելով, տեղոյն կառավարիչին կողմէ բաժնուած են հոն գտնուող թուրք

սպաներուն, եւ յիշեալ հարիրապետը, առնելով անոնցմէ մէկը, տարած է Տարսոն, ուր Տեղեկագրին հեղինակ Տէր Եղիշէն հանդիպած է անոնց: Տեղեկագրին մէջ կան Տարսոն հասած այլ հայուհիներու պատմութիւններ եւս: Այս 11 մանրամասն նկարագրութիւններէն ետք, «Տարսոնի ամէնէն առաջնակարգ ոճրապարտներն են հետեւեալք» ենթավերնագրով եւ լոկ անուններով տրուած է ուրիշ ուրիշ ոճրագործներու անուանացանկ մը:

19. ՔԻԼԻՍ: Վերնագիրն է՝ «Հայ բռնագաղթի առիթով Քիլիս գաւառի մէջ տեղի ունեցող դէպքերու համառօտագրութիւնը՝ որոց իսկութիւնը ի հարկին կրնանք զօրաւոր փաստերով ապացուցանել», 8 էջ: Պատրաստուած է 18 Դեկտեմբեր 1918-ին, Հալէպի Քիլիսի գաղթականաց յանձնաժողովին կողմէ:

Քիլիսի հայոց տեղահանութեան նկարագրութիւնն է ան՝ մասնակի եւ խմբային պատմութիւններով: Կարելոր մանրամասնութիւններ կան մանաւանդ Քիլիս մնացած ու աւելի ուշ արքայութեան հայերու մասին:

Տեղեկագրին մէջ առանձինն խօսուած է տեղւոյն ծանօթ ազգայիններէն Թորոս Չաղլասեանի սպանութեան, Քիլիսի հայոց եկեղեցիին գրաւման ու սրբապղծման եւ Քիլիսէն ոչ մեծ հեռավորութեան վրայ գտնուող հայ արքայականներու Գաթմայի համակեդրոնացման կայքին մասին:

Տեղեկագրին տարբեր էջերուն կան տասնեակ ոճրագործներու անուններ, իսկ անոր աւարտին, առանձին ցուցակով, տրուած է 56 «պարագլուխներ» ու եւ 54 «չէթէներու» գոյգ անուանացանկեր:

20. ՔՂԻԻ ԳԱԻԱՌԱԿ: Վերնագիրն է «Քղի գաւառին հայ բնակչութեան տարագրութիւնը 1915 Մայիս 28/11 Յունիս»: 11 էջ:

Բաւական մանրամասն նկարագրութիւնն է Քղի քաղաքին եւ շրջակայ մօտ յիսուն հայաբնակ գիւղերու հայութեան կոտորածին ու արքային, ուր կան սպանութիւններու, խոշտանգումներու, առեւանգումներու, կողոպտումներու տասնեակ նկարագրութիւններ: Կան նաեւ տեղեկութիւններ Խուփս գիւղի հայութեան 15 օրեայ ինքնապաշտպանական մարտերուն եւ այլ բնակավայրերու ինքնապաշտպանական փորձերուն մասին:

Այս Տեղեկագիրը եւս ունի ոճրագործներու եւ նահատակ ծանօթ քղեցիներու անուանացանկեր:

Առկայ է նաեւ նոյնին ամփոփումը, ընդօրինակուած Կարապետ Գաբիկեանի ձեռագրով:

Ինչպէս տեսանք, Տեղեկագրերէն քանի մը հատը չեն ենթարկուիր հարցաշարին, ու թերեւս պատրաստուած են Միջ-Գաւառային միութեան նախաձեռնութենէն անկախ, եւ կամ ալ պատրաստողները, զանազան պատճառներով, չեն հետեւած հարցաշարի թելադրած ուղղութեան:

Ըսենք նաեւ, որ տեղեկագրերուն վրայ որեւէ նշում չկայ թէ անոնք պատրաստուած են Միջ-Գաւառայինի թելադրութեամբ, եւ բացառուած չէ ուրեմն, որ մեր ներ-

կայացուցած երկու տասնեակ տեղեկագրերուն մէջ գտնուին այնպիսիք, որոնք իսկապէս պատրաստուած չըլլան Միջ-Գաւառայինի թելադրութեամբ, եւ անոնց բովանդակութենէն ելլելով է միայն, որ զանոնք ներգրաւած ենք այս շարքին մէջ: Հոս կան նաեւ տեղեկագրեր, որոնք պատրաստուած են Միջ-Գաւառայինի ընդհանուր ժողովի գումարումէն, այսինքն 14 Փետր. 1919-էն առաջ, երբ որոշուեցաւ պատրաստել տեղեկագրերը, ու անոնք հաւանաբար արդիւնք են «Հայ Ձայն»ի մէջ Անտոնեանի կոչին կամ Հայկական միութեան յայտարարութեան:

Կարգ մը տեղեկագրեր ստորագրուած են տուեալ հայրենակցական միութեան պատասխանատուներուն, այսինքն՝ անոր ատենապետին եւ ատենադպրին կողմէ, մինչ ուրիշներու տակ կը գտնենք ստորագրութիւնները նոյն քաղաքէն կամ շրջանէն տասնեակ կամ նոյնիսկ հարիւրաւոր վերապրող հայրենակիցներու, որոնք այդպիսով հաստատած են տրուած տեղեկութիւններուն վաւերականութիւնը:

Յիշեալ Տեղեկագիր-ամբաստանագրերը, ինչպէս կը տեսնենք, ունին պատմական մեծ նշանակութիւն, նախ անոր համար որ գրի առնուած են շատ թարմ յիշողութեամբ եւ դէպքերու անմիջական տպաւորութեամբ, եւ անոր պատրաստութեան աշխատանքներուն իրենց բաժինը բերած են մէկէ աւելի անձնաւորութիւններ, որոնց փոխանցած տեղեկութիւնները, բնականաբար, աւելի վաւերական պիտի ըլլային, քան եթէ անոնք պատրաստուած ըլլային սոսկ անհատի մը կողմէ:

Անոնք արժէքաւոր են նաեւ անոր համար, որ հոն առկայ են տեղեկագրեր այնպիսի շրջաններէ, որոնց կոտորածներուն կամ տեղոյն հայութեան մասին ընդհանրապէս քիչ վկայութիւններ ունինք տպագիր կամ արխիւային գրականութեան մէջ, ինչպէս, օրինակ՝ Ամանոսի, Ագ Շէհիրի (Գոնիայի նահանգ), Անկորայի (Անգարա), Գարամանի (Գոնիա), Քիլիսի եւ այլն, եւ այս տեղեկագրերը կու գան գէթ մասամբ փակելու այդ բացը եւ լոյս սփռելու տուեալ շրջաններու կոտորածներուն ու հայութեան առօրեային վրայ ընդհանրապէս:

Տեղեկագրերը արժէքաւոր են նաեւ իրենց պարունակած ոճրագործներու անուանացանկերով, որոնց նման ընդարձակ ցանկերու միշտ չէ որ կարելի է հանդիպիլ տպագիր կամ ձեռագիր աղբիւրներու մէջ: Հոս եղած ոճրագործներու անուանացանկը, երեւի ամէնաամբողջականներէն մէկն է որ գոյութիւն ունի:

\* \* \*

Կայ հետաքրքրական հարց մը. այս տեղեկագրերը ծառայեցին իրենց ստեղծման բուն նպատակին, այսինքն անոնք նոյնութեամբ կամ թէկուզ մասնակի խմբագրութեամբ ֆրանսերէնի թարգմանուելով ներկայացուեցան Վերսայի հաշտութեան վեհաժողովին, կամ դրկուեցան նախագահ Ուիլսոնին, թէ՛ ոչ:

Վերսայի վեհաժողովին ներկայացուած հայոց վերաբերող նիւթերու ցանկին մէջ չենք հանդիպիր այդպիսի փաստաթուղթի մը յիշատակութեան<sup>9</sup>: Տպագիր կամ արխիւային գրականութեան մէջ եւս մեզի ծանօթ չէ այդ մասին որեւէ վկայութիւն:

1919-ին, Փարիզ հաստատուած Ազգային պատուիրակութեան հրաւերով, որոշուած

9 Փարիզի վեհաժողովին ներկայացուած հայկական նիւթերուն ցանկը տե՛ս “A Catalogue of Paris

էր նոյն քաղաքին մէջ գումարել Ազգային համագումար մը, որուն պիտի մասնակցէին բոլոր հայաշատ կեդրոններէն ներկայացուցիչներ: Համագումարին մասնակցելու համար Հալէպի Հայ ազգային միութիւնը սուրիահայութեան պատուիրակ ընտրած է բժիշկ Ասատուր Ալթունեանը, իսկ Արամ Անտոնեան նշանակուած է անոր ընկերակից ու քարտուղար, որովհետեւ Ալթունեան ֆրանսախօս չլլալով, Անտոնեան այդ ուղ-դրութեամբ օգտակար պիտի ըլլար իրեն:

Անոնք շոգեկառքով Հալէպէն մեկնած են 28 Փետր. 1919-ի երեկոյեան, երբ նոյն օրը առաւօտուն տեղի ունեցած էր Հալէպի հայոց կոտորածը: Պէյրութի վրայով հասած են Բոր Սայիտ (Եգիպտոս), ուրկէ ուղեորորած են Փարիզ:

Մինչ այդ, այս Տեղեկագիր-Ամբաստանագրերու հաւաքածոն յանձնուած էր Ան-տոնեանին, որպէսզի Փարիզի մէջ յանձնէ զանոնք Հայ ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար փաշային:

Որեւէ տեղեկութիւն չունիք այն մասին թէ Տեղեկագրերը յանձնուեցան իրենց հասցէատիրոջ, թէ՛ ոչ, միայն գիտենք, որ ատլի ետք, Փարիզի մէջ նորաստեղծ Նու-պարեան Մատենադարանի տնօրէնութիւնը ստանձնելէն ետք, Անտոնեան իր հաւա-քած Հայոց ցեղասպանութեան առնչուող արխիւային ամբողջ հաւաքածոն յանձնած է յիշեալ մատենադարանին, ուր եւ մեծ մասամբ կը պահուին ցարդ, իր անունը կրող առանձին հաւաքածոյի մը մէջ, աշխարհագրական հիմունքներով պատրաստուած 80 թղթածրարներու մէջ, եւ միասնաբար կը բաղկանան մօտաւորապէս 8000 էջերէ<sup>10</sup>, որոնք կը պարփակեն Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ, Փոքր Ասիոյ եւ սուրիական անապատի զանազան բնակավայրեր: Այդ հաւաքածոյի համապատասխան թղթածրարներուն մէջ է նաեւ որ կը գտնուին այս Տեղեկագիր-Ամբաստանագրերը, իրաքանչիւրը իր քաղաքին յատուկ նիւթերու շարքին:

Պատրաստուած Տեղեկագիր-Ամբաստանագրերու թիւին շուրջ առկայ է ինչ որ անորոշութիւն մը, եւ կան հարցեր, որոնք, ըստ երեւոյթին, յաւելեալ պրպտումի եւ լուսարանութեան կը կարօտին:

Նախ ըսենք, որ վերեւ մեր ներկայացուցած բոլոր տեղեկագրերը չէ որ իսկապէս կրնան պատրաստուած ըլլալով Միջ-Գաւառայինի պահանջքին որպէս արդիւնք: Հաւանաբար կան տեղեկագրեր որոնք պատրաստուած են ընդառաջելով Արամ Ան-տոնեանի կամ Հայկական միութեան կոչին, ու անոնք եւս, Անտոնեանի հետ տարուած են Փարիզ՝ Վեհաժողովին յանձնուելու, եւ ի վերջոյ հանգրուանած են Նուպարեան մատենադարան:

\* \* \*

Մեզի ծանօթ չէ թէ ի սկզբանէ ինչ եղած է տեղեկագրերուն թիւը, եւ կ'անգիտանանք թէ արդեօք անոնք ամբողջութեամբ հասած են մեզի, թէ կան կորսուած կամ Նուպարեան մատենադարանի մէջ չպահուող տեղեկագրեր, ու եթէ այդ՝ ապա ո՞ր են անոնք:

---

Peace Conference Delegation Propaganda in the Hoover War library" (California, 1926), 7, 19-22:

10 Boris Adjemian et Raymond Kévorkian, "Témoignages de rescapés et connaissance du génocide de 1915-1916," *Études arméniennes contemporaines* 5(2015): 79-110:

Տանք պակտող տեղեկագրերէն քանի մը հատին մասին մեր ծանօթութիւնները.

Ազգային եւ գրական գործիչ Հայկազուն Արամեան, որ ինչպէս տեսանք, 1919-ին Հալէպի Միջ-Գաւառային միութեան պատասխանատուներէն էր, խօսելով այս տեղեկագրերուն մասին, յայտնած է թէ «...քովս մնացեր էր միմիայն իմ ծննդավայրիս, Զէյթունի 23 էջնոց տեղեկագիր պրակը...», ապա հրատարակութեան տուած է անոր ամփոփումը<sup>11</sup>: Այսինքն այդ Տեղեկագիրը չէ յանձնուած Անտոնեանին ու բնականաբար չէ տարուած Փարիզ, այլ մնացած է Արամեանի մօտ: Այդ տեղեկագրին պատճէնը այժմ կը գտնուի Գրիկերի (Գրիգոր Վրդ. Կերկերեան)՝ Հայոց ցեղասպանութեան թուայնացուած արխիւին մէջ, բայց կը դժուարանանք ըսելու, թէ ո՞ր է անոր բնօրինակը:

Նոյն՝ Զէյթուն-Ֆոնուզի միացեալ Տեղեկագրէն կ'իմանանք, որ Զէյթունի շրջանի մասին պատրաստուած է այլ տեղեկագիր մը եւս, որը սակայն չէ հասած մեզի: Զէյթունի Տեղեկագրին մէջ այդ մասին կը կարդանք. «...այս երկու վիճակներուն [Զէյթունի եւ Ֆոնուզի- Մ.Մ.] գաւառակները եղող Ալպիսթան, Կոկիսոն, Եարփուզ եւ Աստերուն թեմեր կը կազմեն, սակայն անոնց մնացորդ ժողովուրդներու կողմէ ուրոյն վիճակացոյց պատրաստուած ու ներկայացուած ըլլալուն, կու գանք միմիայն Զէյթունի եւ Ֆոնուզի վիճակը տեղեկագրել...»<sup>12</sup>: Չենք գիտեր թէ այդ «ուրոյն» վիճակացոյցը իսկապէս պատրաստուեցա՞մ, թէ անոր պատրաստութիւնը մնաց միայն ծրագիր: Ամէն պարագայի, Նուպարեան մատենադարանի Անտոնեանի հաւաքածոյին մէջ չկայ այդպիսի տեղեկագիր:

Կայ նաեւ Սասնոյ Տեղեկագրի բնօրինակին հարցը: Քիչ վար պիտի տեսնենք, որ Նուպարեանի մէջ պահուող Սասնոյ տեղեկագրին օրինակը տեղեկագրին ընդօրինակութիւնն է միայն, կատարուած Արամ Անտոնեանի կողմէ, Հալէպի մէջ, իսկ բնօրինակին հասցէն անծանօթ կը մնայ մեզի:

Եդեսիոյ (Ուրֆայի) տեղեկագիրը չի գտնուիր Անտոնեանի Նուպարեանի թղթածրարներուն մէջ: Զայն գտած ենք Գրիկերի արխիւին մէջ, ու կրկին կը դժուարանանք ճշդելու անոր բնօրինակին հասցէն:

1919-ին Հալէպի մէջ կային հայրենակցական քանի մը խմբակցութիւններ, որոնք ունէին համեմատաբար մեծաթիւ հայրենակիցներ, ու սպասելի էր, որ անոնք ևս պատրաստած ըլլային իրենց շրջաններուն յատուկ տեղեկագրեր, ինչպէս՝ Տիար-պէքիրը, Խարբերդը, Արաբկիրը, և այլն, բայց ևս չէին տեղեկագրեր ծանօթ չեն մեզի, ու չենք գիտեր թէ անոնք իսկապէս պատրաստա՞մ են իրենց տեղեկագրերը, թէ՛ ոչ:

Հայկազուն Արամեան, որ ինչպէս ըսուեցաւ, 1919-ին Միջ-Գաւառային հայրենակցական միութեան պատասխանատուներէն էր, Զէյթունի տեղեկագիրը հրատարակութեան տուած ժամանակ յատնած է թէ օրին պատրաստուած էին 32 տեղեկագրեր:

Որոշ վերապահութեամբ կը մօտենանք յիշողութեամբ գրի առնուած Արամեանի տուեալներուն, երբ ժամանակակից հաւաստի վկայութենէ մը գիտենք, որ 20 Փետր.

11 Արամեան Հայկ. Ա., «Շահեկան տեղեկագիր մը Զէյթունի եւ գէյթունցիներու ողբերգութեան մասին», *Յուշամատենան Մեծ եղեռնի*, պատր. Գերսամ Ահարոնեան (Պէյրութ, «Զարթօնք» օրաթերթի, Գ. տիպ, տպագրութիւն «Հայ տիպ ըմփիլկրաֆ-թերթերէն», 1987), 850-854:

12 Նոյն, 851:

1919-ին, այսինքն իր յիշած 32 Միջ-Գաւառային միութիւններու համագումարին օրը, նորակազմ Միջ-Գաւառային միութեան պատասխանատուները ներկայացած է տեղոյն Հայ ազգային միութեան եւ վաւերացում խնդրած, իսկ Հայ ազգային միութիւնը խնդրած է Միջ-Գաւառայինը գոյացնող 28 քաղաքներուն ցանկը ու այդ քաղաքներէն Հալէպ գտնուող համաքաղաքացիներուն թուաքանակը<sup>13</sup>, իսկ չորս օր ետք, 24 Փետր. ին, Միջ-Գաւառայինէն կրկին ներկայացած են Հայ ազգային միութեան կրկին վաւերացումի հարցով, ու այս առիթով յիշուած է, որ Միջ-Գաւառայինը հիմնուած էր 21 բնակավայրերու հայրենակիցներուն մասնակցութեամբ<sup>14</sup>:

Արամեան այլ առիթով մըն ալ, խօսելով Հալէպի մէջ հիմնուած Խարբերդի հայրենակցական միութեան մասին, ըսած է թէ ան ունեցած է յաջող գործունէութիւն՝ «օրինակ հանդիսանալով հետզհետէ կազմուելիք [ընդգծումը մերն է Մ.Մ.] 32 զանազան գաւառային հայրենակցական միութեանց»<sup>15</sup>: Ըստ երեւոյթին, Արամեանի յիշողութեան մէջ մնացած է Հալէպի 32 հայրենակցական միութիւններու թիւը՝ զոր թիրիմացաբար աւելի ետք կապած է ներկայացուած տեղեկագրերու ընդհանուր թիւին:

Պահպանուած է Տեղեկագրերու թիւին առնչուած թնճուկը մասամբ լուսաբանող կարեւոր փաստաթուղթ մը, գրուած նոյնինքն Հայկազուն Արամեանի կողմէ, 26 Փետր. 1919-ին: Տանք զայն նոյնութեամբ.

Գերապատիւ

Տ. Գաբրիէլ Վրդ. Գասպարեան,

Փ. նախագահ Հայ ազգային միութեան

Հալէպ

Ամէն ճիգ թափելով հանդերձ անկարելի կը դառնայ մինչեւ վաղը հասցնել ամբաստանագրերը: 12 գաւառ դեռ տուած չեն իրենց գրութիւնները: Հնար ու միջոց չի կայ: Պէտք է ուրեմն յարգելի Տր. Ալթունեանը համոզէք 2-3 օր յետաձգելու իր մեկնումը: Մեզի անանկ ըսած էին թէ Շաբաթ օր պիտի մեկնի: Ուրիշ ճար չի մնար:

Հալէպ

26/2/19

Յարգանք ձերդ

Հայկազուն Արամեան<sup>16</sup>

Գիտենք որ Արամ Անտոնեան, բժ. Ալթունեանի ու անոր դստեր օր. Նորայի հետ, 28 Փետր. ի երեկոյեան շոգեկառքով մեկնած են Հալէպէն, իրենց հետ տանելով տեղեկագրերը, մինչ նոյն օրը առաւօտուն տեղի ունեցած էր Հալէպի հայոց կոտորածը, այսինքն հրատարակուող փաստաթուղթը ներկայացուելէն ընդամենը երկու օր ետք, եւ մէկ-երկու օրուայ ընթացքին շատ բան պիտի չփոխուէր վիճակէն եւ հոն յիշատակուած 12 գաւառները պիտի չհասցնէին իրենց տեղեկագրերը պատրաստել:

13 «Արձանագրութիւնք Հայ ազգային միութեան Բերիոյ», Ա. տետր, 20 Փետր. 1919-ի նիստ, 78, տե՛ս ՀԱԱԱ, Հայ ազգային միութեան թղթածրարներ:

14 Նոյն, 24 Փետր. 1919-ի նիստ, 79:

15 Ճիգմէճեան, *Խարբերդ եւ իր զաւակները*, 303:

16 ՀԱԱԱ, Հալէպի Միջ-Գաւառային հայ միութեան թղթածրարներ:

Հետևաբար կը կարծենք, որ Արամեանի կողմէ շրջանառուած եւ Լեւոն Վարդանի<sup>17</sup> կողմէ ընդունուած տեղեկագրերու 32 թիւը չի համապատասխաներ իրականութեան, եւ թէ ան երեւի շատ տարբեր չէ մեր վերեւ ներկայացուցած անոնց թիւին:

\* \* \*

Այս Տեղեկագրերէն պատմաբան Լեւոն Վարդան «Հայկազեան հայագիտական հանդէս»ի մէջ մասնակի ձեռով հրատարակած է Սեբաստիոյ, Էտիրնէի, Բաղէշի եւ Կարնոյ տեղեկագրերը<sup>18</sup>: Զէյթուն-Ֆռնուզիսին ամփոփումը լոյս ընծայած է Հայկազուն Արամեան<sup>19</sup>: Վեց այլ տեղեկագրեր, կրկին ոչ ամբողջական ձեռով, տպուած են Երուանդ Փամպուքեանի կողմէ, որոնցմէ երկուքը Լեւոն Վարդանի հրատարակած տեղեկագրերուն վերատպութիւններն են<sup>20</sup>: Այնթապի Տեղեկագրին ոճրագործներու անուանացանկը, անգլերէն թարգմանութեամբ, հրատարակած է պատմաբան Ումիդ Քիւրտ<sup>21</sup>, իսկ ֆրանսահայ պատմաբան Յարութիւն-Ռայմոն Գէորգեան, Հայոց ցեղասպանութեան պատմութեան նուիրուած իր կոթողային աշխատութեան զանազան բաժիններուն մէջ օգտագործած է այս տեղեկագրերուն կարգ մը տուեալները<sup>22</sup>: Մնացեալները, որքան ծանօթ է մեզի, ցարդ կը մնան անտիպ:

Աւելցնենք, որ Հալէպի մէջ ծնունդ առած փաստահաւաքումի այս փորձը իր տեսակին մէջ միակը չէր. անկէ առաջ ու անկէ ետք կատարուած են քանի մը այլ փորձեր եւս, որոնք, ինչպէս Հալէպիւնը, պսակուած են մեծ յաջողութեամբ: Այդ աշխատանքներուն զոյգ կեդրոնները եղած են Թիֆլիսն ու Կ.Պոլիսը, բայց անոնց անդրադառնալը դուրս կը մնայ այս յօդուածին նպատակներէն:

\* \* \*

Ստորեւ հրատարակութեան կու տանք վերոնշեալ տեղեկագրերէն Սասնոյ Տեղեկագիրը, որ հետաքրքրական է զանազան առումներով, մանաւանդ իր պարունակած Սասնոյ վեց գաւառակներու մանրամասն գիղացուցակին ու մարդահամարին համար:

Զենք գիտեր թէ ղվ պատրաստած է հրատարակուող գիղացուցակը: Ծանօթ է, որ Տեղեկագրին տակ իրենց ստորագրութիւնը դրած հինգ սասունցիներէն Տէր Մկրտիչ Քինյ. Մուրատեան<sup>23</sup> լրջօրէն հետաքրքրուած էր Սասնոյ անցեալով, եւ հայ

17 Լ. Վ. (Լեւոն Վարդան), «Ամբաստանագիր-Տեղեկագիրներ», *Հայկազեան հայագիտական հանդէս* ԺԵ (1995), 497-553:

18 Նոյն, 498:

19 Արամեան, «Շահեկան տեղեկագիր մը Զէյթունի», 850-854:

20 Նիւթեր Հ. Յ. *Դաշնակցութեան պատմութեան համար*, ԺԲ. հատոր, խմբ.՝ Երուանդ Փամպուքեան (Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան, 2016), 407-428:

21 Ümit Kurt, *The Armenians of Aintab. The Economics of Genocide in an Ottoman Province* (Cambridge, London: Harvard University Press, 2021), 233-240:

22 Raymond Kévorkian, "The Armenian Genocide: A Complete History" (London-New York: I. B. Tauris, 2011), 1029.

23 Մկրտիչ Ա. Քնյ. Մուրատեան (Սասնոյ Մըզթենկ շրջանի Գոմուց գիւղ, 1881 - Հալէպ, 1971): Երեք տարի ուսանած է Մշոյ Ս. Կարապետի վանքը: Հալէպ գաղթած է 1896-ին ու քահանայ ձեռնադրուած



պարբերական մամուլի էջերուն, 1915-էն առաջ ու մանաւանդ անկէ ետք, հրատարակած է Տարօն-Սասունի պատմութեան, ազգագրութեան, սրբավայրերուն եւ անդրօրինակներուն առնչուող տասնեակ յօդուածներ, ինչպէս նաեւ բանահիւսական անտիպ նիւթեր եւ յուշապատումներ: Գիտենք նաեւ, որ ան, մէկէ աւելի անգամներ լոյս ընծայած է Սասնոյ գիւղերու մասնակի գիւղացուցակ-մարդահամարներ<sup>24</sup>, բայց իր տուած Սասնոյ մարդահամարի թիւերը տարբեր են հոս տրուածներէն, այնպէս որ այս մէկը չէր կրնար իր կողմէ պատրաստուած ըլլալ: Հետեւաբար պիտի ենթադրել որ, հրատարակուող գիւղացուցակը պատրաստուած է խմբային աշխատանքով, մանաւանդ, որ ինչպէս ըսուած է Տեղեկագրին մէջ, 1919-ին Հալէպի մէջ հաւաքուած էին համեմատաբար մեծաթիւ՝ 1053 սասունցիներ, որոնց մէկ մասը եթէ հոն հաստատուած էր 1915-էն առաջ, ապա մնացեալները նոր հասած արքայականներ էին, եւ անոնց բոլորին համատեղ աշխատանքով է հաւանաբար որ ծնունդ առած է հրատարակուող ցուցակը:

Մեզի այնպէս կը թուի, որ հրատարակուող Տեղեկագրին՝ Փարիզի Նուպարեան մատենադարանի մէջ պահուող այս օրինակը Տեղեկագրին բնօրինակը չէ, այլ անոր ընդօրինակութիւնը, եւ օրինակուած է նոյնինքն Արամ Անտոնեանի ձեռքով<sup>25</sup>, որովհետեւ գիրը կը թուի իրը ըլլալ, իսկ թուղթը՝ իր կողմէ յաճախ օգտագործուած նոյն այն թուղթի տեսակն է, որ եզրերուն ունի ֆրանսերէն տպագիր գրութիւններ Պաղտատի Շոքեկառքի օսմանեան ընկերութեան անունով, եւ որ յաճախ գործածուած է Անտոնեանի ու իր գործակիցներուն կողմէ, Հալէպի մէջ, վերապրողներու յուշեր գրի առնելու ժամանակ, եւ որոնցմէ բազմաթիւ օրինակներ կան այսօր Նուպարեան մատենադարանի մէջ պահուող իր հաւաքածոյին մէջ: Պատերազմի հետեւանքով ստեղծուած տնտեսական տագնապին հետեւանքով, ըստ երեւոյթին, Հալէպի մէջ Անտոնեան չէ կրցած մաքուր եւ չօգտագործուած թուղթ ապահովել, եւ ստիպուած գործածած է յիշեալ ընկերութեան կողմէ գործածուելու յատկացուած թուղթեր: Պիտի չմոռնալ նաեւ այն փաստը, որ Անտոնեան, այլ պարագաներու եւս, Հալէպի մէջ իր հաւաքական աշխատանքին ընթացքին, երբ չէ կրցած ինչ որ փաստաթուղթի մը բնօրինակը ունենալ, ընդօրինակած է զայն կամ ընդօրինակել տուած է իր գործակիցներուն: Անտոնեանի եւ Կարապետ Գաբիկեանի ձեռագրով այսպիսի բազմաթիւ ընդօրինակութիւններու եւս կը հանդիպինք Նուպարեանի իր թղթածրարներուն մէջ: Այս պարագային, հարց կը ծագի սակայն, թէ Անտոնեան, որ այդ Տեղեկագրին բնօրինակը իր հետ պիտի տանէր Փարիզ, ինչո՞ւ ընդօրինակեց զայն: Չենք կարծեր որ ինք է տեղեկագիրը պատրաստողը, երբ զայն ստորագրողներէն քանի մը հատը գրականութեան մօտ կանգնած մարդիկ էին, միաժամանակ չենք ալ կարծեր որ այս օրինակն է տեղեկագրին մայր օրինակը, որովհետեւ Շոքեկառքի ընկերութեան

Սահակ Բ. Կաթողիկոսէն 1909-ին եւ երկար տարիներ եղած է տեղւոյն Ս. Քառասնից Մանկանց մայր եկեղեցոյ ծխական քահանան:

24 Կարօ Սասունի, *Պատմութիւն Տարօնի աշխարհի*, Բ. Տիպ. (Անթիլիաս, Կաթողիկոսութեան Մեծի տանն Կիլիկիոյ, 2013), 338:

25 BNU/Fonds A. Andonian - Matériaux pour l'histoire du génocide, Dossier 47, Déportations et massacre des Arméniens de Sassoun, թերթ 1-11:

յատուկ թուղթի վրայ գրուած տեղեկագիր մը պիտի չներկայացուէր որպէս գաւառի մը 1053 վերապրադներուն կողմէ յղուած պաշտօնական փաստաթուղթ:

Սասնոյ հրատարակուող գիղացուցակին մէջ յիշատակուած են այնպիսի բնակավայրեր, որոնց չհանդիպեցանք մեզի ծանօթ Սասնոյ գիղացուցակներուն եւ Սասնոյ պատմութեան հայոց այլ հրատարակութիւններու մէջ<sup>26</sup>: Հաւանաբար այդ գիղերուն մէկ մասը ունեցած է մէկէ աւելի անուանումներ՝ հայերէն եւ օտար, եւ մերթ Գործածուած են անոնց հայերէն ու մերթ օտար անունները, իսկ հոս եղող ու այլ տեղ չյիշատակուած որոշ գիղեր, թերեւս ինչ որ մեծ բնակավայրի մը տարբեր թաղերը ըլլան, եւ այդ պատճառով, որպէս առանձին գիղեր յիշուած չեն այլոց կողմէ: Մեր ենթադրութիւնը հաստատելու համար տանք մէկ օրինակ. հրատարակուող ցուցակին մէջ յիշատակուած Կուսգետ գաւառակի Քարծեր եւ Կոտրծեր գիղերը չկրցանք գտնել մեզի ծանօթ Սասնոյ գիղացուցակներուն մէջ, բայց անոնք Պետոյեանի մօտ յիշատակուած են որպէս Կուսգետ գիղի առանձին թաղեր<sup>27</sup>: Առկա աղբիւրները կը յուշեն, որ Սասնոյ շրջանի կարգ մը գիղեր յաճախ ունեցած են բազմաթիւ թաղեր, ինչպէս, օրինակ, Կէլիէ Կուզան մեծ գիղը, որ ունեցած է 34 թաղ, Ընձքարը՝ ինը, Կուսգետը՝ ութը, Իշխանձորը կամ Իշխընձորը՝ հինգ թաղ, և այլն<sup>28</sup>, ու այդ թաղերէն իւրաքանչիւրը, բնականաբար, ունեցած է իր անունը, այնպէս որ, հոս յիշատակուած որոշ բնակավայրեր կրնան ինչ որ գիղի մը մէկ թաղը եղած ըլլալ, որ ունենալով առանձին անուանում, կրնայ հոս յիշատակուած ըլլալ որպէս առանձին բնակավայր բայց յիշատակուած չըլլալ այլոց մօտ:

Կան նաեւ գիղերու տեղագրութեան հետ կապուած որոշ հարցեր, եւ հոս յիշատակուած կարգ մը գիղեր, այլ աղբիւրներու մէջ տեղադրուած են այլ գաւառակներու մէջ:

Ամէն պարագայի, ինչ ալ ըլլան այս եւ նման այլ հարցերը, կը կարծենք, որ Տեղեկագիրը կրնայ օգտակար ըլլալ Սասնոյ տեղագրութեամբ ու ժողովրդագրութեամբ

26 «Սասուն. Վիճակագրական...», տե՛ս *Դրօշակ* (Ժընև), XIV տարի, թիւ 4-5, 145-146; Ապրիլ-Մայիս 1904, 60-62; Ա.-Ղ. (Յովհաննէս Տէր Մարտիրոսեան), *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները* (Երևան, Կոլտուրա, 1912), 119-143; Նազարէթ Պ. Մարտիրոսեան, «Համերոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրությունը», *Վան-Տոսպ* (Թիֆլիս), թիւ 13, 21 փետրվար 1916, 6-7; Վարդան Պետոյեան, *Սասուն*, կազմ. եւ խմբ.՝ Ստեփան Պետոյեան (Երևան, Նախաբեմ, 2016), 28-90; Կարօ Սասունի, *Պատմութիւն Տարօնի աշխարհի* (Ալեքիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Բ. տիպ, 2013), 331-340; Կ.Պոլսոյ հայոց պատրիարքարանի 1913 թ.ի մարդահամարի տուեալները, որոնք օգտագործուած են Թէոդիկի, *Դողգոթա հայ հոգևորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին*, խմբ.՝ Արայ Գալայճեան (Նիւ Եորք, St. Vartan Press, 1985), 88-101 եւ Ռայմոն Գէորգեան-Բոլ Փապունճեանի կողմէ (Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian *Les Arméniens dans l'empire Ottoman a la veille du génocide* (Փարիզ, ARHIS, 1992), 59; 493-496); Գեղամ Մ. Բաղդեան, «Արեւմտեան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրէին. Մաս ութերորդ: Սասուն պատմաաշխարհագրական մարզը եւ Բաղէշ (Բիթլիս) քաղաքը», *Վէմ* 58, no. 2 (2017), I-XLVII; Ռուպերթ Թաթոյեան, *Արեւմտեան Հայաստանի Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թիւը Մեծ եղեռնի նախօրէակին* (մենագրութիւն, որ պիտի հրատարակուի շուտով: Ընդհանրութիւն՝ զայն մեզի տրամադրելուն համար):

27 Պետոյեան, *Սասուն*, 66:

28 Պետոյեան, *Սասուն*, 28, 80, 66, 75:

գրադող մասնագէտներուն, եւ կրնայ ծառայել շրջանը աւելի լաւ ճանչնալու եւ ուսումնասիրելու աշխատանքին:

Տեղեկագիրը հրատարակութեան տուած ենք նոյնութեամբ, առանց որեւէ փոփոխութեան: Մեր յատելումները առած ենք անկիւնաւոր փակագծերու՝ [ ] մէջ:

Աւելցնենք, որ Տեղեկագրին վերծանումը եղաւ բաւական յոգնեցուցիչ ու աշխատատար, Անտոնեանի դժուարընթեռնելի գիրին պատճառով: Յուսանք որ մուտքագրումը ըրած ըլլանք անսխալ ու անթերի:

\* \* \*

[Տեղեկագիր-Ամբաստանագիր Սասուն Աշխարհի]

Սասուն՝

Հիւսիսէն՝ Մշոյ դաշտ, հարաւէն՝ Պշերիկի եւ Սիլվանի դաշտերը, արեւելքէն՝ Մոգտանց լեռնաշղթան, արեւմուտքէն Խուլքի լեռնաշղթան:

Սասնոյ գաւառը կը բաժնուէր վեց գաւառակներու՝

1. Տալտրիկ
2. Բուսանք
3. Հաթնի-Մարաթուկ
4. Կուսգետ
5. Բոնաշէն-Խութ
6. Խիանք

Այս հողամասին բաժանումները Սասնոյ բնակչութեան հինէն ի վեր ընդունուած դրութեան վրայ հիմնուած են, ոմանք ալ Խիան եւ Խարգան կ'անուանեն այս վեց գաւառները:

Սասնոյ գլխաւոր չորս լեռները Ծովասար, Անտոք, Մարաթուկ, Մակիծուտ: Անտառները՝ Խաչէռէշ (Սեւ Խաչ), Փիլար, Խժժէ, Տղա-Մանուկ, Զանդուս, Փլի, Մոխնուտ եւ Սմարդետի ընդարձակ թաւուտքը: Անմատչելի գլխաւոր ժայռերն են Ֆոֆոքար, Խոռնաքար: Ամէնէն մեծ բղխող ակերն են Մեծաղբուր, Ակներ, Ակնդոտ եւ Շարասուր: Գետակներն են՝ Զէմջուր, Զանտջուր:

Սասնոյ մօտաւոր անցեալէն.

Ա. Իշխանաց ժողով:

Բ. Ծերոց ժողով:

Գ. Բնակչաց բազմացում:

Դ. Սասնոյ քիւրտեր:

Ե. Սասունցիներու գէնքեր:

Զ. Սասունցիներու տեղական զբաղում:

Է. Սասունցիներու նկարագիրը:

Ը. 1894-96 թուականները:

Թ. 1914-16 թուականները:

Ա. *Իշխանաց ժողով*: Սասնոյ մէջ կը կոչուէր Իշխանաց ժողով՝ գիւղերու եւ

գիւղախումբերու ներկայացուցիչներու ժողովը, որ կը կառավարէր Սասնոյ գաւառը:

Բ. *Շերոց ժողով*: Գիւղական եւ գիւղախումբերու ծերերէ՛ կազմուած ժողովն էր որ կը լուծէր ամէն տեսակ դատեր:

Գ. *Բասկչաք բազմացում*: Բոլոր սասունցիները, բացի անոնցմէ որ դարիպի ցուպը ձեռք էին առած դէպի Հալէպ, ֆիզիքապէս քաջառողջ էին եւ երկար կ'ապրէին 80-110 տարեկան: Փոխանցիկ գէշ հիւանդութիւններ բնաւ գոյութիւն չունէին: Վաղահաս մահեր միայն կը պատահէին ծաղիկէ, վարդախտէ եւ արկածներէն: Սասունէն չբաժնուող հայերը կ'ունենային առնուազն ութ գաւակ, իսկ առաւելագոյնը անհաւատալի կը թուի թերեւս: Օրինակ՝ Կէլիէկուզանի Պետոյի տունը, 1892ին ինք իբր ծերունի զօպօ (մեծ հայր) իր գաւակներով, թոռներով, թոռնորդիներով, հարսներով ունէր 24 անդամէ բաղկացած ընտանիք որ կ'ապրէր մէկ յարկի տակ, մասնակցելով մէկ սեղանի: Սեղանը բուրդէ շինուած խոշոր փռուածք մըն էր: Դեռ երէկ, 1914ին՝ Բվի Սրբօ Ազօ տուն, Սրբօն՝ իբր մեծ հայր ունէր 46 անդամէ բաղկացած ընտանիք մը: Գոմքի Դաօ տուն որ ունէր 44 անդամ: Ջրդնեց Թումօ-Մանէ տուն որ ունէր 43 անդամ: Մշգեղի Շէոօի տուն որ ունէր 42 անդամ: Մէկ տան մէջ 10-12 օրօրոցի դէմ դէմի օրօրուիլը կը տեսնուէր:

Դ. *Սասնայ քիւրտեր*: Սասնոյ քիւրտերը կը բաժնուէին աշիրէթներու: Իւրաքանչիւր աշիրէթ ունէր մէկէ աւելի աղաներ: Հայ քուրտ յարաբերական դատերն ու խնդիրները կը լուծուէին հայոց կողմէ Իշխանաց ժողովով եւ քիւրտերու կողմէ աղաներու մէծիսով: Հաւաքաբար ժողովը կը գումարուէր ընդհանրապէս հայկական վանքերու մէջ, երբեմն ալ հայկական կամ քրտական ոեւէ գիւղի մէջ, եւ կամ լեռան մը վրայ, աղբիւրի մը մօտ: Այս ժողովը պէտք եղած ատեն միայն տեղի կ'ունենար եւ կը տնէր մէկէն մինչեւ 10 օր: Խնդիրներու պարզութեան կամ կնճռոտութեան համեմատ:

Ե. *Սասնոյ գէնքեր*: Սասնոյ բնակչութիւնը, առանց բացառութեան, ունէր իրեն յատուկ գէնքը: Զէնքերն էին՝ խանչէր<sup>29</sup>, թուր, մարթալ (վահան) եւ հին դրութեամբ չախմախլը թունկ<sup>30</sup>: Իսկ յեղափոխական շարժումը Սասնոյ մէջ մուտ գտնուէին ի վեր շատ սակաւաթիւ հայոց մօտ կանոնաւոր գէնքեր ալ կը տեսնուէին:

Զ. *Սասնոյ տեղական զբաղումը*: Առանց բացառութեան, Մայիս 1էն մինչեւ Սեպտեմբերի վերջերը վարուցանով, խաշնարածութեամբ, խոտ հնձելով, տերեւ կտրելով կը զբաղէին: Այս աշխատանքին նոյնիսկ իշխաններն ու եկեղեցականներն ալ կը մասնակցէին, իսկ ձմեռը (բովանդակ Սասուն ամբողջ 4 ամիս ձիւնով կը ծածկուի) քիչ աշխատանք ունին, լեռներէ սառած ձիւնի վրայ շարժով կ'իջեցնէին տերեւը եւ ամառը պատրաստուած խոտերը ընտանի կենդանիներու համար: Սասունցիները իրենց բոլոր հագնելիքները կը մանէին, կը գործէին, ընտանի կենդանիները կը կերակրէին, վայրի այծերու, գայլի, սամոյրի եւ մանաւանդ աղուէսի որսորդութեամբ ժամանց ընողներ ալ կային: Ամէն տօնական, հարսանեկան օրեր եւ իրիկուններ կը հաւաքուէին գիւղին մէջ մէկու մը տունը, հաւաքաբար պարելու համար:

Է. *Սասունցիներու նկարագիրը*: Բոլոր այն սասունցիները որոնք բնաւ օտարութեան

29 Խանչէր կամ խնաջար, արաբերէն՝ դաշոյն:

30 Թունկը կամ թֆէնք, թրքերէն՝ հրացան: Սասնոյ բարբառով՝ «թվընգ» (Պետոյեան, *Սասուն*, 669):

չէին դիմած, ընդհանրապէս ճշմարտախօս, միամիտ, պարկեշտ, հիւրասէր, աշխատասէր եւ կրօնասէր էին:

Ը. 1894-96 թուականները: 94ին՝ թրքական և քրտական յարձակումներու դէմ երկար մաքառումներէ վերջ, միայն Տալուրիկն էր որ պարտուեցաւ, բայց անձնատուր չեղաւ: 95ի հայկական մեծ ջարդին, Սասնոյ գաւառը իր վեց գաւառակներով գերծ մնաց Կարմիր Համիտի եաթաղանէն: Այդ թուականին Սասնոյ Իշխանաց ժողովը յաջողեցաւ քրտական աղաներու հետ սուրի, խաչի եւ նուիրական մատաղի վրայ իր անգիր դաշինքը կնքել երդմամբ: Նոյն ժամանակուան Իշխանաց ժողովի անդամներն էին՝

Պերմնցի Դանօն  
Մքթնցի Մխսի Կրճօն  
Խնձորցի Կերպօն  
Մշգեղցի Մրտիկի Շէռօն  
Ջրդնցի Թումօտան Կրպէն  
Գոմքցի Կերպէ Ստեփան  
Մատին Առաքելոց վանահայրը՝ Տ. Պետրոս Վարդ.  
Ստեփան Վարդ.  
Տալուրիկցի Համգէն  
Բուրդօ Գասպար  
Քողեցի Տ. Գաբրիէլ Քահանան

Քիւրտ աղաներն էին՝  
Շէկօտան Տօկոյր  
Մահմուտէ Խալիլ  
Գուռանցի Սադօն  
Գապլճօցի հերոս Օսման (որ մինչեւ վերջը բարեկամ մնաց հայոց)  
Մուսէի Հասանէ Չէլլի  
Չէրճէլլի Հասէի Պրահիմ:

Այս ժողովը տեղի ունեցաւ անմիջապէս երբ կառավարութիւնը հրաման կ'ընէր քիւրտերուն որ հայերը ջարդելու համար օժանդակեն թուրք բանակին: Ժողովին որոշումն էր որ քիւրտերն ու հայերը զէնքի ոյժով միասին դիմադրեն վտանգին: Կառավարութեան ձեռքը՝ իբր ջարդարար գործիք մնացին միւս քիւրտ աղաներէն համբաւաւոր ոճրագործ Պշարէ Խալիլը<sup>31</sup> եւ Փափուրէ Կէնճօն: Այդ խառն ժողովին հետեւանքով՝ կառավարութեան հայաջինջ ծրագիրը վիժեցաւ՝ գէթ Սասնոյ գաւառին մէջ:

1914-16: 1914-16 թուականը միայն վերջ տուաւ Սասնոյ գաւառին: Այս անգամ ամբողջ քիւրտ ցեղապետները, բացի Ճէմալէի Սատօ Խանչօէն, կը մասնակցէին

31 Պշարէ Խալիլ՝ քիւրտ ցեղապետ, որ 1 Նոյ. 1899-ին ֆետայի Սերոբ Ադրիւրի (Վարդանեան) դաւադրաբար սպանութենէն ետք, կտրած էր անոր գլուխը, որուն համար Սուլթան Համիտէն ստացած էր յատուկ շքանշան, բայց ֆետայիներ, Անդրանիկի գլխաւորութեամբ, յաջողեցան սպաննել զինք ու իրենց կարգին կտրել իր գլուխը:

Սասնոյ հայութեան բնաջնջումին: Հոս կարեւոր է յիշել նաեւ Պըտրի եւ Շէկօ քիւրտ աշիրէթները որոնք հայախօս են, քիւրտերէն բառ մը անգամ չեն գիտեր, իրենց ծագումն ի վեր բարեկամ մնացած են հայերու, այս անգամ անոնք ալ մասնակցեցան ջարդերուն:

Սասնոյ լեռները որոնք դեռ երէկ ապաստան եւ մարտավայր հանդիսացան այսօրուան հայ ռազմական փառքը ներկայացնող Անդրանիկի, անմահ Մուրատներու, Արապօի, Գէորգ Չաուշի եւ Աղբիւր Սերոբ փաշայի, այսօր լռած են եւ գերեզմանոց դարձած իրենց լեռնորդի կտրիճներուն անթաղ ոսկորներուն:

\* \* \*

Սասուն գաւառը 1914ին ուներ 99249 բնակիչ, որոնցմէ կը վերապրին միայն 4053 հոգի, 1053 Հալէպի մէջ և մնացեալ 3000ն ալ հաւանականաբար Կովկաս և այլուր, որով կ'ունենանք 95196 անձի կորուստ:

**Զարդը:** Գերման սպաներու ղեկավարութեամբն ու թնդանօթներու ոյժով, մոլեռանդ քիւրտ խուժանին օժանդակութեամբ, թրքական բանակը յաջողեցաւ 1914-16 վայրագօրէն մահացնել այս տիպար ժողովուրդը, Անտոքի կողերէն մինչեւ Մարաթուկի խորերը:

**Նիւթական հարստութիւն:** 6115200 ոսկիի արժէքով ինչքն ու հարստութիւնը ամբողջովին յափշտակուած է այս պատերազմի ընթացքին թուրք կառավարութեան և քիւրտ խուժանին կողմէ:

**Զարդարարները:** Իթիհատի գործիք հանդիսացան հայակեր ոճրագործ Հազօ գիւղի այսօրուան ինքնակոչ տէրը՝ տխրահռչակ Խշթոյի Զիբան, որ 1915 Ապրիլ 26ին 122 հայ մանուկներ Զեմի գետակին մէջ խեղդեց: Պշարէ Խալիլի թոռան որդիներն ու արենակիցները՝ Բարսոբէնց տխրահռչակ Կէնճօի հրէշ արարած ու մարդակեր գաւակներն ու աշիրէթը, եւ Ճէլէիք քիւրտ գիւղի պետերէն Տահիօ Սէլիմ եւ իր արբանեակները, ինչպէս նաեւ ուրիշ շատ մը քիւրտ ցեղեր ու ղեկավարներ:

**Մշոյ եւ շրջակայներու կորուստը:** Չմոռնանք յիշատակել թէ Մշոյ, Սիլվանի եւ Պշէրիկի հայերուն անձի կորուստը Սասուն գաւառի անձի կորուստին եռապատիկը, նիւթական կորուստը՝ առնուազն եօթն անգամն էր: Այս գաւառներուն ամբողջական բնակչութեան բնաջնջման հետեւանքով կարելի չէ եղած առ այժմ մանրամասն տեղեկութիւն իմանալ:

\* \* \*

1. Տալտրիկ գաւառակը ուներ 28 գիւղ, 1318 տունով եւ 14.472 բնակիչով: Այս գիւղերուն մէջ կը գտնուէին 89.731 ոչխար, 7222 կով ու եզ, 904 ջորի, 129130 օսմ. ոսկիի արժողութեամբ կահ կարասի, 12494 մեղուի փեթակ, 76960 ոսկիի արժողութեամբ այգիներ ու պարտէզներ:

|   |       | Տուն | բնակիչ |
|---|-------|------|--------|
| 1 | Փուրխ | 12   | 126    |

|    |              |     |      |
|----|--------------|-----|------|
| 2  | Հաքմանք      | 6   | 68   |
| 3  | Թուալենք     | 18  | 205  |
| 4  | Հոսնուտ      | 8   | 72   |
| 5  | Հարութ       | 19  | 363  |
| 6  | Վերին Գեղ    | 40  | 603  |
| 7  | Սպղանք       | 42  | 705  |
| 8  | Իսլիովիտ     | 7   | 82   |
| 9  | Աղբի         | 52  | 705  |
| 10 | Քօրախի       | 5   | 40   |
| 11 | Հլողենք      | 22  | 193  |
| 12 | Եղկարտ       | 16  | 138  |
| 13 | Հեթինք       | 120 | 1340 |
| 14 | Խոծեծվանք    | 8   | 92   |
| 15 | Կելիէ Կուգան | 248 | 2030 |
| 16 | Արգիկ        | 40  | 304  |
| 17 | Գոփ          | 152 | 1560 |
| 18 | Կարմաւ       | 141 | 1600 |
| 19 | Շէնրք        | 102 | 807  |
| 20 | Սեմալ        | 70  | 938  |
| 21 | Իրցանք       | 63  | 800  |
| 22 | Կելիէ Ռէշ    | 13  | 87   |
| 23 | Թխիկ         | 10  | 37   |
| 24 | Շուշամներկ   | 15  | 200  |
| 25 | Հարկորք      | 30  | 480  |
| 26 | Մերկեր       | 26  | 370  |
| 27 | Մազրէ        | 10  | 227  |
| 28 | Մեղրաշէն     | 23  | 300  |

2. Բուսանք գաւառակը ունէր 32 գիւղ, 644 տուն, 11374 բնակիչ, 106310 ոչխար, 4465 կով ու եզ, 490 ջորի, 135290 օսմ. ոսկիի արծողութեամբ կահ կարասի, 17650 մեղրի փերակ, 8250 օսմ. ոսկիի շերամ, 208900 ոսկիի արծողութեամբ պարտէզ եւ այգի:

|   |           |    |     |
|---|-----------|----|-----|
| 1 | Գոմեր     | 14 | 306 |
| 2 | Քրտամանք  | 18 | 410 |
| 3 | Հոսներ    | 6  | 60  |
| 4 | Հաւկոնք   | 13 | 160 |
| 5 | Քրտվանք   | 8  | 45  |
| 6 | Անձարկելի | 6  | 67  |

|    |               |    |      |
|----|---------------|----|------|
| 7  | Քիսթախ        | 13 | 84   |
| 8  | Թաթանք        | 14 | 350  |
| 9  | Ջրդնիք        | 46 | 810  |
| 10 | Բվի           | 32 | 430  |
| 11 | Գոմք          | 42 | 670  |
| 12 | Սգրան         | 6  | 67   |
| 13 | Կրեճոր        | 15 | 97   |
| 14 | Փշուտ         | 22 | 380  |
| 15 | Ջեմ           | 12 | 160  |
| 16 | Դալիոր        | 28 | 530  |
| 17 | Պելլոէնք      | 13 | 290  |
| 18 | Բակտիք        | 5  | 60   |
| 19 | Քսրօնք        | 8  | 90   |
| 20 | Մշգեղ         | 50 | 1100 |
| 21 | Խնձորիք       | 42 | 890  |
| 22 | Պեստուն       | 6  | 120  |
| 23 | Թարուք        | 23 | 340  |
| 24 | Բզումանք      | 12 | 180  |
| 25 | Կոնկէս        | 14 | 270  |
| 26 | Գճքար         | 8  | 130  |
| 27 | Դաժպատրիկ     | 26 | 470  |
| 28 | Մարաթա        | 16 | 200  |
| 29 | Քաջոնք        | 34 | 720  |
| 30 | Մքթենք        | 46 | 960  |
| 31 | Բաստի         | 35 | 870  |
| 32 | Ալըեան Մագրան | 6  | 60   |

3. Հաթնի-Մարաթուկ գաւառակը ունէր 51 գիւղ, 852 տուն, 11215 բնակիչ, 130810 ոչխար, 5484 եզ ու կով, 711 ջորի, 149690 ոսկիի կահ կարասի, 15540 փեթակ, 1610 ոսկիի շէրամ, 163620 ոսկիի արտ ու պարտէզ:

|   |         |    |     |
|---|---------|----|-----|
| 1 | Մանկիկ  | 13 | 170 |
| 2 | Պելլաւ  | 14 | 180 |
| 3 | Նոր Գեղ | 25 | 290 |
| 4 | Գապլճօզ | 44 | 580 |
| 5 | Խորամ   | 11 | 190 |
| 6 | Նատօքա  | 24 | 370 |
| 7 | Հով     | 20 | 350 |



|    |           |    |     |
|----|-----------|----|-----|
| 8  | Սուքեաուն | 25 | 400 |
| 9  | Կող       | 18 | 150 |
| 10 | Պատրմուտ  | 26 | 450 |
| 11 | Իսարվէր   | 10 | 180 |
| 12 | Կորով     | 15 | 290 |
| 13 | Հաղտ      | 10 | 200 |
| 14 | Հռուտ     | 16 | 220 |
| 15 | Գոմբ      | 17 | 250 |
| 16 | Կօշակ     | 19 | 210 |
| 17 | Փիրշէք    | 30 | 500 |
| 18 | Արեգդէմ   | 8  | 95  |
| 19 | Թխի       | 10 | 110 |
| 20 | Ձորաղբի   | 5  | 60  |
| 21 | Կաղմանք   | 12 | 125 |
| 22 | Իրցանք    | 5  | 50  |
| 23 | Կուրտկանք | 10 | 150 |
| 24 | Օրձիգ     | 8  | 120 |
| 25 | Գօմրտէր   | 6  | 98  |
| 26 | Դալրձոր   | 7  | 90  |
| 27 | Ազուի     | 8  | 54  |
| 28 | Պրակտուն  | 4  | 60  |
| 29 | Հապշտուղ  | 5  | 100 |
| 30 | Շխտիկ     | 13 | 100 |
| 31 | Քաղքիկ    | 8  | 70  |
| 32 | Հարգոնք   | 6  | 60  |
| 33 | Քաշքշենք  | 40 | 170 |
| 34 | Մաղենք    | 18 | 130 |
| 35 | Մորպանք   | 11 | 130 |
| 36 | Իսասկանք  | 5  | 60  |
| 37 | Կորդեր    | 28 | 290 |
| 38 | Իսասորի   | 19 | 180 |
| 39 | Վարդունց  | 8  | 100 |
| 40 | Տնկետք    | 29 | 570 |
| 41 | Քարկից    | 6  | 90  |
| 42 | Աովտոց    | 9  | 100 |
| 43 | Արտրի     | 12 | 130 |
| 44 | Հրձկանք   | 18 | 300 |

|    |           |    |     |
|----|-----------|----|-----|
| 45 | Գեսան     | 8  | 95  |
| 46 | Բրտանք    | 10 | 180 |
| 47 | Կանկառենք | 13 | 208 |
| 48 | Հիրոտ     | 18 | 300 |
| 49 | Արծուիք   | 80 | 850 |
| 50 | Խան       | 42 | 600 |
| 51 | Շիկալենք  | 26 | 380 |

4. Կուսգետ գաւառակը ունէր 26 գիւղ, 1166 տուն, 19480 բնակիչ, 167280 ոչխար, 5315 կով ու եգ, 1074 ջորի, 86180 ոսկիի արժողութեամբ կահ կարասի, 58600 մեղովի փեթակ, 2610 ոսկիի շերամ եւ 131900 օսմ. ոսկիի արտ ու պարտէզ:

|    |                |     |      |
|----|----------------|-----|------|
| 1  | Քարծեր         | 20  | 280  |
| 2  | Օղնգիշ         | 26  | 300  |
| 3  | Գոմէք          | 17  | 270  |
| 4  | Կոտրծեր        | 23  | 420  |
| 5  | Ներքին Կուսգետ | 200 | 3000 |
| 6  | Միշկատար       | 34  | 600  |
| 7  | Ձողուտ         | 6   | 75   |
| 8  | Ասի            | 30  | 570  |
| 9  | Բլաթ           | 10  | 85   |
| 10 | Չմայ           | 25  | 160  |
| 11 | Հոլենտ         | 16  | 180  |
| 12 | Աղանտ          | 150 | 2500 |
| 13 | Կրխան          | 205 | 3050 |
| 14 | Արփի           | 50  | 800  |
| 15 | Նորշէն         | 8   | 150  |
| 16 | Բոկնտո         | 22  | 460  |
| 17 | Մոտգան         | 88  | 1850 |
| 18 | Նիշ            | 40  | 870  |
| 19 | Մարմանտ        | 60  | 1400 |
| 20 | Սլլոնտ         | 16  | 380  |
| 21 | Կրտի           | 26  | 560  |
| 22 | Կէծի           | 8   | 150  |
| 23 | Կծանք          | 40  | 750  |
| 24 | Ջրտուք         | 22  | 230  |
| 25 | Գորջուր        | 16  | 180  |
| 26 | Արտրեր         | 18  | 210  |

5. Բոնաշէն-Խուր զաւառակը ունէր 24 գիւղ, 1484 տուն, 16996 բնակիչ, 147520 ոչխար, 8590 եզ ու կով, 873 ջորի, 118560 ոսկիի կահ կարասի, 3090 փեթակ, 121500 ոսկիի արտ ու պարտէզ:

|    |            |     |      |
|----|------------|-----|------|
| 1  | Օշուտ      | 15  | 170  |
| 2  | Բլրենի     | 20  | 242  |
| 3  | Հնդկաձոր   | 50  | 574  |
| 4  | Ընկուզեկ   | 48  | 510  |
| 5  | Տաշտադէմ   | 35  | 370  |
| 6  | Արուք      | 42  | 480  |
| 7  | Թաղուի     | 70  | 810  |
| 8  | Թաղավանք   | 164 | 1700 |
| 9  | Թաղու      | 32  | 300  |
| 10 | Լորդնձոր   | 14  | 170  |
| 11 | Վարի Շնիստ | 18  | 200  |
| 12 | Կոլաք      | 23  | 260  |
| 13 | Թաղնձոր    | 95  | 810  |
| 14 | Բիջոնք     | 79  | 800  |
| 15 | Ագրակ      | 120 | 1120 |
| 16 | Կուրակ     | 26  | 310  |
| 17 | Շէն        | 225 | 2700 |
| 18 | Շնիստ      | 160 | 2510 |
| 19 | Շավերտին   | 8   | 100  |
| 20 | Օրշուտ     | 45  | 520  |
| 21 | Փշրիկ      | 40  | 690  |
| 22 | Աղմպոս     | 70  | 710  |
| 23 | Ռապաթ      | 45  | 510  |
| 24 | Կորվուր    | 40  | 430  |

6. Խիանք զաւառակը կը բաղկանար 42 գիւղէ, 1743 տուն, 25710 բնակիչ, 230370 ոչխար, 6838 կով ու եզ, 2605 ջորի, 318500 ոսկիի կահ կարասի, 25040 մեղրուի փեթակ, 17050 ոսկիի շերամ, 180970 ոսկի արտ ու պարտէզ:

|   |         |    |      |
|---|---------|----|------|
| 1 | Պէհամտա | 70 | 700  |
| 2 | Ճումարա | 46 | 450  |
| 3 | Կրէխոխէ | 18 | 250  |
| 4 | Կրէմորէ | 9  | 150  |
| 5 | Բարկա   | 90 | 1800 |
| 6 | Սաղտուն | 78 | 1200 |

|    |             |     |      |
|----|-------------|-----|------|
| 7  | Հեղին       | 90  | 1600 |
| 8  | Պերմ        | 150 | 2500 |
| 9  | Քերրք       | 37  | 800  |
| 10 | Արտկունք    | 40  | 850  |
| 11 | Տաղեներ     | 50  | 950  |
| 12 | Ճեմէլսընճիկ | 5   | 70   |
| 13 | Փէշի        | 17  | 410  |
| 14 | Ընկուզնակ   | 30  | 720  |
| 15 | Սեիտ        | 9   | 120  |
| 16 | Սուլափ      | 14  | 230  |
| 17 | Պալոլենք    | 12  | 300  |
| 18 | Սամուխ      | 25  | 570  |
| 19 | Իւրշրք      | 15  | 450  |
| 20 | Սմրկեր      | 94  | 1500 |
| 21 | Կոման       | 20  | 250  |
| 22 | Մոաուտ      | 35  | 400  |
| 23 | Իսայտիկ     | 45  | 500  |
| 24 | Շուղեկ      | 15  | 120  |
| 25 | Տիլէթ       | 25  | 350  |
| 26 | Շահշա       | 50  | 400  |
| 27 | Փասուր      | 180 | 1850 |
| 28 | Ռիասխ       | 60  | 650  |
| 29 | Իրում       | 35  | 350  |
| 30 | Կասկ        | 50  | 700  |
| 31 | Տուզմեր     | 15  | 200  |
| 32 | Շէխսպուպա   | 7   | 60   |
| 33 | Իշխանօր     | 82  | 1450 |
| 34 | Կէլիէկէնլմա | 50  | 800  |
| 35 | Աշխուն      | 20  | 250  |
| 36 | Ալուխ       | 40  | 300  |
| 37 | Արխունտ     | 80  | 1200 |
| 38 | Սլոխ        | 5   | 40   |
| 39 | Տանձիկ      | 5   | 30   |
| 40 | Մէկոկլի     | 2   | 20   |
| 41 | Հարլէ       | 8   | 50   |
| 42 | Հարտէ       | 15  | 120  |

| Գաւա-<br>ռակներ         | գիւղ | տուն | ոչխար  | եզ ու<br>կով | ջորի | կ ա հ<br>կարա-<br>սի օսմ.<br>նսկի | բնակիչ | մեղուի<br>փեթակ | շերամ<br>օ ս մ .<br>նսկի | արտ ու<br>պարտէզ<br>օսմ. նսկի |
|-------------------------|------|------|--------|--------------|------|-----------------------------------|--------|-----------------|--------------------------|-------------------------------|
| Տալտրիկ                 | 28   | 1318 | 89731  | 7222         | 904  | 129130                            | 14 472 | 12492           | ----                     | 76930                         |
| Բուսանաց                | 32   | 644  | 106310 | 4465         | 490  | 135090                            | 11376  | 17650           | 8250                     | 208900                        |
| Հ ա թ ն ի -<br>Մարաթուկ | 51   | 852  | 130810 | 5484         | 711  | 149690                            | 11215  | 15540           | 1610                     | 163620                        |
| Կուսգետ                 | 26   | 1166 | 167280 | 5315         | 1074 | 86180                             | 19480  | 58600           | 2610                     | 131900                        |
| Բոնաշէն-<br>Խուրթ       | 24   | 1484 | 147520 | 8590         | 873  | 118560                            | 16996  | 3090            | ----                     | 121500                        |
| Խիանք                   | 42   | 1743 | 230370 | 6838         | 2605 | 318500                            | 25710  | 25040           | 17050                    | 180970                        |
| Գումար                  | 203  | 7207 | 872021 | 37914        | 6657 | 937150                            | 99249  | 132412          | 29520                    | 883820                        |

|                                                                                                                     |                   |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------|
| Մասուն գաւառի 203 եկեղեցիներէն իւրաքանչիւրին սրբազան անօթներուն, գարդելէններուն եւ գոյքերուն արժէքը 300 օսմ. նսկիէն | 60900 օսմ. նսկի   |
| Մատին Առաքելոց, Ս. Յովհաննու, Ս. Աղբերակի վանքերու նուիրական արժէքը                                                 | 450000 օսմ. նսկի  |
| Վանքերու եւ սրբավայրերու հնութեանց արժէքը                                                                           | 800000 օսմ. նսկի  |
| Վանքերու ընտանի կենդանիներու ընդհանուր արժէքը                                                                       | 26000 օսմ. նսկի   |
| Վանքերու մատենադարաններուն արժէքը                                                                                   | 300 օսմ. նսկի     |
| Մասնոյ գաւառի ջրաղացներու արժէքը                                                                                    | 20800 օսմ. նսկի   |
| Հալէպի մէջ գտնուող սասունցիներու նիւթական կորուստը                                                                  | 85000 օսմ. նսկի   |
| [Գումար]                                                                                                            | 1382100 օսմ. նսկի |
| Ոչխար (1.25) <sup>32</sup> , եզ ու կով (4.0), ջորի (25), փեթակ (0.25), շերամ, արտ ու պարտէզ                         | 4733100 օսմ. նսկի |
| [Գումար]                                                                                                            | 6115200 օսմ. նսկի |

Ի դիմաց 1053 հալէպարնակ սասունցի վերապրողներու՝  
Սասնոյ Միութեան լիազօրներ՝

32 Այսինքն իւրաքանչիւր ոչխարի արժէք գնահատուած է 1.25 օսմ. նսկի, ու այսպէս՝ նաեւ յաջորդները:

Մկրտիչ Քինյ. Մուրադեան  
Տիգրան Երեցեան  
Արամ Երեցեան  
Մանուէլ Մարտիրոսեան  
Մովսէս Ամիրխանեան

Հալէպ, 24 Փետր. 1919

[illegible]

## THE INDICTMENT DOCUMENTS ON THE ARMENIAN GENOCIDE WRITTEN IN ALEPPO AND THE SASSOUN DOCUMENT (1919)

*Mihran A. Minassian*

*Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia*

### SUMMARY

The article is divided into two parts. The first part covers the development of indictment documents by patriotic unions or fractions of Aleppo in order to submit them to the Paris Peace Conference in 1919, each of which was a summary of the history of the Armenian massacres of a specific region. The overall list of the covered material and the content of each document are also outlined. It is interesting that the documents dedicate large sections for listing the names of the Turkish perpetrators of each region and the material losses suffered by the Armenians.

The second part of the article includes the indictment document of Sassoun district, which contains general geographical information and important details about the social life of the Armenians of Sassoun, i.e. meetings of principals and elders, Armenian-Kurdish relations, the situation of the Armenians of Sassoun in 1894-1896 and 1914-1916, and a brief list of the perpetrators of the massacres. The second part of the document covers the village lists and censuses of the six sub-districts of Sassoun - Dalvorig, Pusank, Hatni-Maratug, Gusked, Pernashen-Khut and Khiank, where 203 villages are mentioned with the numbers of their Armenian population and other details.

**Key words:** Armeian Genocide, Aleppo, Inter-Provincial Patriotic Union, Aram Andonean, prof. Haygazoun Aramean, Karapet Gabikean, Armenian Genocide Indictment Documents, Western Armenia, Cilicia, Asia Minor, Sassoun district, Versailles Peace Conference.

## СОЗДАНИЕ В АЛЕППО ОБВИНИТЕЛЬНЫЕ СПРАВОЧНИКИ ГЕНОЦИДА АРМЯН И СПРАВОЧНИК САСУНА (1919 Г.)

*Мигран А. Минасян*

*Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения*

### РЕЗЮМЕ

Статья разделена на две части. Первая часть посвящена созданию землячествами или организациями Алеппо обвинительных справочников для предоставления Парижской мирной конференции в 1919 году, каждый из которых содержал краткую историю резни армян в отдельных районах. В общих чертах представлены содержание и список освещенных тем

каждого справочника. Примечательно, что в каждом справочнике большое место отведено спискам турецких преступников и материальным потерям армян.

Во второй части статьи представлен справочник провинции Сасун, в котором содержатся общие географические сведения и важные данные об общественной жизни Сасуна: княжеский (Իշխանաց) совет и совет старейшин, армяно-курдские отношения, положение армян Сасуна в 1894-1896 и 1914-1916 годах и краткий список погромщиков. Здесь же представлены список деревень и перепись населения шести округов Сасуна – Талворик, Бусанк, Атни-Маратук, Кусгет, Брнашен-Хут и Хиат. В общем и целом отмечены 203 деревни, для каждой из них отмечено число домов и представителей армянского населения и т.д.

**Ключевые слова:** Геноцид армян, Алеппо, межпровинциальное землячество, обвинительные справочники Геноцида армян, Западная Армения, Киликия, Малая Азия, область Сасуна, Версальская мирная конференция.

## REFERENCES

- Հալեպի Ազգային առաջնորդարանի արխիվ [Archives of the Aleppo National Prelacy];  
Հայ Չափն [Armenian Voice]. Aleppo, 1918;  
Վան-Տնսյ [Van-Dosp], no. 13, 21, Tiflis, 1916, 6-7;  
«Սասուն. Վիճակագրական...» [Sasoun: Statistics...]. *Դրոշակ* [Droshag]. Geneva, 1904;  
A-Do (Der-Mardirosian, Hovhannes). Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները [The vilayets of Van, Bitlis and Erzurum]. Yerevan: Kultura, 1912;  
Aramian, Hayk. «Շահեկան տեղեկագիր մը Զեյթունի և զեյթունցիներու ողբերգութեան մասին», [A Beneficial Bulletin about the Tragedy of Zeytun and the People of Zeytun]. *Memorial Book of the Armenian Martyrdom* (1915-1965), III ed., Beirut: Zart'onq, 1987, 850-854;  
Badalyan, Gegham. «Արևմտեան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրէին. Մաս ութերորդ: Սասուն պատմաաշխարհագրական մարզը և Բաղէշ (Բիթլիս) քաղաքը» [Historical and Demographic Image of Western Armenia on the Eve of the Armenian Genocide: Part 8. Historical-geographical District of Sasun and the Town Baghesh (Bitlis)]. *VEM Pan-Armenian Journal* 2 no. 58 (2017): I- XLVII;  
Chizméchean, Manuk. *Խարբերդ եւ իր զաւակները* [Kharberd and its offsprings]. Fresno-California, 1955;  
Gabikian, Karapet. Եղեռնապատում. Փոքրոն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ [Yeghernapatum (history of genocide) of Armenia Minor and its Great Capital Sebastia]. Boston: Hayreniq, 1924;  
Mardirosian, Nazaret. «Համերոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը» [Statistics of the Provinces of



- Eastern Armenia deserted during the Pan-European War]. *Van Tosp* (Tiflis), 12 Feb. 1916;
- Pambuqean, Eruand. Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար [Materials for the History of A.R. Federation. vol. XII]. Beirut: Hamazkayin Vahe Setian, 2016;
- Petoyan, Vartan. *Սասուն* [Sassoun]. Yerevan: Nakhapem, 2016;
- Sasouni, Karo. *Պատմութիւն Տարօնի աշխարհի* [History of Daron]. Antelias: House of the Armenian Catholicosate of Cilicia, 2013;
- T'at'oyan, Robert. «Արևմտեան Հայաստանի Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թիւը Մեծ Եղեռնի նախօրեակին» [The Armenian Population of Bitlis Province of Western Armenia on the Eve of the Armenian Genocide] (forthcoming);
- T'eodik, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտայի 1915 տարիին [Golgotha of the Armenian Clergy and its Flock in Catastrophic 1915]. New York: St. Vartan Press, 1985;
- Vartan, Levon. «Ամբաստանագիր-Տեղեկագիրներ» [Accusatory-Reports]. *Haigazian Armenological Review* XV (1995): 497-553.

### Հեղինակի մասին

#### About the Author

#### Об авторе

**Միհրան Ա. Մինասեան**, բանասեր, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտաշխատող, Հայոց ցեղասպանության հուշագրությունների, վավերագրերի և մամուլի բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական հիմքերը, հայ գրքի և ձեռագրերի պատմություն, հալեպահայ գաղթօջախի պատմություն և այլն:

Էլ. փոստի հասցե՝ minassian.mihran@genocide-museum.am

**Mihran A. Minassian**, Philologist, Head of the Department of the Armenian Genocide Memoires, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – sources of the Armenian Genocide studies, history of the Armenian book and manuscripts, history of Aleppo-Armenian colonies.

E-mail: minassian.mihran@genocide-museum.am

**Мигран А. Минасян**, филолог, научный сотрудник, заведующий отделом Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – источниковедение Геноцида армян, история армянской книги и рукописей, история армянской общины Алеппо и т. д.

Эл. почта: minassian.mihran@genocide-museum.am

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՄԱՐՈՒՄ

Արմեն Շ. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայաստան

Սկսած 19-րդ դարավերջից՝ Հայոց ցեղասպանության հիշողության փոխանցումն արտացոլվել է ոչ միայն հայ ժողովրդական վիպական և քնարական բանահյուսության մի շարք տեսակներում, այլև տարաբնույթ հուշագրություններում, որոնցից մեկն էլ ժողովրդական տոմարային արտացոլումներն են: Վերջինիս դեպքում ուղիղ կամ միջնորդավորված անձն է իբրև փաստ ներկայացնում ցեղասպանությունն իրագործողի վայրագությունները:

Ցեղասպանական իրողությունների հիշողության փոխանցման տոմարային արտացոլումներն իրագործվում են բանավոր հարցումների՝ տրամախոսության միջոցով: Ժողովրդական ասույթաբանությամբ արտահայտված երկխոսական- հարցուպատասխանական նմանատիպ կառույցները թեմատիկ տարատեսակ դրսևորումներով են հանդես գալիս՝

ա. ծննդյան տարեթվերի տոմարային նկարագրությամբ,

բ. ամուսնության տոմարային ժամանակի փաստարկմամբ,

գ. ցեղասպանության ժամանակ ականատեսի տարիքի վերաբերյալ հարցմամբ և գաղթ-աքսորի արտացոլմամբ,

դ. ինքնապաշտպանական հերոսամարտի մատնանշմամբ,

ե. ազգային-ազատագրական շարժման հերոսներին առնչվող դրվագների պատկերմամբ:

Ժողովրդական տոմարի նման արտացոլանքները հիշողության ինքնատիպ և խոսուն պատառիկներ են: Դրանք մատուցվում են որպես ականատեսների, նրանց ժառանգների կամ այլ անձանց կողմից ներկայացվող իրողություններ, որոնք ևս առանձնանում են Հայոց ցեղասպանությունը հավաստող պատմավավերագրական նյութի մատուցման յուրահատկությամբ:

**Բանալի բառեր** - ժողովրդական տոմար, հուշագրություն, ժողովրդական ասույթաբանություն, ծննդյան տարեթիվ, ցեղասպանական վկայագրեր, գաղթ-աքսոր, ինքնապաշտպանական հերոսամարտեր:

Հոդվածը ներկայացվել է 10.09.2021: Ընդունվել է տպագրության 25.11.2021:

The article was submitted on 10.09.2021 and accepted for publication on 25.11.2021.

Статья поступила 10.09.2021 и была принята к публикации 25.11.2021.

**Ինչպես հղել՝** Արմեն Շ. Սարգսյան, «Հայոց Ցեղասպանության արձագանքները ժողովրդական տոմարում», *Յեղասպանագիտական հանդես* 9, no. 2 (2021), 127-137:

**How to cite:** Armen Sh. Sargsyan, “Echoes of the Armenian Genocide in Folk Calendar,” *Ts’eghaspanagitakan handes* 9, no. 2 (2021): 127-137.

**Как сослаться:** Армен Ш. Саргсян, “Отголоски Геноцида армян в народном календаре,” *Тсехаспанагитакан андес* 9, no. 2 (2021): 127-137.

## Հայոց ցեղասպանության արձագանքները ժողովրդական տոմարում

Հայոց ցեղասպանությունը հավաստող բազմաթիվ փաստարկ-վկայություններ կան, որոնց առ այսօր անդրադարձ չի եղել: Որպես ցեղասպանության հետևանքով հրաշքով ողջ մնացած և բնավեր դարձած արևմտահայության բեկորների՝ կորսված հայրենի երկրի հիշողության պահպանման վկայագրեր՝ ցեղասպանագետ-բանագետների ուսումնասիրությանն է սպասում Հայաստանում և արտերկրում հանգրվանած գաղթականների ու նրանց ժառանգների շրջանում հայրենի բնակավայրերով ու աշխարհագրական անուններով ստեղծված *անձնանունների* (Կարին, Սասուն, Մասիս, Արարատ և այլն) և *ազգանունների* (Սասունյան, Մշեցյան, Էրզրումցյան, Կարինյան և այլն) առկայությունը:

Ցեղասպանության փաստարկ-վկայագրեր են նաև Հայաստանում հանգրվանած արևմտահայության բեկորների հիմնած նոր բնակավայրերի անվանումները (Նոր Ամասիա, Նոր Արտագերս, Նոր Հաճըն, Նոր Արեշ, Աշնակ, Այնթափ, Նոր Արաբկիր, Նոր Բուրանիա, Նոր Զեյթուն, Նոր Մալաթիա և այլն):

Ցավոք, այս վերջին գործառնությունը կրկին իրագործվեց նաև Մեծ եղեռնից 70 տարի անց՝ 20-րդ դարավերջին: Ադրբեջանական վայրագությունների՝ Սումգայիթի, Բաքվի, Գանձակ-Կիրովաբադի, Գյուլիստան-Շահումյանի և այլ վայրերի ցեղասպանական ջարդերից մազապուրծ արցախահայությունը և նախիջևնահայությունը ևս Հայաստանի Հանրապետությունում հաստատված իրենց նոր բնակատեղիներն անվանակոչեցին կորցրած բնակավայրերի անուններով (Նոր Խաչակապ, Նոր Գետաշեն, Դպրավան՝, Նոր Ազնաբերդ – Զնաբերդ, Գողթանիկ և այլն):

Որպես ցեղասպանության վկայություն՝ կորսված տեղավայրերի բնակչության հիշողության, ազգային ոգու պահպանման և գալիք սերունդներին այդ հիշողությունն ու ոգին փոխանցելու միջոց դարձան նաև ազգագրական տարատեսակ երգ ու պարի խմբերի ստեղծումը, դրանց տրված անվանումներն (Սասուն, Սասունիկ, Տիգրանակերտ, Վասպուրական, Մուշ, Կարին և այլն) ու խաղացանկում ընդգրկված հայրենի բնաշխարհի երգն ու պարը:

19-րդ դարի վերջից մինչև մեր օրերը Հայոց ցեղասպանության հիշողության փոխանցումն արտացոլվել է ոչ միայն բանահյուսական տարատեսակ ժանրերում, (որքան էլ անհավանական ու տարօրինակ թվա, մինչևիսկ հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում (անեկդոտներում<sup>2</sup>), այլև *ժողովրդական հուշագրություններում*: Եթե մինչև վերջերս հրատարակված տարաբնույթ հուշագրական գրքերում և զանազան ժողովածուներում ընդգրկված նյութերը (իբրև փաստ, իբրև կատարված հավաստի գործողություններ) ներկայացնողը

1 Շամախու շրջանի Մադրասա գյուղից ներգաղթածներն Աշտարակի շրջանում մի առանձին հողակտոր են վերցնում, նոր շեն կառուցում և նախկին բնակավայրի պարսկերեն անվանումը հայերեն թարգմանելով՝ այն անվանում են Դպրավան:

2 Արմեն Շ. Սարգսյան, «Հայ ժողովրդական երգիծական մանրապատումները և զվարճախոսությունները որպես ցեղասպանության վկայություններ», *Հայկազեան հայագիտական հանդես* 35 (2015), 543-557:

գերազանցապես ցեղասպանության անմիջական ականատեսն է եղել<sup>3</sup>, ապա վերջին շրջանում թղթին են հանձնվում նաև նրա հաջորդ սերունդների ներկայացուցիչների վկայությունները:

Ցեղասպանությանն առնչվող սույն թեման վերաբերում է ժողովրդական հիշողության մեկ այլ դրսևորմանը՝ բանավոր հարցումների՝ տրամախոսության միջոցով մեր ժողովրդի ամենաողբերգական ժամանակների մասին առանձին դրվագներ ներկայացնելուն: Այդպիսի հարցուպատասխաններն արտահայտված են ժողովրդական ասույթաբանական կառույցների, տվյալ պարագայում՝ ժողովրդական տոմարի կիրառությամբ: Ցավոք, նմանատիպ դրսևորումները ժամանակին չեն արձանագրվել ո՛չ բանագետների (իբրև ժողովրդական ասույթաբանության ինքնուրույն տեսակ), և ո՛չ էլ ցեղասպանագետների կողմից (իբրև ցեղասպանության արձանագրման ինքնատիպ վկայություններ):

Ժողովրդական տոմարին առնչվող ասույթաբանական նյութեր սկսել ենք գրառել 20-րդ դարի 70-ականների սկզբից: Այդ ժամանակ հարազատներիցս, որպես ինձ հետաքրքրող տարեթվային փաստերին տրվող պատասխաններ, սկսեցի գրանցել ծննդյան տարեթվերին առնչվող ժողովրդական տոմարի տրամախոսական դրսևորումները: Ճիշտ է, կրթություն չունեցող մեր տատիկ-պապիկները դրանք ներկայացնում էին իբրև ժամանակը փաստող բավականին լուրջ հիմնավորումներ, այնուամենայնիվ, տոմարային այդ փաստարկներն իմ և գիտակրթական առաջընթացներին հաղորդակից մյուս ունկնդիրների կողմից ընդունվում և շրջանառվում էին որպես ժամանցի ընթացքում տրամադրություն ստեղծող, ծիծաղ հարուցող գավեշտալի նկարագրություններ:

Նմանատիպ կառույցների մասին որոշակի պատկերացում կազմելու համար ներկայացնենք դրանցից մի քանի նմուշ: Այսպես՝

*Ա. Մի օր Անուշ տատիս հարցրի . // – Նանի, Աշոտ բիծին էրբ ա ծնվել: // Բա թե՛// – Աշոտս ծնվել ա խրզի պասին<sup>4</sup>: (ԱՍԾՀ)<sup>5</sup>*

*Բ. Հայրս մի օր հարցնում է մորը . // – Ա՛յ մեր, ես էրբ եմ ծնվել: // – Ասեմ, բալս՛ ջան. դուն Մանիշակի խալըչի (իմա՛ գորգ) թայն ես, – պատասխանում է մայրը՝ ներկայացնելով տղայի ծննդյան «ստույգ թիվը»: (ԱՍԾՀ)*

3 Տե՛ս օրինակ Վերժինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ*, 2-րդ հրատ. (Երևան, «Գիտություն», 2011), նաև՝ *Օսմանեան բանակի զինուոր Սարգիս Հանիեանի վկայությիւնը*, գրի առաւ Յակոբ Հանիեան, յառաջաբանով եւ ծանօթագրութեամբ հրատարակութեան պատրաստեց Յակոբ Չոլաքեան (Երևան, Էդիթ պրինտ, 2020):

4 Ըստ հորեղբորս՝ Աշոտ Սարգսյանի՝ ոչխարի խուրը Լոռու մարզի Շամուտ գյուղում երկու անգամ է կատարվում՝ աշնանը և գարնանը՝ Մեծ պասից հետո:

5 Այսուհետև ներկայացվող նմուշի մոտ՝ փակագծում, կնշվի (ԱՍԾՀ – իմա՛ Արմեն Շ . Սարգսյանի հավաքածու) համառոտագրությունը, իսկ տողատակում կներկայացվի միայն այլոց սակավաթիվ գրառումները:

*Գ. Երբ հարցնում էին տատիս, թե՞ – Երբ են ծնվել երեխաներդ: // Ասում էր. // – Առաջինը՝ մասրակը (ինսա՝ գումեշը) ծնավ, Գարասը՝ Էղավ, երկրորդը՝ գնացի թիթենի (ինսա՝ աթարի), Էկա, Վաչու Էղավ, երրորդը՝ ղսզախը (վառելիքի՝ աթարի դեզը) բլավ, Շիրինս ծնավ: (ԱՍՇՀ)*

Հետագա տարիներին ժողովրդական տոմարի մեր կատարած գրառումների մեջ տեղ գտան նաև այնպիսի նմուշներ, որոնցից շատերը, ճիշտ է, կրկին վերաբերում էին ծննդյան, ամուսնության և այլ տարեթվերին, սակայն դրանք իմ և շրջապատի համար ամեննին էլ ծիծաղ հարուցող զավեշտալի նկարագրություններ չէին, այլ կատարված որոշակի ողբերգական միջադեպերի՝ թուրքական վայրագությունների վերաբերյալ տեղեկություններ հաղորդող վավերագրական նյութեր: Գրանցած այդ նմուշները ժողովրդական տոմարի միջոցով Հայոց ցեղասպանության մասին փաստարկող հիշողությունների պատառիկների ասույթաբանական արտացոլանքներ էին:

Ժողովրդական տոմարի տարատեսակ թեմատիկ դրսևորումների մեջ առանձնանում են հատկապես ծննդյան տարեթվերին կամ հարցվող անձնավորության, նրա ընտանիքի անդամների տարիքին, ամուսնությանն առնչվող այն վկայագիր-վավերագրերը, որոնք վերաբերում են հայ ժողովրդի ամենաողբերգական ժամանակներին՝ ցեղասպանությանն ու տարագրությանը, երբեմն էլ՝ ինքնապաշտպանական հերոսամարտերին և ազգային ազատագրական շարժման հերոսներին:

Հայրենիքից բռնի տեղահանվածներն ու նրանց ժառանգները «պայծառ տխրությամբ»<sup>6</sup> են հիշում դրանք և վերապատմելով իրենց շրջապատում՝ այդ հիշողությունը փոխանցում են գալիք սերունդներին: Ջարդեր ու ցեղասպանություն արտացոլող ասույթաբանական կառույցներում զանգվածային կոտորածները ժողովրդական տարատեսակ «անվանումներով» են հանդես գալիս: Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի իրագործած ջարդերը՝ 1894-1896 թթ. տարիներին պարբերաբար իրագործված հայերի զանգվածային առաջին կոտորածները ստացան *համիդյան ջարդեր*, *համիդյան կոտորածներ* անվանումները: Այդ ոճրագործությունները հայոց ժողովրդախոսակցական լեզվում և ժողովրդական տոմարի ասույթաբանական կառույցներում արձանագրվել են *առաջին դրթալ*<sup>7</sup> բառակապակցությամբ:

– *Քնսապցի տատիս երբ հարցրի.*

*Երբ ես ծնվել:*

*Ասավ՝*

*Առաջին դրթալին: (ԱՍՇՀ)*

Իսկ իրթիհատականների կողմից կազմակերպված Ադանայի կոտորածը ժողովրդի

6 Լեզվաբան Ռաֆայել Իշխանյանի՝ Վահան Տերյանի պոեզիային տրված բնորոշումն է:

7 *Առաջին դրթալ* – առաջին կոտորած: Խոսքը 1894-1896 թթ. սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կողմից կազմակերպած զանգվածային կոտորածների մասին է, որին զոհ են գնացել ավելի քան 300000 հայեր, 100000-ը բռնի իսլամացվել է, իսկ 100000-ը ստիպված տարագրվել է տարբեր երկրներ:

մեջ ամրագրվել է *մեծ դթայ* կամ *Ադանայի դըթալ*<sup>8</sup> բառակապակցությամբ: Հայերի կոտորածները փաստարկող նմուշներից մեկում ասացողն իր ծնվելու տարեթիվը ներկայացնում է ցեղասպանության իրագործման կոնկրետ վայրը (Ադանա) և իր՝ *գրկի էրեխա* լինելը մատնանշելով:

– *Քեսապցի տատիս մի օր էլ հարցրի.*

*Տա՛տ, երբ ես ծնվել:*

*Ասալ.*

– *Ադանայի դըթալին գրկի էրեխա էի:* (ԱՍՇՀ)

Մեր գրառումներից մեկում ամուսնության տոմարային ժամանակը ներկայացնելիս ասացողն իբրև տարեթիվ ոչ միայն Ադանայի կոտորածն է մատնանշում (նախորդից՝ 1894-96 թթ. համիդյան կոտորածների ժամանակի հետ չնույնացնելու համար վերջինս անվանում է *մեծ դթայ*), այլև դրան հաջորդած շուրջ մեկուկես տասնամյակի մեծեղեռնյան անցուդարձերի և անձնական կյանքի հակիրճ նկարագրությունն է տալիս՝ խոսքն ամփոփելով հետեղեռնյան անձնական իրավիճակի ժողովրդական պատկերավոր նկարագրությամբ:

– *Երբ ես ամուսնացել, – հարցնում էին պապիս:*

– *Մեծ դթայից հետո (իմա՝ 1909 թ. Ադանայի կոտորածից հետո):*

Գացի Ադանա՝ գործ փնտրելու, խելոք տղա էի, տուն-տեղ չունեի, բերին ամուսնացրին, գեշ էր: Եղեռնին ունեցվածքը կորցրինք, 21-ին հետ եկանք, մինչև 23-ը Կիլիկիան պարսպվեց:

«Մալը գնաց, մեյմունը մնաց», – ասում էր պապըս կնոջ ունեցվածքը կորցնելուց հետո: (ԱՍՇՀ)

Հայոց ցեղասպանությունն իրագործող ոճրագործների՝ իրենց կարծիքով «արդարացրած» քայլը պատերազմի գոտուց հայությանը իբր հեռացնելու գործողությունն էր, որը պետականորեն անվանվեց *աքսոր*, իսկ ժողովրդի շրջանում՝ *փախեփախ*: Այն իրագործվում էր հստակ և ծրագրված. տղամարկանց բանակ գորակոչելու պատրվակով առանձնացնում էին և խումբ-խումբ ոչնչացնում, իսկ անպաշտպան մնացած ծերերին, կանանց ու երեխաներին քշում Դեր Զորի անապատներ:

Մեր գրառած նմուշներից մեկում Եղեռնից մազապուրծ 91-ամյա կինն իր ծննդյան տարեթիվը որոշակի չի կարող ասել և այն ներկայացնում է ըստ քրոջ վկայության, այսինքն՝ *փախեփախի* տարին, ասել է, թե՛ աքսորի տարին, քանի որ ինքը գրկի էրեխա է եղել այդ *գուլումի* ժամանակ:

8 *Ադանայի կոտորածը* վերաբերում է 1909 թ. ապրիլի 1-4 և 12-14-ին Ադանայի և Հալեպի նահանգների հայ բնակչության զանգվածային ջարդերին: Այդ կոտորածներին գոհ գնաց շուրջ 30000 մարդ, որից ավելի քան 20000-ը՝ Ադանայի վիլայեթում: Ավերվեցին և հրկիզվեցին տասնյակ հայաբնակ քաղաքներ ու գյուղեր:

– Ո՞ր թվին ես ծնվել, – հարցնում եմ 91-ամյա Մարիամ տատին:

Ասավ.

– Փախեփախի տարին: Էդ վախտ մի քանի ամսական եմ էղե, 14 տարեկան քուրճս ինձ գրկած փախել, էդ զուլումի միջից փրկել ա: (ԱՍՇՀ)

Ժողովրդական տոմարում Հայոց ցեղասպանությունն արտացոլվել է ականատեսի տարիքի վերաբերյալ հարցմամբ և գաղթ-աքսորի արտացոլմամբ, որտեղ բնութագրվում է ցեղասպանվող ժողովուրդն իր գիր-գրականության և քրիստոնեական հավատքի հանդեպ ունեցած նվիրվածությամբ.

Քեսապցի տատիս երբ հարցնում էի.

– Տատի՛, քանի տարեկան էիր կոտորածների ժամանակ:

Ասում էր.

– Տարեկանը չգիտեմ, բայց հիշում եմ՝ ավետարանը մեջքիս կապեցին ու ճամփա ընկանք... (ԱՍՇՀ)

Հայ ժողովրդական տոմարում ցեղասպանությունն արտացոլվել է նաև բազմաստիճան կառուցվածքով հարցուպատասխանային ասույթաբանության միջոցով: Այս դեպքում ասացողը փորձում է ժողովրդական ծիսակարգերից մեկի՝ տվյալ պարագայում՝ հարսանիքի ժամանակ կատարված սպանության, առաջին համաշխարհային պատերազմն սկսվելու, գորահավաք հայտարարելու, հայոց ազգային ողբերգության՝ աքսոր-տարագրության և բնության որոշակի ժամանակահատվածին առնչվող փաստարկների մատնանշում-թվարկմամբ ամբողջացնել մարդկանց հիշողության վրա խոր հետք թողած իրադարձությունները.

Երբ քեսապցիին կհարցնեին՝ երբ ես ծնվել, կըսեր.

– Գանլը կելին (իմա՝ արյունոտ հարսի) հարսանիքին<sup>9</sup> երկրորդ օրը:

Կըսեն՝

– Հարսանիք երբ եղավ:

– Փոր Սահտեն<sup>10</sup> դարձին ութերորդ տարին էղավ (իմա՝ 1928 թ.):

– Փոր Սահտեն երբ ելաք:

– Սաֆարպիրլյեն<sup>11</sup> վեց տարի ետք:

9 Գարատուրանում այդ հարսանիքի ժամանակ չորս մարդ է սպանվել, դրա համար էլ ժողովրդի մեջ այն հիշվում է «արյունոտ հարսի հարսանիք» արտահայտությամբ:

10 Փոր Սահտ – Պորտ Սաիդ, գաղթակայան՝ Եգիպտոսում՝ Սուեզի ջրացքի ափին, ուր հավաքված էին Մուսա լեռան հերոսամարտի մասնակիցները, իսկ ավելի ուշ՝ մինչև 1920 թ., այլ վայրերից եկածները:

11 Սաֆարպիրլիկ - արաբերեն՝ սեֆեր (ճամփորդել) + բերլիք (միասին, միություն): Սեֆերբերլիքը հայ ժողովրդի համար 1914 թվականի ընդհանուր գորահավաքն է: Օգոստոսի 1-ին սկսվել է պատերազմը, հաջորդ օրը Սեֆերբերլիք է հայտարարվում, որը նշանակում էր պարտադիր գորահավաք: Արաբների մոտ էլ է փոխվում բառի իմաստը՝ նշանակելով սով, սովամահություն: Լիբանանում և Սիրիայում Սեֆերբերլիքը գործածվում է իբրև սովի հոմանիշ: Հայերը տարագրության ճամփին էին մահանում,

– Սաֆարայիրիկը երբ եղավ:  
– Թալանդին<sup>12</sup> վեց տարի ետք (իմա՝ 1915 թ.):  
– Թալանդը երբ եղավ:  
– Ծովու թաղը թուրք կոտուկեր (տարբ.՝ շերամը նոր որդը կթափեր), – այսինքն՝  
գարնան առաջին օրերին<sup>13</sup>: (ԱՄՇՀ)

Հ. Չոլաքյանի հաղորդած տոմարային մեկ այլ վկայության մեջ ոչ միայն մատնանշվում է Եգիպտոսի Պորտ Սաիդն ու այնտեղ տեղակայված հայ գաղթականը, այլև այդ դժնդակ ժամանակներում Քեսապի քսորյալներին սատար կանգնած Գարատուրան գյուղի Տեր Պետրոս քահանա Աբրահամյանը, որը «Ամմանի մեջ մեկ գիշերուան մեջ երեսուն աղջիկ պսակեց՝ հայ քրիստոնեայի արարողութեամբ, որ թուրքի ձեռքը չիյնան»<sup>14</sup>.

*Գաղթականներից մեկը կպատմե.*

– Մեր պսակին ատենը Տեր Պետրոսը որ հայտարարեց՝ պիտի վերադառնան, առաջին պատիկը ծնավ:

– Երբ ծնավ առաջին պատիկը:

– Փոր Սահտեն դառնալուց այսքան ժամանակ ետք:

Ի դեպ, այդ հավաքական պսակների մասին վկայված է նաև «Օսմանեան բանակի զինուոր Սարգիս Հանիեանի վկայութիւնը» գրքում. «Երբ հայերը տեսան, որ թուրքերը հայ աղջիկներին տանում են, սկսեցին հայ երիտասարդներին կանչել եւ ասել՝ որ ով կարողանայ փրկել մի հայ աղջկայ, դա կը նշանակի, որ փրկում է հայ ժողովուրդը, գալիք սերունդը»<sup>15</sup>:

Մեր մեկ այլ գրառման մեջ էլ Հայոց ցեղասպանությունն արտացոլվել է ինքնապաշտպանական հերոսամարտի մատնանշմամբ: Ասացողն այնպիսի հպարտությամբ է ներկայացնում պապի ձեռքը բռնած Մուսալեռ բարձրանալը, ասես ինքնապաշտպանական կռիվների խիզախ մասնիկներից մեկն էլ ինքն է եղել.

*Թոշակի անցնելիս պապիս հարցնում են.*

– Հայրիկ, թիվըդ գիտե՞ս:

Ասում ա.

– Թիվը չգիտեմ, բայց Մուսալեռի հերոսամարտին պապիս ձեռք բռնած Մուսալեռն էինք բարձրանում...: (ԱՄՇՀ)

---

Լիբանանի և Սիրիայի արաբները՝ սովից:

12 Թալանդ – թալան, կողոպտու: Քեսապի բարբառում թալան բառին դ է ավելանում: Խոսքը 1909 թ. տեղի ունեցած խոշոր թալան-ավերածության մասին է:

13 Ասացող՝ հայագետ Հակոբ Չոլաքյան: Լսել է գարատուրանցի հրաշալի ասացող Ջանտ Սաղդյանից: Այս և հաջորդ նմուշի ծանոթագրությունները Հ. Չոլաքյանին են:

14 Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Գ. հատոր (Հալեպ, 2004), 498:

15 Օսմանեան բանակի զինուոր, 77-78:



Ժողովրդական տոմարային դրսևորումների մեջ քիչ չեն ազգային-ազատագրական շարժման հերոսների, մասնավորապես Զորավար Անդրանիկի անվան մատնանշմանը նմուշների գրառումները.

– Պապի, – մի օր հարցրի մեր հարևանին, – հիշում ես՝ երբ ես ծնվել:

Ասավ.

– Թիվը չեմ հիշում, բայց Արագն անցնելիս Անդրանիկը գրկել ա ինձ ու ձիով անց ա կացրել մյուս ափը ( 2-3 տարեկան է եղել-ասացող): (ԱՍԾՀ)

Ժողովրդական տոմարի ասույթաբանական նմանատիպ դրսևորումներում Անդրանիկը հայության համար ներկայանում է նաև ժամանակի ձևաչափի այնպիսի առանձնահատուկ դերով, ինչպես, ասենք, Քրիստոսը (*Քրիստոսից առաջ– Քրիստոսից հետո*)՝ իբրև մարդկության հին ու նոր ժամանակների բաժանարար գիծ: Այսպես. թիֆլիսյան իր բնակարանում բանաստեղծ Հովհ. Թումանյանը հարցնում է Թիֆլիսի հայկական որբանոցներից մեկի 14-ամյա սան Վաղարշակ Երիցյանին (ապագա բանաստեղծ Վաղարշակ Նորենցին).

– Լսե՛լ ես Անդրանիկի անունը:

– Այո, շատ եմ լսել...

– Ահա՛, նա ինքն է, մեր Անդրանիկը:

– Մայրս ասում էր, որ ես ծնվել եմ «Անդրանիկի կովից մի տարի առաջ»...

– Անդրանիկի ո՞ր կովից, Անդրանիկն այնքան կոխվներ է ունեցել, – բացականչեց Թումանյանը ծիծաղելով...<sup>16</sup>:

Ցեղասպանությունից հրաշքով փրկված և Հայաստանում հանգրվանած տարեց գաղթականներին ծննդյան վկայական տալու և կենսաթոշակ նշանակելու համար պետական մարմինների աշխատակիցները հաճախ էին դժվարությունների առաջ կանգնում, քանի որ նրանցից շատերը չգիտեին իրենց կամ իրենց զավակների ծննդյան տարեթվերը:

Տեղերում ստիպված հանձնաժողովներ են ստեղծվում և փորձում ճշգրտել տարեցների ծննդյան տարեթվերը:

«Հիշում եմ, մորս պատմածը, – գրում է գաղթական սասունցու թոռ Մելանյան, – թե ինչպես էր նա *ծննդական* տալու համար Էրզրից գաղթած իր մորը սովորեցրել ասել նրա ծննդյան թիվը, բայց այդպես էլ խեղճ տատս չէր կարողացել թիվը ճիշտ ասել ու առաջացրել էր նրան «քննողների» ծիծաղը»: Իսկ հանձնաժողովում ընդամենը հարցրել էին.

– Մայրի՛կ, ո՞ր թվին ես ծնվել:

Ասեմ, լսո՛ւ. հազար ութը հարի՛ր ու... հարի՛ր, – պատասխանել էր Մեծ Զոցոն

16 Վաղարշակ Նորենց, *Հուշեր և արձագանքներ* (Երևան, «Հայաստան» հրատ., 1968), 23:

և զարմացել, թե ինչ սխալ բան ասավ, որ բոլոր «քննողները» սկսեցին ծիծաղել...: (ԱՍՇՀ)

Մեր գրառումներում ծննդյան տարեթվերին վերաբերող տոմարային մեկ այլ, այսպես ասած, հանելուկային «փաստ» կա, որի վերծանում-բացատրությունն առեղծված է մնացել նույնիսկ գաղթական տատի թոռների համար.

*Սաթեն տատըս Վանի Այգեստանից էր, ամուսինը՝ Վանի ափին գտնվող Էսփիշ գյուղից: Գաղթից հետո հիմնավորվել էին Երևանում: Մի օր հարցնում են Սաթեն տատիս.*

*– Մարդըդ որ թվին ա ծնվել, Սաթեն տատ: // Ասում է. // – Յոթաբբիների էրկուշաբբի:*

*– Ո՛րն է Յոթաբբիների էրկուշաբբին, մինչև հիմա էլ մեզ համար հանելուկ է մնացել, – ասում է ասացողը՝ գրականագետ Արևիկ Աբրահամյանը: (ԱՍՇ)*

Այսպիսով՝ վերը ներկայացված ժողովրդական տոմարի տարատեսակ արտացոլանքները Հայոց ցեղասպանության հիշողության ինքնատիպ և խոստուն վկայության պատառիկներ են, որոնց միջոցով մեկ անգամ ևս վերահաստատվում են թուրքերի կողմից հայ ժողովրդի հանդեպ պետականորեն պարբերաբար իրագործած մեծագույն ոճրագործությունները: Դրանք, որպես ականատեսների կամ նրանց ժառանգների ու հարազատ-մտերիմների կողմից ներկայացվող իրողություններ, առանձնանում են ոչ միայն ասույթաբանական տեսակային ինքնատիպ կառուցվածքով, այլև ցեղասպանությունը հավաստող պատմավավերագրական նյութի մատուցման յուրահատկությամբ:

## ECHOES OF THE ARMENIAN GENOCIDE IN FOLK CALENDAR

*Armen Sh. Sargsyan*

*Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia*

### SUMMARY

The transmission of the memory of the Armenian Genocide has been reflected not only in a number of types of Armenian folk epic-lyrical folklore, but also in various memoirs, one of which has been the folk calendar. In the latter case, the person directly or through the mediator allegedly presents the atrocities of the perpetrators of the Armenian Genocide.

Calendar reflections on the transmission of the memory of Genocide realities are made through oral inquiries. Dialogical-interrogative structures expressed in these folk sayings come in various thematic manifestations:

- a. with a calendar description of birth dates,
- b. with the argument of the calendar time of marriage,

- c. with survey of the age of an eyewitness during the Genocide, reflecting the deportation/exile,
- d. pointing to the self-defense heroic battles,
- e. through episodes related to the heroes of the national liberation movement.

The folk calendar is original, eloquent fragments of memory. They are presented through eyewitness-survivors', their relatives' or other persons' accounts, as a unique historical and documentary material certifying the Armenian Genocide.

**Key words:** folk calendar, memoirs, folk sayings, dates of birth, genocide certificates, migration-exile, self-defense battles.

## ОТГОЛОСКИ ГЕНОЦИДА АРМЯН В НАРОДНОМ КАЛЕНДАРЕ

Армен Ш. Саргсян

*Институт археологии и этнографии национальной академии наук  
Республики Армения*

### РЕЗЮМЕ

Передача памяти о Геноциде армян нашла отражение не только в ряде видов армянского народного эпико-лирического фольклора, но и в различных мемуарах, одним из которых являются отражения этих воспоминаний в народном календаре.

Календарные размышления о передаче воспоминаний о реалиях Геноцида производятся посредством устных запросов. Подобные диалогически-вопросительные структуры, выраженные в народных поговорках, имеют различные тематические проявления:

- а. с календарным описанием дат рождения,
- б. с аргументом календарного времени заключения брака,
- в. возраст очевидца во время Геноцида, отражающий изгнание,
- г. указывая на самооборонительные героические бои,
- д. с изображением эпизодов, связанных с героями национально-освободительного движения.

Отражения – подобные народному календарю – это оригинальные, красноречивые фрагменты памяти. Они представлены как факты, приведенные очевидцами, их наследниками или другими лицами, отличаются уникальностью изложения исторического и документального материала, подтверждающего Геноцид армян.

**Ключевые слова:** народный календарь, воспоминания, народные поговорки, даты рождения, свидетельства о геноциде, переселение-ссылка, самооборонительные бои.

### REFERENCES

- Ch'olaqian, Yakob. *Քիսիւնք*, Գ. հատոր [Qesap, Volume 3]. (Aleppo, 2004);  
Sargsyan, Armen. *Հայ ժողովրդական երգիծական մանրամասնումները եւ*

զվարճախոսությունները որպես ցեղասպանության վկայություններ [Armenian Folk Satirical Short Stories and Humorous Sketches as Evidence of Genocide]. *Haygazian Armenological Review* 35 (2015): 543-557;

Svazlyan, Verzhine. *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ*, 2-րդ հրատ. [Armenian Genocide. Testimonies of Eyewitness Survivors, 2<sup>nd</sup> edition]. Yerevan: Gitutyun, 2011;

Ch'olaqian, Hakob (compl.). *Օսմանեան բանակի զինուոր Սարգիս Հանիեանի վկայությունը, գրի առաւ Յակոբ Հանիեան* [The Testimony of Ottoman Soldier Sarkis Haniyan, written by Hagop Haniyan]. Yerevan: Edit Print, 2020;

Norents', Vagharshak. *Հուշեր և արձագանքներ* [Memoirs and Responses]. Yerevan: Hayastan, 1968.

### Հեղինակի մասին

#### About the Author

#### Об авторе

**Արմեն Շ. Սարգսյան**, ք.գ.դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ գրականության և բանահյուսության փոխառնչության հարցեր, մանկական բանահյուսություն, մանկական զվարճախոսություն, հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ), հայ ժողովրդական ստապատումներ և այլն:

Էլ. փոստի հասցե՝ armensargg@gmail.com

**Armen Sh. Sargsyan**, Ph.D. in Philology, Leading researcher at Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of Armenia.

Research fields – interrelations of literature and folklore, children folklore, children's entertaining, Armenian folk satirical stories and anecdotes, Armenian folk poetry, etc.

E-mail: armensargg@gmail.com

**Армен Ш. Саргсян**, доктор филологических наук, ведущий научный сотрудник Института археологии и этнографии национальной академии наук Республики Армения.

Область исследований – вопросы взаимосвязи литературы и фольклора, детский фольклор, детские развлечения, армянские народные сатирические рассказы и анекдоты, армянские народные лжесказания, и т.д.

Эл. почта: armensargg@gmail.com

## Գրախոսություն

Israel Charny, *Israel's Failed Response to the Armenian Genocide: Denial, State Deception, Truth versus Politicization of History* [Իսրայելի ձախողված արձագանքը Հայոց ցեղասպանությանը. ժխտողականություն, պետական խաբեություն, ճշմարտություն ընդդեմ պատմության քաղաքականացման], Boston, Academic Studies Press, 267 pp.:

Հայաստան Ա. Մարտիրոսյան

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ հիմնադրամ, Հայաստան

Այսօր, երբ դեռ շարունակվում են իրագործվել ցեղասպանություններ աշխարհի տարբեր անկյուններում, Իսրայել Չառնիի գրախոսվող աշխատանքն իրապես մեծ ներդրում է ցեղասպանությունների ժխտողականության ներկայացման, առավելապես, Հայոց ցեղասպանության նկատմամբ Իսրայել պետության որդեգրած քաղաքականության մասին, որի հիմքում ընկած են մի կողմից պետության տնտեսական և քաղաքական շահերը՝ զուգահեռվելով մարդկության ամենամեծ աղետի ընդունման և դատապարտման հետ, մյուս կողմից՝ Հոլոքոստի եզակիությունն այլ ցեղասպանությունների հետ համեմատության համատեքստում: Աշխատանքում ներկայացվում են, թե ինչպես ցեղասպանություն վերապրած ազգի պետական այրերը կարող են հեշտորեն մերժել և ժխտել նույն ողբերգության միջով անցած այլ ժողովուրդների ցեղասպանությունները:

Աշխատության հիմնական թեման 1982 թ. հունիսին Թեյ Ավիվում ցեղասպանագետ Իսրայել Չառնիի կազմակերպած «Հոլոքոստի և Ցեղասպանության առաջին միջազգային գիտաժողովն» է, որին պետք է մասնակցեին նաև հայ ցեղասպանագետներ՝ ներկայացնելով գեկույցներ Հայոց ցեղասպանության մասին: Իսրայելը, հաշվի առնելով Թուրքիայի ճնշումները՝ թույլ չտալու հայազգի հետազոտողների մասնակցությունն այդ գիտաժողովին, սկսում է տարբեր ուղիներով հասնել նրան, որպեսզի գիտաժողովն առհասարակ չեղարկվի: Իսրայելն այս ամենին հասնելու համար մեջտեղ է բերում վարկած՝ իբրև գիտաժողովի անցկացման պարագայում Թուրքիան կարող է փակել այն ուղիները, որով անցնում են Իրանից և Սիրիայից փախչող հրեաները, ինչը կվտանգի վերջիններիս կյանքը: Կայանալիք գիտաժողովը պետք է նախագահեր գրող, Հոլոքոստը վերապրած, Նոբելյան խաղաղության մրցանակակիր Էլի Վիգելը (1928-2016): Գրքի հեղինակ և գիտաժողովի կազմակերպիչ պրոֆ. Իսրայել Չառնին հայտնվում է ծանր դրության մեջ. նա պետք է հաշվի նստեր «Իրանը և Սիրիան լքող հրեաների անվտանգության հետ»:

Պրոֆ. Չառնիի կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ քայլեր. նա կապ է հաստատում ԱՄՆ պետքարտուղարության հետ՝ ճշտելու այդ հարցի ճշգրիտ կամ թյուր լինելը: Պետքարտուղարությունից տեղեկատվությունը ստանալուց հետո, պարզ է դառնում, որ իրականում որևէ վտանգ չի սպառնում հրեաներին: Պրոֆ. Չառնին

որոշում է կայացնում, որ գիտաժողովը պետք է տեղի ունենա: Տարիներ անց, երբ բացվում են Իսրայելի արտաքին գործերի նախարարության որոշ արխիվներ, ի հայտ է գալիս նաև Թուրքիայում Իսրայելի գլխավոր հյուպատոսի նամակագրությունը Իսրայելի արտաքին գործերի նախարարության հետ (նամակն ուղարկվել էր գիտաժողովից առաջ տեղի ունեցած երկօրյա աշխատաժողովի առաջին օրը՝ 1982 թ. հունիսի 17-ին), որից պարզ է դառնում, որ հրեաների անվտանգության մասին լուրը հորինված էր՝ չեղարկելու գիտաժողովը և չվատթարացնելու իսրայելա-թուրքական հարաբերությունները: Իսրայելի կողմից գիտաժողովի չեղարկման ջանքերն այնքան լուրջ էին, որ միջազգային ամսագրերն անգամ սկսում են գրել, որ գիտաժողովը չեղարկվել է, չնայած այն հանգամանքին, որ գիտաժողովն իրականում կայացավ և անցկացվեց բարձր մակարդակով:

Աշխատանքում առանցքային է Էլի Վիզելի կերպարը, որը համաձայնել էր նախագահել վերոնշյալ գիտաժողովը, սակայն Իսրայել պետության՝ գիտաժողովի նկատմամբ բացասական վերաբերմունքից հետո և ազդվելով հրեաների անվտանգության մասին թեզից՝ հետ է կանգնում գիտաժողովի կազմակերպման մտքից: Վիզելը հրաժարվում է գիտաժողովին տրամադրել այն գումարը, որը խոստացել էր, իսկ դրա հետ մեկտեղ փորձում է նաև կասեցնել հովանավոր այլ կառույցների հնարավոր ֆինանսական օժանդակությունը: Հետաքրքրական են այստեղ պրոֆ. Չառնիի և Էլի Վիզելի հարաբերությունները, որոնք, լինելով լավագույն ընկերներ, գիտաժողովի կազմակերպման հետ կապված տարաձայնությունների պատճառով որոշ ժամանակ խզում են իրենց հարաբերությունները:

Գրքում նաև ներկայացված են պրոֆ. Չառնիի այն նամակները, որոնք ուղարկվել են Իսրայելում բարձր պաշտոններ զբաղեցրած (վարչապետ, արտաքին գործերի նախարար, Քնեսեթի անդամ) Շիմոն Պերեսին՝ 2001, 2002 և 2004 թվականներին, որոնք կոչ և հորդոր էին՝ ճանաչելու և դատապարտելու Հայոց ցեղասպանությունը Իսրայելի կողմից: Հատկանշական է, որ Շիմոն Պերեսին ուղղված նամակներում առկա էր նաև Էլի Վիզելի ստորագրությունն այն 126 գիտնականների ցանկում, որոնք իրենց ստորագրությամբ հաստատում էին Հայոց ցեղասպանության փաստը և կոչ անում Իսրայել պետությանը ճանաչել իրողությունը:

Ըստ հեղինակի՝ Իսրայել պետության համար խիստ կարևոր են հարաբերությունները Թուրքիայի հետ, ինչպես նաև ոչ պակաս կարևոր է այն հանգամանքը, որ Իսրայելի համար որևէ այլ ցեղասպանություն չի կարող համեմատվել հրեաների Շոայի հետ: Հեղինակը հետաքրքիր համեմատություն է անցկացնում ցեղասպանությունների վերապրածների միջև. այսպես՝ ցեղասպանության յուրաքանչյուր վերապրած փորձում է իր ցեղասպանությունը ներկայացնել որպես ամենացավալին և աղետալին (անգլ. victims superiority), որին չեն բախվել այլ ժողովուրդները: Նաև, և՛ ոճրագործը, և՛ գոհը ձգտում են գերակայության (անգլ. superiority). առաջինը՝ հասնելու գերիշխանության՝ զոհի ոչնչացման միջոցով, երկրորդը՝ անկրելի ցավ ստացած լինելու հանգամանքով պայմանավորված:

Գրքում Հայոց ցեղասպանության ժխտողականության համատեքստում ներկայացված են նաև հենց Իսրայելի կողմից կազմակերպված վայրագությունները, որի

մասին ներկայացնում է հենց ազգությամբ հրեա գիտնականը, և թե ինչպիսի՜ վերաբերմունք ունի ցեղասպանության վերաբերյալ նախկինում դրա միջով անցած հրեա ժողովուրդը: Խոսքը վերաբերում է Իսրայելի կողմից 1956 թ. իրականացված ցեղասպանական գործողություններին Քֆար Քասսեմում ընդդեմ 49 արաբ կանանց, տղամարդկանց և երեխաների, որի վերաբերյալ հետագայում հրեա անձանց հետ հարցազրույցները ցույց են տալիս, որ պատասխանողների 62%-ը չի արդարացնում իսրայելցի զինվորների կողմից իրականացված ջարդերը Քֆար Քասսեմում, մինչդեռ 38%-ն արդարացնում է զինվորների արարքը:

Գրքում տեղ է հատկացված նաև այլ ցեղասպանությունների ժխտողականությանը, մասնավորապես, Իրաքի եզդիների: 2018 թ. Քնեսեթի անդամներից 58-ը մերժեց ընդունելու եզդիների ցեղասպանության մասին բանաձևը, իսկ Իսրայելի փոխարտգործնախարարը հայտնեց, որ կառավարությունը չի կարող ճանաչել ցեղասպանությունը, քանի դեռ այն ՄԱԿ-ի կողմից չի հաստատվել:

Աշխատանքում անդրադարձ է կատարվում նաև Իսրայելի կողմից ցեղասպանություն կամ ցեղասպանական քարոզչություն իրականացնող պետություններին զենք մատակարարելու հարցին, որոնց թվում նաև Ադրբեյջանն է, որի արդյունքը տեսանելի եղավ 2020 թ. Ղարաբաղյան պատերազմում, երբ իսրայելական զենքերը որոշիչ դարձան հայերի պարտության համար:

Գրքում առկա է նաև հեղինակի անդրադարձը Իսրայելի ներքին քաղաքականության որոշ հարցերին: Այսպես, օրըստօրե Իսրայելն արգելում է այն գրողների, մտավորականների և դիվանագետների մուտքը երկիր, որոնք որևէ կերպ ընդդիմանում են Իսրայելի քաղաքականությանը: Իսրայելի «ազգ-պետություն» խնդրին վերաբերող օրենքում ընդգծվում է հրեական ինքնությունը, նվազագույնի է հասցված բազմակարծությունը: Բացի այդ, Իսրայելի կառավարությունն օրենք է ընդունել, որով կառավարության պաշտոնական լեզուների ցանկից հանվել է արաբերենը, թողնելով միայն եբրայերենն ու անգլերենը: Շատ հրեաներ Իսրայելի այս քաղաքականությունը բացատրում են որպես աշխարհում ներկայումս ընդլայնվող հակասեմականությանը դիմագրավելու միջոց: Բացի այդ, հեղինակը մեջբերում է թղթակից Հագար Շեզաֆի 2019 թ. հուլիսի 5-ի բացահայտումն առ այն, որ Իսրայելի կառավարությունը պարբերաբար հեռացրել է պատմական փաստաթղթերի հասանելիությունը, որոնք առնչվում են 1948 թ. Անկախության պատերազմի ընթացքում Իսրայելի կողմից կատարված ցեղասպանական տեղահանություններին և Պաղեստինի արաբ բնակիչների սպանություններին: Այսպիսով, կարող ենք նշել, որ Իսրայելի պետական արխիվները լիարժեք կերպով բաց չեն հետազոտողների համար, քանի որ բաց լինելու պարագայում, որոշ բացահայտումներ կարող են ցավոտ լինել Իսրայել պետության համար՝ կապված արաբա-իսրայելական պատերազմների որոշ դրվագների հետ:

Աշխատանքին բովանդակային առավելություն են տալիս նաև որպես լրացուցիչ ենթագլուխներ դրված՝ թուրք, հայ և հրեա հետազոտողների գլուխները: Մասնավորապես, ազգությամբ թուրք լրագրող և հրատարակիչ Ռազմի Զարաբօլուի աշխատանքում ներկայացվում է Թուրքիայի կողմից իրականացվող բռնությունների

քաղաքականությունը երկրի ներսում այն անձանց նկատմամբ, որոնք որևէ կերպ ընդդիմանում են Թուրքիայի քաղաքականությանը: Մանրամասն ներկայացվում է Ռազլի Զարաբուլի գործունեությունը, ով իր ընտանիքի հետ միասին դաժան վերաբերմունքի է արժանացել, բանտարկվել է, կորցրել է կնոջը (քաղցկեղից մահացել է բանտում): Եվ այս ամենի պատճառը միայն այն է, որ Զարաբուլուն Թուրքիայում պայքարել է հանուն մարդու իրավունքների, բարձրաձայնել է հայերի, հույների, ասորիների ցեղասպանության վերաբերյալ, կնոջ հետ թարգմանել և հրատարակել գրքեր դրանց մասին: Իսկ Թուրքիայում նա միակը չէ, որ գտնվում է հետապնդման մեջ: Ինչպես նշվում է «Լրագրողների պաշտպանության կոմիտե»-ի հաշվետվություններից մեկում՝ «In Turkey reporting is a daily struggle - Թուրքիայում լրագրություն անելն ամենօրյա պայքար է»:

Կարևոր են նաև առանձին ենթագլխով ներկայացված հայազգի գիտնական Ռիչարդ Հովհաննիսյանի կողմից արված համեմատությունները Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության միջև և, առհասարակ, ժխտողականության վերաբերյալ, ինչպես նաև հրեա գիտնական Մայքլ Բերենբաումի կողմից ներկայացված պատմությունները՝ կապված Հայոց ցեղասպանության և ԱՄՆ-ի Հոլոքոստի հուշային թանգարանի հիմնադրման հետ:

Իսրայել պետության կողմից Հայոց ցեղասպանության չճանաչմանն է նվիրված գրքի վերջին գլուխը, հատկապես, Իսրայելի նախկին նախագահ Ռյուվեն Ռիվլինի վերաբերող հատվածները, որը նախքան նախագահ դառնալը եղել է Հայոց ցեղասպանության ճանաչման ջատագովներից մեկը: Վերջինս նախագահ դառնալուց հետո հայերի հետ տեղի ունեցածի մասին խոսելիս իր ելույթներում «ցեղասպանություն» եզրույթն օգտագործել է միայն դիվանագիտական բառախաղի տեսքով: Այս գլխից պարզ է դառնում, որ 1980-ական թվականներից մինչ այսօր շարունակվում է Իսրայել պետության որդեգրած քաղաքականությունը Հայոց ցեղասպանության չընդունման և չդատապարտման ուղղությամբ, մինչդեռ արդարության վերականգնման համար հրեա ցեղասպանագետ պրոֆ. Չառնին շարունակում է ներդնել ամեն ջանք: Կարևոր են պրոֆ. Չառնիի և Յաիր Օրոնի համատեղ հոդվածը՝ տպված 2020 թ. հունվարի 9-ին California Courier-ում, որտեղ մեկ անգամ ևս գիտնականները դատապարտում են Իսրայելի Քնեսեթի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձևերի պարբերաբար տապալումը, հատկապես, երբ ԱՄՆ Սենատն ու Ներկայացուցիչների պալատն անգամ քաջություն ունեցան հաղթահարելու ԱՄՆ վարչակազմից եկող՝ Թուրքիային չհիասթափեցնելու հրամանները և հաջողելու այս հարցում: Իսրայելը ձախողել է ոչ միայն նախկին, այլև ներկայումս ընթացող ցեղասպանությունների ճանաչումն ու դատապարտումը. դրանց թվում են եզդիներինը, ռոհինգյա համայնքինը Մյանմարում, ույղուրներինը՝ Չինաստանում, քրիստոնյաներինը՝ Սիրիայում և այլն: Աշխատանքից պարզ է դառնում, որ մեծ է նաև Երուսաղեմի Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի դերը վերջին տասնամյակներում՝ Համեմատական ցեղասպանագիտության ոլորտում: Վերջինս, ըստ նրա, չնայած աշխատակիցների փոքրաթիվ լինելուն, հետազոտական մեծ աշխատանքներ է տանում այս ուղղությամբ:



Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը հեղինակը դիտարկում է նաև իսրայելա-ադրբեջանական ամուր հարաբերությունների համատեքստում:

## ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

### *Հեղինակների համար*

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(երթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

### *Գրախոսների համար*

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվազն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

### *Գրախոսը պետք է՝*

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

### *Խմբագրակազմի համար*

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

#### *Հեղինակային իրավունք*

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

#### *Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր*

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ում պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

## **ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ**

*Ցեղասպանագիտական հանդեսում* հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

*Ցեղասպանագիտական հանդեսում* հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների

բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

*Ցեղասպանագիտական հանդեսին* ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ Ցեղասպանագիտական հանդեսի տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

*Ցեղասպանագիտական հանդեսում* հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

#### ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:  
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

*Սուրիական տարեցոյց* [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rpe'rean, 1924;

*Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ* [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-i

Mahsusa)” in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut’yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնության «ամրացման» երկու հնարաորություններ Հայաստան-Սփիւրք յարաբերությունների համատեքստում», *Սփիւրք եւ ինքնություն* (Խմբ.՝ Շահան Գանտահարեան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in Diaspora and Identity (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire’s State Orphanages (1915-1918)]. *Ts’eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տօքոս. Ալթունյան» [Dr. Alt’unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

#### ՀՂՈՒՄՆԵՐ

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. *Գրքեր* (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները, հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.

1. Սարգիս Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Երևան: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի

քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

#### Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

#### Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

#### Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական,

հողվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, “Ottoman Archives and Denial of the Armenian Genocide,” in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin’s Press, 1992), 280.

2. Վերծինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90*, հողվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:

3. Сурен Манукян, “Наказание за верность.” От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения,” *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը:

Օր.՝

1. Dadrian, “*Ottoman Archives*,” 471.

2. Սվազյան, «*Հայոց ցեղասպանությունը*», 471:

3. Манукян, “*Наказание за верность*,” 648.

### Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հողվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև ՝ DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, “Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire,” *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.

Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, “Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality,” *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>

3. Peter LaSalle, “Conundrum: A Story about Reading,” *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.

4. Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, “Comparative Policy and Differential Practice,” 35.

2. Keng, Lin, and Orazem, “Expanding College Access,” 23.

6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

### Զ. Համահեղինակությամբ հոդվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

#### Է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ* օրաթերթ (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

#### Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:

1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

#### Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:



2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:

3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, [https://www.ted.com/talks/katie\\_bouman\\_what\\_does\\_a\\_black\\_hole\\_look\\_like](https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like), դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”

2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:

3. Bouman, “Black Hole.”

## 12. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:

2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

## 13. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:

2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:

3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

#### 14. Տառադարձություն

##### Հայերեն

Ա ա - A a  
 Բ բ - B b  
 Գ գ - G g  
 Դ դ - D d  
 Ե ե - E e  
 Չ զ - Z z  
 Է է - E' e'  
 Ը լ - Ë ë  
 Թ թ - T' t'  
 Ժ ժ - Zh zh  
 Ի ի - I i  
 Լ լ - L l  
 Խ խ - Kh kh  
 Ծ ծ - Ts ts  
 Կ կ - K k  
 Հ հ - H h  
 Ձ ձ - Dz dz  
 Դ դ - Gh gh  
 Ճ ճ - Ch ch  
 Մ մ - M m  
 Յ յ - Y y  
 Ն ն - N n  
 Շ շ - Sh sh  
 Ո ո - Vo vo (բառամիջում գրել օ ձևով)  
 Չ չ - Ch' ch'  
 Պ պ - P p  
 Զ շ - J j  
 Ռ ռ - R' r'  
 Ս ս - S s  
 Վ վ - V v  
 Տ տ - T t  
 Բ բ - R r  
 Յ գ - Ts' ts'  
 Ո հ մ - U u  
 Փ փ - P'p'  
 Ք ք - Q q  
 Եվ է Ev ev  
 Օ օ - O' o'  
 Ֆ ֆ - F f

##### Ռուսերեն

А а - A a  
 Б б - B b  
 В в - V v  
 Г г - G g  
 Д д - D d  
 Е е - E e  
 Ё ё - Io io  
 Ж ж - Zh zh  
 З з - Z z  
 И и - I i  
 Й й - Ĭ ĭ  
 К к - K k  
 Л л - L l  
 М м - M m  
 Н н - N n  
 О о - O o  
 П п - P p  
 Р р - R r  
 С с - S s  
 Т т - T t  
 У у - U u  
 Ф ф - F f  
 Х х - Kh kh  
 Ц ц - Ts ts  
 Ч ч - Ch ch  
 Ш ш - Sh sh  
 Щ щ - Shch shch  
 Ъ ъ - “  
 Ы ы - Y y  
 Ь ь - ‘  
 Э э - E' e'  
 Ю ю - Iu iu  
 Я я - Ia ia

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթ՝ օֆսեթ,  
տպաքանակը՝ 150:

Համակարգչային ձևավորումը՝ Թրիստինե Վարդանյանի

Տպագրվել է .....